

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ.ՄԻՏՈՅԱՆ, Լ. ՄՄԲԱՏՅԱՆ, Լ. ՄԱՐԳՍՅԱՆ

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ  
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԻՋԻՆ  
ԽՄԲՈՒՄ

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

2013

ՀՏԴ 373.24 (07)  
ԳՄԴ 74.100 ց7  
Մ 755

Երաշխավորված է

ՀՀ ԿԳ նախարարի՝ 05.09.2013 № 1065Ա/Ք հրամանով

Միտոյան Հ.

Մ 755 Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում /Հ. Միտոյան, Լ. Մմբատյան, Լ. Սարգսյան; ՀՀ ԿԳՆ: Կրթության ազգային ինստիտուտ.- Եր., Կրթության ազգային ինստիտուտ, 2013. – 240 էջ:

ՀՏԴ 373 24 (07)

ԳՄԴ 74.100 ց7

ISBN 978 – 9939 – 806 – 73 – 0

© ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2013

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿ

## ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն ուսումնամեթոդական ձեռնարկի հիմքում ընկած է միջին խմբի (4-5 տարեկաններ) նախադպրոցական կրթական համալիր ծրագրի խոսքի զարգացման բաժնի բազային բովանդակության, դաստիարակության և ուսուցման խնդիրների իրականացումը, արդի զարգացնող մանկավարժական համակարգի սկզբունքները: Հեղինակային խմբի կողմից առաջարկվող համակարգը կառուցված է մի կողմից՝ երեխայի շրջակա միջավայրի, հասարակական կյանքի և բնության երևույթների ծանոթացման, էկոլոգիական դաստիարակության, խոսքի զարգացման բոլոր բաղադրիչների աստիճանական բարդացվող և ինտեգրված սկզբունքներով իրացման վրա, մյուս կողմից՝ դրանք նպաստում են իրականության տարբեր ոլորտների բովանդակային ընկալմանն ու ամբողջականացմանը՝ չորջանցելով յուրաքանչյուր ոլորտի ուղղությամբ երեխայի ներքին, սեփական տրամաբանությամբ յուրացումների գործունը:

Ձեռնարկում ներկայացված են ոչ միայն կազմակերպված ուսուցման հատուկ ձևերը՝ պարտադիր պարապմունքները, այլև դրանցից դուրս գործունեության կազմակերպումը՝ ապահովելով նոր ստեղծվող պայմաններում՝ երեխաների ստացած գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընդհանրացումը, որի արդյունքում տեղի է ունենում երեխայի զարգացումը: Հատկանշական է, որ ծրագրի միևնույն բովանդակային խնդրի իրականացման համար պարապմունքներում առաջարկվում են տարաբնույթ ձևեր, ինչպես բանավոր ուսուցման, այնպես էլ դիտողական, փորձարարական, գործնական եղանակներով՝ զգայական, հուզական, տարբեր ոլորտների զարգացման հենքի վրա:

Ձեռնարկը ստեղծվել է դաստիարակի համար՝ որպես նրա սեղանի հիմնական գիրք՝ 4-5 տարեկան երեխաների խոսքի զարգացման պարապմունքները պլանավորելու և անցկացնելու նպատակով: Ձեռնարկի գործնական նշանակությունը դաստիարակին պարապմունքները մեթոդապես ճիշտ անցկացնելու, թեմաները ընտրելու և ուսուցման նպատակները սահմանելու, դրանց իրականացման ուղիները որոշելու հարցում օրինակելի ցուցումներ տալն է:

Այն համարված է բազմաբնույթ, թեմատիկ և ինտեգրված պարապմունքներով (ներառված են դիդակտիկ խաղեր, խաղային շարժառիթներով, մտավարժանքներով, ծրագրային և համարժեք ոչ ծրագրային գեղարվեստական ստեղծագործություններով, ժողովրդական բանահյուսության տարրերով հագեցված առաջադրանքներ): Ցանկության դեպքում դաստիարակին հնարավորություն է ընձեռվում ծրագրից ընտրել գեղարվեստական ստեղծագործության համարժեք այլ նյութեր:

4-5 տարեկանում ընդարձակվում է շրջապատող աշխարհի վերաբերյալ երեխայի փորձը, հարստանում բառապաշարը, կատարելագործվում են խոս-

Ամսագրի  
Ընթացիկ

քի հնչյունային, քերականական կողմերը, կապակցված խոսելու՝ գրուցելու, պատմելու և վերապատմելու կարողությունները: Սույն ձեռնարկում ընդգրկված պարապմունքները ներառում են մանկապարտեզում խոսքի զարգացման պարապմունքների բոլոր տեսակները (գրույց, դիդակտիկ խաղեր, ուսանավորի ուսուցում, պատմելու և վերապատմելու տեսակները, գեղարվեստական ստեղծագործության ընթերցանություն, ինչպես նաև խոսքի զարգացում ինտերակտիվ խաղերի միջոցով, դադարներով ընթերցանություն, խաղ-պարապմունքներ), խոսքի ծրագրային բոլոր բաժինները (բառապաշարի հարստացում, խոսքի հնչյունային և քերականական կողմերի զարգացում, կապակցված խոսք, ծառայություն գեղարվեստական գրականությանը):

Երեխայի խոսքը զարգացնելու համար հարկավոր է շատ խոսել նրա հետ. գրուցել նրան հետաքրքրող, հուզող, նրա տարիքին մատչելի, հասանելի ամեն ինչի մասին, պատասխանել հարցերին, դրդել երեխային հարցեր տալու, շատ ընթերցել նրա համար: Պարապմունքների ժամանակ երեխայի հետ խոսելու, երկխոսության գործընթացը դառնում է նպատակաուղղված, ուսումնական գործընթաց:

Նպատակաուղղված գրույցը՝ նախապես ընտրված թեմայի շուրջ քննարկումը նախադպրոցական մանկավարժության մեջ ընդունված մեթոդ է, որը միտված է շրջակա միջավայրի, շրջապատող աշխարհի ծանոթացմանը և, միաժամանակ, կապակցված խոսքի զարգացմանը: Մեծ է գրույցի դերն ու նշանակությունը երեխաների մտավոր և բարոյական դաստիարակության գործում:

Ջրույցի ընթացքում համակարգվում և ճշգրտվում են երեխաների գիտելիքներն ու պատկերացումները, որ նրանք ձեռք են բերել իրենց ամենօրյա գործունեության և դիտումների ընթացքում: Դաստիարակի կողմից կիրառված մեթոդների և հնարների արդյունքում երեխաների գիտելիքները դառնում են հստակ և գիտակցված:

Ջրույցի արժեքը նաև այն է, որ մեծը սովորեցնում է երեխային տրամաբանորեն մտածել, մտածողության կոնկրետ ձևից անցում կատարել դեպի վերացականը: Ջրույցի ընթացքում երեխան հիշում է, վերլուծում, արտահայտվում, դատողություններ անում: Մտածողությանը զուգընթաց զարգանում է նաև խոսքը:

Ուսումնամեթոդական ձեռնարկում առանձին տեղ է հատկացված պարապմունքների թեմատիկ պլանավորմանը («Աշուն», «Հացը», «Ինչպես են ճանաչում աշխարհը» թեմաների ընդգրկումով):

Կրթադաստիարակչական աշխատանքներում թեմատիկ պլանավորման էությունն այն է, որ՝

- ընտրվում է շաբաթվա թեման. այն ներառում է շրջակա միջավայրի դիտարկումը, էկոլոգիայի, բնության, հասարակական կյանքի ծանոթացումը, որն անցկացվում է շաբաթվա առաջին օրը,

- մնացած բոլոր պարապմունքները՝ խոսքի զարգացում, տարրական մաթեմատիկական պատկերացումներ, ծեփ, ապլիկացիա, կառուցողական և այլն, շարունակում են առաջադրված թեման, այս կամ այն կերպ կապված այդ թեմայի հետ,

- յուրաքանչյուր հաջորդ պարապմունքին անցկացվում է շաբաթվա թեմայի համառոտակի կրկնություն,

- ծնողներին առաջարկվում են կարճ խորհրդատվություն և հանձնարարական՝ ընտանեկան ընթերցանության, բնության մեջ դիտումների կազմակերպման ուղղությամբ:

Կրթադաստիարակչական աշխատանքների նման կառուցվածքը հնարավորություն է ընձեռում հաշվի առնել նախադպրոցական դիդակտիկայի հետևյալ սկզբունքները.

1. Նախադպրոցական տարիքի երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների բոլոր ուղղությունների փոխադարձ կապը,
2. Հաջորդականության սկզբունքը,
3. Համակարգվածության (սխտեմայնության) սկզբունքը,
4. Կրկնության սկզբունքը:

Մանկավարժական պրակտիկան ցույց է տվել, որ թեմատիկ պլանավորման սկզբունքի կիրառման դեպքում հնարավորություն է ընձեռվում էականորեն կրճատել պարապմունքների, կազմակերպված ուսուցման համար հատկացվող ժամանակը, երեխաների ծանրաբեռնվածությունը, փոխարենը՝ այն տրամադրել կազմակերպվող խաղերին, առողջարարական տարաբնույթ միջոցառումներին:

Թեմատիկ պլանավորման ժամանակ մեծ նշանակություն ունի երեխաների հետ տարվող առավոտյան գրույցի կազմակերպումը: Այն մանկավարժական գործընթացի կարևորագույն բաղկացուցիչ մասն է, որը նպաստում է երեխաների խոսքի և մտածողության զարգացմանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Առավոտյան գրույցի կազմակերպումն ունի հետևյալ նպատակները.

- երեխաների ներգրավում՝ շաբաթվա թեմայում,
- նրանց անձնական փորձի ակտիվացում, ամենօրյա կյանքում, հատուկ կազմակերպված պարապմունքների ընթացքում ստացած պատկերացումների համակարգում և ճշգրտում,
- երեխաների կողմից իրականության առավել խոր ընկալում, գիտելիքների ամրապնդում ու հարստացում:

Ջրույցի բովանդակությունը շրջակա միջավայրի, հասարակական կյանքին ծանոթացման, մարդկանց կենցաղի, աշխատանքի, երեխաների գործունեության ծրագրային նյութն է՝ ուղղակիորեն կապված շաբաթվա թեմայի

հետ: Երկուշաբթի օրը անցկացվում է ներգրավիչ գրույց, որն այնուհետև ծավալվում է որպես երեխաների կողմից նոր գիտելիքների ձեռքբերմանը նպատակաուղղված գործընթաց: Այն կապող օղակ է երեխաների ունեցած փորձի և գիտելիքների և այն տեղեկատվության միջև, որը նրանք ձեռք են բերելու: Երեքշաբթի, շորեքշաբթի և հինգշաբթի օրերին նպատակահարմար է անցկացնել նոր փորձի ձեռքբերմամբ ուղեկցվող գրույցներ: Ուրբաթ օրն անցկացվում է եզրափակիչ կամ ընդհանրացնող գրույց, որի նպատակն է՝ համակարգել, ճշգրտել և ընդլայնել երեխաների փորձը, որը նրանք կուտակել են իրենց գործունեության, դիտումների և էքսկուրսիաների ընթացքում:

Ընդհանրացնող գրույցը կարելի է ավարտել հանելուկով, ոտանավորի ընթերցանությամբ, ասացվածքներով, թեմային առնչվող երաժշտության ունկնդրմամբ: Առավոտյան գրույցները կազմակերպվում են ոչ մեծ ենթախմբերով: Եթե պարապմունքի թեման պահանջում է խմբի բոլոր երեխաների փորձի և գիտելիքների ակտիվացում, ապա դաստիարակը կարող է համախմբել երեխաներին՝ առավոտյան մարմնամարզության և նախաճաշի միջակայքում: Ձրույցի ժամանակահատվածի մեծ մասն անհրաժեշտ է հատկացնել երեխաների խոսքին: Արդյունավետ գործոն են նաև դաստիարակի կողմից առաջադրվող հարցերը և կիրառվող նորաշունչ հնարները: Հարցերը պետք է լինեն հստակ, համառոտ, երեխաներին մատչելի: Այդ առումով նպատակահարմար է նախապես գրառում կատարել:

Կարևոր ուշադրություն պետք է դարձնել երեխաների պատմելու կարողությունների (վերապատմել հեքիաթ, պատմվածք, առարկան նկարագրել, նկարները ներկայացնել խոսքով, հիշողությամբ, դաստիարակի օրինակով, հարցերով կամ պլանով, երևակայությամբ պատմել, պարզագույն դատողություններ կատարել և այլն) զարգացմանը:

Հեքիաթ կամ պատմվածք վերապատմել սովորեցնելիս շատ կարևոր է պատմելու համար նախատեսված տեքստի ճիշտ ընտրությունը: Այն պետք է ունենա գեղարվեստական արժեք, լինի հետաքրքիր, հուզականորեն գրավիչ և ոչ երկարաշունչ: Պարապմունքի ներգրավիչ, խթանիչ մասում դաստիարակը կարճ գրույցի միջոցով երեխաների մեջ արթնացնում է հետաքրքրություն պարապմունքի հանդեպ՝ փորձելով նրանց նախապատրաստել տեքստի ընկալմանը, ցուցադրում է նկարներ, առաջադրում հանելուկներ: Տեքստի սկզբնական ընթերցանության ժամանակ նա չի նախազգուշացնում վերապատմելու մասին: Այնուհետև գրույց է անցկացնում ընթերցված նյութի բովանդակության, վերլուծության շուրջ: Եվ այդ աշխատանքը հիմնականում նպատակաուղղված է երեխաների կողմից տեքստի մտապահմանը: Կրկնակի ընթերցանությունից հետո երեխաները վերապատմում են: Եզրափակիչ մասում դաստիարակը կարող է երեխաների ուժերով և խաղալիքների օգտագործմամբ քննականացնել ստեղծագործությունը, ինչպես նաև սեղանային, սովերային

թատրոնի սկզբունքներով թատերականացնել այն: Վերապատմելիս երեխաները մեծի օգնության կարիքն են զգում. պատմելու ընթացքում եթե երեխան լռում է, դաստիարակը սկզբում պետք է օգնի երեխային օժանդակ հարցեր տալով, անհրաժեշտության դեպքում ինքը սկսի պատմել՝ երեխան շարունակի, ընթացքում հուշի երեխային անհրաժեշտ բառեր, բառակապակցություններ, մտքեր: Կարևոր է նաև պարապմունքի ընթացքում յուրաքանչյուր երեխայի վերապատմումի գնահատականը, դաստիարակի կոնկրետ խորհուրդները, ինչին կհետևեն նաև մյուս երեխաները:

Այս տարիքային խմբում մեծ ուշադրություն է դարձվում նկարներով աշխատանքին: Կատարելագործվում է երեխայի՝ նկարը դիտելու, ընկալելու, այն բովանդակալից պատմելու, վերնագրելու կարողությունը: Դաստիարակը երեխաներին տրամադրում է ուշադիր դիտել նկարը, հարցերով օգնում է նկատել և հասկանալ նկարի կարևոր և երկրորդական մասերը՝ ստեղծելով պլան՝ հորինվող պատմության համար: Նա հուշում է ապագա պատմության առաջին նախադասությունը, վերջում ընդհանրացնում երեխաների պատասխանները: Մեթոդական այսպիսի հնարներն օգնում են երեխային՝ պատմելու նկարը: Ուշագրավ և ինքնատիպ են ձեռնարկում գեղեղված «Նկարում ենք բանաստեղծություն», «Նկարներով ընթերցանություն», «Պատմում՝ նկարների միջոցով», «Խոսքի զարգացում՝ ինտերակտիվ խաղերի միջոցով», «Զգայական դաստիարակությանը միտված խաղ-պարապմունքներ», «Ինտեգրված խաղ-պարապմունքներ» թեմաներով պարապմունքները՝ իրենց կառուցվածքով, ուսուցման առաջադրվող մեթոդներով և հնարներով:

Խմբում աշխատում են նաև սեփական փորձով, հիշողությամբ պատմելու կարողություն ձևավորելու, երեխաների մտածական, խոսքային ունակությունների զարգացման ուղղությամբ: Այս դեպքում նույնպես շատ կարևոր է թեման: Խորհուրդ է տրվում ընտրել նախադպրոցականին ծանոթ, հարազատ և հուզող թեմա: Այս պարապմունքներին դաստիարակը ոչ միայն օգտագործում է երեխաներին օժանդակ հարցեր տալու ուսուցման հնարը, այլև պատմումի իր օրինակը: Որպես օրինակ՝ ներկայացնում է իր պատմությունը, հետո հարցերով խրախուսում երեխաներին՝ երևակայելու և, ընկերոջը չկրկնելով, պատմելու սեփական պատմությունները: Երեխաները նման պարապմունքներին սովորում են ոչ միայն օգտագործել իրենց կյանքի փորձը, արտահայտել տպավորությունները, դիտումները, զգացումները, այլև ձևավորում են իրենց մտքերը հստակ, կապակցված, հաջորդաբար շարադրելու կարողությունները:

Արժեքավոր են նաև երեխաներին գեղարվեստական ստեղծագործություններին ծանոթացնելու (հեքիաթների, պատմվածքների, բանաստեղծությունների, առակների ընթերցում) պարապմունքները: Այս տարիքի երեխաներն արդեն տարբերակում են հեքիաթը փոքրիկ պատմվածքից, պատմվածքը

բաճառատեղծությունից: Նրանք ընկալում են գեղարվեստական ստեղծագործության բարոյախոսությունը, զգում են մեղեդայնությունը, գեղեցկությունը, զնահատում են գրական հերոսի արարքները: Այլ պարապմունքների, տարաբնույթ գործունեության ընթացքում (կերպարվեստ, ձեռքի աշխատանք) ամոքողապատում են գեղարվեստական ստեղծագործության հերոսներին, տեսարաններին, նկարագրություններին՝ իրենց ընկալածը, զգացածը ստեղծագործաբար ներկայացնելով արվեստի այլ տեսակներում: Նման պարապմունքները խորացնում են երեխայի հետաքրքրությունը, ամբողջացնում ձեռք բերած գիտելիքները:

Չեռնարկում նեկայացված է դադարներով ընթերցանություն՝ «Ճուտիկն ու շնիկը»: Խորհուրդ է տրվում կիրառել նաև «Համատեղ ընթերցանություն», «Ճառարկված հաջորդականությամբ ընթերցանություն» մեթոդները, ինչպես նաև հեքիաթների մեկնաբանման նոր, հետաքրքիր հնարներ («Աղավաղված հեքիաթ», «Շուտ տված հեքիաթ», «Շիլավիլավ հեքիաթ» և այլն):

**«Դադարներով ընթերցանություն» մեթոդի ռազմավարությունը**

Երեխաներին տալ խթանիչ հարցեր:

Կարդալ ստեղծագործության առաջին հատվածը:

Տրամաբանական ավարտին տալ հետևյալ հարցերը.

- Ի՞նչ՞ մասին էր այս հատվածը /կարելի է տալ այդ հատվածի գլխավոր իմաստն արտահայտող բաց հարց/:

- Ի՞նչ շարունակություն կունենա պատմությունը /սպասել մինչև երեխաները կմտածեն, զույգերով կամ եռյակներով կքննարկեն, և նոր միայն լսել մի քանի կարծիք/:

Առաջարկել մտածել նոր վերնագիր, ապա «Բաց հարցերի» միջոցով ամփոփել պարապմունքը:

**«Համատեղ ընթերցանություն» մեթոդի ռազմավարությունը**

Երեխաների հետ մտե՛ք հարմարավետ մի տեղ. օրինակ գորգի կամ բազմոցի վրա: Նստե՛ք այնպես, որ երեխաները կարողանան տեսնել գիրքը:

Երեխաներին ցույց տվեք գրքի կազմը: Ասե՛ք հեղինակի և ձևավորող նկարչի անունները:

Գիրքը պահե՛ք դեպի երեխաները և դանդաղորեն շրջեք էջերը, որ նրանք հնարավորություն ունենան դիտելու նկարները:

Հարցրե՛ք՝ «Ի՞նչ՞ մասին է, ձեր կարծիքով, այս պատմությունը», և մի թղթի վրա գրի՛ առեք նրանց պատասխանները՝ պատասխանի կողքին գրանցելով երեխայի անունը:

Նշե՛ք վերնագիրը, հեղինակին և ձևավորող նկարչին: Ընթերցե՛ք գիրքը՝ մատը սահեցնելով տողերի վրայով:

Ամբողջ պատմությունն ընթերցելուց հետո անդրադարձե՛ք կռահումներին, որ գրանցել էիք թղթի վրա: Ընթերցե՛ք և երեխաներին խնդրեք մեկնաբանել, թե իրենց կռահումները համապատասխանո՞ւմ են գրքի բովանդակությանը:

Քննարկե՛ք նրանց հետ պատմությունը /առաջին հերթին թող պատասխանեն այն երեխաները, ովքեր կռահումներ են կատարել/, ընդգրկելով 3-5 բաց հարցեր: Օրինակ.

- Գրքի ո՞ր մասն ամենից շատ դուր եկավ և ի՞նչու՞:
- Ո՞ր նկարը հավանեցիք :
- Արդյոք պատմությունը ձեր կյանքից որևէ բան հիշեցրե՞ց:
- Եթե լինեիք գլխավոր հերոսի տեղը, ինչպե՞ս կվարվեիք:

**«Ճառարկված հաջորդականությամբ ընթերցանություն» մեթոդի ռազմավարությունը**

Խթանում

Տալ երեխաների հետաքրքրությունը շարժող և թեմային համապատասխան բաց հարցեր:

Իմաստի ընկալում

Կարդալ պատմվածքը:

Երեխաներին բաժանել խմբերի՝ պատմվածքի բովանդակությունը վեր հանող նկարների թվով: Խմբերը գալիս և ցույց են տալիս իրենց նկարների շարքը՝ ըստ պատմվածքի դեպքերի հաջորդականության: Յուրաքանչյուր խմբից 1-ին, 2-րդ, 3-րդ երեխաները հաջորդականությամբ պատմում են իրենց նկարը՝ մինչև պատմվածքի ավարտը:

Կշռադատում

- Դուք ինչպե՞ս կվարվեիք և ի՞նչու՞:

Երեխաներին առաջարկել հիշելու իրենց կյանքից կամ այս պատմությանը նման պատմություն, որ իրենք լսել են:

**«Աղավաղված» հեքիաթներ**

Այս խաղ-պարապմունքի սխեման այսպիսին է.

- Լինում է, չի լինում մի աղջիկ՝ անունը Դեղին Գլխարկ:
- Ոչ թե Դեղին, այլ Կարմիր:
- Ախ, այո՞, Կարմիր: Ուրեմն, նրան հայրիկը կանչեց ու ...
- Դե չէ՛, հայրիկը չէ, մայրիկը:
- Ճիշտ է: Նրան մայրիկը կանչեց և ասաց. «Ռոզա մորաքրոջ մոտ գնա և նրան տար...»:

- Տատիկի մոտ ուղարկեց, ոչ թե մորաքրոջ:

Եվ այսպես շարունակ...:

Այսպես կարելի է ցանկացած պահի, ցանկացած հեքիաթի հետ խաղալ:

**«Շուտ տված» հեքիաթներ**

Հեքիաթների «աղավաղման» մի տարբերակն էլ հեքիաթային թեման կամա-  
յականորեն կամ բնագրին առավել հարազատ մնալով «շուտ տալն է».

Կարմիր գլխարկը չար է, իսկ գայլը՝ բարի:

Մոխրուտը՝ անպետք աղջիկը, մեղմ ու բարի խորթ մորը կատաղեցնում և հեզ ու  
հլու խորթ քրոջ փեսացուին խլում է...

Չյունանուշիկը անտառում հանդիպում է ոչ թե յոթ թզուկների, այլ յոթ հսկանե-  
րի և դառնում նրանց ավազակային կողոպուտների մասնակիցը:

Այսպիսով, սխալի մեթոդը նոր մտքի է հանգեցնում, ինչ-որ նկարի ուրվագիծ  
հիշեցնում: Արդյունքը՝ մասնակիորեն, թե լրիվ, նոր բան կլինի՝ կախված նրանից,  
թե «շուտ տալու» սկզբունքը տվյալ հեքիաթի մե՞կ, թե՞ բոլոր տարրերի նկատմամբ  
է կիրառվում: «Հեքիաթը շուտ տալու» մեթոդը հարմար է ոչ միայն ծաղրապատ-  
ճեմելու համար, այլև դրա միջոցով կարելի է ազատ պատմումի համար մի ելա-  
կետ շոշափել, որ հնարավոր է ցանկացած ուղղությամբ ինքնուրույնաբար զար-  
գացնել:

**«Շիլափիլավ» հեքիաթներ**

Անտառում Կարմիր Գլխարկը Մատնաչափիկին ու նրա եղբայրներին է հան-  
դիպում. նրանց արկածներն իրար են հյուսվում ու նոր հունով ընթանում: Մոխ-  
րուտն ամուսնանում է Կապույտ Մորուքի հետ, Չյունանուշը հայտնվում է յոթ  
թզուկների տնակում, Կոշկավոր կատուն ծառայության է անցնում ուրիշ հեքիաթի  
հերոսների մոտ:

Նման մշակման ենթարկվելով՝ ամենամաշված կերպարներն անգամ կեն-  
դանանում են, նոր շիվեր տալիս, և անսպասելիորեն դրանցից նոր ծաղիկներ ու  
պտուղներ են աճում: Խառնածինն էլ իր հմայքն ունի:

Նման խաղերում իշխող «ստեղծագործական երևակայության երկանդամու-  
թյունը» տիպականից միայն նրանով է տարբերվում, որ այն երկու հատուկ անուն-  
ներից կամ պարզապես ենթակայից ու ստորոգյալից է կազմված:

Ընթերցված գեղարվեստական ստեղծագործությունների վերաբերյալ  
քննարկումներն անհրաժեշտություն են, քանի որ դրանք օգնում են երեխա-  
յին՝ տրամաբանելու, գեղագիտորեն ընկալելու ստեղծագործության իմաստը:  
Մյուս կողմից էլ քննարկումները կարող են վնասել, եթե ստեղծագործությունը  
գեղագիտորեն ճիշտ չի մատուցվում: Դրա համար շատ կարևոր է դաստիա-  
րակի արտահայտիչ ընթերցելու, պատմելու, արտասանելու կարողությունը:

Բանաստեղծության ուսուցման նպատակն է՝ երեխայի մեջ սեր արթնաց-  
նել գեղարվեստական գրականության տվյալ ժանրի հանդեպ: Դրա համար  
հարկավոր է մանրակրկիտ աշխատանք տանել մի շարք ուղղություններով և  
մակարդակներով. սովորեցնել բառերն արտասանել՝ համաձայն գրական լեզ-  
վի ուղղախոսության կանոնների, ամրապնդել ու զարգացնել արտասանա-  
կան-ձայնային ապարատը, ձևավորել ձայնի ուժը և բարձրությունը կառա-

վարելու կարողություն, ստեղծագործության մեղեդայնությունն զգալու և գնա-  
հատելու հմտություն, զարգացնել խոսքային շնչառություն, ձևավորել գեղար-  
վեստական ճաշակ: Երեխաներին պետք է վարժեցնել հուզականորեն արտա-  
հայտիչ արտասանել ոտանավորը՝ օգտվելով տրամաբանական դադարներից,  
շեշտադրումներից և այլն:

Բանաստեղծության ուսուցման ժամանակ դաստիարակն իր առջև դնում է  
երկու կարևոր խնդիր՝

1. երեխաներին սովորեցնել մտապահել տեքստի բառերը և անգիր արտա-  
սանել ամբողջ ստեղծագործությունը,
2. ապահովել խոսքի համապատասխան արտահայտչականություն:

Արտահայտիչ արտասանել նշանակում է կարողանալ ճիշտ վերարտադրել  
հեղինակի տրամադրությունը՝ օգտագործելով տրամաբանական շեշտերը,  
դադարները, և դրսևորել բանաստեղծության բովանդակության նկատմամբ  
սեփական վերաբերմունք: Դրա համար դաստիարակը պետք է օգնի երեխա-  
ներին՝ զգալու չափածո երկի լեզվի երաժշտականությունը, ուրիշ, տեքստի  
իմաստին համապատասխան կարգավորել սեփական ձայնը: Այդ երկու  
խնդիրները լուծվում են միաժամանակ: Բանաստեղծությունը հիշելու և վեր-  
արտադրելու գործընթացին զուգընթաց տարվում է արտահայտչականության  
մշակման աշխատանք:

Դրա համար դաստիարակը պարտավոր է պահպանել ոտանավորի  
ուսուցման ճիշտ մեթոդիկան: Երեխաների կողմից ոտանավորի արտասանու-  
թյունը չպետք է մեխանիկական բնույթ կրի: Տեքստի խորացված, գիտակցա-  
կան վերհիշման համար անհրաժեշտ է այն սովորեցնել ոչ թե մաս-մաս, այլ  
ամբողջությամբ, մի քանի օրվա ընթացքում /ուսուցում-խորացում-ամրա-  
պնդում/:

Ոտանավորի ուսուցման ժամանակ դաստիարակը պարտավոր է հավա-  
տարիմ մնալ հեղինակի խոսքին. արտասանել միտքը նույնությամբ, իսկ վեր-  
ջին մեկ, երկու բառերը վերածել հարցի:

Առավել մեծ արդյունք ապահովելու նպատակով խորհուրդ է տրվում խոսք  
զարգացման հաջորդ պարապմունքը նվիրել ոտանավորի խորացմանը /կրկն  
թյանը/: Պարապմունքի երկրորդ մասում ցանկալի է անցկացնել տվյալ թեմայի  
որևէ դիդակտիկ խաղ:

Չեռնարկում ներկայացված խոսքի զարգացման պարապմունքների տ  
սակները կնպաստեն 4-5 տարեկան երեխայի խոսքը հոմանիշներով, հ  
կանիշներով, համեմատություններով և հակադրություններով հարստացնե  
պահանջի իրականացմանը: Նրանք կսովորեն օգտագործել ածականն  
համեմատական աստիճանները, կավելանա բայերի, մակբայների քանս  
նրանց բառապաշարում: Երեխան կսովորի նկարագրել առարկան, երևու  
ներկայացնել մարդկային փոխհարաբերությունների, վարքի, գործուն

թյան, զգացմունքների դրսևորման օրինակներ, ցույց տալ պատճառահետևանքային կապեր:

Այս տարիքում ոչ բոլոր երեխաներն են հստակ արտաբերում մայրենի լեզվի հնչյունները: Հաճախ նրանք լսողությամբ չեն տարբերակում պայթաշփական (ձ-ջ-չ) և պայթական (բ-պ-փ), ձայնորդ (ո-բ-լ), շփական (շ-ս) հնչյունները և դժվարանում են դրանք արտաբերելիս: Չեռնարկում ներառված դիդակտիկ խաղերը և վարժությունները նպաստում են բառապաշարի հարստացմանն ու հնչարտաբերման խնդիրների լուծմանը, հնչյունային լսողության զարգացմանը: Պարապմունքների մեծ մասում ընդգրկված աշխուժացնող խաղերը համապատասխանում են տվյալ թեմային և լուրջ օգնություն են դաստիարակին: Առաջադրված ԽԻԿ համակարգը հնարավորություն է տալիս մանկավարժին կողմնորոշվել և պահպանել պարապմունքի տևողությունն ըստ կառուցածքի:

Պարապմունքների նկարագրերը մշակելիս հեղինակային խումբն առաջնորդվել է դաստիարակին ստեղծագործաբար աշխատելու հնարավորություն տալու սկզբունքով: Հավատարիմ մնալով երեխայի խոսքի զարգացման մեթոդներին ու հնարներին՝ դաստիարակը կարող է ստեղծագործաբար ընտրել գեղարվեստական ստեղծագործությունները, փոխարինել դրանք համարժեք այլ ստեղծագործություններով, գրույցի համար նախատեսված հարցերից ընտրել առավել «կարևորները», ժամանակի խնդիր ունենալու դեպքում կրճատել պարապմունքի որոշ հատվածներ: Միաժամանակ հեղինակային խումբը հիշեցնում է, որ պարապմունքի տարբեր տեսակներ պլանավորելիս կարևոր է մեթոդիկայի ճիշտ կիրառումը: Չի կարելի մոռանալ, որ փոփոխվում են մեթոդները, իսկ մեթոդիկան գիտություն է, որը միշտ պետք է ճիշտ իրականացնել՝ անկախ այն բանից, թե ինչ մեթոդներ են կիրառում՝ ավանդակա՞ն, խաղային՞, թե՛ փոխգործուն: Խոսքի զարգացման դիդակտիկ խնդիրների հաջող լուծումը պայմանավորված է ամենից առաջ այն մթնոլորտով և զարգացնող միջավայրով, որոնք ստեղծում է դաստիարակը՝ հաշվի առնելով իր խմբի երեխաների անհատական, հոգեբանական առանձնահատկություններն ու կարիքները:

Մաղթում ենք Չեզ հաջողություն և ստեղծագործ աշխատանք:

ՊԱՐԱՊՄՈՒՆԵՐ I

Թեման՝ «Մենք գալիս ենք մանկապարտեզ» /շրջակա միջավայրի ծանոթացում/

Տեսակը՝ գրույց

Խնդիրները

• Երեխաներին սովորեցնել պահպանել վարքի կանոնները՝ մանկապարտեզում հանդիպման և հրաժեշտի ժամանակ,

• Երեխաների մեջ ձևավորել պատկերացումներ մանկապարտեզում աշխատող անձանց մասնագիտությունների վերաբերյալ:

• Երեխաներին ծանոթացնել մանկապարտեզի պարզագույն պլանի, տարածքի պայմանական նշանների, սիմվոլների /խորհրդանշանների/ հետ:

Նախապատրաստական աշխատանք

1. Էքսկուրսիայի կազմակերպում մանկապարտեզի տարածքում: Դաստիարակը բացատրում է երեխաներին, որ նրանք ճանապարհորդելու են և անհրաժեշտ է լինել ուշադիր: Էքսկուրսիայի ժամանակ դաստիարակը ցույց է տալիս, թե ինչպիսի տարածքներ կան մանկապարտեզում, ինչպես են այն անվանում, առաջարկում է հիշել, թե որտե՞ղ են գտնվում: Դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրում է խոհարարների և այլ աշխատակիցների վրա, քննարկում է, թե ինչու են նրանք սպիտակ խալաթներ կրում:

Եթե մանկապարտեզը շատ մեծ է, բավարար է սահմանափակվել մեկ հարկով կամ մեկ թևով: Խմբասենյակ վերադառնալիս դաստիարակը երեխաներին առաջարկում է պատասխանել որոշ հարցերի.

- Դուք հիշո՞ւմ եք, թե որտեղ էր կախված «Ծաղկեփնջով» նկարը:

- Որտե՞ղ տեսաք ծանոթ հեքիաթների դրվագներով նկարներ:

- Որտե՞ղ էր մանկապարտեզի տնօրենի առանձնասենյակը:

- Ո՞ւմ սեղանին էր դրված հեռախոս:

- Որտե՞ղ կար դաշնամուր:

2. Մարդկային ֆիգուրներ՝ պատրաստած ծեփոնից /պալատիլինից/:

Անհրաժեշտ նյութեր և պարագաներ՝ ծեփոնից մարդկային ֆիգուրներ, ցուցապաստառ մանկապարտեզի արտաքին տեսքի պատկերով, նկարչական քթեր յուրաքանչյուր երեխայի համար:

Պարապմունքի ընթացքը

Դաստիարակը ծեփոնած ֆիգուրների միջոցով ներկայացնում է ծանոթության տեսարան: Օրինակ, ես Կարենն եմ, ես առաջին անգամ եկել եմ մանկապարտեզ: Ես վախենում եմ, չգիտեմ՝ ինչպես վարվել:

- Երեխաներ, եկեք խորհուրդ տանք Կարենին՝ ինչպես վարվել /երեխաները խորհուրդ են տալիս/:

Ահա՛ Կարենի ծնողները: Կարենի հայրը աշխատում է որպես դեղագործ, իսկ մայրը՝ դպրոցում ուսուցչուհի է: Ահա և Կարենի դաստիարակչուհին՝ տիկին Աննան կամ ընկեր Աննան:

Այնուհետև կապակցված պատմություններ են կազմում մյուս երեխաները:

Դաստիարակը երեխաների հետ քննարկում է այն հարցը, թե ինչպես պետք է երեխան իրեն պահի հանդիպման ընթացքում: Բացատրում է, որ տարբեր մարդկանց պետք է ողջունել տարբեր ձևով: Մեծերին դիմել «քեռի Սուրեն», «մորաքույր Սոնա» արտահայտություններով կամ անուն-հայրանունով: Այնուհետև դաստիարակը հարց ու պատասխանի միջոցով բացատրում է երեխաներին, թե ինչ են ասում մարդիկ, երբ հրաժեշտ են տալիս միմյանց, ո՞ր դեպքում ի՞նչ պետք է ասել /ցտեսություն, մինչ՝ նոր հանդիպում/:

Դաստիարակը շարունակում է հարցադրումները՝ ասելով, թե արդյոք երեխաները հիշու՞մ են, թե մանկապարտեզում ո՞վ ինչ է աշխատում, ինչու՞ է զբաղվում, ինչպիսի՞ անհրաժեշտ իրեր ունի իր աշխատանքի համար:

Դաստիարակը երեխաներին առաջարկում է ներկայացնել (Ֆիգուրներով խաղալ) երեխաների՝ մանկապարտեզ ընդունվելու մուտքի քանականացումներ՝ հանդես գալով այլ անուններով. մեկը կարող է լինել տնօրեն, մյուսը՝ դաստիարակ, մեկը՝ բուժքույր, մյուսը՝ խոհարար, այգեսպան և այլն: Այնուհետև ցույց է տալիս մի քանի նկար-խորհրդանիշներ՝ բացատրելով, որ այդ խորհրդանիշներով կարելի է գուշակել, թե որտեղ ի՞նչ է գտնվում, և ի՞նչ կարելի է անել: Երեխաները քննարկում են, թե մանկապարտեզում ինչ կարող են նշանակել այդ նշանները: Օրինակ՝ դաշնամուր, սուլի բանալի՝ երաժրշտական դահլիճ, զնդակ, օղակ՝ մարզադահլիճ, գոլալ, պատառաքաղ՝ խոհանոց, կարմիր խաչ, երիզակապ՝ բուժկաբինետ, համակարգիչ, հեռախոս՝ տնօրենի առանձնասենյակ, մահճակալ՝ ննջարան և այլն: Այնուհետև դաստիարակը պաստառի վրա նկարում է մանկապարտեզի պլանը /կամ ունենում է նախապես նկարած պաստառը/ և երեխաների հետ քննարկում, թե ո՞ր սենյակը, ո՞ր առանձնասենյակը որտեղ է գտնվում, ո՞ր հարկում:

Պարապմունքին և պարապմունքից դուրս՝ ամբողջ շաբաթվա ընթացքում, դաստիարակը երեխաների հետ քննարկում է մանկապարտեզում վարքի կանոնները:

**Մանկապարտեզում օրինակելի վարքի կանոնները**

1. Երբ մենք գալիս ենք մանկապարտեզ, պետք է ողջունենք մեծերին և փոքրերին: Մեծերին ողջունում ենք ասելով «Բարև՝ Ձեզ», իսկ մտերիմներին՝ «Բարև», «Ողջույն»:

2. Եթե ուզում ես դիմել, նախապես մտածիր, թե ինչի՞ մասին ես ուզում հարցնել, այնուհետև մոտեցիր դաստիարակին և հարգալից տոնով ասա՝ օրինակ՝ «ընկեր Սոնա, ասացե՛ք, խնդրե՛մ...»:

3. Երբ մանկապարտեզից մենք վերադառնում ենք տուն, անհրաժեշտ է հրաժեշտ տալ դաստիարակին և մեր ընկերներին, ասելով՝ «Ցտեսություն, մինչ՝ վաղը», իսկ ընկերներին՝ «Մինչ՝ վաղը», «Ցտեսություն»:

**Պարապմունքից դուրս ընթերցանություն  
Ս. Միխայլով՝ «Քայլի՛ր գգույշ»**

*Քայլի՛ր գգույշ,  
Երկշարք անթիվ մեքենաներ  
Կան քաղաքում բազմաժխոր,  
Եվ գունավոր լուսացույցներ,  
Որ վառվում են գիշեր ու գոր:*

*Ավտոբուսներն ամեն կողմից  
Մոտենում են արագ-արագ՝  
Հորանջելով պետք չէ քայլել,  
Հաշվել ճնճղուկ ու ծիծեռնակ:*

*Քայլի՛ր գգույշ և ուշադիր,  
Չուր մի՛ վազիր,  
Անցի՛ր միայն անցումներով,  
Անցի՛ր միայն անցումներով,  
Անցի՛ր միայն անցումներով,  
Մի՛ շտապիր:*

*Քայլի՛ր գգույշ և ուշադիր,  
Չուր մի՛ վազիր,  
Անցի՛ր միայն անցումներով,  
Անցի՛ր միայն անցումներով,  
Անցի՛ր միայն անցումներով,  
Մի՛ շտապիր:*

ՊԱՐԱՊՈՒԿՆԵՐ 2

Թեման՝ «Մեր սիրած խաղալիքները կամ կարևոր առարկաներ»  
Տեսակը՝ Առարկայի նկարագրություն՝ ըստ դաստիարակի հարցադրումների  
Նպատակը

Երեխաներին սովորեցնել նկարագրել առարկայի արտաքին տեսքը, հատկությունները և նշանակությունը: Չարգացնել կապակցված խոսքը: Նախապատրաստական աշխատանք՝ տարբեր հանելուկների կամ նկարագրական բանաստեղծությունների ընթերցում:

Անհրաժեշտ նյութեր՝ երեխաների նախընտրած խաղալիքներից կամ դաստիարակի ընտրությամբ որևէ առարկա (օրինակ՝ տիկնիկ, ավտոմեքենա, կենցաղային իր):

Ընթացքը

Բոլորի համար տեսանելի տեղում դրվում է նկարագրվող առարկան: Երեխաների ուշադրությունը հրավիրելով այդ առարկայի վրա՝ դաստիարակը հարցնում է.

1. Ի՞նչ է սա:
2. Ի՞նչի՞ համար է այն:
3. Ի՞նչպիսի՞ն է այն:

(Եթե նկարագրվող առարկան տիկնիկ է, կարելի հարցնել անունը, ի՞նչ է տիկնիկի անունը, եթե կենդանի է՝ կարելի է անձնավորել. օրինակ՝ ի՞նչ բնավորություն ունի, ի՞նչ է սիրում, ի՞նչպե՞ս է ապրում, ովքե՞ր են նրա ընկերները, ո՞ր հեքիաթներում կամ մուլտֆիլմերում եք նրան հանդիպել և այլն: )

4. Ի՞նչ ունի հագին կամ մարմնի վրա, գլխին:
5. Ի՞նչ գույնի է:
6. Ի՞նչ նյութից է պատրաստված:
7. Ի՞նչո՞վ է տարբերվում մյուս առարկաներից:

Սկզբում առարկան (խաղալիքը) նկարագրում են դաստիարակի օգնությամբ՝ առաջնորդվելով տրված հարցերով, հետո՝ ինքնուրույն:

Դիդակտիկ խաղ՝ «Ի՞նչ առարկա է»

Առարկաները հերթով թաքցնել անձեռոցիկի տակ. ներկայացնել, որևէ հատկանիշ և առաջարկել գուշակել այդ հատկանիշն ունեցող առարկան: Երեխաները կարող են տալ հարցեր, որոնք նրանց կօգնեն գուշակել: Հետո դաստիարակը հետ է քաշում անձեռոցիկը և լրացուցիչ հարցերով երեխաներին մղում ավելի մանրամասն նկարագրության: Հնարավոր է օգտագործել 4-5 առարկա:

Պարապմունքը կարելի է ավարտել բանաստեղծությամբ կամ հանելուկներով.

ՏԻԿՆԻԿԸ

Տիկնիկ ունեմ՝ ծաղրածու է,  
Քիթը հավի ներկած ձու է,  
Հագնում է նա վրված մի շոր,  
Կոշիկներն են խոշո՞ր, խոշո՞ր:  
Երբ նրա հետ ես խաղում եմ՝  
Ուրախ-ուրախ ծիծաղում եմ:

ԻՄ ՏԻԿՆԻԿԸ (հեղ.՝ Վ.Վարդունի)

Մայրս մի տիկնիկ գնեց ինձ համար,  
Փոքրիկ, սիրունիկ, անունը՝ Թամար:  
Մազերը՝ գանգուր, հագուստը՝ պուտ-պուտ,  
Այտերը՝ կարմիր, աչքերը՝ կապույտ:  
Նայում էր միշտ մեզ հայացքով պայծառ,  
Երանի ինձ պես խոսել իմանար:

Հանելուկներ

Գանգուր մագերով, կապույտ աչքերով  
Մի ընկեր ունեմ ինձ շատ հարազատ:  
Կերակրում եմ, լողացնում ու  
Միշտ քնեցնում եմ ես նրան:  
Չքուցում եմ միշտ նրա հետ,  
Պատմում տարբեր պատմություններ,  
Լսում է նա ինձ ուշադիր,  
Բայց չի ասում երբեք ոչինչ: (տիկնիկ)

Խաղալիք է շատ բեթև,  
Բարձրանում է միշտ վերև:  
Անզգույշ մի հարվածից,  
Պայթում է միանգամից: (փուչիկ)  
հեղ.՝ Հ.Մխոյան

Լեզու չունի, բայց խոսում է,  
Ականջ չունի, բայց լսում է: (հեռախոս)

Թե՛ ձեռքերդ փոշոտ են,  
Թե՛ բերանդ ճաշոտ է,  
Նրա աչքին չերևաս,  
Ծիծաղելի կդառնաս: (հայելի)  
հեղ.՝ Ս. Մուրադյան

**ՊԱՐԱՊՄՈՒՆԷ 3**

**Թեման՝** «Ի՞նչ է պատմում խաղալիքն իր մասին»

**Տեսակը՝** դիդակտիկ խաղ

**Նպատակը**

Սովորեցնել երեխաներին խաղի միջոցով նկարագրել տարբեր առարկաներ՝ հնարավորություն տալով նրանց նկատելու և նշելու տվյալ խաղալիքի կարևոր հատկանիշները: Ստեղծել ուրախ, աշխույժ մթնոլորտ:

Անհրաժեշտ նյութեր՝ տուփ, որի մեջ կան տարբեր խաղալիքներ կամ գնդիկներ:

**Ընթացքը**

Դաստիարակն իր հետ բերում է մի տուփ և դնում սեղանին: Երեխաները դռնն չգիտեն՝ ինչ կա դրա մեջ: Սակայն տուփի հայտնվելը, դաստիարակի հանելուկային խոսքն արդեն հետաքրքրություն են առաջացնում նրանց մեջ: Դա ավելի է սրվում, երբ դաստիարակն առաջարկում է գուշակել, թե ինչ կա տուփի մեջ:

Գուշակելը դռնն խաղը չէ: Դա այն է, ինչ կա ժողովրդական խաղերում՝ «խաղի նախերգանքը», իսկ հեքիաթներում՝ «նախահեքիաթը»: Այդ պատճառով էլ զգուշացումը չպետք է երկար տևի:

Դաստիարակը 2-3 երեխայի առաջարկում է տուփից հանել բոլոր խաղալիքները: Երեխաները դիտում են սեղանի վրա դրված խաղալիքները: Նրանք ըստ ցանկության կարող են վերցնել դրանք, նայել ու տեղը դնել:

Այն քանից հետո, երբ խաղալիքի նկատմամբ անմիջական հետաքրքրությունն սպառված է, դաստիարակն առաջադրում է խաղի խնդիրը:

- Խաղալիքներով դուք խաղում եք տարբեր խաղեր՝ «Խանութ», «Հրաշալի պարկ» և այլն: Իսկ հիմա կրացահայտենք՝ «Ի՞նչ կպատմի խաղալիքն իր մասին»: Սա ևս հետաքրքիր խաղ է:

Ապա դաստիարակը ցուցադրում է երեխաներին ծանոթ կապույտ գնդիկը, գլորում այն սեղանի վրայով և հարցնում.

- Ի՞նչ է սա:

- Գնդիկ, կապույտ գնդիկ, - պատասխանում են երեխաները:

- Ապրե՛ք, դուք շատ արագ իմացաք: Չէ՞ որ գնդիկն ինքն է իր մասին պատմում, որ կտր է, կապույտ գույն ունի և գլորվում է:

Կանչում է մեկ երեխայի, որը պատմում է գնդիկի մասին: Մյուսները կարող են լրացնել ընկերոջը: Եվ այսպես դաստիարակը ներկայացնում է մի քանի խաղալիք և՛ հնարավորություն տալով երեխաներին նկատելու և նշելու տվյալ խաղալիքի կարևոր հատկանիշները: Անհրաժեշտության դեպքում դաստիարակն օգնում է երեխաներին:

Խաղը կրկնվում է մի քանի անգամ:

**ՊԱՐԱՊՄՈՒՆԷ 4**

**Թեման՝** «Նապաստակին հյուր»

**Տեսակը՝** խաղալիքի նկարագրական պատմում

և նդիրները

• Սովորեցնել կազմել նկարագրական պատմվածք խաղալիքի մասին:  
• Շարունակել սովորեցնել բառերը նախադասության մեջ համաձայնեցնել՝ դեմքով, բվով, ժամանակով, հոլովով:

• Ջարգացնել երեխաների կապակցված խոսքը, նկարագրության միջոցով հանելուկները գուշակելու կարողությունները:  
• Դաստիարակել հոգատար վերաբերմունք խաղալիքների հանդեպ:

**Պարապմունքի ընթացքը**

Հնչում է հեռախոսի զանգը:

**Դաստիարակ**

- Երեխաներ, պարզվում է, որ բջջային հեռախոսով, SMS- հաղորդագրություն է ստացվել: Ուզո՞ւմ եք իմանալ, թե ի՞նչ է գրված:

«Քարն՝ ձեզ, իմ սիրելի՛ բարեկամներ: Գրում է ձեզ հեքիաթային անտառից ձեր բարեկամ նապաստակը: Ես տխուր եմ: Շատ ուրախ կլինեմ, եթե ձեզ հանդիպեմ: Անհամբերությամբ սպասում եմ: Չեր ընկեր՝ նապաստակ»:

-Երեխաներ, ասացե՛ք խնդրեմ, ինչպիսի՞ն է նապաստակի տրամադրությունը /երեխաների պատասխանները/:

-Ճիշտ է, նա տխուր է, հուզված: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ/ երեխաների պատասխանները/:

-Այո, գուցե նա մոլորվել է, գուցե քարն է ծակել կամ հիվանդացել է, իսկ գուցե ցուրտ է, և նա մրսում է:

Դե ինչ, երեխաներ, գնացինք անտառ: Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս հասնենք անտառ /երեխաների պատասխանները/: Ջրույցի ընթացքում դաստիարակն աննկատ գլորում է կծիկը:

Երեխաներ, այս ի՞նչ կախարդական կծիկ է հայտնվել մեզ մոտ. եկեք խնդրենք նրան, որ մեզ օգնի գտնել մեր ընկերոջը:

*Կծիկ, կծիկ պատմի՛ր մեզ,*

*Կծիկ, կծիկ ցույց տուր մեզ,*

*Ինչպե՞ս գտնենք մեր ճամփան,*

*Ինչպե՞ս հասնենք մենք նրան:*

Կծիկն ասում է. «Ես կօգնեմ ձեզ, եթե դուք նախապես խաղաք ինձ հետ»

Դիդակտիկ խաղ՝ «Անվանի՛ր մեկ քառով» /միջատներ, բույուններ, ծառեր, ծաղիկներ, կենդանիներ/:

Ապրե՛ք, երեխաներ, դուք շատ բան գիտեք, ուրեմն եկե՛ք իմ հետևից:  
Դաստիարակը կծիկը գլորում է նապաստակի տան մոտ:

Ահա մենք հասանք նապաստակի տուն/ երեխաները շնորհակալություն  
են հայտնում կծիկին/: Դաստիարակը կծիկը պահում է ծառի մոտ:

**Նապաստակ**

- Ինչպե՞ս դուք որոշեցիք գալ ինձ մոտ /երեխաների պատասխանները/:  
Ես շատ տխուր էի, ուզում էի ձեզ հետ խաղալ: Ընորհակալություն, որ եկաք:  
Երեխաներից մեկն առաջարկում է նապաստակի մասին հանելուկ.

Թփերի տակ միշտ կուչ եկած,

Քնում է նա աչքերը բաց /երեխաների պատասխանները/:

Դաստիարակն առաջարկում է երեխաներին գրուցել նապաստակի մա-  
սին:

-Իսկ ինչպիսի՞նք են մեր ընկերը,-շարունակում է դաստիարակը:

- Նապաստակը սպիտակ է, փափուկ է, բարի է, գեղեցիկ:

- Նա գլխին ինչե՞ր ունի/երեխաների պատասխանները/:

Դաստիարակը ներկայացնում է պատմումի օրինակ. «Նապաստակը  
սպիտակ է, փափուկ, բարի, ճարպիկ և գեղեցիկ: Գլխի վրա կան երկար  
ականջներ: Ունի կլոր, շագանակագույն աչքեր և սև քթիկ: Վզին կա վարդա-  
գույն ժապավեն: Նա ունի չորս թաթ և փոքրիկ, ճերմակ փափկամազե պոչ:  
Ես շատ եմ սիրում խաղալ նրա հետ»:

Եկե՛ք պատմենք նապաստակին, թե ի՞նչ գիտենք մենք նրա մասին /4-5  
երեխա պատմում են/:

**Նապաստակ**

- Սիրելիներս, շնորհակալ եմ, դուք շատ բան գիտեք իմ մասին: Ինձ շատ  
հաճելի էր ձեզ լսել: Դուք ինձ ուրախացրիք և բարձրացրիք իմ տրամա-  
դրությունը:

Դաստիարակը շարունակում է. «Իսկ անտառում ո՞ւմ հետ է ընկերություն  
անում նապաստակը. ո՞ր միջատների, ո՞ր թռչունների /երեխաների պատաս-  
խանները/:

Դուք ճիշտ հիշատակեցիք նապաստակի ընկերներին, բայց նա ունի նաև  
քշնամիներ. ումի՞ց նա պետք է վախենա /երեխաների պատասխանները/:

Թշնամիներից նրան փրկում են արագավազ ոտքերը: Մենք գիտենք նաև,  
որ քշնամիներից խույս տալու համար նա փոխում է իր մուշտակը:

Ընորհակալ եմ, երեխաներ, դուք շատ խելացի եք, շատ բան գիտեք իմ  
մասին: Իսկ ուրիշ կենդանիների, թռչունների կամ միջատների մասին ինչ-որ  
բան գիտե՞ք: Առաջարկում է հանելուկներ աղվեսի, էշի, արջի, սարդի, կա-  
չաղակի մասին.

Յոթ երգ գիտի,  
Յոթն էլ մեղրի մասին,  
Ի՞նչ կենդանի է,  
Ով արդյոք կասի: /արջ/

Ո՞վ է ամենից խոնարհ,  
Բայց անվանում են հիմար: /էշ/

Ո՞վ է, ո՞վ է՝ մի տեսեք,  
Ոչ թել ունի, ոչ էլ հենք,  
Մակայն թելից էլ բարակ  
Ցանց է գործում նա արագ:

Հագին մուշտակ,  
Դեղին-մեղին,  
Թշնամին է հավի ցեղին:  
/աղվես/

/սարդ/

Գող թռչուն է՝ երկար պոչով,  
Հայտնի է զիլ կշիռով:

Թևիկներին՝ խալեր սիրուն,  
Ծաղիկներին շատ է սիրում:

/կաչաղակ/

/քիթեռ/

Փոքրիկ է, պզպան,  
Ում կծեց՝ կտզտզան/մոծակ/:  
Ես ու դու ունենք և՛ քիթ, և՛ բերան՝  
Տեղ ու դերերով՝ այլ միանգամայն,  
Իսկ նրանք ունեն մի տուր բան միայն,  
Որ և՛ լավ քիթ է, և լավ էլ բերան:  
/թռչունների կտուց/

Դուք շատ ճիշտ գուշակեցիք հանելուկները, ձեզ հետ շատ հետաքրքիր է:  
Դաստիարակն առաջարկում է՝ նապաստակին հյուր տանել իրենց հետ  
մանկապարտեզ, և ամփոփում է:

- Ի՞նչը դուր եկավ ձեզ այսօրվա ճանապարհորդությունից:

Խոսքի հնչյունային կուլտուրա

Ճշգրտել ժ հնչյունի արտասանությունը: Հետևել երեխաների շրթունքնե-  
րի, լեզվի դիրքին, դուրս մղվող օդին: Խաղալ՝ «Ընտրի՛ր և առանձնացրո՛ւ»:  
Բառերի մեջ առանձնացնել ժ հնչյունը: Պարզ և հստակ արտասանել այդ  
հնչյունով մի շարք բառեր:

Վերջում առաջարկել ժամացույցի մասին հանելուկ:

Աշխատում է օրնիբուն  
Մի գեղեցիկ մեքենա,  
Ով որ նրան չնայի,  
Աշխատանքից կուշանա: /ժամացույց/

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 5

Թեման՝ «Մեր սիրած իրերը (խաղալիքները)»

Տեսակը՝ ստեղծագործական պատմում՝ նկարագրության տարրերով  
Նպատակը

Մովորեցնել՝ խաղալիքներով կամ առարկաներով հորինել փոքրիկ պատմություններ: Ջարգացնել քերականորեն ճիշտ, կապակցված խոսելու կարողությունը, ստեղծագործական միտքը:

Նախապատրաստական աշխատանք

Լ. Պողոսյանի «Խաղալիքների ժողովը», «Նումինիկի փիսիկը», Ա. Մովսիսյանի «Բարի գալուկը» պատմվածքների, Ղ. Աղայանի «Մագիկ», Ս. Մուրադյանի «Ժամ գնդակը», Ավ. Ճուղուրյանի «Ժամ շնիկը», Ս. Կապուտիկյանի «Գնացքը» բանաստեղծությունների ընթերցում:<sup>1</sup>

Անհրաժեշտ նյութեր

Երեխաների նախընտրած իրը (խաղալիք, կենցաղային առարկա կամ անձնական իր):

Ընթացքը

Երեխաների տեսողաշտում տեղադրե՛ք նրանց նախընտրած առարկան և առաջարկե՛ք մի փոքրիկ պատմություն հորինել դրա վերաբերյալ: Ուղղորդող հարցերով օգնե՛ք նրանց նկարագրել այն և խրախուսե՛ք ստեղծագործական միտքը:

1. Ի՞նչ տեսք ունի այն:
  2. Ի՞նչ մասերից է այն կազմված:
  3. Ի՞նչ գույն ունի:
  4. Բնության մեջ տարվա ո՞ր եղանակին եք այսպիսի գույների համդիպում:
  5. Ինչի՞ եք նմանեցնում:
  6. Ինչպե՞ս եք դուք օգտագործում այս առարկան:
  7. Պատկերացրե՛ք, որ կորցրել կամ վնասել (կոտրել, կեղտոտել, պատռել) եք այն, ի՞նչ կանեք: Փորձե՛ք պատմել:
- Հորինե՛ք փոքրիկ իրավիճակներ և օգնե՛ք երեխաներին՝ ազատ մտքեր արտահայտելու և պատմություն հյուսելու իրենց սիրած խաղալիքի կամ առարկայի շուրջ: (Եթե առարկան սպասք է, կարելի է դրդել, որ պատմեն իրենց կամ ընկերոջ ծննդյան տարեդարձի կամ խոհարարի աշխատանքի մասին, եթե կահույք է, առաջարկե՛ք նկարագրել իրենց բնակարանը, եթե խաղալիք ավտոմեքենա է՝ ներկայացնեն իրենց փողոցը, խոսեն երթևեկության

կամ հետաքրքիր ճամփորդության մասին, եթե խաղալիք արջուկ է կամ այլ կենդանի՝ կենդաբանական այգու, կրկեսի կամ անտառի մասին և այլն):

Խրախուսեք բոլորին՝ պատասխանելու հարցերին. պատմել հարցրե՛ք ցանկացողներին, առաջարկե՛ք լրացնել միմյանց:

Անցկացրե՛ք «Հագցրո՛ւ տիկնիկին» դիդակտիկ խաղը: Առաջարկվող զգեստներից և կոշիկներից երեխաներն ընտրում են տարվա եղանակին հմապատասխանող հագուստ: Օրինակ՝ աշնանը տիկնիկին զրոսանքի տանելիս ընտրում են աշնանային հագուստ՝ անձրևանոց, փակ կոշիկ, բաճկոն, ձմռանը՝ վերարկու, տաք գլխարկ, ձեռնոց, վզպատ, երկարաճիտ կոշիկ, ամռանը արևային ակնոց, թեթև զգեստ, բաց կոշիկ, արևից պաշտպանվելու գլխարկ և այլն:

Պարապմունքն ավարտե՛ք շուտասելուկով.

*Մեր տան առաջ կանաչ կակաչ,*

*Կանաչ կակաչ մեր տան առաջ:*

Վերջում հանձնարարե՛ք՝ հորինած պատմությունները պատկերել թղթի վրա, և ստեղծե՛ք ցուցահանդես: Երեխաները կշրջեն ու ընկերներին կպատմեն իրենց աշխատանքների մասին:

<sup>1</sup> Առաջարկվող ստեղծագործություններից դաստիարակներն իրենց ընտրությամբ կարող են ընթերցել մեկը կամ երկուսը:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ 6-8

Թեման՝ «Խելացի հեքիաթներ»

Տեսակը՝ խոսքի զարգացում՝ ինտերակտիվ խաղերի միջոցով  
Նպատակը

Սովորեցնել վերլուծել խաղը, պատմել իրենց տպավորությունները (ինչն իրենց դուր եկավ, որն էր դժվար, ինչպես իրավիճակից դուրս եկան և այլն): Զարգացնել խոսքը, քիմով աշխատելու, համագործակցելու հմտություններ, դրդել նրանց գիտակցելու միասնական աշխատանքի արդյունավետությունը<sup>2</sup>:

Հասնել այն բանին, որ երեխաները բավականություն ստանան խաղից և միշտ պատրաստ լինեն իրենց փորձարկելու նոր իրավիճակներում:

Ընդհանրացնել երեխաների գիտելիքները ծանոթ հեքիաթների մասին: Մեր և հետաքրքրություն արթնացնել գեղարվեստական գրականության ժանրերից հեքիաթի նկատմամբ: Զարգացնել գրական ստեղծագործությունների իմաստն ըմբռնելու, դրանց բովանդակությունը հուզականորեն արտահայտելու կարողությունը: Ծառունակել զարգացնել ակտիվությունը, տրամաբանական մտածողությունը, հիշողությունը, կապակցված խոսքը, պարզ և բարդ նախադասությունները շարահյուսորեն ճիշտ կառուցելու կարողությունը:

Անհրաժեշտ պարագաներ՝ հեքիաթների հերոսների ամբողջական և կտրտված պատկերներ, քարտերի հավաքածու՝ հեքիաթի հերոսների պատկերներով, գունավոր մատիտներ, ֆլումաստերներ, պլաստիլին:

Պարապմունքները կարելի է անցկացնել 2-3 օրվա ընթացքում:

Խ ա դ ՝ Հ. Թումանյանի «Երկինքը փուլ է գալիս» հեքիաթի քննալով<sup>3</sup>  
/ինտեգրված պարապմունք՝ խոսք+ձեպ/

Խաղից առաջ երեխաների հետ միասին հիշում են հեքիաթի բովանդակությունը: Խաղի կանոնները բացատրելուց հետո դաստիարակը երեխաներին տալիս է հեքիաթի հերոսների ամբողջական և կտրտված պատկերները: Յուրաքանչյուր ենթախումբ կտրտված հատվածներից հավաքում է հերոսների ամբողջական պատկերները և դասավորում այն հաջորդականությամբ, որը տրված է հեքիաթում: Հաջորդ փուլում ենթախմբի անդամները ծեփում են նախասիրած հերոսին՝ օգտագործելով բնական նյութեր: Խաղի ավարտից

<sup>2</sup> Երեխաներին նախապես ծանոթացնել խնդրին, որը պետք է լուծել նպատակին հասնելու համար:

<sup>3</sup> Դաստիարակը կարող է ընտրել Հովի. Թումանյանի «Ուլիկը», Դ. Դեմիրճյանի «Պույ-պույ մուլիկը» և երեխաներին հոգեհարազատ այլ հեքիաթներ ու մշակել դրանք որպես ինտերակտիվ խաղեր:

հետո երեխաները դաստիարակի հետ միասին վերլուծում են արդյունքները (պարզում են, քե ի՞նչը ստացվեց, ի՞նչը՝ ոչ, ու՞մ համար էր դժվար, ինչու՞):

Այս խաղերի նպատակն է՝ զարգացնել երեխաների խոսքը (պետք է կարողանան քերականորեն կապակցված նախադասություններով նկարագրել այն գործողությունները, որոնք կատարել են), քիմով աշխատելու, համագործակցելու հմտություններ, դրդել նրանց գիտակցելու միասնական աշխատանքի արդյունավետությունը:

Ռ ու ս ա կ ա ն ժ ո ղ ո վ ղ դ ա կ ա ն հ ե ք ի ա ք ՝  
«Պ ա պ ն ու շ ա դ գ ա մ ը »

/ինտեգրված պարապմունք՝ խոսք+ձեպ+նկարչություն/

Խաղից առաջ անցկացվում է նախապատրաստական աշխատանք, որի ընթացքում երեխաները վերհիշում են հեքիաթի բովանդակությունը: Տրվում են հեքիաթի բովանդակությանը վերաբերող հարցեր:

1. Ի՞նչ է շաղգամը:
2. Ի՞նչու՞ պապը մենակ չկարողացավ հանել այն:
3. Ովքե՞ր օգնեցին պապին:

Դաստիարակն առաջարկում է գունավորել հեքիաթի գծապատկերները:

Խաղն անցկացնելու համար խումբը բաժանվում է 2-3 ենթախմբերի՝ յուրաքանչյուր ենթախմբում 6-7 երեխա: Նախապես պատրաստվում են միատեսակ քարտերի հավաքածու՝ հեքիաթի հերոսների պատկերներով, մատիտներ, յուղամատիտներ, պլաստիլին: Դաստիարակը հստակ ձևակերպում է առաջադրանքը: Երեխաները պետք է կտորներից ստանան հեքիաթի հերոսների ամբողջական պատկերները:

Յուրաքանչյուր երեխա հավաքելու է հեքիաթի մեկ հերոսի պատկեր: Ստացված ամբողջական պատկերները դասավորում են այն հերթականությամբ, ինչպես տրված է հեքիաթում: Դաստիարակը հիշեցնում է, որ պետք է պահպանել հետևյալ կանոնները.

- Աշխատել որքան հնարավոր է արագ:
- Շփվել միայն միմիկայով կամ շարժումներով:

Առաջադրանքը կատարելուց հետո դաստիարակն առաջարկում է անցնել խաղի հաջորդ փուլին: Խաղի մասնակիցները պետք է ստանան շաղգամ (նկարեն կամ ծեփեն):

Ավարտից հետո երեխաները միասին վերլուծում են խաղի արդյունքները (պատմում են այն մասին, քե ինչը ստացվեց, բոլո՞րը կարողացան, ու՞մ համար էր դժվար, ինչու՞):

**Ռուսական ժողովրդական հեքիաթ՝ «Պալատիկ»**  
/ինտեգրված պարապմունք՝ խոսք+կառուցողական աշխատանք/

Խաղից առաջ երեխաները վերաբարձրում են հեքիաթի բովանդակությունը՝ ըստ հետևյալ հարցերի.

1. Որտե՞ղ է գտնվում պալատիկը:
2. Ո՞վ առաջինը սկսեց ապրել պալատում:
3. Ինչու՞ արջը բարձրացավ տանիք:

Երեխաներին առաջարկվում է գունավորել հեքիաթի գծապատկերը:

Այնուհետև ենթախմբերը կտրտված հատվածներից հավաքում են հեքիաթի հերոսների ամբողջական պատկերները:

Առաջադրանքը կատարելուց հետո երեխաներին տրվում են կառուցողական նյութեր, որոնցով երեխաները պետք է կառուցեն իրենց սեփական պալատիկը:

Խաղն ավարտելուց հետո երեխաները տպավորություններ են փոխանակում և գնահատում իրենց աշխատանքի արդյունքները:

**Մեթոդական ցուցումներ դաստիարակին**

Ինտերակտիվ խաղերի անցկացման նախապատրաստական փուլում դաստիարակի կողմից երեխաներին առաջադրվում են հարցեր: Այդ ժամանակ հարկավոր է նկատառել հետևյալ խորհուրդները.

1. Վստահ եղեք, որ հարցը հասկացվել է:
2. Հարցը ձևակերպե՞ք հակիրճ:
3. Կշռադատե՞ք հարցի բարդությունը և երեխաների կողմից պատասխաններ ստանալու հնարավորությունը:
4. Մի՛ տվեք անուղռ հարցեր:
5. Ինքներդ մի՛ պատասխանեք հարցերին:

**ՊԱՐԱՊՄՈՒՆԸՆԵՐ 9-13**

**Նախապատրաստական աշխատանք**

*Առավոտյան գրույց երեխաների հետ*  
*Թեման՝ «Ի՞նչ գիտես աշնան մասին»*

**Հարցեր գրույցի համար**

- Գիտե՞ս, արդյոք, օրացույցի ո՞ր օրվանից է սկսվում աշունը:
- Ինչպիսի՞ն է աշունը:
- Ո՞ր կենդանին է աշնանը ձագուկներ ծնում (նապաստակը):
- Որտե՞ղ են անհետանում աշնանը թիթեռները, մոծակները, մլակները:

*/Թիթեռները հարսնեկավորվում են (հարսնյակ դառնում), բզեզները ծու են ածում և մեռնում, միջատները ճեղքերն են մտնում, կուչ են գալիս ծառերի կեղևների տակ և այդպես էլ ձմեռում/:*

• Ո՞ր կենդանին է իր համար սունկեր չորացնում ծառերի վրա՝ ձմռանը պաշար ունենալու համար (սկյուռը):

• Որտե՞ղ են անհետանում ձմռանը գորտերը (ծածկվում են տիղմի մեջ կամ ջրամբարի հատակում):

• Ո՞ր կենդանիներից են գյուղատնտեսական աշխատողները դեզերը պաշտպանում անտառում և մարգագետնում:

*Այս հարցերը կարելի է կիրառել նաև «Աշուն» թեմայով վիկտորինայի անցկացման ժամանակ:*

**1-ին օր**

**Թեման՝ «Աշուն»**

**Տեսակը՝ գրույց**

**Խնդիրները**

**Կրթական**

Ամրապնդել երեխաների գիտելիքները բնության մեջ տեղի ունեցող սեզոնային փոփոխությունների մասին, ընդհանրացնել և համակարգել նրանց պատկերացումները աշնան բնութագրիչ հատկանիշների մասին, ծանոթացնել նրանց օրացույցին:

**Դաստիարակչական**

Դաստիարակել սեր հայրենի բնության հանդեպ, շարունակել երեխաներին հաղորդակցել ազգային մշակույթին:

**Չարգացնող**

Չարգացնել երեխաների մեջ փոխկապակցվածության գաղափարը, կապերի վերականգնման կարողությունը, ուշադրությունը և հիշողությունը:

Բառապաշարը հարստացնել տերևաթափ, բերքահավաք, ոսկե, նախշուն, ամպամած, գույնզգույն, վարդագույն, շագանակագույն, դեղնահեր, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր բառերով:

Անհրաժեշտ նյութեր՝ նկարներ տարվա եղանակների վերատպություններով

**Նախապատրաստական աշխատանք**

Կազմակերպվում է զբոսանք մանկապարտեզի մերձակա պուրակում հողամասում, անտառում:

Ջրոսանքի դիտումների ժամանակ երեխաների ուշադրությունը հրավիրվում է աշնանային բնապատկերի գեղեցկության, գունային բնորոշ առանձնահատկությունների վրա: Երեխաներն ունկնդրում են աշնանային բնության մեղեդիները՝ քամուց օրորվող ծառերի աղմուկը, թափվող տերևների շրշույնը, չվող թռչունների ճիչերը:

Դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրում է աշնանային գուներանգներին և առաջարկում՝ նայելով որոշել, թե ո՞ր գույներն են իշխում աշնանային բնապատկերում, ի՞նչ են հիշեցնում այդ գույները, ինչպիսի տրամադրություն և զգացում են արթնացնում դրանք: Երեխաներին մղել եզրահանգման, որ աշնանը բնորոշ են դեղին, նարնջագույն, ոսկեգույն, շագանակագույն, կարմիր գույները և դրանց նրբերանգները, և այդ գույները հիշեցնում են արև, կրակ, առաջացնում են ջերմություն, ուրախ աշխույժ տրամադրություն: Այդ գույներին կարելի է տալ տաք անվանումը:

**Խաղ՝ «Աշուն»**

Նպատակը. ամրապնդել երեխաների գիտելիքները բնության աշնանային գույների վերաբերյալ, սովորեցնել տարբերել տերևներն իրենց չափերով և գույներով: Ծանոթացնել տերևաթափ հասկացությանը:

Անհրաժեշտ պարագաներ՝ աշնանային տերևներ

**Խաղի ընթացքը**

Դաստիարակի հրահանգով երեխաներն ընտրում և վերցնում են մեկական տերև, որը նախապես հավաքել էին մանկապարտեզի բակից: Նրանցից յուրաքանչյուրը ցուցադրում և ներկայացնում է իր ընտրած տերևն ըստ չափի և գույնի: Համեմատում է ծառերի տակ թափված տերևները ճյուղերին մնացածների հետ, որոշում, թե տվյալ տերևը որ ծառից է ընկել ցած:

Դաստիարակը երեխաներին բացատրում է, որ տերևները շատ թեթև են և ծառից պոկվելու հետևանքով նրանք օդում մեղմ ճոճվելով թափվում են գետնին:

Երեխաները թափահարելով ձեռքերը, վերածվելով թափվող տերևների, վազվզում են:

Դաստիարակի՝ «Տերևաթափ է, տերևաթափ է, դեղին տերևները թռչում և պտտվում են օդում» հրահանգից հետո դեղին տերևներ ունեցող երեխաները պտտվում և հանգիստ ու մեղմ կքանստում են:

Դաստիարակի՝ «տերևաթափ է, տերևաթափ է, կարմիր տերևները թռչում և պտտվում են օդում» հրահանգավորումից հետո կարմիր տերևներ ունեցող երեխաներն են պտտվում և հանգիստ ու մեղմ կքանստում:

«Քամի բարձրացավ» արտահայտությանը զուգահեռ դաստիարակը քները պարզած մտնենում է երեխաներին: Երեխաները ոտքի են կանգնում և, քամուց փախչելով, պտտվում են տարբեր կողմերում:

Դաստիարակի «տերևաթափ է, տերևաթափ է, կարմիր տերևները նորից թռչում և պտտվում են օդում» հրահանգավորումից հետո կարմիր տերևներ ունեցող երեխաները նորից պտտվում և հանգիստ ու մեղմ կքանստում են:

Նույնը կարելի է կրկնել թե՛ դեղին տերևների, թե՛ մեծ և փոքր տերևների հետ:

Խաղը կարելի է ավարտել տերևների, կամ քամու մասին որևէ բանաստեղծության արտասանությամբ կամ երգով:

**Պարապմունքի պլան**

1. Պարապմունքին երեխաները ներգրավվում են ենթախմբերով: Խաղ՝ «Գտիր քո խումբը»: Խաղի համար օգտագործել տարվա տարբեր եղանակները պատկերող նկարներ, վերատպություններ:

2. Աշնանային ամիսներ՝ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր,

**Պարապմունքի ընթացքը**

Սկսել աշնան մասին հանելուկով.

*Ծառն է մերկացել, քամին է փչում,*

*Ցուրտ ու մռայլ է, անձրև է մաղում,*

*Թռել են, փախել թիթեռ ու թռչուն,*

*Դե գուշակեցեք՝ այդ ե՞րբ է լինում:*

Հիշել և ընդհանրացնել երեխաների հետ աշնանը բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների մասին:

Շեշտադրել և առանձնացնել աշնան բնութագրիչները.

**Դաստիարակ**

- Տարվա ո՞ր եղանակն է այժմ:

- Թվարկե՞ք աշնանային ամիսները:

- Օրացույցի ո՞ր օրվանից է սկսվում աշունը:

- Ի՞նչ է տեղի ունենում աշնանը բնության մեջ, կենդանիների և թռչունների վարքագծում:

- Ո՞ր կենդանիներն են աշնանը ձագուկներ ունենում:

- Ո՞ր թռչուններն են չվում տաք երկրներ և ինչու՞:

- Որո՞նք են մնում մեզ մոտ ձմեռելու:

Երեխաներ - Կան թռչուններ, որոնք չվում են տաք երկրներ՝ ծիծեռնակը, արագիլը, կռունկները, սարյակները, իսկ մեզ մոտ մնում են ձմեռելու կաշաղակները, ճնճողուկները, ագռավները և այլն:

- Ինչ՞ով են զբաղված մարդիկ դաշտերում, բանջարանոցներում, այգիներում /երեխաների պատասխանները/:

- Ինչպե՞ս են հագնվում մարդիկ աշնանը:

Դաստիարակ - Աշունն այնքան գեղեցիկ է, որ մեր բանաստեղծները, նկարիչները, երգահանները գովերգել են այն իրենց ստեղծագործություններում: Եկե՛ք վերհիշենք, թե հայ ո՞ր անվանի նկարիչներն են իրենց ստեղծագործություններում պատկերել աշունը /Մ. Սարյան, «Աշնանային ծաղիկներ», Գ. Բաշինջադյան, «Աշուն», Հ. Կոջոյան, «Աշուն»/:

Դաստիարակը նշում է, որ բանաստեղծները ևս գովերգել են աշնան գեղեցկությունը /Դ. Ադայան, Հ. Թումանյան, Հ. Հայրապետյան/:

Երեխաներն արտասանում են հատվածներ՝ աշնանը նվիրված ստեղծագործություններից:

**Ասացվածքներ՝ աշնան մասին**

Աշնան մեկ օրը տարի է կերակրում: Ճտերն աշնանն են հաշվում:

Խաղ-վարժություն՝ «Ճիշտ է, ճիշտ չէ».

- Աշնանը թռչունները չվում են մեզ մոտ տաք երկրներից: Ճի՞շտ է /ճիշտ չէ/:

- Աշնանը ծառերի վրա բողբոջում են տերևները: Ճի՞շտ է /ճիշտ չէ/:

- Աշունը հաջողում է գարնանը: Ճի՞շտ է /ճիշտ չէ/:

- Աշնան ամիսներն են՝ մարտ, ապրիլ, մայիս: Ճի՞շտ է /ճիշտ չէ/:

- Աշնան ամիսներն են՝ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր: Ճի՞շտ է /ճիշտ չէ/:

**Դաստիարակ**

Դաստիարակն ընդհանրացնում է երեխաների պատասխանները և եզրահանգում.

- Ի՞նչ բառերով կարող ենք նկարագրել աշունը:

Երեխաների հնարավոր պատասխանները /ոսկեգոծ աշուն, գեղեցիկ աշուն, գունագեղ աշուն, բերքառատ, անձրևոտ աշուն և այլն/:

Աշխատանք գրքերի անկյունում: Երեխաների հետ դիտել աշնանային բնություն պատկերող նկարներ: Փորձել նկարների օգնությամբ որոշել՝ աշնանային ո՞ր ամիսն է պատկերված նկարներում, երեխաների հետ քննարկել վաղ և ուշ աշնան բնութագրիչները: Վարժեցնել երեխաներին ըստ նկարների՝ երկու, երեք, չորս բառերով նախադասություններից պատմվածք կազմելու կարողությունը:

Ընթերցանություն՝ երեխաների համար:

**2-րդ օր**

Թեման՝ Հ. Հայրապետյան «Աշուն»

Տեսակը՝ ոտանավորի ուսուցում

Նպատակը

- Սովորեցնել արտահայտիչ արտասանել ոտանավորը:
- Ջարգացնել երեխաների մեջ ձայնի ուժը և հնչերանգը փոխելու կարողությունը՝ ստեղծագործության բնույթով պայմանավորված, սովորեցնել ընկալել և վերարտադրել ոտանավորի պատկերավոր լեզուն:
- Ընդգծել բանաստեղծության մեղեդայնությունը, ռիթմայնությունը, երաժշտականությունը, զարգացնել երեխաների՝ մայրենի լեզվի գեղեցկությունը նկատելու կարողությունը:
- Վարժեցնել էպիտետների, համեմատությունների ընտրության կարողությունը:
- Բառապաշարի հարստացում՝ երամ-երամ, մեզ, մոայ, պատել բառերով:

Անհրաժեշտ նյութեր՝ աշնանային բնությունը պատկերող նկարիչների նկարների վերատպություններ:

Վիվալդիի «Տարվա եղանակներ» շարքից «Աշուն» ստեղծագործության ձայնագրությունը:

**Պարապմունքի ընթացքը**

Դաստիարակը Վիվալդիի երաժշտության ներքո հիշեցնում է երեխաներին. տարվա ո՞ր եղանակն է այժմ /երեխաների պատասխանները/, իսկ ո՞ր ամիսն է, ապա շարունակում է.

-Ամբողջ շաբաթ ձեզ հետ միասին զբոսանքի ընթացքում մենք դիտում էինք, թե ինչ գույներ և գունային երանգներ էր հագել աշունը, ի՞նչ է հատուկ աշնանը: Ինչո՞վ էր բնութագրվում աշունը, և ի՞նչ բացահայտեցինք միասին:

Տարվա գեղեցիկ և շքնաղ եղանակներից է աշունը: Իրենց ստեղծագործություններում այն գովերգել են շատ բանաստեղծներ և գեղանկարիչներ:

Հիշենք դրանցից մի քանիսը /հատվածներ՝ Հ. Թումանյանի «Աշուն», «Քամի», Հ. Հայրապետյանի, «Աշնան շուկա», Մ. Թարյանի «Ես աշուն եմ նկարել», Մ. Սկրտչյանի «Տերևիկ» ստեղծագործություններից/:

Երեխաների ուշադրությունը հրավիրում է Մ. Սարյանի, Գ. Բաշինջադյանի, Փ. Թերլեմեզյանի աշնանային թեմաներով բնանկարների, աշնանային գույների գեղեցկության, ներդաշնակության վրա:

Դաստիարակը երկու անգամ կարդում է բանաստեղծությունը և ընդգծում հեղինակի անունը ու ստեղծագործության անվանումը:

Հ. Հայրապետյան

Աշուն

Դաշտ ու այգի դեղին հագան,  
Ծառ ու ծաղիկ մերկացան,  
Թռչունները երամ-երամ  
Մեր աշխարհից հեռացան:

\*\*\*

Օրը մռայլ, ցուրտ ու տխուր,  
Բարակ անձրև է մաղում,  
Մեզն է պատել դաշտ ու բուրբ,  
Էլ մարդ չկա դաշտերում:

\*\*\*

Չար ագռավը ծառի վրից  
Չմռան երգն է կոկոռում,  
Մարդ, անասուն տուն ու բնից  
Ծերուկ հյուրին են սպասում:

Դաստիարակն արտահայտիչ արտասանությունից հետո կարճատև դադար է տալիս: Եվս մեկ անգամ արտասանում է ոտանավորը, երեխաների ուշադրությունը հրավիրելով այն բանի վրա, որ նրանք պետք է լավ լսեն, որպեսզի հիշեն այն: Այնուհետև վերլուծում է, թե հեղինակն ի՞նչ բառերով է բնութագրում աշունը /երեխաների պատասխանները/:

Ընթացքում դաստիարակն օգնում է երեխաներին, հուշում է բառերը, ընդգծում հնչերանգը, հիշեցնում է խոսքի տեմպի, ձայնի ուժգնության մասին: Ավարտին դաստիարակը ևս մեկ անգամ արտասանում է ոտանավորը և առաջարկում նկարել այդ թեմայով:

Հաջորդ օրը դաստիարակն անդրադառնում է նյութի խորացմանը, ամրապնդմանը, իսկ հետո՝ կրկնությանը, բայց այս անգամ գնահատում է նաև արտասանության որակը, արտահայտչականությունը:

Դիդակտիկ վարժություն՝ «Ավարտի՛ր նախադասությունը»

Դաստիարակը սկսում է նախադասությունը և երեխաներին առաջարկում ավարտել:

Ես սիրում եմ աշունը, որովհետև.../երեխաների պատասխանները/  
Ծառերի, թփերի տերևները դեղնել են, որովհետև .../աշուն է/  
Եթե անպամած ու անձրևոտ եղանակ է, ապա.../երկինքը մոխրագույն է,  
տխուր, ոչ լուսավոր/  
Պայծառ, արևոտ օրը ուզում ես գնալ դուրս, որպեսզի.../խաղալ դրսում,  
գրոսնել/  
Մարդիկ անձրևանոց են կրում, որովհետև....

3-րդ օր

Դիդակտիկ խաղ՝ «Տարվա եղանակները»

Նպատակը

• Սովորեցնել արագ և ճիշտ ասել տարվա եղանակներին բնորոշ երևույթները:

• Նկարների հավաքածուից արագ ընտրել տվյալ եղանակին համապատասխանող նկարներ:

Անհրաժեշտ նյութեր՝ եղանակներ պատկերող նկարների ժողովածու:

Ընթացքը

Դաստիարակ

-Երեխաներ, այստեղ շատ նկարներ կան, դրանք պատկերում են տարվա տարբեր եղանակներ: Չեզնից չորս հոգի կլինեն տարվա չորս եղանակները. Գարուն կդառնա Հասնիկը, նա կանաչ զգեստ ունի, Ամառ՝ Վարդանը, նա էլ հագել է գույնզգույն վերնաշապիկ, Աշուն՝ մեր ոսկեմազիկ Գոհարը, իսկ Չմեռ՝ աշխույժ, կայտառ Արմենը: Տարվա եղանակները կնստեն տարբեր անկյուններում: Նկարների յուրաքանչյուր հավաքածուից կվերցնեք ձեր ցանկացած եղանակին համապատասխանող նկարներ և կդնեք այդ եղանակի համար նախատեսված սեղանին: Տարվա եղանակը կասի, թե ով ինչ նկար է բերել:

Երբ բոլոր նկարները կբաշխվեն ըստ եղանակների, դաստիարակը պետք է ստուգի, թե որտեղ կա տվյալ եղանակին չհամապատասխանող նկար, և ով է բերել: Միավորող պետք է հիշի տվյալ եղանակին վերաբերող հանելուկ, շուտասելուկ կամ քառյակ:

2. Խորացնել Հ. Հայրապետյանի «Աշունն շուկա» ոտանավորի յուրացումը: Խրախուսել արտասանության որակը, արտահայտչականությունը:

4-րդ օր

Թեման՝ «Ոսկե աշուն»

Տեսակը՝ ինտեգրված պարապմունք՝ խոսք+նկարչություն

Նպատակը

• Սովորեցնել գեղեցիկ խոսքով վերարտադրել աշնանային գույների համադրությունը, ներկայացնել ծառերի, տերևների, հաստ ու բարակ ճյուղերի նկարագրությունը:

• Արթնացնել նրանց մեջ վառ, գունեղ նկարներից ուրախության, բերկրանքի զգացումներ ապրելու և խոսքով արտահայտելու կարողություն:

• Չարագցնել երեխաների մեջ կերպարվեստային ստեղծագործությունների գեղագիտական ընկալումը և խոսքով արտահայտումը, սովորեցնել նկատել աշնան գունային առանձնահատկությունները, բանաստեղծական խոսքի մեղեդայնությունը, պատկերավորությունը:

Անհրաժեշտ նյութեր՝ գեղանկարիչների ստեղծագործությունների վերատպություններ, գուաշ, ջրաներկ, վրձիններ, բուլք, ջուր ապակե ջրամանով (բանկայով), բաց լաթեր կամ բաց անձեռոցիկներ:

**Պարապմունքի ընթացքը**

Հարցնել երեխաներին, թե տարվա ո՞ր եղանակն է այժմ: Ծառերի վրա ի՞նչ գույնի տերևներ կան, ո՞ր գույներն են առավել շատ: Պատասխաններից հետո ցուցադրել հայ մեծանուն գեղանկարիչներ Մ. Սարյանի «Ծաղիկներ», Գ. Բաշինջաղյանի «Աշուն», ռուս բնանկարիչ Լևիտանի «Ոսկե աշուն» ստեղծագործությունների վերատպությունները: Առաջադրել երեխաներին հարցեր.

- Տարվա ո՞ր եղանակն է արտացոլված նկարներում: Ինչպիսի՞ գույներ են օգտագործել նկարիչները աշնանային գունեղանակը հաղորդելու համար: Ծառերի վրա ի՞նչ գույնի տերևներ կան: Ո՞ր գույներն են առավել շատ: Այդ գույներին անվանում են տաք, թե՞ սառը: Պատասխանները լսելուց հետո ընդհանրացնել և ընթերցել աշնան վերաբերյալ չափածո կարճ ստեղծագործություն (դաստիարակի ընտրությամբ)՝ երեխաների ուշադրությունը հրավիրելով հեղինակի կողմից վերարտադրված աշնանային վառ պատկերների նկարագրության վրա:

Պ. Չայկովսկու «Տարվա եղանակներ» շարքից «Աշուն» ստեղծագործության մեղմ հնչյունների մերթո երեխաները սկսում են նկարել: Հիշեցնել երեխաներին, թե ծառը նկարելիս ինչի՞ց պետք է սկսել՝ բուն, ճյուղեր, տերևներ:

Պարապմունքի վերջում բոլոր աշխատանքները դիտել, քննարկել երեխաների հետ, ընդգծել նկարներում պատկերված աշնանային կյուրիտի գեղեցկությունը:

**5-րդ օր**

**Թեմա՝ «Դաշտային ծաղիկներ»**

**Տեսակը՝** ինտեգրված պարապմունք՝ ապլիկացիա + խոսք

**Նպատակը**

• Երեխաներին սովորեցնել ներկայացնել նկարում պատկերվածը՝ գեղարվեստական խոսքի արտահայտչամիջոցներով:

• Սովորեցնել տեսնել նատյուրմորտի գեղեցկությունը, գույների բազմազանությունը, ընդհանուր կյուրիտը, գույներն արտահայտել ապլիկացիայի միջոցով, ընտրել ծաղիկների գույների համադրությունը, երանգները:

• Կռլեկտիվ եղանակով ստեղծել ծավալային կոմպոզիցիա, սովորեցնել թղթից կտրտել տարբեր ծաղիկներ և տերևներ, փակցնելու միջոցով ստանալ ծաղիկների ծավալային թերթիկներ:

Անհրաժեշտ նյութեր՝ Մ. Սարյանի «Դաշտային ծաղիկներ» թեմայով նկարի վերատպությունը, հատված «Ծաղիկներ» չափածո ստեղծագոր-

ծությունից (դաստիարակի ընտրությամբ), ծաղկաման ծաղիկներով, գունավոր թղթեր:

**Պարապմունքի ընթացքը**

Մ. Սարյանի «Դաշտային ծաղիկներ» նկարի վերատպության ցուցադրում, սեղանի վրա ծաղկաման՝ դաշտային ծաղիկների ծաղկեփնջով:

**Դաստիարակ**

Գեղանկարիչները սիրում են ծաղիկներ վերարտադրել իրենց կտավներում, նկարներում, իսկ բանաստեղծները՝ ստեղծագործություններ նվիրել ծաղիկներին:

Երեխաները դիտում են վերատպությունները:

- Ի՞նչ եք կարծում, երեխանե՞ր, ո՞ր ժանրին է պատկանում այս նկարը /Մա նատյուրմորտ է/:

- Ինչպիսի՞ տրամադրություն է առաջացնում այն:

- Ինչպիսի՞ գույներ է օգտագործել նկարիչը, որ հաղորդի աշնանային դաշտային ծաղիկների գեղեցկությունը /երեխաների պատասխանները/:

- Ինչպիսի՞ ֆոն է ընտրել նկարիչը:

Հիասքանչ է «Դաշտային ծաղիկներ»-ը: Իզուր չէ, որ մեծանուն նկարչին «Գույների վարպետ» են անվանում:

Բոլորը ուշադիր նայում են ծաղկամանով դաշտային ծաղիկներին: Նշում են գույների բազմերանգությունը:

Դաստիարակը երեխաներին առաջարկում է միասին ստեղծել ծաղիկների նկար-կոմպոզիցիա /ապլիկացիա/: Բացատրում է, որ փակցվող ծաղիկների թերթիկներն անհրաժեշտ է փակցնել կիսով չափ, որպեսզի ստացվի կիսածավալային արտացոլում: Երեխաները բաժանվում են երկու ենթախմբի: Մեկ ենթախումբն ընտրում է ապագա նկարի ֆոնը: Ենթախմբում երեխաներն աշխատում են միասին, կողք կողքի: Պատկերները կտրտում են մի սեղանի վրա, իսկ ստանձում՝ մյուս սեղանի վրա: Յուրաքանչյուր երեխա ծաղիկի համար ընտրում է մեկ գույն՝ իր երանգներով: Տերևների համար ընտրում է կանաչ գույն՝ իր տարբեր երանգներով:

Աշխատանքի ավարտին երեխաները հիանում են ստացված նկարով, համատեղ ստացված գեղեցիկ աշխատանքով: Դաստիարակն ընդգծում է ստացված տարբեր ծաղիկների գեղեցկության առանձնահատկությունները և նշում, որ նկարները համապատասխան շրջանակի մեջ կառնվեն ու կտեղադրվեն «Աշունը մեր մանկապարտեզում» թեմայով ցուցահանդեսում:

**Պարապմունքից դուրս**

**Աշնանային ծաղկեփունջ՝ «Իքերանա»**

Սովորեցնել՝ աշնանային ծաղկեփունջից, բույսերից ու խոտերից կազմել գեղեցիկ կոմպոզիցիաներ. ընտրել ծաղկեփունջի կենտրոնական մասը, առանձնացնել այն գունեղ նշաններով:

Սովորեցնել՝ շրջակա միջավայրում տեսնել բնության գեղեցկությունը, գտնել գեղեցիկը, ինքնատիպը և արտասովորը, զարգացնել շրջապատող աշխարհի գեղագիտական ընկալումը:

Պատկերացումներ ձևավորել ծաղկեփունջի կոմպոզիցիայի՝ իքերանայի վերաբերյալ:

**Անհրաժեշտ նյութեր՝** երեխաների կողմից զբոսանքի ժամանակ հավաքած չորացրած ծաղիկներ, խոտեր, ճյուղեր, աշնանային տերևներ, տարբեր ծառերի չոր ճյուղեր ծաղկաման-ծաղկեփունջի համար: Դաստիարակը համառոտ տեղեկություններ է տալիս իքերանայի վերաբերյալ:

Ճապոնիայում գոյություն ունի իքերանա կոչվող /ծաղիկների կոմպոզիցիա/ հատուկ արվեստ: Իքերանա՝ բառացի նշանակում է օգնել ծաղիկներին՝ իրենց դրսևորելու: Թեև հնուց է գալիս այդ արվեստը, սակայն Ճապոնիայում յուրաքանչյուր ընտանիքում այն այսօր էլ առկա է: Իքերանայի երեք ծաղիկները /երեք ճյուղերը/ որպես կոմպոզիցիայի անբաժանելի մաս, խորհրդանշում են երկինքը, մարդը և երկիրը: Առաջին ճյուղը ամենաերկարն է, որը խորհրդանշում է երկինքը, երկրորդ ճյուղը /միջին սեծության/ մարդու խորհրդանշան է, երրորդ ճյուղը՝ ամենափոքրը, երկրի խորհրդանշան է: Այնուհետև երեխաների օգնությամբ ծաղիկների կոմպոզիցիայից կազմում է իքերանա:

**Թեմա՝ «Աշուն»**

**Տեսակը՝** նկարի պատմում

**Նպատակը**

Խորացնել երեխաների գիտելիքներն աշնանը բնության մեջ կատարվող փոփոխությունների վերաբերյալ, սովորեցնել դիտել, հասկանալ և պատմել նկարի բովանդակությունը, զարգացնել նկարագրական խոսքը, «շ» հնչյունը ճիշտ արտաբերելու կարողությունը, հարստացնել բառապաշարը *դեղին, ոսկեգոծ, գույնզգույն* անվաններով:

**Նախապատրաստական աշխատանք**

Ջրոսանք պուրակում կամ մանկապարտեզի բակում:

**Անհրաժեշտ նյութեր՝** «Աշուն», «Աշնանային մրգեր» պատկերող նկարներ, ծառերից բափված տարբեր գույների տերևներ

**Ընթացքը**

Հանելուկի նմանողությամբ /որպեսզի գուշակեն/ընթերցե՛ք Ղ. Աղայանի «Այդ ե՞րբ է լինում» բանաստեղծությունից մի հատված.

Օրն է կարճանում,

Ծառը մերկանում,

Անձրև է մաղում.

Այդ ե՞րբ է լինում:

**Հարցրե՛ք.**

- Հիմա տարվա ո՞ր եղանակն է:
- Աշնանը ի՞նչ փոփոխություններ են կատարվում բնության մեջ:
- Ինչու՞ են ասում ոսկեգոծ աշուն:
- Ի՞նչ բառերով են մարդիկ նկարագրում աշունը:
- Ի՞նչ գույներով են նկարիչները պատկերում աշունը:
- Ի՞նչ մրգեր եք ուտում աշնանը:
- Ի՞նչ եք հագնում:
- Ո՞վ է սիրում աշունը: Ինչու՞:

Շրջե՛ք նախապես պատից կախված «Աշուն» պատկերող նկարը, երեխաների ուշադրությունը հրավիրե՛ք նկարին, հարցերով օգնեք մանրամասն դիտարկել նկարի բովանդակությունը և առաջարկե՛ք պատմել:

**Հարցեր**

- Ի՞նչ է պատկերված նկարում:
- Ի՞նչ գույներով է նկարիչը պատկերել աշունը:
- Ի՞նչ գույնի են տերևները:

- Ի՞նչից է երևում, որ քամի է:
- Ինչպիսի՞ն է երկինքը:
- Ի՞նչեր են թափված անցորդների ոտքերի տակ:
- Ի՞նչ են հագել մարդիկ: Ինչու՞:
- Ի՞նչ են անում մարդիկ այգիներում:

**Ֆիզկուլտ-դադար** (վերջին հարցին պատասխանելիս բոլորը թող ոտքի կանգնեն, տեղում քայլեն և չորացած տերևների ձայն համեն «փսփ 222-222՞-222՞»):

2 րոպե դադարից հետո հարցրե՛ք պատմել:

Օրվա երկրորդ կեսին փոքրիկ նկարիչներին բաժանե՛ք գույնզգույն մատիտներ և առաջարկե՛ք նկարել աշուն: Հետո նկարները փակցրե՛ք բոլորին տեսանելի տեղում:

**Թեման՝ «Աշուն»**  
Տեսակը՝ բանաստեղծության ուսուցում՝ Ա. Շահինյան, «Աշուն»  
Նպատակը  
Սովորեցնել լսել, հասկանալ, հիշել բանաստեղծությունը, զգալ բանաստեղծության երաժշտականությունը, արտահայտիչ արտասանել այն: Հարստացնել բառապաշարը *ժողվել, հյուսել* բառերով: Դաստիարակել հուզական վերաբերմունք:

Նախապատրաստական աշխատանք  
Ն. Միքայելյանի «Աշնան նկար» բանաստեղծության ընթերցում:  
Անհրաժեշտ նյութեր՝ երեխաների՝ «Աշուն» թեմայով նկարները, աշնանային տերևներ, մեղմ երաժշտություն

**Ընթացքը**  
Տերևներով զարդարե՛ք խմբասենյակը, միացրե՛ք մեղմ, տրամադրող երաժշտություն: Հայտնե՛ք երեխաներին, որ սովորելու են շատ գեղեցիկ բանաստեղծություն աշնան մասին: Ներկայացրե՛ք բանաստեղծության վերնագիրը, հեղինակին (Ա. Շահինյան, «Աշուն»):

Անջատե՛ք երաժշտությունը, արտահայտիչ արտասանե՛ք Ա. Շահինյանի «Աշուն» բանաստեղծությունը:

Երկրորդ անգամ արտասանե՛ք տող առ տող և բացատրե՛ք անձանոթ բառերը (*ժողվել-հավաքել, հյուսել-գործել*), պատկերավոր արտահայտությունները (*ցած են իջնում պարելով, զարդարվել են գորգերով, ժողվենք գույն-գույն տերևներ*):

Երրորդ անգամ կրկին արտահայտիչ արտասանե՛ք և հարազատ մնալով հեղինակի խոսքերին՝ արե՛ք հարցադրումներ:

Չորրորդ անգամ էլ ամբողջական արտասանե՛ք և խրախուսե՛ք ցանկացողներին՝ արտասանել: (Ամեն տունը կարող է մի երեխա արտասանել՝ Չերօգնությամբ):

Հաջորդ պարապմունքին խորացրե՛ք բանաստեղծության ուսուցումը:

Աշուն, Ա. Շահինյան  
*Դեղին, կարմիր տերևները  
Ցած են իջնում պարելով,  
Ջան, աշուն է, այգիները  
Չարդարվել են գորգերով:  
Եկեք մենք էլ գնանք խմբով,  
Ժողվենք գույն-գույն տերևներ,  
Նստենք այնտեղ ու երգելով  
Հյուսենք սիրուն պսակներ:*

ՊԱՐԱՊՄՈՒՆԷ 16

Թեման՝ «Մրգեր»  
Տեսակը՝ դիդակտիկ խաղ  
Նպատակը

Ընդրայնել երեխաների գիտելիքները մրգերի, դրանց օգտակարության մասին, զարգացնել ստեղծագործական միտքը, նկարագրական խոսքը, հարստացնել բառապաշարը մրգերի անուններով, գնորդ բառով:

Նախապատրաստական աշխատանք

Գ. Մովսիսյանի «Ես ձեռք չեմ տվել» պատմվածքի ընթերցում:

Անհրաժեշտ նյութեր՝ մրգերի նկարներ կամ բնական մրգեր՝ ըստ տարվա եղանակի:

Ընթացքը

Անցկացրե՛ք «Լավ շուկա» դիդակտիկ խաղը: Սեղանին դասավորե՛ք մրգերի նկարները: 1-ին փուլում երեխաները հերթով մոտենում են դաստիարակին՝ «շուկայի վաճառողին», և նկարագրում (դաստիարակի օգնությամբ) այն միրգը, որ ցանկանում են գնել, օրինակ՝ դեղին, հյութալի, կորիզով, երկու կես է լինում, կորիզը մույնպես ուտում են, մայրիկները համով մուրաբա և չիր են պատրաստում այդ մրգից: Մյուսները գուշակում են, եթե ճիշտ են գուշակում, «զնորդը» վերցնում է այդ մրգի նկարը և մատում իր տեղը:

2-րդ փուլում դաստիարակն առաջարկում է հանելուկներ մրգերի մասին, երեխաները պետք է գուշակեն և նկարների միջից առանձնացնեն համապատասխան մրգի նկարը: Դժվարանալու դեպքում դաստիարակն օգնում է գուշակել:

Ամռան արևը  
Որքան բարձրանում,  
Դեղնում է ծ... ,  
Այնքան քաղցրանում: (ծիրան)

Երկար պռչով կարմիր բ... է,  
Դեմքիդ վրա՝ սիրուն խալ է: (բալ)

Թե օր լինի սովորական,  
Ծնունդ լինի, օր տոնական,  
Բազմած է միշտ սեղաններիս  
Կարմի խ... հաղթական: (խնձոր)

Սա մեղրածոր  
Աշնան տ... է,  
Մառաններում  
Կախված գանձ է: (տանձ)

Պտտվում են կ... շուրջ  
Ծիտիկներն ու մոշահավը,  
Կամ դեղին է, կամ կարմիր է,  
Երկու գույնն էլ՝ քաղցր ու լավը:  
(կեռաս)

Չվաճև է կամ կլոր է,  
Սպիտակ կամ սև ս... է: (սալոր)

Հյութալի դ...  
Ո՞վ չի հավանի,  
Պատվավոր զարդն է  
Ամեն սեղանի: (դեղձ)

Փոքրիկ աման, մեջը՝ կորեկ,  
Այդ միրգը շատ պիտի սիրեք.  
Թ... անցնում է երկար ճամփա՝  
Դառնում է չիր ու մուրաբա: (թուզ)

Ն... է կարմիր՝  
Ասես լինի փոքրիկ սնդուկ,  
Մեջը՝ կրակ, քաղցրիկ՝ հուլունք: (նուռ)

Արարատյան խ... է սա  
Բազմատեսակ՝  
Խարջի, բիշմիշ ու մսխալի,  
Գառան դմակ,  
Որ դառնում է կարմիր գինի,  
Ով որ խմի՝ անուշ լինի: (խաղող)

Միրգ է կլոր ու դեղին,  
Մեր բոլորի սիրելին,  
Պահարանում թե պահես,  
Շատ անուշ բույր կտա քեզ: (սերկևիլ)  
հեղ.՝ Գ. Մովսիսյան

Պարապմունքը կարող եք ավարտել շուտասելուկով.  
Չորում ծաղկած խնձորենին  
Խնձոր տվեց հնձվորին:

Հաջորդ անգամ (օրվա երկրորդ կեսին կամ կերպարվեստի պարապմունքներին) ընթերցե՛ք մրգերի մասին բանաստեղծություններ և առաջարկե՛ք նկարել (ծեփել) իրենց սիրած միրգը:

Ես խնձոր եմ  
Ես խնձոր եմ՝  
Նուրբ կեղևով,  
Կարմրաթուշ եմ,  
Շատ անուշ եմ:  
Մայր ծառից եմ  
Մնունդ առել,  
Արևից եմ  
Ես քաղցրացել:

Դե՛, մոտեցե՛ք,  
Էլ մի՛ սպասեք,  
Դե՛, մոտեցեք,  
Համտե՛ս արեք:  
(Լ. Պողոսյան)

Ս... է՝ արմատները  
Կառչած հողին,  
Բուրավետ է,  
Հպարտ, դեղին: (սերկևիլ)

Ինչն է ալվան,  
Կարմրաթուշ,  
Կորիզն անհամ՝  
Ինքն անուշ: (դեղձ)  
հեղ.՝ Գ. Մովսիսյան

Երկարավուն, ձվաձև,  
Փայլուն՝ որպես ձվածեղ,  
Միսը փափուկ ու անուշ,  
Կորիզը համեղ՝ որպես նուշ:  
Իր անունը եթե տամ,  
Պիտի հիշես Հայաստան: (ծիրան)  
հեղ.՝ Գ. Մովսիսյան

Խնձոր  
Խնձոր; խնձոր; խնձորիկ;  
Կարմրաթշիկ; սիրունիկ;  
Այդ ինչ լավն էս երևում,  
Ախորժակ էս զրգոտում,  
Մի հատ կծեմ, համբուրեմ,  
Անուշ համդ էս առնեմ:

**ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 17**

**Թեման՝** «Էքսկուրսիա դեպի մոտակա պուրակ»  
**Տեսակը՝** հնչարտաբերական ունակությունների զարգացում /C հնչյունի արտասանություն/

**Նպատակը՝** ճշտել և ամրապնդել երեխաների պատկերացումները աշնան մասին: Սովորեցնել նկատել աշնանը բնության մեջ կատարվող փոփոխությունները /կենդանական և բուսական աշխարհում/: Նկատել աշնանային բնության գեղեցկությունը: Առաջացնել ուրախ տրամադրություն և բնությունը պաշտպանելու ցանկություն:

«Գուշակի՛ր՝ ի՞նչ եմ պահել» խաղի միջոցով ամրապնդել C հնչյունը ճիշտ արտաբերելու կարողությունը, անվանել և գուշակել թաքցրած պատկերները, որոնց մեջ կա C հնչյունը:

**Անհրաժեշտ պարագաներ՝** նկարներ կամ քարտեր, որտեղ պատկերված առարկաների անվանումների բառասկզբում, բառամիջում կամ բառավերջում լսվում է C հնչյունը /շիշ, կոշիկ, շուն, աշտարակ, շաղգամ, մանուշակ, մոշ, մուշ.../:

**Պարապմունքի ընթացքը**

1. Երեխաների ուշադրությունը հրավիրելով պուրակում տեղի ունեցած փոփոխությունների վրա՝ դաստիարակը կարող է գրույցը սկսել աշնան մասին գեղեցիկ ոտանավորի արտասանությամբ.

Հորոս Ապեր՝ «Աշուն»

*Աշունն առավ ներկ ու վրձին*

*Ներկում է նա դաշտ ու անտառ,*

*Ու մտեց իր հրաբաշ ձին:*

*Հազար գույնով արևավառ:*

*Նա արևից գույն է առել,*

*Ողջ աշխարհը հազար գույնով,*

*Միրուն ներկել ու նկարել,*

*Իսկ լեռները՝ ճերմակ ձյունով:*

Դաստիարակը երեխաներին կարող է ուղղել հետևյալ հարցերը.

1. Տարվա ո՞ր եղանակն է:
2. Որո՞նք են աշնան ամիսները:
3. Ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունենում աշնանը:
4. Ի՞նչ տեսք է ստացել պուրակը:
5. Նշե՛ք բառեր, որոնք առավել բնորոշ են աշնանը:

Դիդակտիկ վարժություն՝ «Ես սիրում եմ աշունը, որովհետև .....»:

Աշխուժացնող խաղ՝ «Անձրև»:

*Երեխաները շրջան են կազմում: Շրջանից մեկ երեխա սկսում է ծափ տալ, ապա՝ կողքինը, և այսպես հերթականությամբ բոլորը ծափ են տալիս: Երբ հասնում է առաջինը սկսած երեխային, նա փոխում է շարժումը՝ ձեռքերով խփում իր ծնկներին, հերթականությամբ բոլորը փոխում են ծափն այս*

*շարժումով: Երկրորդ անգամ առաջինը սկսած երեխան կրկին փոխում է շարժումը՝ ոտքերով դոփում է գետնին, ապա նույն հերթականությամբ մյուսները նույնպես փոխում են շարժումները մինչև հասնում են ծափերին, և «անձրևը» դադարում է:*

2. Դիդակտիկ խաղ՝ «Գուշակի՛ր՝ ի՞նչ եմ պահել»:

Դաստիարակը երեխաներին ցուցադրում է առարկաների նկարներ /5-6 հատ/, որոնց անվան մեջ լսվում է C հնչյունը: Երեխաները դիտում և անվանում են պարբեր: Ապա դաստիարակը պահում է դրանցից մեկը. երեխան պետք է գուշակի, թե որը չկա:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ 18-19

Թեման՝ «Իմ քաղաքամայր Երևանը»

Տեսակը՝ գրույց

Խնդիրները

• Երեխաներին ծանոթացնել Հայաստանի քաղաքամայր Երևանին և նրա տեսարժան վայրերին:

• Ծանոթացնել մեր երկրի պետական խորհրդանիշներին:

• Չլավորել երեխաների կապակցված խոսքը, տրված հարցերին հըստակ պատասխանելու, գոյականները, ածականները խոսքում ճիշտ գործածելու կարողությունները:

• Բառապաշարի հարստացում զինանշան, օրհներգ, դրոշ, քաղաքամայր, կառավարական տուն, քանգարան, շատրվաններ, պատկերասրահ բառերով:

• Արտահայտիչ արտասանություն. ոտանավորի ուսուցում

Անհրաժեշտ նյութեր՝ Հայաստանի Հանրապետության դրոշը, օրհներգի ձայնագրությունը, զինանշանը, Երևանի տեսարժան վայրերի նկարներ: 1-ին օր

Պարապմունքի ընթացքը

Դաստիարակը երեխաներին պատմում է, որ յուրաքանչյուր երկրում կան բազմաթիվ մեծ ու փոքր քաղաքներ, սակայն այդ քաղաքներից մեկը երկրի գլխավոր քաղաքը կամ այլ կերպ՝ քաղաքների մայրն է: Այդ քաղաքում է գտնվում երկրի ղեկավարի, Հանրապետության Նախագահի նստավայրը: Այդ քաղաքում են գտնվում կարևոր շինություններ, գեղեցիկ, վարդագույն տուֆակերտ շենքեր, հրապարակներ, պուրակներ, հուշարձաններ, քանգարաններ ու պողոտաներ:

Այդ քաղաքը կոչվում է Երևան:

-Ո՞րն է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը:

Ապա դաստիարակն արտասանում է բանաստեղծություն.

ԵՐԵՎԱՆ

Հ. Միտոյան

Իմ վարդագույն գեղեցկուհի,  
Կանաչապատ ամրոց, այգի,  
Քաղաք իմ նոր, հնամենի.  
Արևոտ իմ օրևան,  
Քաղաքամայր Երևան,  
Քո շենքերով բազմահարկ,  
Ու ջրերով սառնորակ,  
Հյուրընկալ ես անչափ շատ:

Ջրույցի շարունակությունը: Ջրույցին զուգահեռ ցուցադրվում են Երևանի տեսարժան վայրերի պատկերներ, նկարների շարք:

- Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է: Քաղաքի կենտրոնում, Հանրապետության հրապարակում է գտնվում Հանրապետության կառավարության շենքը, որի վրա մշտապես ծածանվում է մեր երկրի պետական դրոշը՝ եռագույնը:

Յուրաքանչյուր երկիր ունի երեք խորհրդանիշ, որոնցով տարբերվում է ուրիշ երկրներից:

Դաստիարակ- Մա մեր պետական դրոշն է, մեր եռագույնը՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն: Կարմիրը՝ արևի, կակաչի, արյան, ուրախության, հաղթանակի գույնն է: Կապույտը գետի, լճի, երկնքի, զանգակածաղկի գույնն է: Դեղինը՝ ցորենի հասկի, ոսկե դաշտերի, ծիրանի գույնն է: Բոլոր հանդիսավոր արարողություններին բարձրացնում են հայոց դրոշը, իսկ տոնակատարություններին դրոշներով զարդարում են հրապարակները, փողոցներն ու պողոտաները:

Երկրորդ խորհրդանիշը Հայաստանի զինանշանն է, որի վրա պատկերված են արծիվն ու առյուծը, որոնց գլուխները նայում են տարբեր կողմեր: Այդ կենդանիներն առանձնանում են իրենց ուժով, խելքով, գեղեցկությամբ և խորհրդանշում են ուժ, հզորություն, աշխատանք և գեղեցկություն: Երրորդ խորհրդանշանը Հանրապետության օրհներգն է: Դա հատուկ երգ է, որը հնչում է պետական-պաշտոնական արարողությունների և հանդիսությունների ժամանակ, և բոլորն այն լսում են ոտքի կանգնած:

Հնչում է ՀՀ օրհներգի ձայնագրությունը: Դաստիարակը շարունակում է, որ երբ տարբեր երկրներում մրցում են մարզիկները, հաղթողի պատվին հնչում է իր երկրի օրհներգը (հիմնը):

Կրկին բացատրվում է, թե ինչպես պետք է մարդիկ պահեն իրենց՝ հիմնը լսելիս /հոտնկայս, լուրջամբ/:

Դաստիարակը շարունակում է պատմել երեխաներին, որ Երևանն ունի շատ հետաքրքիր, տեսարժան վայրեր, վարդագույն շենքեր, գեղեցիկ հրապարակներ և հուշարձաններ, շատրվաններ, պուրակներ ու պողոտաներ: Երևանում է գտնվում օպերայի շենքը, Մատենադարանը, մետրոպոլիտենը, քանգարաններ ու թատրոններ, պատկերասրահներ, սրճարաններ: Երևանում է գտնվում կենդանաբանական այգին, տիկնիկային թատրոնը, մանկական պատկերասրահը, կրկեսը: Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից է, որն ունի իր պատմությունը /առաջարկել դիտել «Էրեբունի» քանգարան- ամրոցի և Կայարանամերձ հրապարակի ու Սասունցի Դավթի հաղթական հուշարձանի նկարները/: Դաստիարակը պատմում է Էրեբունու բարձունքում ցուցադրված քարի մասին, որի վրա գրված է, որ Երևանի ամրոցը կառուցել է Արգիշտի թագավորը:

Երևանը որքան հին է, այնքան էլ նոր: Օրեցօր նոր, ժամանակակից շենքեր են կառուցվում, որ հիացնում են ոչ միայն մեզ, այլև զբոսաշրջիկներին: Նրա ծննդյան տոնն ամեն տարի, աշնանը մարդիկ նշում են մեծ հանդիսավորությամբ: Երևանը սիրված, հարազատ քաղաք է յուրաքանչյուր հայի համար, և նրանով հպարտանում են բոլորը:

**Հարցազրույց՝ Երևանի մասին.**

- Ինչպիսի՞ն է Երևանը:
- Ո՞ր հրապարակն է գտնվում քաղաքի կենտրոնում:
- Որո՞նք են Հանրապետության 3 խորհրդանշանները:
- Ինչպիսի՞ տեսարժան վայրեր ունի Երևանը:
- Ո՞վ է հիմնադրել Երևանը:
- Ի՞նչ պետք է անել, որ Երևանը մաքուր քաղաք լինի:

**2-րդ օր**

Շարունակել զրույցը Երևանի մասին: Դաստիարակը մեկ անգամ ևս հարցերի միջոցով վեր է հանում երեխաների գիտելիքները, լրացնելով ևս 1-2 հարց.

- Որո՞նք են Հանրապետության 3 խորհրդանշանները:
- Ի՞նչ պետք է անել, որ Երևանը մաքուր քաղաք լինի:

**Դաստիարակ** - Երևանը գովերգել են բանաստեղծները, երգահանները: Լսենք նրանց ստեղծագործություններից մեկը /Մ.Կորյուն, «Երևան»/:

*Բանաստեղծություն անգիր սովորելու համար*

Մ.Կորյուն

ԵՐԵՎԱՆԸ

Մենք սիրում ենք Երևանը՝

Այգիներով իր դալար,

Կանաչ Նորքը, Հրազդանը՝

Ջրերով ջինջ ու վարար:

Հասած խաղող քփերի տակ,

Ծառի վրա ալ խնձոր,

Տանձ, սերկևիլ, մուռ ու ելակ,

Հոտն է բոնել սար ու ձոր:

*Մենք սիրում ենք մրգեր հասուն,*

*Եվ թուզ, և նուշ, և ծիրան,*

*Մենք քո մրգի գովքն ենք ասում,*

*Մեր գեղեցիկ Երևան:*

Դաստիարակն արտահայտիչ արտասանում է ոտանավորի ամբողջական տեքստը: Կրկնում է այն ևս մեկ անգամ /կարող է կրկնել 2-3անգամ/, ապա բացատրում ջինջ, վարար, գովք բառերը, մեկ անգամ ևս արտասանելուց հետո հարցեր է ուղղում երեխաներին /երեխաները պետք է արտասանեն այնպես, որ հավատարիմ մնան հեղինակի խոսքերին/, հետո առաջարկում է կրկնել իր հետ միասին այն երեխաներին, ովքեր ունեն լավ հիշողություն և

հանդես են բերել արտասանելու ցանկություն: Այնուհետև առաջարկում է տեքստը կրկնել իր հետ միասին այն երեխաներին, որոնք ունեն թույլ հիշողություն, միաժամանակ նրանց օգնում է և՛ դիմախաղով, և՛ բառերի հուշումով:

Դաստիարակը կարող է օգտագործել խաղային հնարներ, /մեզ հյուր է եկել Գիտունիկը, արտասանենք նրա համար/ կամ տեքստի վերաբերյալ հարցերն այնպես տալ երեխաներին, որ նրանք պատասխանեն բանաստեղծության տողերով:

Պարապմունքի ավարտին ևս մեկ անգամ դաստիարակը արտասանում է բանաստեղծության տեքստը և ամփոփում:

Այնուհետև դաստիարակն առաջարկում է երեխաներին նկարել «Իմ Երևանը» թեմայով:

Պարապմունքից դուրս. էքսկուրսիա դեպի Երևանի տեսարժան վայրեր:

Մանկապարտեզում թեմատիկ ցուցահանդեսի կազմակերպում՝ «Երևանն իմ տունն է» խորագրով:

Գրքերի անկյունում տեղադրել պատկերազարդ գրքեր Երևանի տեսարժան վայրերի մասին:

Կանոններ՝ մեծ քաղաքում ապրողների համար.

- Հիշի՛ր քո հասցեն, քաղաքը, փողոցը, որտեղ դու ապրում ես:
- Հիշի՛ր քո մանկապարտեզի հասցեն, որտեղ դու հաճախում ես:
- Եղի՛ր բարեկիրք, բղավելով մի՛ խոսիր:
- Աշխատի՛ր ծնողներիցդ չհեռանալ, մի՛ շեղվիր:

Թեման՝ «Իմ քաղաքը և նրա տրանսպորտը»

Տեսակը՝ գրույց

Խնդիրները

Ծանոթացնել քաղաքի տրանսպորտին, ձևավորել երեխաների պատկերացումները տրանսպորտի տեսակների և հետիոտնի շարժման մասին:

Ձևավորել պատկերացում այն մասին, թե որքան կարևոր է քաղաքում ճիշտ քայլել և երթևեկել:

Զարգացնել երեխաների՝ քաղաքի կյանքն իրապես ընկալելու կարողությունը:

Դաստիարակել սեր հայրենի քաղաքի անցյալի, ներկայի հանդեպ:

Ակտիվացնել երեխաների բառապաշարը հետիոտն, երթևեկելի մաս, խցիկ, մարդատար, բեռնատար, հատուկ տրանսպորտ, լուսաֆոր բառերով:

Անհրաժեշտ նյութեր՝ քաղաքի տեսարժան վայրերի վերաբերյալ նկարներ, փողոցների, խաչմերուկների, մայթերի, հետիոտնի անցման տեսարաններ: Տրանսպորտի տեսակներ պատկերող նկարներ, ձայնագրություն՝ երգ հայրենի քաղաքի մասին /դաստիարակի ընտրությամբ/:

Պարապմունքի ընթացքը: Հնչում է ձայնագրություն՝ երգ հայրենի քաղաքի մասին:

Դաստիարակ - Դուք ապրում եք գեղեցիկ քաղաքներից մեկում /ըստ դաստիարակի ընտրության/: Այն որքան հին է, այնքան էլ նոր: Ո՞ր ամսին ենք մշում մեր քաղաքի ծննդյան օրը:

Պատմեցե՛ք խնդրեմ, ի՞նչն է ձեզ դուր գալիս քաղաքում: Ընդհանրացնելով երեխաների պատասխանները՝ դաստիարակը շարունակում է, որ քաղաքում շատ տեսարժան վայրեր, շենքեր, խանութներ, դպրոցներ և մանկապարտեզներ կան, օրեցօր նոր կառույցներ են ավելանում: Այնուհետև շարունակում է. «Այսօր մենք կծանոթանանք մեր քաղաքի տրանսպորտի տեսակներին: Մեր քաղաքի փողոցներով գիշեր ու ցերեկ սլանում են մեքենաները: Դրանք փոխադրում են մարդկանց, տարբեր տեսակի մթերք են տեղափոխում խանութներ՝ հաց, խմիչք, նպարեղեն, քաղցրավենիք և այլն: Ինչպիսի՞ մեքենաներ եք տեսել դուք փողոցում»:

Դաստիարակ - Ավտոմեքենաները, որոնք տարբեր տեսակի բեռներ են տեղափոխում, բեռնատար փոխադրամիջոցներ են, իսկ ինչպե՞ս են կոչվում երթուղային ավտոբուսները, տրոլեյբուսները, տաքսիները: /Մարդատար, ուղևորատար տրանսպորտ/:

- Իսկ ինչպե՞ս են անվանում այն մարդկանց, ովքեր վարում են մարդատար, բեռնատար մեքենաներ, մեքենայի ո՞ր մասում են նստում նրանք /խցիկ/:

Այնուհետև դաստիարակը երեխաներին առաջարկում է մտածել, թե ի՞նչ կպատահեր մայրիկների, հայրիկների, տատիկների և այլ մարդկանց հետ, եթե հանկարծ չար կախարող գողանար բոլոր վարորդներին:

Ընդգծում է, որ բոլոր վարորդների աշխատանքը կարևոր է բոլորի համար:

Այնուհետև առաջարկում է սսել միևնույն արմատով բառեր՝ *բեռ, բեռնակիր, բեռնատար*: Նշում է, որ բոլոր այդ բառերը իրար նման են (բառերում կրկնվում է *բեռ* բառը): Առաջարկում է ընտրել դրանց համապատասխանող բառեր՝ տաքսի, ուղևոր, ավտոբուս:

Շարունակելով գրույցը՝ դաստիարակը հարցնում է. «Որտե՞ղ են սպասում մարդիկ ավտոբուսի, տրոլեյբուսի մեկնելուն», «Իսկ ինչպե՞ս են կոչվում այն մարդիկ, որոնք փողոցն անցնում են քայլելով» /հետիոտն/:

Դաստիարակ -Որտեղո՞վ պետք է անցնի հետիոտնը /պատասխան/: Այո՛, երթևեկելի մասով սլանում են ավտոմեքենաները, այդ իսկ պատճառով հետիոտնը չի կարող անցնել այդ մասով, իսկ եթե մայթ չկա, հետիոտնը պետք է անցնի երթևեկելի մասի ծայրով, տրանսպորտին հանդիպակաց:

Ֆիզկուլտ- դադար

Խաղ՝ «Մենք հաշվում ենք».

- Ատիճանով բարձրանում ենք,
- Մեկ, երկու, երեք,
- Ատիճանով մենք քայլում ենք,
- Չորս, հինգ, վեց,
- Ատիճանով մենք հաշվում ենք,
- Յոթ, ութ, ինը,
- Տասը՝ հասանք հարթակը:

Դաստիարակ: Ինչի՞ համար են պետք բեռնատար և այլ՝ հատուկ մասնագիտացված մեքենաները:

Ճանապարհով սլանում են հրշեջ, ոստիկանության ծառայության և շտապ օգնության մեքենաները:

- Ինչպե՞ս են կոչվում այդ մեքենաները/օպերատիվ, հատուկ մասնագիտացված տրանսպորտ/:

-Ո՞ր հեռախոսահամարներով են մարդիկ դիմում օգնության այդ ծառայություններին /1-01, 1-02, 1-03/:

-Արտակարգ իրավիճակներում ո՞ր հեռախոսահամարով են մարդիկ դիմում օգնության և որ ծառայությանը /911-արտակարգ իրավիճակների ծառայություն/:

Ամռանը, որպեսզի ճանապարհները մաքուր լինեն, այն լվանում են ջրով, ո՞ր մեքենաներով:

Ջրցան մեքենաներով, իսկ ձմռանը ի՞նչ մեքենաներով են ձյունը հավաքում /ձյունմաքրիչ/:

Դաստիարարակ - Այժմ խաղում ենք՝ «Ի՞նչ գիտեմ ես իմ քաղաքի մասին»:

Հարցեր

1. Ինչպե՞ս է կոչվում այն քաղաքը, ուր ես ապրում եմ:
2. Ինչպե՞ս է կոչվում այն փողոցը, ուր ես ապրում եմ:
3. Ո՞ր փողոցի վրա է գտնվում մեր մանկապարտեզը:
4. Ի՞նչ է գտնվում մանկապարտեզի կողքին:
5. Կա՞ արդյոք լուսակիր մեր քաղաքում:
6. Ինչպե՞ս պետք է պահեն իրենց մարդիկ քաղաքում:
7. Ինչպե՞ս պետք է վերաբերվեք ձեր հարազատ քաղաքին:

Պարապմունքից դուրս. գեղարվեստական ստեղծագործության ընթերցանություն:

Ս. Կապուտիկյան

Գնացքը

-Տո՛ւ, տո՛ւ, բացե՛ք իմ ճամփան,  
 Ես գնացք եմ իսկական,  
 Ունեմ շատ-շատ անիվներ,  
 Շոգեքարշ ու վագոններ:  
 Ռելսեր ունեմ ոտքիս տակ,  
 Գլխիս՝ երկար խողովակ:  
 Առատ-առատ ծուխ կանեմ,  
 Ուժեղ սուլոց կհանեմ,  
 Կնաստեցնեմ ձեզ գոգիս,  
 Ուր որ ուզեք՝ կտանեմ:

ՊԱՐԱՊՄՈՒՆԷՔ 21

Թեման՝ «Ինչո՞վ են մարդիկ ճանապարհորդում»

Տեսակը՝ գրույց  
Խնդիրները

- Ամրապնդել երեխաների պատկերացումները տրանսպորտի տեսակների և դրանց ընդհանրացված անվան մասին:
- Ներգրավել երեխաներին հասակակիցների հետ փոխհամագործակցության մեջ:

• Սովորեցնել վերարտադրել տեքստը իրենց բառերով:

• Ճշգրտել և ամրապնդել երեխաների հնչարտաբերման կարողությունները հնչյունների վերաբերյալ, սովորեցնել տարբերակել այդ հնչյունները լսողությամբ:

• Սովորեցնել անվանել բառեր տրված հնչյուններով:

Անհրաժեշտ նյութեր՝ վերգետնյա, ստորգետնյա, ջրային, օդային տրանսպորտ պատկերող նկարներ: Առարկաների նկարներ, որոնց անվանումներում կան ր, ռ... հնչյուններ:

Պարապմունքի ընթացքը

Դաստիարակը երեխաներին առաջարկում է հանելուկներ /Հ. Միտոյան/  
 Մութ աշխարհ է, բայց լեցուն, Ունի շորեր գույնզգույն,  
 Անցողւարձով, մարդկանցով Պայծառատես երեք գույն,  
 Գնացքները հեկիհե, Իր գույները մեկ առ մեկ,  
 Սլանում են ճեպընթաց, Թարթելով է նա փոխում,  
 Կայարանը քո ուզած: /Վետրո/ Բայց ամեն մի փոխելիս  
 Ծանապարհն է ցույց տալիս: /Լուսակիր/

Չարմանալի մի վագոն  
 Ունի ռելսեր օդային:  
 Իր ռելսերը օդային,  
 Բռնում է նա ձեռքերով,  
 Յուրաքանչյուր կանգառով  
 Ընթանում է իր ճամփով: /տրուլեյբուս/

Դաստիարակը հարցնում է երեխաներին. ինչպե՞ս կարելի է և՛ մետրոն, և՛ ավտոբուսը, և՛ տրուլեյբուսը, և՛ շոգենավը անվանել մեկ բառով: /Տրանսպորտ/  
 Տրանսպորտը լինում է վերգետնյա, ստորգետնյա, ջրային, օդային: Ինչպիսի՞ օդային տրանսպորտ գիտեք: Ինչպիսի՞ ջրային, ինչպիսի՞ վերգետնյա և ստորգետնյա: / երեխաների պատասխանները/

Այնուհետև երեխաների հետ կազմակերպում է ուշադրության կենտրոնացման խաղ:

«Դիտեցե՛ք այս նկարներին և աշխատե՛ք հիշել տրանսպորտի տեսակները: Ես կանվանեմ դրանք, իսկ դուք պետք է նկատեք, թե ո՞րը չեմ անվանել»: ԹՎարկում է՝ ավտոբուս, տրոլեյբուս, ավտոմեքենա /մոտոցիկլը չի անվանում/, մավակ, շոգենավ, հրթիռ/չի անվանում մոտոբանավը /կատերը/, տրոլեյբուսը/:

Խաղ գնդակով: «Ես կնետեմ գնդակը և կասեմ մի բառ: Եթե դա տրանսպորտի անվանում է, գնդակը փոխանցում եք ընկերոջը, եթե տրանսպորտ չի, գնդակը վերադարձնում եք ինձ»: /Օրինակ՝ ավտոբուս, տաքսի, կապիկ, գորտ, հեծանիվ, ձմերուկ և այլն/:

Խոսքի հնչյունային կոլտուրայի դաստիարակում  
Հնչարտաբերական ունակությունների զարգացում:

Ռ և Բ հնչյունների տարբերակված արտասանություն: Հասնել այն բանին, որ բոլոր երեխաները կարողանան լսողությամբ տարբերել և արտասանել **ռ** և **բ** հնչյունները:

*Ունենալ ինքնաթիռ պատկերող նկար /օդանավակայանում և օդում/:*

Դաստիարակն առաջարկում է խաղալ «Ինքնաթիռ» խաղը:

- Գործի դնենք ինքնաթիռի շարժիչը.«**ռ**, **բ**, **ռ**...»: Երեխաները կրկնում են՝«**ռ**, **բ**, **ռ**...», և ձեռքով կատարում են համապատասխան շարժումներ: Շարժիչները միացնելուց հետո ինքնաթիռը թռավ բարձր, երբ արդեն տեսանելի չէր, կրկին լսվում էր դռռոցը, բայց շատ մեղմ.«**ր**՝-**ր**՝-**ր**՝...»:

Խաղի վերջում դաստիարակն առաջարկում է դիտել շրջապատը և քվե այնպիսի առարկաներ, որոնց մեջ լսվում է **ր** հնչյունը:

Նյութի ամփոփում:

Թեման՝ «Ինչո՞վ ենք մենք ճանապարհորդում»

Ձրույց՝ «Օդային տրանսպորտ»

Խնդիրները

• Սովորեցնել երեխաներին տարբերել օդային տրանսպորտի մի քանի տեսակներ՝ ըստ անվանումների:

• Չևավորել պատկերացում օդային ճանապարհորդության մասին:

• Ծանոթացնել օդային տրանսպորտով ճամփորդության առանձնահատկություններին:

• Բառապաշարի հարստացում օդաչու, կապիտան, օդատղեկցող, պահոց, ամրագոտի բառերով:

• Կապակցված խոսքի զարգացում:

*Նախապատրաստական աշխատանք*

Կազմել հավաքածուներ խաղալիք ինքնաթիռներից և ուղղաթիռներից, որոնք կան մանկապարտեզում և տանը:

*Անհրաժեշտ նյութեր՝* օդային տրանսպորտ, տարբեր շքանշաններ և մեղալներ պատկերող նկարներ:

*Պարապմունքի ընթացքը*

Դաստիարակը երեխաներին հարցնում է, թե արդյոք ովքե՞ր կարող են թռչել՝ թռչունները, միջատները, և ինչպե՞ս են այդ էակները թռչում: Իսկ մարդը օդով ճանապարհորդելու և տեղից տեղ գնալու ինչպիսի՞ միջոցներից է օգտվում (ինքնաթիռ, ուղղաթիռ, հրթիռ): Ցույց է տալիս և նկարագրում օդային տրանսպորտի տարբեր տեսակներ: Պատմում է, որ առաջին թռչող մոդելը վաղուց, շատ վաղուց է հայտնի դարձել: Ինքնաթիռները թռչում են օդակայանից: Ինքնաթիռով թռիչք կատարելու համար անհրաժեշտ է, որ մարդիկ ձեռք բերեն տոմսեր, նշված տեղերով անցնեն հսկողության ներքո, հանձնեն իրերը պահոց, բարձրանան օդասանդուղքով և գտնեն իրենց տեղերը: Ճանապարհորդությունը ինքնաթիռով առանձնահատուկ է: Անհրաժեշտ է կապել ամրագոտիները: Ինքնաթիռի մեջ առաջարկում են ուտելիք և ըմպելիք:

Դաստիարակը տեղեկություններ է տալիս այն մասին, որ Երևանի «Ջվարքնոց» օդանավակայանն աշխարհի լավագույն օդակայանների քվին է դասվում: Այնուհետև նա ներկայացնում է օդաչուի մասնագիտությունը՝ որքան շատ պետք է սովորել, որպեսզի կարողանալ կառավարել ինքնաթիռը: Նա քննարկում է երեխաների հետ, որ օդաչուները խիզախ են, մարզված, քաջ և համարձակ: Շեշտադրում է այն, թե ինչպիսիսի պետք է լինեն տղաները, տղամարդիկ, ինչպես պետք է իրենց դրսևորեն /բարի, անվախ, հոգատար, ուժեղ/:

**Բանաստեղծության ընթերցանություն.**  
**ԸԼԱՄԻՆ ՈՒ ՓՈՒԶԻԿԸ** /Յղիչն Պետրոսյան/

<i>Քամին փուչիկս</i>	<i>Օղանավ մտտեմ,</i>
<i>Թոցրեց տարավ.</i>	<i>Գնամ ետևից,</i>
<i>Տարավ չիմացա՝</i>	<i>Հասնեմ փուչիկիս,</i>
<i>Հյուսիս, թե՞ հարավ,</i>	<i>Կախ ընկնեմ թելից.</i>
<i>Մինչև կանչեցի՝</i>	<i>Յած բերեմ նրան</i>
<i>Տարավ, վա՛յ տարա՛վ.</i>	<i>Սև-սև ամպերից,</i>
<i>Հասավ ամպերին,</i>	<i>Փրկեմ, ազատեմ</i>
<i>Աչքիցս կորավ:</i>	<i>Քամու ճանկերից:</i>

*Ինձ ոչ մի քամի,  
Գիտեմ, չի հաղթի,  
Միայն... փուչիկս  
Հանկարծ չպայթի:*

**Բարոտ՝ «Ժաղալիքներ»**

**«Ինքնաթիռը»**

*Ինքնաթիռը մենք կշինենք,  
Անտառից վեր կսլանանք,  
Անտառից վեր կսլանանք,  
Մայրիկի մոտ ետ կդառնանք:*

Այնուհետև դաստիարակը պատմում է երեխաներին, որ քաջության, համարձակության, հերոսության համար մարդիկ պարզևատրվում են շքանշաններով և մեդալներով: Երեխաները դիտում են տարբեր շքանշանների և մեդալների նկարներ՝ «Արիության համար», «Փառքի նշան», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար», «Անդրանիկ Օզանյան», «Գարեգին Նժդեհ», «Մարշալ Բաղրամյան», «Վարդան Մամիկոնյան» և այլն:

Շարաքվա ընթացքում դաստիարակը երեխաների հետ քննարկում է, թե ինչպես պետք է մարդիկ իրենց պահեն ինքնաթիռում:

**Վարքի կանոնները ինքնաթիռում**

1. Անհրաժեշտ է ուշադիր լսել, թե ի՞նչ է ասում օդանավի օդաուղեկցողուհին և օդանավի կապիտանը:
2. Յուրաքանչյուրը ինքնաթիռի սրահում/սալոնում/ պետք է իրեն հանգիստ պահի, որ չխանգարի մյուս ուղևորներին:
3. Անհրաժեշտ է պահպանել մաքրություն սրահում:
4. Ճանապարհի համար կարելի է վերցնել գրքեր, խաղալիքներ, մատիտներ, քարտեզ:

Պարապմունքից դուրս: Երեխաները կարող են ծանոթանալ տարածքի հուշարձաններին, հարգանքի տուրք մատուցել հայրենիքի համար մարտըն-

յաձ և զոհված հերոսների հուշարձանների, կոթողների առջև: Կարելի է ծանկապարտեզ իրավիրել մարտիկներին, հերոսներին: Գրքերի անկյունում դիտել համապատասխան նկարազարդումներ:

**ՊԱՐԱՊՍՏԻՆՆԵՐ 23**

Թեման՝ «Անվտանգ վարքագիծ»

Տեսակը՝ Ջրույգ՝ պատմվածքի շուրջ

Նպատակը՝ Սոզոկեցնել անվտանգ վարքագծի կանոնները: Դաստիարակել անվտանգ վարքագիծ, զարգացնել կարծիք արտահայտելու, համեմատություններ և հետևություններ անելու, հիշողությամբ պատմելու կարողություններ:

**Նախապատրաստական աշխատանք**

Բացատրական զրույց, «Ամհաշտ այծերը», «Գնդիկ-Բոքոնիկ» ուս. ժողովրդական, Հովհ. Թումանյանի «Ուլիկը» հեքիաթների ընթերցում (Չեր ընտրությամբ):

**Անհրաժեշտ նյութեր՝ վտանգները նախազգուշացնող պաստառներ Ընթացքը**

Ընթերցե՛ք «Շողիկը փողոց է դուրս եկել» (հեղ.՝ Լ. Ալեքսանյան, Ն. Թորոսյան և ուր.) պատմվածքը:

**«Շողիկը փողոց է դուրս եկել»<sup>4</sup>**

*Ներկայացվում է մասնակի փոփոխություններով*

*Կիրակի էր: Շողիկը լվացվեց, հագնվեց ու դուրս եկավ փողոց: Նա հեռվում նկատեց Վարդանին ու, անցորդներին հրմշտելով, առաջ նետվեց: Շողիկը մայթից իջավ, որ ավելի արագ վազի ու հասնի ընկերոջը: Բայց ընկերոջը հասնելու փոխարեն քիչ մնաց ընկներ ավտոմեքենայի տակ: Շողիկը թափով մի կողմ ցատկեց ու թրմիաց ջրափոսի մեջ: Ջրափոսի մեջ ընկած ապակու կտորը կտրեց նրա ձեռքը: Շողիկը տուն վազելու, վերքը հոսող ջրով լվանալու, հետո յոդի լուծույթով մաքրելու փոխարեն կեղտոտ թաշկինակով կապեց այն, միացավ բակում պահմտողի խաղացող ընկերներին ու վազեց՝ նկուղում թաքնվելու: Նկուղի աստիճաններին ինչ-որ լարեր էին ընկած: Շողիկը դրանց ուշադրություն չէր էլ դարձնի, եթե այդ պահին մի քեռի չհայտնվեր ու իրեն հետ չքաշեր: Բեռին շենքի էլեկտրականությունն էր նորոգում: Նա Շողիկին բացատրեց, որ բաց լարերը խիստ վտանգավոր են, ու պահանջեց նկուղից անմիջապես դուրս գալ: Շողիկը մտածեց, որ ծառն էլ վատ թաքստոց չի, ու մազլցեց բակի հսկա ընկուզենու վրա: Ծրռռ, ծառի ճյուղը կոտրվեց, ու աղջիկը ցած ընկավ: Դեռ լավ էր, որ ճյուղը ցածր էր, թե չէ՝ ինչ իմանաս, ինչ կպատահեր չարածճի աղջկան: Հետո նա քաղց զգաց ու վազեց տուն: Տանը ոչ որ չկար: Դուռը բացեց և առանց լվացվելու վազեց ուղիղ խոհանոց: Վերցրեց կոտլետ, հացի մի մեծ կտոր, դարակից հանեց սուր դանակը և ան-*

զգուշորեն կտրեց մատը: Հետո որոշեց փոխել զգեստը. միացրեց արդուկը, որ նոր զգեստն արդուկի, մեկ էլ լսեց ընկերների ձայնը, վազեց պատշգամբ, կիտով չափ թեքվեց, և լավ էր, որ այդ պահին վրա հասավ մայրը: Ո՛վ իմանա, ի՞նչ կլիներ, եթե մայրիկը ժամանակին տուն չգար...

**Քննարկե՛ք բոլոր այն վտանգները, որոնց միջով անզգուշաբար անցավ Շողիկը.**

- Ի՞նչ վտանգների միջով անցավ Շողիկը:
- Ինչու՞ չի կարելի առանց մեծերի անցնել փողոցը:
- Ի՞նչ կլինի, եթե բաց վերքը չմշակեն:
- Ինչու՞ չի կարելի էլեկտրական լարերին ձեռք տալ:
- Ինչու՞ չի կարելի սուր, կտրող, ծակող իրերին ձեռք տալ:
- Ինչու՞ չի կարելի կեղտոտ ձեռքերով ոստել:
- Ինչու՞ չի կարելի արդուկը միացրած թողնել:
- Ինչու՞ չի կարելի պատուհանից նայելիս թեքվել առաջ:
- Ինչպե՞ս օգնեց մայրիկը Շողիկին:

(Հետ քաշեց, որ ցած չընկնի, անջատեց արդուկը, որ հորդեի չառաջանա, լվաց կեղտոտ ձեռքերը, յոդի լուծույթով մշակեց բաց վերքը, վիրակապեց և բացատրեց անվտանգության կանոնները: Շողիկը հասկացավ և խոստացավ հետևել այդ կանոններին:

• Դուք ինչպե՞ս կվարվեք:

(Երեխաների ուշադրությունը հրավիրե՛ք վտանգները նախազգուշացնող պաստառներին և խնդրե՛ք իրենց կամ ծանոթների հետ կապված նմանատիպ դեպքեր հիշել ու պատմել: Օրինակ՝ թող ներկայացնեն մի դեպք, երբ առանց ձեռքերը լվանալու սնվել են, կամ՝ միրգն ու բանջարեղենը կերել են առանց հոսող ջրի տակ լվանալու, վերքը մաքրել են կեղտոտ թաշկինակով, խաղացել են էլեկտրական սարքերի հետ և այլն:)

**Խորհուրդ դաստիարակին:** «Շողիկը փողոց է դուրս եկել» պատմվածքը կարող եք կրճատել ձեր հայեցողությամբ:

<sup>4</sup> Կյանքի հմտություններ. ուսուցչի ձեռնարկ 1-ին դաս., հեղ.՝ Լ. Ալեքսանյան, Ն. Թորոսյան և ուր., էջ 103, «Էդիթ Պրինտ» ՍՊԸ, Երևան 2001

**Թեմա՝** «Ինչպե՞ս են ճանաչում աշխարհը»

**Տեսակը՝** զգայական դաստիարակությանը միտված ուսուցողական խաղ-պարապմունքներ

4 – 5 տարեկան նախադպրոցականը ոչ միայն օգտագործում է իրերը, այլև ձգտում է ճանաչել դրանց հատկությունները: Իրերին ծանոթությունը ներառում է տեսողական (հիմնական), շոշափողական, լսողական և հոտառական ընկալումների ամբողջությունը: Սակայն այդ տարիքում երեխաների համար դյուրին չէ անվանել, բառերով նշել այն, ինչն իրենք ընկալում են: Այդ իսկ պատճառով դաստիարակն ակտիվացնում է մանկական խոսքը՝ անվանելով առարկաների հատկանիշները, և նշում դրանց միջև առկա կապերը:

Նախադպրոցականների իմացական գործունեության զարգացման, նրանց խոսքի հարստացման, հոմանիշների ընտրության կարողության ձևավորման, առարկաների ընդհանրությունների ու տարբերությունների բացահայտման, պատճառահետևանքային կապերի սահմանման նպատակով առաջադրում ենք՝ «Ինչպե՞ս են ճանաչում աշխարհը» թեմայով ուսուցողական խաղերի շարք:

Խաղերի ընթացքում երեխաներն իրենց ծանոթ առարկաների մեջ բացահայտում են նոր որակներ և օգտագործում հետազոտման նոր միջոցներ: Օրինակ, շրջելով նկարը՝ կարելի է տեսնել այլ պատկեր: Խաղի սկզբում դաստիարակը ճշտում է երեխաների առօրյա կյանքում ձեռք բերված գիտելիքները, օգնում ընդհանրացնել և տեղին ընտրել բառերը: Նրանք կատարելով հրաշագործի, նկարչի, բրուտի և այլ դերեր՝ վերափոխում են առարկաները, առանձնացնում հատկությունները և դրանց անվանումներն օգտագործում խոսքի մեջ:

*Զգայական դաստիարակությանը միտված այս խաղ-պարապմունքները կարելի է անցկացնել մեկ շաբաթվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում այն կարելի է անցկացնել օրվա երկրորդ կեսին:*

1-ին օր

**Կախարդական վերափոխումներ**

**Ուսուցողական խնդիրները:** Երեխաների գիտակցության մեջ ամրագրել այն գաղափարը, ըստ որի՝ ցանկացած առարկա առաջին հերթին ընկալվում է ամբողջականորեն: Այս իրողության հիմքում ընկած է տեսողական ընկալումը: Երեխային ներկայացվող պատկերի բովանդակության ընկալումը պայմանավորված է տարածության մեջ առարկայի գրաված դիրքով: Երբ դաս-

տիարակը երեխաներին ցուցադրում է պատկերներ՝ տարբեր դիրքերով և տարբեր չափերով, միաժամանակ նպատակ է հետապնդում ակտիվացնել երեխաների խոսքը, նկարագրել առարկան՝ հենվելով երկու հատկանիշների՝ գույնի և ձևի վրա:

**Անհրաժեշտ պարագաներ:** Ցուցադրական նյութեր՝ ցուցանակով նկար, ուր ցուցանակը փակում է պատկերի կեսից ավելին, երկու մասի բաժանված նկար, գունավոր քարտեր, երկրաչափական մարմիններ, անձեռոցիկով ծածկված խաղալիք:

Քաշխիչ նյութեր՝ երկու մասի բաժանված հորիզոնական կտրվածքով նկարներ, նկար-շրջմանով՝ «Արքայադուստր-կախարդ»:

**Խաղի ընթացքը.**

Դաստիարակի սեղանին գտնվում է անձեռոցիկով ծածկված մի առարկա: Լսելով «Ի՞նչ է գտնվում անձեռոցիկի տակ» հարցին երեխաների տված պատասխանները՝ դաստիարակն ընդհանրացնում է. «Հարկավոր է հետ քաշել անձեռոցիկը, որպեսզի տեսնենք առարկան»:

**Դաստիարակ:** Եթե ցանկանում ես ինչ-որ բանի մասին իմանալ, ապա ավելի լավ է տեսնել այն: Ահա, օրինակ, մեր գունավոր քարտերը: Ի՞նչ գույնի են դրանք: (Երեխաներն անվանում են գույները):

Ինչպե՞ս որոշեցիք: (Տեսանք): Այժմ ես ձեզ ցույց կտամ պատկերներ (ցուցադրվում են երկրաչափական պատկերներ՝ եռանկյունի, քառակուսի, շրջան): Ի՞նչ ձև ունեն դրանք: Ինչպե՞ս իմացաք: (Տեսանք):

Ցանկացած առարկա կարելի է նկարագրել գույնի և ձևի հիման վրա: Ի՞նչ գույնի է խաղալիքը: Ի՞նչ ձև ունի այն: (Պատասխաններ):

Դաստիարակը ցուցադրում է մի նկար: Այն փակված է նկարի չափի մի քոթով: Դրա վրա կան տարբեր ձևի կտրվածքներ, որոնց արանքից տեղ-տեղ երևում են պատկերի մասնիկները:

**Դաստիարակ** -Նայեցե՛ք՝ ի՞նչ է այստեղ նկարված: Կարելի՞ է իմանալ: (Պատասխաններ): Ո՞չ: Ինչու՞: («Պատկերն ամբողջությամբ չի երևում»): Ի՞նչ է հարկավոր անել, որպեսզի իմանանք, թե ինչ է պատկերված: («Պետք է պատկերն ամբողջությամբ տեսնել»): Դաստիարակը հեռացնում է քոթը, և երեխաները տեսնում են ամբողջական նկարը: Այնուհետև դաստիարակը ցույց է տալիս հորիզոնական կտրվածքով նկարի կեսը. «Ահա ևս մի նկար: Ի՞նչն է պակասում»: («Երկրորդ կեսը»):

Դաստիարակը միացնում է երկու մասերը, և երեխաները տեսնում են ամբողջ նկարը:

**Աշխատանք՝ քաշխիչ նյութերով**

Երեխաներին տրվում են երկու մասի բաժանված նկարներ:

**Դաստիարակ** - Չեզնից յուրաքանչյուրն ունի մի նկար, որը երկու հավասար մասերի է բաժանված: Փորձեք անել այնպես, որ նկարներն ամբողջա-

կան դառնան: Այսինքն՝ մասերը միացրեք իրար: Այդ դեպքում կտեսնեք, թե ինչ է դրանց վրա պատկերված: Ո՞վ ինչ պատկեր ստացավ: (Պատասխաններ): Ես ձեզ մի հեքիաթ կպատմեմ: Կար-չկար՝ մի արքայադուստր: Մի անգամ չար կախարհը նրան դարձրեց ծեր կախարհ: Նայեցե՛ք նկարներում պատկերված արքայադուստրը: (Երեխաներին բաժանվում են նկար-շրջմըրջուկները): Հենց որ դրանք շրջենք՝ կհայտնվի չար կախարհը: Եկեք դառնանք հրաշագործ և չար կախարհին դարձնենք արքայադուստր: Ծրջե՛ք նկարները: Ի՞նչ ստացվեց: /Արքայադուստր/: Ուրեմն արքայադուստրը կախարհելու համար հարկավոր է շրջել նկարը: Մենք ասում էինք, որ ինչ-որ բան իմանալու համար պետք է այն տեսնել, և տեսնել ամբողջովին: Մենք ծանոթացանք նկար-շրջմըրջուկների հետ. շրջում ես դրանք և տեսնում բոլորովին այլ պատկեր:

2-րդ օր

Անտեսանելի ձայներ

**Ուսուցողական խնդիրները:** Երեխաների գիտակցության մեջ ամրագրել այն պատկերացումը, ըստ որի՝ շրջապատող աշխարհի առարկաներն ու երևույթներն ընկալվում են ոչ միայն տեսողության, այլև լսողության օգնությամբ: Չայներն էլ տարաբնույթ են լինում՝ աղմկային, երաժշտական, խոսքային: Պետք է երեխաներին դրդել արտաբերելու տարբեր ձայներ, սովորեցնել նմանակել բնության ձայները, նկարագրել ձայների բնույթը (աղմուկ, դղրդյուն, խշշոց և այլն):

**Անհրաժեշտ պարագաներ՝** ցուցադրական նյութեր՝ ձայնարկիչ, ձայներիզներ՝ բնության ձայների, տարբեր աղմուկների, մանկական երգերի ձայնագրությամբ («Օրորոցային», «Չունգա-չանգա»), ձայնավոր խաղալիքներ, քրթի քրթի, փայտե խորանարդիկ, մետաղյա գդալ, վարագույր (քող)

**Բաշխիչ նյութեր՝** գունավոր մատիտներ, թուղթ

**Խաղի ընթացքը**

Երեխաներին հարցեր են ուղղվում՝ անցած նյութի կրկնության նպատակով: Օրինակ, «Ինչպե՞ս իմանալ՝ ի՞նչ է գտնվում մեր առջև» («տեսնելով»), «Ի՞նչ կարելի է ասել առարկայի վերաբերյալ. ի՞նչ գույնի է և ինչպիսի՞ ձև ունի այն»: (Երեխաները ներկայացնում են երկու-երեք խաղալիքի համառոտ նկարագրությունը):

**Դաստիարակ** -Այսօր մենք կխոսենք այն մասին, որ ոչ միայն կարելի է տեսնել առարկաները, այլև լսել դրանց ձայները: (Ցուցադրում է ձայնային խաղալիքներ. խոսող տիկնիկ, երաժշտական խաղալիք, ծվծվիկ: Երեխաները բառերով բացատրում են, թե ինչպիսին է դրանցից յուրաքանչյուրի արձակած ձայնը. տիկնիկը խոսում է, չխկչխկան խաղալիքը չխկչխկում է և այլն): Ես ճմռթում եմ թուղթը: Ինչպիսի՞ ձայն լսեցիք: Ճի՛շտ է, խշխշոց: Հիշեցե՛ք, թե

նութերի տակ ինչպես են խշխշում աշնանային տերևները: Այո՛, խը՛շ-խը՛շ: Ինչպե՞ս են դուփում ոտքերով: Ճիշտ է՝ դո՛փ-դո՛փ-դո՛փ: Ինչպե՞ս են բաթիկներով ծափահարում: Իհարկե, ծա՛փ-ծա՛փ-ծա՛փ: Այս ձայները կոչվում են աղմուկներ: Հնարավոր չէ դրանք տեսնել: Չայներն անտեսանելի են: Սակայն ձայներով կարելի է իմանալ շատ բան: Օրինակ, քամու սուլոցը, կաթիլների կտկտոցը հուշում են, թե դրսում ինչպիսի եղանակ է: Լսելով «Տը՛գ-տը՛գ-տը՛գ»՝ դուք անպայման կկռահեք, որ մոծակ է թռչում: Էլ ինչպիսի՞ ձայներ գիտեք: (Պատասխաններ):

Դաստիարակը միացնում է ձայնագրություն, հնչում են մետաղյա և փայտյա առարկաների արձակած աղմուկներ: Ունկնդրելուց հետո վարագույրի հետևից հարվածում է խորանարդիկով, գդալով և առաջարկում ըստ ձայնի ճանաչել առարկան:

**Դաստիարակ** -Է՞լ ինչպիսի ձայներ գիտեք: Այո՛, թռչունների ծվվոցը: (Միացնում է համապատասխան ձայներիզը): Մարդկային խոսքը նույնպես ձայն է, խոսքի ձայն: Երաժշտությունն էլ է ձայն: Դրա մի տեսակը հանգրստացնում է (հնչում է «Օրորոցայինը»): Իսկ այլ ձայների ներքո պարելու ցանկություն է առաջանում (հնչում է «Չունգա-չանգա» երգը): Եկեք պարենք: (Երեխաներն ըստ իրենց ցանկության պարային շարժումներ են կատարում):

Լսեցե՛ք մի հեքիաթ.

Կար-չկար մի թզուկ՝ Վահե անունով: Նա շատ էր վախենում տարբեր ձայներից: Այդ պատճառով Վահեի կյանքն այնքան էլ հեշտ չէր ընթանում: Մի անգամ նա որոշում է գնալ հրաշագործի մոտ, որպեսզի վերջինս իրեն օգնի՝ ձերբազատվելու վախի զգացումից: Բարի հրաշագործն այսպես դիմեց Վահեին. «Սովորաբար վախենում են այն բանից, ինչը չեն հասկանում: Եթե դու իմանաս, թե ում է պատկանում ձայնը, ապա նրանից չես վախենա»: Եկեք ասենք Վահեին, թե ինչպիսի ձայներ են լինում: (Պատասխաններ):

-Չայներից չվախենալու համար, - ասաց բարի հրաշագործը, - կարելի է նաև նկարել սարսափելի մի ձայն, և այն կդառնա ուրախ ու ծիծաղելի:

Այժմ մենք կդառնանք բարի նկարիչներ: Կնկարենք վախենալու ինչ-որ մի բան, օրինակ՝ սև ամպ: Այնուհետև կներկենք այն ուրախ գույներով: (Երեխաները քրթրթի վրա նկարում են սև ամպ, ապա թուղթը նկարագարողում գունավոր կետիկներով, և այն դառնում է հրավառություն):

Խաղի վերջում դաստիարակը երեխաների հետ զրուցում է այն մասին, թե ինչպես կարելի է արտահայտել սարսափի ձայներ, ապա դրանք վերածել ուրախության դրսևորումների: Օրինակ, մեզ վախեցնում է մկնիկի ճտճոճոտոցը. նկարում ենք մկնիկ, իսկ պոչիկին՝ ժապավեն:

3-րդ օր

**Բանջարեղեն, ես քեզ ճանաչում եմ**

**Ուսուցողական խնդիրները:** Անհրաժեշտ է ամրապնդել այն պատկերացումը, ըստ որի՝ շրջապատող աշխարհի առարկաներն ու երևույթներն ընկալվում են ոչ միայն տեսողության և լսողության, այլև համի ու հոտի զգացողության օգնությամբ: Ակտիվացնել երեխաների խոսքը, սովորեցնել օգտագործել համ ու հոտ արտահայտող ածականներ:

**Անհրաժեշտ պարագաներ:** Յուցադրական՝ տարբեր հոտերով և միանման քղբերով փաթաթված օճառի կտորներ (կիտրոնի, խնձորի, ծաղիկների), եփած բանջարեղենի կտորներ (կարտոֆիլ, գազար /ստեպոլին/, սիսեռ):

Բաշխիչ նյութեր՝ գդալներ, ափսեներ, վերևում՝ շրջանի պատկերով թղթի թերթեր, սովորական մատիտներ:

**Խաղի ընթացքը**

Դաստիարակը նախորդ քեման ամրապնդող հարցեր է ուղղում. «Ինչպե՞ս կարելի է իմանալ, թե ինչ կա մեր առջև»: («Տեսնելով»): Իսկ եթե այդ իրը կամ առարկան հեռու է կամ գտնվում է, ասենք, տան մյուս կողմում (օրինակ, լսելով մոտեցող մեքենայի աղմուկը): Այնուհետև երեխաներն ըստ գույնի, ձևի և արձակած ծայնի բնութագրում են երկու-երեք առարկա:

**Դաստիարակ** - Այսօր մենք կիմանանք, թե էլ ինչպես է հնարավոր ճանաչել առարկաները: (Յույց է տալիս թղթով փաթաթված օճառի կտորը): Առանց թուղթը բացելու ինչպե՞ս որոշել, թե ինչ է դա: (Պատասխաններ): Նրանցից մեկին առաջարկում է հոտոտել այն: Ի՞նչ հոտ ունի, ի՞նչ առարկա է այն:

Եթե երեխան դժվարանում է պատասխանել, ապա առաջարկում է հիշել, թե երբ է զգացել նմանատիպ հոտ:

- Ճի՛շտ է, երբ լվանում էիր ձեռքերդ:

Դաստիարակը երեխաներին առաջարկում է հոտոտել օճառի տարբեր կտորները և անվանել հոտը (կիտրոնի, խնձորի, ծաղիկների):

**Դաստիարակ** - Ուրեմն առարկան կարելի է ճանաչել հոտի միջոցով: Դրա համար այն պետք է հոտոտել: Առարկան կարելի է ճանաչել նաև՝ համտեսելով: (Երեխան փակում է աչքերը: Նրան տալիս են մի կտոր եփած բանջարեղեն և առաջարկում անվանել):

Մյուս երեխաները տեսնում են, որ նա փորձեց, ստուգում են նրա պատասխանը: Դաստիարակն ու երեխաները միասին ճշտում են բանջարեղենի անվանումը, նշում համը. «Գազարը քաղցր է, սիսեռը քաղցր է, կարտոֆիլն աղի է»:

**Դաստիարակ** - Լսեցե՛ք ձեզ արդեն ծանոթ մի հեքիաթ: Լինում է, չի լինում մի Գնդիկ-բոքոնիկ է լինում: Նա այնքան է ցանկանում՝ որքան հնարավոր է շուտ ամեն ինչ իմանալ, որ փախչում է տնից և գլորվում աշխարհով մեկ: Նա-յեցե՛ք Գնդիկ-բոքոնիկի պատկերով նկարներին: Ինչպե՞ս օգնել նրան՝ ճանաչելու աշխարհը: (Պատասխաններ): Ճի՛շտ է, նկարել աչքեր: (Նկարում են): Սակայն առարկան տեսնելը դեռ քիչ է: Պետք է նաև լսել կարողանալ: Ի՞նչ ենք նկարում: Այո՛, ականջներ: Գնդիկ-բոքոնիկը գլորվում-գլորվում է և հասնում է այն տնակին, որի վրա նկարված է քիթը: Նա ցանկանում է հոտոտել այն: Ի՞նչ ենք նկարում: Իհարկե՛, քի՛թ: Համե՛ղ է բուրում քիթը: Այն հարկավոր է համտեսել: Ի՞նչ ենք նկարում: Այո՛, բերա՛ն: Գնդիկ-բոքոնիկն ուտում է քիթը և որոշում հանգստանալ: Նա այլևս ոչ մի տեղ չի գլորվում:

Դաստիարակը երեխաների հետ կրկնում է կիտրոնի, խնձորի, ծաղիկների համի և հոտի որակները նշանակող բառերը՝ համեղ, քաղցր, աղի, թթու և այլն:

4-րդ օր

**Ուրախ մարդուկներ**

**Ուսուցողական խնդիրները:** Անհրաժեշտ է ամրապնդել այն պատկերացումը, ըստ որի՝ շրջապատող աշխարհի առարկաներն ու երևույթներն ընկալվում են նաև շոշափելու միջոցով: Մշակել՝ հրահանգով կամ սխեմատիկ պատկերմամբ շարժումներ կատարելու հմտությունները: Ակտիվացնել երեխաների բառապաշարը, սովորեցնել խոսքի մեջ գործածել առարկաների հատկանիշ ցույց տվող բառերը:

**Անհրաժեշտ պարագաներ:** Յուցադրական՝ տարբեր նյութերից պատրաստված առարկաներ (մետաղյա կամ փայտե գդալներ, զանազան խաղալիքներ), խորանարդիկ, բամբակ, վարագույր, շարժումների սխեմատիկ պատկերներ՝ «Ուրախ մարդուկներ» լուտո, տարբեր ձայներ ներկայացնող ձայներիգ (փայտե, մետաղե, ապակե առարկաների արձակած ձայներով), «Չիլի-բրիկի» երգի ձայնագրությունը:

Բաշխիչ նյութեր՝ կտորի, սովորաթղթի, հղկաթղթի կտորներ, Գնդիկ-բոքոնիկի անավարտ պատկեր, մատիտներ

**Խաղի ընթացքը**

Դաստիարակը ճշտում է, թե ինչ կարող են պատմել երեխաները որևէ առարկայի մասին. անվանել, նկարագրել ձևը, հոտը, համը:

**Դաստիարակ** -Այժմ ես կհարվածեմ տարբեր առարկաներով: Դուք էլ ասացե՛ք՝ դրանք փափու՞կ են, թե՞ պինդ:

Վարագույրի հետևից դաստիարակն սկզբում հարվածում է խորանարդիկով (բարձր ձայն), այնուհետև՝ բամբակի կտորով (ցածր ձայն): Միացնում

է ձայներիզը. փայտե, մետաղե, ապակե առարկաներից արձակված ձայներ են հնչում: Այնուհետև հարվածում է փայտե և մետաղե գոպլներով:

Առարկան կարելի է ճանաչել նաև շոշափելով: Չոր սեղաններին դրված են տարբեր նյութերից պատրաստված իրեր՝ գործվածքներ, սովարաթուղթ, հղկաթուղթ: Փակե՛ք ձեր աչքերը և ձեռք տվեք դրանց: Ի՞նչ կարելի է ասել գործվածքի մասին: Ինչպիսի՞ն է այն: («Փափուկ է, հեշտությամբ ծալվում է»): Իսկ սովարաթու՞ղթը: («Պինդ է, կոշտ է»): Հղկաթու՞ղթը: («Ըշխշում է»): Նայեցե՛ք խաղալիքներին: Ինչպիսի՞ն են դրանք: Ինչի՞ց են պատրաստված: Գի՛շտ է: Բաղիկը՝ ռետինից, գեղջկական տիկնիկը՝ փայտից, մեքենան՝ պլաստմասսայից: (Բաժանում է Գնդիկ-բոթոնիկի անավարտ պատկերները): Եկե՛ք շարունակենք անցյալ պարապմունքին սկսած հեքիաթը ... Հանգստացավ Գնդիկ-բոթոնիկը և սկսվեց նորից գլորվել: Դժար է գլորվել ճանապարհով. ամեն ինչ պտտվում է աչքերի առջև: Օգնե՞՛նք, որ նա կարողանա քայլել: Նկարենք... Ի՞նչ: Այո՛, մարմին: (Չվաճև մարմին կամ եռանկյունի): Էլ ի՞նչ: Գի՛շտ է, ոտքեր: Գնում է Գնդիկ-բոթոնիկը, գնում և տեսնում մի այսպիսի ցուցանակ: (Յույց է տալիս «Ուրախ մարդուկներ» տարբեր շարժումներով սխեմատիկ պատկերներ): Ի՞նչ եք կարծում՝ այստեղ ի՞նչ է գտնվում: («Սպորտային դահլիճ, ուր մարմնամարզություն են կատարում»): Գնդիկ-բոթոնիկն էլ է ցանկանում զբաղվել: Ի՞նչն է պակասում նրան: («Չեղբերք»): Նկարե՛նք դրանք: Այժմ արդեն մեր Գնդիկ-բոթոնիկը կարող է ամեն ինչ տեսնել, լսել, հոտոտել, համտեսել, քայլել և շոշափել:

Դաստիարակը երեխաներին առաջարկում է զբաղվել մարմնամարզությամբ: Ուրախ երաժշտության ուղեկցությամբ նրանք կատարում են դաստիարակի կողմից ցույց տրվող և առանձին սխեմատիկ պատկերներով ներկայացվող շարժումները: Նա ամփոփում է. «Ուրպեսզի մարդն ամեն ինչ իմանա, նրան հարկավոր են աչքեր, ականջներ, քիթ, բերան, ձեռքեր և ոտքեր»:

5-րդ օր

**Խառնաշփոթ**

**Ուսուցողական խնդիրները:** Անհրաժեշտ է ամրապնդել առարկաներն ուշադիր զննելու, դրանք գույներով, ձևով և այլ բնորոշ նշաններով միմյանց հետ համեմատելու հմտությունը:

**Անհրաժեշտ պարագաներ:** Ցուցադրական՝ ամառային և ուշ աշնանային ճյուղերի պատկերներով երկու նկար, խառնաշփոթ պատկերով նկար, կտավ, «Ի՞նչը փոխվեց» խաղի համար նախատեսված նկարներ:

**Բաշխիչ նյութեր՝** բազմաթիվ առարկաների պատկերներով նկար, մատիտներ

**Խաղի ընթացքը**

**Դաստիարակ** (Յույց է տալիս սնձեմու ճյուղի երկու նկարները)- Ուշադիր նայե՛ք սնձեմու ճյուղերին: Ինչո՞վ են դրանք նման և ինչո՞վ տարբեր: Գի՛շտ է: Դրանք տարբերվում են գույնով, պտուղների առկայությամբ: Կարելի՞ է, արդյոք, այս նշաններով որոշել տարվա եղանակը: (Երեխաների պատասխանները ճշտվում են դաստիարակի կողմից): Այժմ նայեցե՛ք այս խառնաշփոթին: Ի՞նչն է սխալ պատկերել նկարիչը: Այո՛, նա շատ բան է շփոթել. ձկները ծառերի վրա են, ձնեմարդը կանաչ խոտին է, աղջիկները ձմեռային հագուստով են և ամառային կոշիկներով:

Երեխաներին բաժանվում են բազում առարկաներ պատկերող նկարներ, ինչպես նաև մատիտներ: Առաջարկվում է ուշադիր նայել պատկերներին, գտնել և ջնջել նշվածները (օրինակ, պատկերված են եղևնիներ, սնկիկներ, տնակ, դույլ, աստղիկներ, գնդակ, ծաղիկ, դրոշակ: Հարկավոր է ջնջել միայն եղևնիներն ու տնակները): Բացատրությունն ընթանում է ցուցադրմանը զուգընթաց:

«Ի՞նչը փոխվեց» խաղն անցկացվում է հետևյալ կերպ: Կտավի վրա դրվում են առարկայական նկարներ՝ 8-10 հատ: Ընտրում են խաղը վարողին: Մյուս երեխաները փակում են աչքերը: Խաղավարը կտավի վրա փոխում է նկարների տեղերը: Սկզբում մեկը, հետո՝ երկուսը, այնուհետև՝ երեքը, վերջում՝ ոչ մի նկար: Երեխաները նշում են փոփոխությունները: Նմանօրինակ խաղերը երեխաներին օգնում են ավելի լավ ճանաչել առարկաների հատկանիշներն ու պատմել դրանց մասին: Մեծերի խմբերում նկարագրական և սյուժետային պատմվածքներ կազմելիս երեխաներն ավելի շատ են օգտագործում անհանգիստ, տեղին և ճշգրտորեն կատարում են հոմանիշների ընտրությունը, գտնում առարկաների միջև նմանություններն ու տարբերությունները:

**ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 29**

**Թեման՝** Դ. Դեմիրճյանի «Պույ-պույ մուկիկը»

**Տեսակը՝** ինտեգրված պարապմունք /գեղարվեստական ընթերցանություն/ Խնդիրները

Գրքի միջոցով ծանոթացնել երեխաներին գրավոր խոսքի սկզբունքներին, առաջացնել հետաքրքրություն գրքի նկատմամբ:

Ձևավորել ստեղծագործության հերոսի նկատմամբ սեփական վերաբերմունքն արտահայտելու ունակություն, համեմատել իրեն գրքի հերոսի հետ /հաղթահարել դժվարությունները, ելք գտնել անելանելի վիճակներից՝ լինել հնարամիտ, լինել համբերատար.../:

Սովորեցնել կառուցել քերականորեն ճիշտ, արտահայտիչ և բովանդակալից խոսք:

Ձարգացնել տրամաբանական մտածողությունը, եզրահանգումներ, համեմատություններ, կանխագուշակումներ կատարելու և հարցեր տալու կարողությունները:

Մշակել ստեղծագործական մտահղացումներով հեքիաթի համար նոր ավարտ հյուսելու կարողություն:

**Անհրաժեշտ պարագաներ՝** Դ. Դեմիրճյանի «Պույ-պույ մուկիկը» նկարազարդ գիրքը, գունավոր մատիտներ, նկարչական քղթեր:

**Պարապմունքի ընթացքը**

Դաստիարակը երեխաների հետ նստում է մի հարմարավետ տեղ, օրինակ՝ գորգի կամ ցածր աթոռի վրա, այնպես, որ բոլորին տեսանելի լինի գիրքը: Ցուցադրում է Դ. Դեմիրճյանի «Պույ-պույ մուկիկը» նկարազարդ գիրքը և ներկայացնում գրողին ու ձևավորող նկարչին: Ապա շատ դանդաղ շրջում է գրքի էջերը, որ բոլորը հնարավորություն ունենան դիտելու նկարները:

- Ձեր կարծիքով, ինչի՞ մասին է այս գիրքը: Ծանո՞թ եք, արդյոք, գրքի հերոսին:

*Նմանատիպ բաց հարցերը խթանում և ակտիվացնում են երեխաների նախնական գիտելիքները, օգնում ի մի բերել և կիրառել իմացածը, ինչպես նաև սովորել միմյանցից: Դա նաև հետաքրքրություն է առաջացնում ընթերցվող պատմության հանդեպ և տրամադրում է նրանց հաճույքով լսելու պատմությունը: Դաստիարակը կարող է առանձին քղթի վրա գրառել մի քանի երեխաների անունները և պատասխանները: Այս կանխագուշակումների միջոցով խրախուսվում է երեխաների՝ կռահելու կարողությունը:*

Դաստիարակն ընթերցում է գիրքը՝ հանգիստ, դանդաղ տեմպով, առոգանությամբ, մատը սահեցնելով սողի վրայով:

*Ամբողջ պատմությունն ընթերցելուց հետո անդրադարձե՛ք կռահումներին, որոնք գրանցել էիք քղթի վրա, և մեկնաբանե՛ք, թե ում կողմից արված կռահումներն էին համապատասխանում գրքի բովանդակությանը:*

Այնուհետև դաստիարակը կրկին երեխաների ուշադրությունը հրավիրում է գրքի բովանդակության վրա և նրանց ուղղում մի քանի բաց հարցեր.

- Գրքի ո՞ր մասն ավելի շատ դուր եկավ և ինչու՞:
- Ո՞ր նկարը հավանեցիք ամենից շատ:
- Ինչպե՞ս կվարվեիք, եթե հայտնվեիք գլխավոր հերոսի դերում:
- Ի՞նչ բառերով կբնութագրեք մկնիկին:

**Թարմացնող վարժություն**

*Առաջարկել մնջախաղի և ժեստերի միջոցով ներկայացնել մկնիկի տրամադրությունը կոկոսի մեջ և կոկոսից դուրս:*

**Պարապմունքի ավարտը**

Երեխաներին տրամադրել գունավոր մատիտներ և առաջարկել նկարել գրքից որևէ դրվագ: Ապա միացնել առանձին աշխատանքները և ստանալ սեփական գիրքը:

**Աշխատանք՝ պարապմունքից դուրս**

Փորձե՛ք երեխաների հետ գտնել հեքիաթի ավարտի, ելքերի նոր որոնումներ ու բացահայտումներ և բեմականացնել այն: Երեխաները կարող են ձևփոխել, շրջել, վերակառուցել հեքիաթի բովանդակությունը, մտնել հեքիաթի մեջ, կասեցնել վտանգը, փրկել հերոսին...:

## ՊԱՐԱՊՍՏԻՆԸ 30

**Թեման՝ «Մասնագիտություն»**

**Տեսակը՝** գրույց

**Նպատակը**

Սովորեցնել գրուցել տրված թեմայի շուրջ՝ ձևավորել հարգանք աշխատանքի նկատմամբ, բառապաշարը հարստացնել *վարպետ, մասնագիտություն* բառերով, դաստիարակել սկսած գործը պատասխանատվությամբ կատարելու ձգտում: Հովի. Թումանյանի «Կացին ախպեր» հեքիաթի միջոցով բացատրել, որ կարևոր չի, թե ինչ մասնագիտություն ունես, կարևորը գործը վարպետորեն, լավ կատարելն է:

**Նախապատրաստական աշխատանք**

Գեղամ Սարյանի «Դերձակը», Հենրիկ Սևանի «Չախորդ բզեզը» բանաստեղծությունների ընթերցում:

**Անհրաժեշտ նյութեր՝** Հովի. Թումանյանի «Կացին ախպեր» հեքիաթի նկարները, մասնագիտական գործիքներ կամ դրանց նկարները:

**Ընթացքը**

Երեխաների հետ գրուցե՛ք տարբեր մասնագիտությունների մասին:

**Հարցրե՛ք.**

- Ի՞նչ մասնագիտություններ գիտեք (վարորդ, խոհարար, շինարար, ուսուցիչ, բժիշկ, հյուսն, փայտահատ, վարսավիր, դերձակ և այլն):

- Ինչու՞ են ասում *չկա վատ մասնագիտություն, բոլոր մասնագիտություններն էլ կարևոր են*:

- Ի՞նչ են ասում այն մարդուն, ով իր գործը լավ է կատարում, (վարպետ):

- Մարդը ինչպե՞ս կարող է լավ վարպետ դառնալ (Եթե սովորի, հմտանա իր գործի մեջ, կդառնա լավ վարպետ):

Հետո ընթերցե՛ք Հովի. Թումանյանի «Կացին ախպերը» հեքիաթը և քննարկե՛ք.

1. Ինչու՞ տանուտերը վնասեց իր ոտքը:

2. Ինչպե՞ս վարվեցին գյուղացիները կացնի հետ:

3. Ի՞նչ եղավ, երբ կրակից շիկացած կացինը գցեցին մարագը:

4. Ի՞նչ վատ հետևանքներ եղան գյուղացիների՝ կացնով աշխատել շիկորդանալու պատճառով:

5. Եթե դուք լինեիք կացնի տիրոջ տեղը, ի՞նչ կասեիք գյուղացիներին:

6. Ի՞նչ կլինի, եթե վարորդը մեքենա վարել, խոհարարը՝ ճաշ պատրաստել չկարողանան, պատշարը պատը ծուռ շարի, բժիշկը սխալ բուժի հիվանդին և այլն:

**Անցկացրե՛ք «Հորինենք հանելուկներ»** դիդակտիկ խաղը:

Օրվա թեման ամրապնդելու նպատակով երեխաներին առաջարկե՛ք «Այն ո՞վ է, որ...» նախաբանով հորինել հանելուկներ մասնագիտությունների մասին: Օրինակ՝ *Այն ո՞վ է, որ մկրատով ձևում է, ասեղով կարում* (դերձակը): Ընկերոջ ասածը չպետք է կրկնել:

Ամփոփե՛ք պարապմունքը «Գործը վարպետից է վախենում» ասացվածքով և բացատրե՛ք, որ շատ կարևոր է, որ ամեն մի մասնագետ իր գործը լավ անի, դառնա իր գործի վարպետը, իսկ դրա համար յուրաքանչյուր գործ անելուց առաջ պետք է նախ սովորել:

ՊԱՐԱՊՍՏԻՆՔ 31

Թեման՝ «Մասնագիտական գործիքներ»

Տեսակը՝ գրույց

Նպատակը

Ընդլայնել տարբեր մասնագիտությունների համար անհրաժեշտ գործիքների մասին երեխաների գիտելիքները, հարստացնել բառապաշարն այդ գործիքների անվանումներով, զարգացնել քերականորեն ճիշտ, կապակցված խոսելու, հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունը: Հետաքրքրություն և հարգանք դաստիարակել տարբեր մասնագիտությունների հանդեպ:

Նախապատրաստական աշխատանք

Գ. Սարյանի «Դերձակը», Ս. Կապուտիկյանի «Շինարար Լևիկը», բանաստեղծությունների ընթերցում՝ Չեր ընտրությամբ:

Անհրաժեշտ նյութեր՝ տարբեր մասնագիտական գործիքներ և մասնագիտություններ պատկերող նկարներ:

Ընթացքը

Երեխաների տեսադաշտում փակցրե՛ք մասնագիտական գործիքներ պատկերող նկարները և հարցրե՛ք.

- Ի՞նչ եք տեսնում նկարներում:
- Ու՞մ համար են այդ գործիքները:
- Ինչո՞վ է բժիշկը սառուգում հիվանդի ջերմությունը, սրտի և թոքերի աշխատանքը, էլ ինչե՞ր է օգտագործում հիվանդին բուժելու համար (ջերմաչափ, ներարկիչ, դեղեր):
- Ի՞նչ է պետք շինարարին՝ շենքեր կառուցելու համար (քար, ավազ, ներկ, վրձին, վերամբարձ կռունկ, տրակտոր, բահ):
- Ի՞նչ է պետք կահույքագործին՝ կահույք պատրաստելու համար (մուրճ, ուրագ, սոոց, մեխ, փայտ):
- Ի՞նչ է պետք հացթուխին՝ հաց թխելու համար (գրտնակ, վառարան, ալյուր):
- Ի՞նչ է պետք այգեգործին՝ այգիներ տնկելու և խնամելու համար (բահ, փոզիս, դուղ):
- Ի՞նչ է պետք դերձակին՝ շորեր կարելու համար (թել, ասեղ, մկրատ, կարի մեքենա, կտոր):
- Ինչո՞վ է վարորդը մարդկանց տեղափոխում (ավտոմեքենայով):
- Ի՞նչ է պետք խոհարարին՝ ճաշ պատրաստելու համար (դանակ, գդալ, կարաս, բավա, գազօջախ, սննդամթերք):
- Ո՞ր մասնագիտությունն է ավելի կարևոր, ինչու՞:

• Ի՞նչ կլինի, եթե բոլորը լինեն բժիշկներ, վարորդներ, շինարարներ, դերձակներ չլինեն և այլն:

(Բացատրե՛ք, որ բոլոր մասնագիտություններն էլ կարևոր են, կարևոր չէ թե ինչ ես անում, կարևոր է, որ ամեն մեկը լինի իր գործի վարպետը:)

Անցկացրե՛ք «Գուշակիր առարկան» դիդակտիկ խաղը:

Երեխաները մատում են շրջանաձև: Երեխաներից մեկը 2 թուպով դուրս է գալիս խմբասենյակից: Մյուսները նկարներից առանձնացնում են որևէ մասնագիտական գործիք և թաքցնում: Ներս են հրավիրում նրան և հուշումներով օգնում են գուշակել, թե ինչ գործիքի նկար են թաքցրել: Օրինակ՝ այդ գործիքը պետք է կահույքագործին, այն փայտից և երկաթից է պատրաստված, դրանով կահույքի տարբեր հատվածները միացնում են իրար, կամ՝ այն պետք է խոհարարին, խոհարարը դրանով խառնում է ապուրը, ապուրը լցնում է ափսոսման, այն մետաղից է և այլն:

Ներս մտնողն էլ իր հերթին կարող է հարցեր տալ գուշակելու համար Օրինակ՝ ինչի՞ց է պատրաստված, ու՞մ համար է, ի՞նչ գույնի է և այլն:

Գուշակելուց հետո երեխան վերցնում է նկարը և ծափերի ուղեկցությամբ մատում է իր տեղը: Հետո դուրս է գալիս մեկ այլ երեխա: Խաղը շարունակվում է 10-15 թուպե:

Պարսպամուկըն ավարտե՛ք հանելուկներով.

Ինքը կտրում է,  
Ուրիշը կարում: (մկրատ)  
հեղ.՝ Վ. Հովսեփյան

Ցուլակը կտրեց,  
Վաչիկը կտրեց,  
Յողիկը կրեց,  
Աչիկը շարեց: (փայտ)

Կարում է նա ամեն բան,  
Կար է անում նա բարակ,  
Կար է անում նա բարակ:  
(կարի մեքենա)  
հեղ.՝ Ստ. Միրբայելյան

Կացին չէ՛ փայտ է տաշում,  
Աքցան չէ՛ մեխ է բաշում:  
(ուրագ)

Շոր է կարում աշխարհին,  
Բայց չոր չունի նա հագին: (ասեղ)

ՊԱՐԱՊՄԻՆԷ 32

Թեման՝ «Ջուր»

Տեսակը՝ զրույց

Նպատակը: Գիտելիքներ տալ բնության մեջ և կենցաղում ջրի նշանակության մասին, զարգացնել վերապատմելու կարողությունը, սովորեցնել՝ լսածը կապել բնության մեջ տեղի ունեցող երևույթների հետ, դաստիարակել խնայող վերաբերմունք:

Նախապատրաստական աշխատանք

Ընթերցել Գ. Մովսիսյանի «Չյան փաթիլը» պատմվածքը, դիտարկել բնության երևույթները (ըստ տարվա եղանակի՝ անձրև, ձյուն), ջրել ծաղիկները:

Անհրաժեշտ նյութեր՝ ջուրը կենցաղում և բնության մեջ պատկերող (անձրև, գետ, ծով, ծորակից հոսող ջուր, ցնցուղի տակ և գետում լողացող երեսիկներ...) նկարներ:

Ընթացքը

Պարապմունքը սկսե՛ք հանելուկով.

*Մի նյութ գիտեն զարմանալի,*

*Մե՛կ կարծր է, մե՛կ ջրալի,*

*Մեկ էլ տեսար՝ սուսիկ-փուսիկ,*

*Թևեր առավ, թռավ երկինք: (ջուր)*

Հարցրե՛ք.

- Ի՞նչ նշանակություն ունի ջուրը բնության մեջ:
  - Ի՞նչ նշանակություն ունի ջուրը մարդու կյանքում:
- Ընթերցե՛ք Գ. Մովսիսյանի «Ջուրը» պատմվածքը և քննարկե՛ք:
- Քննարկման հարցեր.*

- Ինչու՞ են ասում, որ ջուրը սիրում է թափառել:
- Ի՞նչ դեր ունի ջուրը մարդու կյանքում:
- Ի՞նչ դեր ունի ջուրը բնության մեջ:
- Ի՞նչ կլինի մարդկանց, կենդանիների, բույսերի հետ, եթե ջուր չլինի:

(Այս հարցի պատասխանի հետ կապեք «Ջուրը կյանք է» ասացվածքը:)

• Ինչպե՞ս է առաջանում անձրևը (բացատրե՛ք, որ գետերի, ծովերի ջրերը արևի ճառագայթներից գոլորշիանում են և գոլորշու տեսքով բարձրանում են երկինք, կուտակվում են երկնքում՝ ամպերի տեսքով: Ամպերը ջրի խտացած գոլորշիներն են, որոնք անձրևի տեսքով թափվում են երկիր. նորից լցվում են գետերն ու ծովերը և ջրում դաշտերն ու այգիները):

• Գիտե՞ք, ինչպես է առաջանում ձյան փաթիլը: (Բացատրե՛ք, որ ձյան փաթիլը նույն ջրի գոլորշին է, պարզապես, երբ շատ ցուրտ է լինում, երկինք բարձրացած ջրի գոլորշին սառչում է և ձյան փաթիլի տեսքով նորից թափվում երկնքից:)

Օրվա երկրորդ կեսին երեխաների հետ կատարե՛ք հետևյալ փորձը.

Ջուրը լցրե՛ք կոկա-կոլայի շշի մեջ, դրե՛ք սառնարանը. մեկ օր հետո հանեք և ցույց տվեք երեխաներին: Հետո սառույցով շիշը բերանը բաց դրե՛ք արևի տակ, ընթացքը արագացնելու համար հավված սառույցը՝ ջուրը, լցրե՛ք ջերմադիմացկուն, բաց տարայի մեջ, դրե՛ք կրակին ու եռացրե՛ք: Եռացող ջրի վրա՝ տարայից քիչ վեր, պահե՛ք ափսե: Երեխաները գործնականում կտեսնեն և կհասկանան ջրի շրջապտույտը:

Երեխաներին մոտեցրեք թափանցիկ շշի կամ ապակե բաժակի մեջ լցված ջուր, առաջարկե՛ք՝ հոտոտել, խմել, նայել, և հարցրեք.

- Ի՞նչ գույն ունի ջուրը:
- Ի՞նչ համ ունի ջուրը:
- Ի՞նչ հոտ ունի ջուրը:
- Ի՞նչ կլինի, եթե երկու կամ երեք օր ջուր չխմեք:
- Ինչու՞ են ասում. «ԽՆայե՛ք ջուրը»:

Բացատրե՛ք, որ առանց ջրի մարդն ապրել չի կարող: Եթե մարդիկ մի քանի օր ջուր չխմեն, կթուլանան, կհիվանդանան, կմահանան: Ջրի պաշարները բնության մեջ անսպառ չեն: Մարդիկ խմելու ջուրը վերցնում են քաղցրահամ լճերից կամ լեռների ակունքներից հոսող ջրերից: Հատուկ տեխնոլոգիական միջոցներով մաքրում են այդ ջրերը օրգանիզմի համար վնասակար մասնիկներից և օգտագործում կենցաղում՝ խմելու, ճաշ, հյուրեր պատրաստելու, լողանալու համար: Հայաստանում խմելու ջուրը վերցնում են բարձր լեռներից հոսող ջրերից և Սևանա լճից, քանի որ Սևանի ջուրը քաղցր համ ունի: Ծովերի ջրերը աղի համ ունեն և խմելու չեն:

Ջուրը պետք է խնայողաբար օգտագործել. չի կարելի ծորակը բաց թողնել և թույլ տալ, որ ջուրն անտեղի հոսի: Ջրի պաշարները անսպառ չեն՝ անխնա օգտագործելու դեպքում դրանք կարող են պակասել: Չի՛ կարելի կեղտոտել Սևանա լճի շրջակայքը, ջրի մեջ թուփ, պլաստիկ շշեր նետել: Պետք է պահպանել բնությունը:

- Ի՞նչ ասացվածքներ գիտեք ջրի մասին:
- (Ջուրը կյանք է: Կյանքը ջրի նման երկար լինի: Ջուրն իր ճամփան կգտնի: Ջուրը մտնողը քրջվելուց չի վախենա:)

Թեման՝ «Չուր, նրա նշանակությունը»

Նպատակը

Երեխաների մեջ ձևավորել պատկերացում՝ մարդու կյանքում ջրի նշանակության մասին:

Խնդիրները

• Գիտելիքներ հաղորդել շրջակա միջավայրի, ջրի մասին, երեխաներին ծանոթացնել ջրի առանձնահատկություններին:

• Ձևավորել պատկերացում ջրի ճանապարհորդության մասին, տարրական գիտելիքներ հաղորդել հայրենի բնության զարդի՝ ջրի, գետերի, աղբյուրների, կենդանի ջրի նշանակության մասին:

- Դաստիարակել խնայողական վերաբերմունք ջրի հանդեպ:
- Հնչարտաբերական ունակությունների զարգացում:

Անհրաժեշտ նյութեր՝ քարտեզ, գետերի, լճերի, ջրվեժների նկարներ:

Նախապատրաստական աշխատանք: Դիտումներ մանկապարտեզում /շաբաթվա ընթացքում դիտումները պլանավորում է դաստիարակը/:

Դաստիարակն երեխաներին առաջարկում է հիշել՝ վերջին մի քանի օրվա ընթացքում որտե՞ղ և ի՞նչ ջրեր են տեսել /խմբասենյակում, բնության անկյունում, զբոսանքի ժամանակ, մանկապարտեզի բակում, տանը/ և ինչպե՞ս են այն օգտագործել: Հիշեցնում է նաև այն հանձնարարականների մասին, երբ երեխաները ձեռքերն էին լվանում, ջրաներկով նկարում, ջրում էին ծաղիկները, խմում էին կոմպոտ, մրգահյութ և այլն: Արդյո՞ք շատ ջուր էր պահանջվում: Այնուհետև երեխաների հետ քննարկում է դիտումների արդյունքները, խնդրում պատասխանել այն հարցին, թե ինչի համար ենք օգտագործում ջուրը /խմում ենք, լվանում դեմքը, ձեռքերը, ոտքերը, լողանում ենք, լվանում իրերը, հատակը, ջրում ենք բույսերը, ծառերը, ծաղիկները, եփում ենք կերակուր և այլն: Կարևոր է, որ երեխաները զգան, թե ինչքան հաճախ է մեզ անհրաժեշտ լինում ջուրը: Առանց ջրի մարդը չի կարող ապրել: Առանց սննդի մարդը կարող է ապրել երկու ամիս, իսկ առանց ջրի՝ հինգ օրից ոչ ավելի:

Պարապմունքի ընթացքը: Երեխաները դաստիարակի հետ միասին հիշում են իրենց դիտումների արդյունքները: Դաստիարակն առաջարկում է նրանց դիտել աշխարհի քարտեզը, բացահայտել՝ ո՞ր գույնն է քարտեզի վրա ավելի շատ: Այո՞, երկնագույնը, իսկ երկնագույնը՝ ջրի գույնն է: Կան արդյո՞ք մեծ գետեր, լճեր, մեր երկրում, եթե կան, ցույց ավել /երեխաները ցույց են տալիս քարտեզի վրա/: Դաստիարակը շարունակում է, որ գետերում, լճերում, ծովերում ջրերը տարբեր են՝ անհամ, աղի: Իսկ ինչպիսի՞ ջուր ենք խմում մենք. աղի՞, թե՞ քաղցրահամ:

Մարդը չի կարող աղի ջուր խմել, մինչդեռ երկրի վրա շատ է աղի ջուրը, ուրե՛մն ջուրը քիչ է, եզրահանգում է դաստիարակը, իսկ գետերի ջրերից մաքուր ջուր ստանալու համար շատ ջրամաքրման կայաններ են աշխատում, և դրա համար շատ աշխատանք է պահանջվում: Ինչպիսի՞ն է ջուրը, ունի՞ արդյոք հոտ, սա՞ռն է, թե՞ տաք /թափանցիկ է, հեղուկ, հոտ չունի/: Մաքուր ջուրը չունի համ կամ հոտ և բացարձակապես անգույն է:

Դաստիարակը հիշեցնում է երեխաներին, որ ջրի կաթիլները, երբ սառչում են, վերածվում են ձյան փաթիլների, իսկ ցրտին, ձմռան սառնամանիքին ջուրը սառչում է, վերածվում սառույցի: Գարնանը ձյունը և սառույցը սկսում են հալչել, լցվել գետերը:

Իսկ այժմ եկեք, տեսնենք, թե ջուրն ինչպե՞ս է ճանապարհորդում.

Հանդիպեցին կաթիլն ու գետակը միմյանց.

-Կաթիլ՝ իմ, կաթիլ, դու ե՞րբ ես ծնվել, որտե՞ղ ես ծնվել, - հարցրեց գետակը:

-Գարնան գալու հետ,- պատասխանեց կաթիլը.-Իմ առաջին երգը սկսվում է ծառերի ճյուղերի, տանիքների ձյան հալոցքից. կը՛տ,կը՛տ,կը՛տ:

-Իսկ դու ո՞րտեղից ես հայտնվել գետակ, հեռվի՞ց ես վազում և ու՞ր ես գնում: Գետակը ուրախ-ուրախ սկսեց կաթիլին պատմել ոչ միայն իր մասին, այլև ուրիշ գետակների մասին, որոնք ապրում են տարբեր վայրերում: Մենք գետակներս ամենից շատ սիրում ենք զարուհը, երբ արևի ջերմությունից ձյունը և սառույցը հալվում են մարգագետիններում և անտառներում, իսկ դուք՝ կաթիլներդ հավաքվում եք և օգնում մեզ ծնվելու, և այդ ժամանակ սկսվում է բնության հրաշքի՝ ջրի գարունը: Մենք ճամփա ենք ընկնում քչքալով, հանդարտ մեղեդիով մեր երգերն ենք երգում: Իսկ մեզանից նրանք, ովքեր ապրում են լեռներում, սարերում, ապրում են երկար: Գիտե՞ս ինչու: Քանի որ լեռներում ո՛չ ձյունը, ո՛չ սառույցները չեն անհետանում:

Իսկ ջրվեժների երգը: Չե՞ որ ջրվեժը գետի այն հատվածն է, որտեղ ջուրը բարձրությունից գահավիժում է ցած: Ջրվեժները ոչ միայն գեղեցիկ են, այլև՝ երգեցիկ: Ջրվեժներից թափվող ջրերի աղմուկը լսվում է մեծ հեռավորությունից:

Մենք թռչում ենք քարից քար, ոլոր-մոլոր, ներքև, վերև, հովիտներ: Այդ պատճառով էլ մենք ուրախ և երգեցիկ ենք, մեզ բոլորը սիրում են, իսկ ամենից շատ սիրում են նաև բանաստեղծները, նկարիչները: Յուզադրել հայ անվանի գեղանկարիչների ստեղծագործությունների վերաստություններից. Ջերմուկի, Շաքիի, Թռչկանի ջրվեժների նկարները: Տեղեկացնել, որ Հայաստանում Ջերմուկի ջրվեժն ամենաբարձրն է, որը թափվում է Արաքս գետի մեջ:

Իսկ այժմ լսե՛ք, թե ի՞նչ են գրում ջրի մասին բանաստեղծները:

Բանաստեղծության ընթերցանություն

Վ. Վարդունի

ՋՐԻԿ

Հոսիր, ջրիկ,  
Հոսիր ցած,  
Մի ծառ ունեն  
Նոր տնկած:  
Ուժ տուր նրան,  
Որ աճի,  
Որ ճյուղեր տա,  
Կանաչի:

Գ. Գաբրիելյան

ԱՄՊԻԿ

-Թեթև ամպիկ,	Մի քիչ ծովից
Մե-սև ամպիկ,	Թևիկներով
Աղբյուր չունես,	Իմ անտես
Դու վրադ,	Հավաքում եմ
Որտեղի՞ց ես	Կաթիլ-կաթիլ,
Պարզեում մեզ	Առու-առու
Այդքան ջրերը	Տալիս ձեզ:
Առատ:	

Հ. Թումանյան /հատված/

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ

- Դու ո՞ր սարեն կուգաս, ջրիկ,  
Իմ պահ՞ ջրիկ, իմ անուշիկ:  
- Ես էն սարեն կուգամ մթին,  
Որ հին ու նոր ձյունն է գլխին:  
- Դու ո՞ր առուն կերթաս, ջրիկ,  
Իմ պահ՞ ջրիկ, իմ անուշիկ:  
- Ես էն առուն կերթամ զվարթ,  
Որ ավերն են շուշան ու վարդ:

Դաստիարակ - Ժողովուրդը ջրի մասին հետաքրքիր ասացվածքներ է հյուսել. «Ջրի նման երկար կյանք ունենաս», «Ջուրը կյանք է», «Ջուրն իր ցամփեն կգտնի»:

Ջուրը և՛ շատ է, և՛ քիչ: Յուրաքանչյուր ոք պիտի խնայողաբար օգտագործի ջուրը: Անտեղի բաց չթողնի ջրի ծորակը:

Անտառի և գետի աղբյուրները, որոնք բնական ֆիլտրով են անցնում, սնում են գետերը: Աղբյուրները պետք է պահպանել, մաքրել դրանք աղբից, խոտերից, որպեսզի ջուրը մաքուր լինի: Մաքուր ու սառնորակ շատ աղբյուրներ, ցայտաղբյուրներ կան Հայաստանում /աշխարհում քիչ կան այդպիսի երկրներ/: Դրանցից ջուր խմելով՝ մարդիկ զովանում են, իրենց ծարավը հագեցնում:

Խմելու ջրից բացի, ինչպես հեքիաթներում, այնպես էլ իրականում, կան մաև այսպես կոչված կենդանի ջրեր, որոնք բուժիչ և առողջարար են մարդկանց համար:

Հայաստանում հայտնի են շատ հանքային աղբյուրներ:

Հանրահայտ են «Ջերմուկ», «Արզնի», «Դիլիջան», «Արմենիա» առողջարանները, ուր մարդիկ տարբեր վայրերից գալիս են բուժվելու հանքային ջրով:

Հարցազրույց պատմության բովանդակության շուրջ:

Ավարտին դաստիարակը մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին՝ մեր կյանքում ջրի նշանակության, ջրի ճանապարհորդության մասին, որտե՞ղ ենք հանդիպում, ինչպե՞ս ենք այն օգտագործում: Երեխաների հետ միասին քվարկում է ջրի հատկությունները և ամփոփում նյութը:

Ֆիզկուլտ- դադար

Խաղ՝ «Լապտերները վառվեցին, լապտերները հանգեցին»:

Լապտերները հանգեցին հրահանգի ժամանակ երեխաները կքանստում են, ձեռքերը բռունցք դարձնում: Լապտերները վառվեցին հրահանգի ժամանակ ուղիղ կանգնում են, ձեռքերը դեպի վեր պարզում, բռունցքները՝ բացում:

Հնչարտաբերական ունակությունների զարգացում:

Ջ հնչյունը ճիշտ արտասանելու համար խաղալ՝ «Գուշակիր՝ ո՞ր նկարը չկա»: Խաղի միջոցով զարգացնել երեխաների դիտումնակությունը, ընդլայնել մտահորիզոնը: Որպես դիտողական պարագաներ՝ օգտագործել ջերմաչափի, արջի, ջութակի, չղջիկի նկարները:

Առաջարկել շուտասելուկ ջ հնչյունով.

Չին ձորում, ջորին ջրում,

Չին ջրում, ջորին ձորում,

Չեր ձորի ջրաղացին

Մեր ձորի ջրից ջուր տվին:

Շուտասելուկի բառերն սկզբում արտասանել պարզ, հստակ և դանդաղ, ապա հնչեցնել ավելի արագ: Կարելի է կրկնել՝ ըստ անհրաժեշտության:

**ՊԱՐԱՊՄՈՒՆԷՐ 35**

Թեման՝ «Իմ ընտանիքը»

Տեսակը՝ գրույց

Նպատակը

Ճշտել և ամրապնդել երեխաների գիտելիքներն «Ընտանիք» հասկացության վերաբերյալ: Տեղեկություն տալ այն մասին, թե ովքեր են երեխաների հարազատները: Խորացնել պատկերացումներն ընտանիքի անդամների մասին՝ օգտվելով հարազատների նկարներից: Սովորեցնել ստեղծել փոքրիկ պատմվածքներ՝ դրանց մեջ նշելով ընտանիքի անդամների անունները, իր ազգանունը, հայրանունը: Ներկայացման ընթացքում օգտագործել ընտանիքին վերաբերող ասացվածքներ և թևավոր խոսքեր: Չարգացնել կապակցված խոսքը: Դաստիարակել սեր և հարգանք ընտանիքի անդամների նկատմամբ:

Անհրաժեշտ պարագաներ՝ սովորաբար չից կամ կտորից պատրաստված ծառ՝ կանաչ ճյուղերով, լուսանկարներ:

**Ընթացքը**

Երեխաները նստում են կիսաշրջանաձև: Դաստիարակը նրանց ուշադրությունը հրավիրում է մի քանի ընտանեկան լուսանկարների վրա /առանձին նկարներ՝ տատիկի և պապիկի հետ, քույրիկի և եղբոր հետ/:

Դաստիարակ - Երեխաներ, ովքե՞ր են պատկերված այս լուսանկարներում:

- Ի՞նչն է նրանց միավորում իրար:
- Ինչի՞ց որոշեցիք, որ այստեղ ընտանիք է պատկերված:

Նկարներում պատկերված են ծնողները և երեխաները, մայրիկը և հայրիկը, քույր ու եղբայրը, տատիկը, պապիկը և թոռնիկները/:

- Ընտրե՞ք նկարներ, որոնք ձեզ ավելի շատ են դուր գալիս, և մտածե՞ք, թե ինչ կարող եք պատմել դրանց մասին:

Բոլոր լուսանկարները երեխաների մեջ առաջացնում են բարի տրամադրություն: Մարդկանց քանակը լուսանկարներում տարբեր է, ընտանիքի կազմը՝ նույնպես /մի ընտանիք ապրել է շատ վաղուց, տասնյակ տարիներ առաջ, մյուսները մեր ժամանակիցներն են/: Լուսանկարներում ծնողները քնքշորեն գրկել են երեխաներին, բոլորը ժպտում են:

- Չե՞ր կարծիքով, ի՞նչ է ընտանիքը:

- Ընտանիքում մարդիկ ապրում են միասին, սիրում են մեկը մյուսին, հարգում են միմյանց, հոգ են տանում միմյանց նկատմամբ...: Ընտանիքը միավորում է հարազատներին, համախմբում ծնողներին և երեխաներին, տատիկներին ու պապիկներին, քույրերին և եղբայրներին: Նրանք մեր ազգականներն են, հարազատները:

Դաստիարակ - Ընտանիքը շատ բանկ ու կարևոր օղակ է յուրաքանչյուր մարդու համար: Ես գիտեմ շատ գեղեցիկ բանաստեղծություն՝ ընտանիքի մասին:

**Մեր ընտանիքը**

*Ամեն մեկը իր գործն ունի մեր տանը,  
Գուպաներ է գործում նախշում մեր նանը,  
Իր սենյակն է կարգի բերում հայրիկը,  
Վաղվա դասն է նստած սերտում քույրիկը,  
Իսկ մայրիկը մեր շորերն է արդուկում,  
Լոռություն է, լոռություն է սենյակում:  
Ես էլ մեղմիկ երգ եմ ասում, չեմ լալիս,  
Քնեցնում եմ օրորոցում տիկնիկիս:*

*Իսկ հիմա հիշենք մի քանի ասույթներ ընտանիքի մասին.*

Արծաթն ու ոսկին չեն հնանում, հայրն ու մայրը գին չեն ունենում:  
Երեխաներն ընտանիքի ծաղիկներն են:  
Ընտանիքը պետության հիմքն է:  
Ամուր ընտանիք՝ ամուր պետություն:

**Թարմացնող վարժություն.**

*Այս մատիկը պապիկն է,  
Այս մատիկը տատիկն է,  
Այս մատիկը հայրիկն է,  
Այս մատիկը մայրիկն է,  
Այս մատիկը մեր փոքրիկն է,  
Նրա անունը Աշոտիկ է:*

Աշոտիկն ունի ամուր, համերաշխ ընտանիք, որովհետև բոլոր մատները միասին են և մի բռունցք են դարձել:

- Ինչպիսի՞ն պետք է լինի ընտանիքը:
- Համերաշխ, ամուր, աշխատասեր, հոգատար...:
- Երեխաներ, մենք օրվա մեծ մասն անցկացնում ենք մանկապարտեզում և սիրում ու հարգում ենք միմյանց: Մենք նման ենք համերաշխ ու գեղեցիկ ընտանիքի: Ուշադիր նայեք՝ մեզ մոտ գեղեցիկ ծառ է աճել /ցույց է տալիս նախապես պատրաստված ծառը, որը փակցված է վարագույրին/: Այս ծառը մեր խումբն է, իսկ ճյուղերը՝ ձեր ընտանիքները: Չամբույղում ձեր ընտանիքի անդամների նկարներն են: Չեզնից յուրաքանչյուրը պետք է գտնի իր հարազատների լուսանկարները և փակցնի համապատասխան ճյուղին: Հիմա մենք կտեղեկանանք, թե յուրաքանչյուրիդ ընտանիքում քանի մարդ կա: Կիմա-

նանք նաև նրանց անունները /փորձը ցույց է տալիս, որ 4-6 տարեկան երեխաները վստահորեն ասում են իրենց ծնողների, տատիկների, պապիկների անունը, ազգանունը և հայրանունը, իսկ մյուս հարազատներինը ոչ միշտ են մտաբերում/:

- Սա իմ պապիկն է: Նրա անունը Հայկ է, ազգանունը Պետրոսյան:
- Սա իմ տատիկն է: Նրա անունը Աշխեն է.....:
- Սա ե՛ս եմ՝ Տիգրան Գևորգյանը.....:

**Դաստիարակ** - Երեխաներ, ես տեսնում եմ, թե ինչպիսի քնքշությամբ ու սիրով եք դուք հիշատակում ձեր հարազատների անունները: Ծնորհակալությու՛ն այդ ամենի համար:

*Պարապմունքը կարելի է ինտեգրել կերպարվեստի որևէ պարապմունքի հետ: Օրինակ. Նկարչություն՝ «Աշխարհի ամենալավ հայրիկը», «Իմ մայրիկի դիմանկարը», «Իմ ընտանիքը», «Բարև՝ Չեզ, սա ե՛ս եմ»...:*

**Ծեփ՝** «Վարդեր մայրիկի համար», «Իմ հայրիկը», «Տատիկը և պապիկը», «Ընտանեկան դիմանկար»...:

**Ապլիկացիա՝** տոնական բացիկների պատրաստում՝ ազգային բանակի՝ հայրենիքի պաշտպանության օրվան նվիրված և Մարտի 8-ի կապակցությամբ:

**Կառուցողական աշխատանք՝** Թղթից, ստվարաթղթից և այլ նյութերից կառուցել «Իմ տունը», «Գեղեցիկ կահույք իմ տան համար»...:

**ՊԱՐԱՊՄՈՒՆԵՐՆԵՐ՝ 36-37**

**Թեման՝** «Ընտանիք»  
**Տեսակը՝** Չրույց. նկարի պատմում  
**Նպատակը**

Ընդլայնել երեխաների պատկերացումները ընտանիքի անդամների բվի, պարտականությունների մասին: Ջարգացնել կապակցված խոսք կառուցելու, հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունը: Սովորեցնել ուշադիր դիտել նկարը, տեսնել նկարի մանրամասները և պատմել այն:

**Նախապատրաստական աշխատանք**  
Ընտանեկան նկարների դիտում:  
**Անհրաժեշտ նյութեր**  
«Ընտանիքը ընթրիքի սեղանի շուրջ» թեմատիկ նկար:  
**Ընթացքը**

1-ին օր  
Պարապմունքը սկսե՛ք Գ. Գաբրիելյանի «Մեր ընտանիքը» բանաստեղծության ընթերցմամբ: Հետո հարցրե՛ք երեխաներին.

- Զանի՞ հոգուց է բաղկացած ձեր ընտանիքը:
  - Զանի՞ քույր կամ եղբայր ունես:
  - Ի՞նչ է աշխատում հայրիկը (մայրիկը):
  - Ի՞նչ է անում տատիկը (պապիկը):
  - Դու ինչո՞վ ես օգնում ընտանիքիդ:
  - Ո՞վ ինչ գործ է անում տանը:
  - Ի՞նչ եք անում երեկոյան, երբ ընտանիքի բոլոր անդամները տանն են:
- Խրախուսե՛ք երեխաներին՝ միմյանց հարցեր տալ քննարկվող թեմայի շրջանակում: Օրինակ՝
- Ի՞նչ ընտանի կենդանի ես պահում տանը:
  - Տատիկիդ պատրաստած ո՞ր ուտելիքն ես սիրում:
  - Ի՞նչ նվիրեցիր մայրիկիդ ծննդյան օրվա առթիվ և ...:

(Դաստիարակը նույնպես կարող է պատմել իր ընտանիքի մասին: Դաստիարակի օրինակը կօգնի երեխաներին՝ ավելի ազանտ, տրամաբանված արտահայտել իրենց մտքերը:)

Պարապմունքի ավարտին անցկացրե՛ք «Ի՞նչ է անում մայրիկը, ի՞նչ է անում հայրիկը»<sup>5</sup> դիդակտիկ խաղը:

Երեխաներն առանց խոսքի ցուցադրում են, թե սովորաբար ինչ են անում հայրիկներն ու մայրիկները (ճաշ են եփում, արդուկ ու լվացք են անում, գիրք

<sup>5</sup> Լ.Մանուկյան, Լ.Սմբատյան, Հ.Միտոյան, Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում, էջ 48, Երևան 2007

են կարդում, խանութ ու շուկա են անում, մեքենա են վարում, ինչ-որ բան են նորոգում, հեռուստացույց են դիտում և այլն): Մյուսները ցուցադրվող գործողություններից պետք է զուշակեն, քե ում է դա հատուկ:

2-րդ օր

Երեխաների ուշադրությունը հրավիրեք «Ընտանիքն ընթրում է» նկարին և առաջարկեք պատմել այն: Հարցերով ուղղորդե՛ք տեսնել նկարի մանրամասները.

- Ի՞նչ է անում ընտանիքը:
- Ովքե՞ր են հավաքված սեղանի շուրջ:
- Ի՞նչ կա սեղանին:
- Ինչի՞ մասին են զրուցում ընտանիքի անդամները:
- Ի՞նչ տրամադրություն ունեն նրանք:

(«Ընտանիքն ընթրում է» նկարը կարող եք փոխարինել «Ընտանիք» թեմա արժարժող ցանկացած այլ նկարով, օրինակ՝ «Ընտանիքը տոնում է», «Ընտանիքը հանգստանում է» և այլն:)

Պարապմունքն ավարտե՛ք խաղ-զվարճանքով: Արտասանե՛ք «Այս բոլորին» (հեղ.՝ Հ.Հայրապետյան) բանաստեղծությունը և առաջարկե՛ք բանաստեղծության հանգեղին համապատասխան ծաղիկ մատիկները.

<i>Այս մայրիկս է,</i>	<i>Այս մեր տունն է,</i>
<i>Այս հայրիկս է,</i>	<i>Այս մեր շունն է,</i>
<i>Այս էլ կրտսեր</i>	<i>Այս էլ մեր շան</i>
<i>Ճիր բույրիկս է:</i>	<i>Հողն բույնն է:</i>
<i>Հիմա վերցնենք</i>	<i>Այս մեր բակն է,</i>
<i>Վրիժին ու ներկ,</i>	<i>Այս մեր Հայկն է,</i>
<i>Այս բոլորին</i>	<i>Այս էլ մեր տան</i>
<i>Մենք նկարենք:</i>	<i>Ներքնահարկն է:</i>

Օրվա երկրորդ կեսին կամ կերպարվեստի պարապմունքին հանձնարարե՛ք ստեղծել պաստառ «Իմ ընտանիքը» թեմայով: Երեխաները նկարում են իրենց ընտանիքի անդամներին, ընտանեկան տոները, միջոցառումները, հանգիստը, գործերը և նկարները փակցնում են պաստառին: Ուղղորդե՛ք երեխաներին ազատ ժամերին մոտենալ պաստառին և ծանոթանալ ընկերների նկարներին: Խրախուսե՛ք, որ միմյանց ներկայացնեն նկարները և պատմեն յուրենց ընտանիքների մասին:

Թեման՝ «Ապակու աշխարհում»

Տեսակը՝ գրույց

Խնդիրները

- Ծանոթացնել ապակու առանձնահատկություններին:
  - Ճշտել երեխաների գիտելիքները ապակու, նրա հատկանիշների մասին
  - Դաստիարակել խնամքով վերաբերմունք ապակյա իրերի նկատմամբ:
- Անհրաժեշտ նյութեր՝ ապակե տարբեր իրեր, ապակե իրերից պատրաստված իրերի նկարներ:

Պարապմունքի ընթացքը

Երեխաների սեղաններին դասավորված են ապակյա իրեր. բարակ, շերտավոր բաժակներ, պնակ, ափսե, սկահակ, ծաղկաման և այլն: Դաստիարակը հրավիրում է երեխաների ուշադրությունը այդ առարկաների վրա և խնդրում անվանել դրանք: Շեշտադրում է, որ այդ առարկաները բոլորը ապակուց են:

Հարցնում է երեխաներին, քե ինչո՞ւ են այդքան շատ իրեր պատրաստվում ապակուց: Լսելով երեխաների պատասխանները՝ առաջարկում է որոշել ապակու հատկությունները: Դաստիարակը բաժակի մեջ գցում է գունավոր գնդիկ, ապա հարցնում՝ ի՞նչ կա բաժակի մեջ և շարունակում.

- Ինչպե՞ս կռահեցին երեխաները, քե ի՞նչ կա բաժակի մեջ:
- Ապակին թափանցիկ է, - ընդգծում է դաստիարակը և խնդրում երեխաներին կրկնել այլն: Այնուհետև շարունակում է, որ ապակին թափանցիկ է, դրա համար էլ ապակուց պատրաստում են տների պատուհանների, դռների ապակիներ: Էլ որտե՞ղ են թափանցիկության համար օգտագործվում ապակիներ: Ապակուց են պատրաստում նաև ավտոմեքենաների ապակիներ, ակվարիումների պատեր, ջերմաչափեր, որոշ արձանիկներ և այլն:

- Ապակին լուսավոր է, այն կարող է լինել նաև գունավոր, - շարունակում է դաստիարակը: Առաջարկում է երեխաներին անվանել իրեր գունավոր ապակուց և որոշել դրանց գույները: Այնուհետև երեխաները շոշափելով որոշում են, քե ինչպիսին է ապակին՝ հարթ, սահուն, խորդուրդող, բարակ, հաստ:

- Իսկ ի՞նչ կլավի, եթե ջարդվի ապակե իրը, - հարցնում է դաստիարակը: Օգնում է եզրահանգելուն, որ ապակին կտրվող է, վշրվող, հեշտությամբ ջարդվում է: Խնդրում է կրկնել՝ դյուրաբեկ, փխրուն բառերը:

Այնուհետև դաստիարակը եզրահանգում է, որ ապակին անջրանցիկ է, այդ իսկ պատճառով ցանկացած ապակե իր կարող է լցվել հեղուկով: Իզուր չէ, որ ապակու մասին ասում են՝

*Յրտից քրտնում է,  
Տարից չորանում,  
Կոտրվում է նա,  
Բայց չի կորանում:*

Վերջում դաստիարակը ծանոթացնում է ապակու ևս մի հատկությամբ՝ այն գրնգուն է և ընդհանրացնում է նյութը:

**Խոսքի հնչյունային կուլտուրա**

**Շ և Ժ հնչյունների տարբերակում:**

Վարժեցնել երեխաների մոտ շ և ժ հնչյունների հստակ արտաբերումը, բառերի մեջ առանձնացված արտասանությամբ: Չարգացնել նրանց հնչյունային լսողությունը: Ամրապնդել նրանց մոտ անցած հնչյունների տարբերակումը: Սովորեցնել բառերի մեջ տարբերակել շ և ժ հնչյունները, գտնել բառեր շ և ժ հնչյուններով խոսքի մեջ, կատարելագործել արտահայտիչ հնչերանգը, մշակել ճիշտ խոսքային շնչառություն:

Դաստիարակը հիշեցնում է, որ շ հնչյունը օձի երգն է, իսկ ժ-ն՝ բզեզի: Խնդրում է երեխաներին ձեռքով կատարել զիզգազածև շարժումներ. օձը սողում է, իսկ ժ հնչյունի համար կատարել շարժումներ վերև-ներքև. բզեզը բռչում է:

*Այնուհետև առաջարկում է երեխաներին կրկնել հետևյալ վանկերը.*

*Շա-ժա ժա-շա*

*Շու-ժու ժու-շու*

*Շե-ժե ժե-շե*

*Շո-ժո ժի-շի*

- Ո՞ր հնչյուններն էին հաճախակի կրկնվում այս վանկերում:

Դաստիարակն արտասանում է բառեր շ և ժ հնչյուններով և առաջարկում կրկնել դրանք՝ շուն, աշուն, նուշ, շերեփ, կուժ, բաժակ, Ժաննա: Առաջարկում է երեխաներին՝ շ հնչյուն լսելու դեպքում ծափ տալ. Ժ հնչյունի դեպքում՝ ոտքերով դոփել:

**ՊԱՐԱՊՄՈՒՆ Ը 39**

Թե՛մա՝ «Ճանապարհորդություն դեպի անցյալ՝ բուրբ»

Տեսակը՝ ինտեգրված պարապմունք

Նպատակը

Ծանոթացնել երեխաներին թղթի որոշ հատկություններին (հաստ-բարակ, կոշտ-փափուկ) և դրա հետ կատարվող տարբեր գործողություններին (պատռել, ծալել, ճմռթել, փաթեթավորել, նկարել գրել...):

Տեղեկացնել երեխաներին, թե ինչ նշանակություն ունի թուղթը մարդու կյանքում: Նրանց մոտ հետաքրքրություն առաջացնել կատարելու թղթի հետ տարբեր գործողություններ:

Չարգացնել մտածողությունը, ձեռքերի մատների մանր մկանային համակարգը /մոտորիկան/: Դաստիարակել հետաքրքրասիրություն, խնամքով վերաբերմունք թղթի նկատմամբ:

Անհրաժեշտ պարագաներ՝ տիկնիկ «Թղթե փերի»՝ պատրաստված տարբեր տեսակի թղթերից /անձեռոցիկ, գծագրական թուղթ, սովարաթուղթ, կոնֆետի թղթեր.../, նկարչական արթմներ, ջուր, սրբիչ, թղթից պատրաստված առարկաներ /գիրք, նկար, խաղալիք, թերթ, դիմակ, ամսագիր/, պարագաներ՝ թղթե կառուցումներ կատարելու համար:

Նախապատրաստական աշխատանք: Դաստիարակը նախորդ մի քանի օրերի ընթացքում երեխաների հետ գրուցում է թղթի ստեղծման պատմության մասին, ցուցադրում է տարբեր նկարներ և պատրաստի նմուշներ:

**Պարապմունքի ընթացքը**

- Երեխաներ, այսօր մենք հյուր ունենք: Մեզ հյուր է եկել «Թղթե փերի» տիկնիկը, որը հեքիաթային երկրից է: Այս երկրում ամեն ինչ պատրաստված է թղթից. և՛ տները, և՛ հագուստները, և՛ փոխադրամիջոցները, ամեն-ամեն ինչ: Ուշադիր նայե՛ք, անգամ ինքը տիկնիկը թղթից է պատրաստված, կարո՞ղ եք ասել՝ ինչպիսի՞ /գունավոր թղթից, անձեռոցիկից և սովարաթղթից/:

Գիդակտիկ վարժություն՝ «Ի՞նչը կարող է լինել թղթից»:

- Մեզ շրապատող աշխարհում կան շատ առարկաներ, որոնք թղթից են: Նշե՛ք դրանցից մի քանիսը: /Երեխաները թվարկում են թղթից պատրաստված ծանոթ առարկաներ/:

Դաստիարակը բարդացնում է առաջադրանքը. երեխաները պետք է թվարկեն առարկաները՝ օգտագործելով ածականներ /օրինակ, փափուկ թուղթ, սպիտակ թուղթ, քառակուսի թուղթ.../:

**Փորձեր՝ թղթի հետ**

**1. Ծմոթել թուղթը**

- Այժմ փորձեք ճմոթել թուղթը: Հե՞շտ է դա անել: Հի՞մա փորձե՛ք նույնն անել սեղանի հետ: Ի՞նչու՞ չի ստացվում /որովհետև թուղթը փափուկ է, իսկ սեղանն ամուր է և կոշտ/:

2. Պատռել թուղթը

Դաստիարակն առաջարկում է պատռել թուղթը, ապա կտորը: Երեխաները նշում են, որ կտորն ավելի ամուր է:

3. Թրջել թուղթը

Անձեռոցիկը ջրի վրա դնելով՝ երեխաները համոզվում են, որ թուղթը «վախենում է ջրից», այն փխրում է և միանգամից պատառոտվում է, քայքայվում: /Թուղթը ջրի մեջ թողնում են մինչև պարապմունքի ավարտը/:

Թարմացնող վարժություն՝ «Լինում է, չի լինում»:

Դաստիարակն անվանում է առարկաներ, իսկ երեխաները պետք է պատասխանեն՝ դրանք իրական կյանքում լինու՞մ են թղթից, թե՞ ոչ: Դրական պատասխանի դեպքում ծափահարում են, բացասականի դեպքում՝ ոտքերով հարվածում են հատակին:

Թղթն աթոռ

Թղթն նավակ

Թղթն գիրք

Թղթն հագուստ

Թղթն կոշիկ

Թղթն վերարկու

Թղթն կահույք

Թղթն ձեռքեր...:

Չրույց թղթի մասին

Երեխաներ, թղթն փերին մեզ շատ է խնդրում խնամքով վերաբերվել թղթին, պահպանել այն, անտեղի չպատռել և չնետել: Չէ՞ որ թուղթը ստանում են ծառերից: Որպեսզի ստանան նկարչական 10 այլքում /ցույց է տալիս/, անհրաժեշտ է կտրել մեկ հսկա ծառ: Ինչքան շատ թուղթ են ստանում, այնքան շատ ծառ է հատվում: Եթե մենք խնամքով վերաբերվենք թղթին, այն տեղին օգտագործենք, ապա շատ ծառ կպահպանենք:

Կառուցողական աշխատանք

1. Թղթն գնդիկների ստացում: Երեխաները գունավոր անձեռոցիկներից ստանում են փոքրիկ գնդիկներ:

2. Շնչառական վարժություն: Երեխաներին առաջարկվում է թղթն գնդիկները դնել ավի մեջ և փչել սկզբում թույլ, ապա որքան հնարավոր է ուժեղ, և հետևել թղթի ուղղությամբ:

3. Երեխաները կանաչ գույնի անձեռոցիկը ոլորելով ստանում են թղթն ձող: Ապա դրա վրա սոսնձում են գունավոր անձեռոցիկներից նախապես ստացված փոքրիկ գնդիկները /ծաղիկներ/: Այնուհետև դաստիարակի օգնությամբ ամրացվում է այդ ձողը: Դրանով ավարտվում է թղթն պսակի պատրաստումը:

- Երեխաներ, մեր հանդիպումը թղթն փերիի հետ մոտենում է ավարտին: Եկե՛ք տեսնենք, թե ի՞նչ վիճակում է ջրի մեջ թողած թուղթը: Կարելի՞ է այն կրկին օգտագործել, ինչու՞ /պատասխաններ/:

Երեխաները հրաժեշտ են տալիս Թղթն փերիին և խոստանում խնամքով վերաբերվել թղթից պատրաստված ամեն տեսակի իրի:

ՊԱՐԱՊՍՏԻՆՔ 40

Թե՛մա՝ «Քարեր»

Տեսակը՝ ինտեգրված խաղ-պարապմունք<sup>6</sup>

Նպատակը: Նկարների և ոտանավորի միջոցով երեխաներին ծանոթացնել քարի հատկություններին, տեսակներին: Շարունակել ձևավորել ազատ և ճիշտ խոսքի հմտություն: Ամրապնդել հասկացությունները քարերի տեսակների, ձևի (կլոր, ձվաձև), քանակի (մեկ, մեկ-երկու, մեկ-շատ), զանգվածի (թեթև-ծանր) վերաբերյալ, զարգացնել խոսքը՝ տվյալ հասկացությունների ներառմամբ: Մովորեցնել համեմատել նյութերը և նշել դրանց առանձնահատկությունները: Նպաստել երեխաների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը:

Անհրաժեշտ նյութեր՝ գետափ պատկերող (ավազով և մանր քարերով) նկար, գետի կլոր և ձվաձև քարերի անհրաժեշտ քանակ, փափուկ, փոքրիկ գնդակներ՝ ըստ երեխաների թվի, զամբյուղ՝ գնդակների համար, ծեփատախտակ, աղի խմոր՝ ներկված մոխրագույն, դարչնագույն, սև (ցանկացած բնական երանգներ), քարեր, կավ, չոր ավազ՝ լցված ամանների մեջ, ջրով լի մեծ անոթ, խոնավ լաթեր, նկարակալ (մուլբերտ), տախտակներ՝ ծեփակերտելու համար:

Ընթացքը

Դաստիարակ - Երեխաներ, ի՞նչ եք անում, երբ գտնվում եք գետափին /լճափին/ ծնողների կամ տատիկի ու պապիկի հետ:

Երեխաներ - Լողում ենք, արևկող անում, խաղում ենք ջրում և ավիին:

Դաստիարակ - Իսկ երբեմնից քարեր հավաքե՞լ եք ավիից: Այսօր ես շատ գեղեցիկ քարեր եմ բերել, որոնք հավաքել եմ ծովափից՝ անցյալ տարի ամռանը: Դրանք դրված են այս տուփի մեջ: Եկե՛ք զննենք...

Տուփը դրվում է սեղանի կենտրոնում, երեխաները տեղավորվում են դրա շուրջը, վերցնում քարերը և ուսումնասիրում:

Դաստիարակ - Քանի՞ քար կա այստեղ:

Երեխաներ - Շատ:

Դաստիարակ - Բոլոր քարերը տարբեր են, բայց մեկը մյուսին նման են իրենց ձևով: Ի՞նչ ձև ունի այս քարը:

Երեխաներ - Կլորավուն:

Դաստիարակ - Արդյո՞ք բոլոր քարերն են կլոր: Իսկ կա՞ն այլ ձևեր:

Եթե երեխաները դժվարանում են, ապա տրվում են ուղղորդող հարցեր:

- Միգուցե դրանք եռանկյա՞ն տեսք ունեն:

<sup>6</sup> Պարապմունքը կարելի է անցկացնել օրվա ընթացքում կամ այն շարունակել օրվա երկրորդ կեսին:

- Քառակուսի՞ են:

Իսկ հիմա տեղափոխեք բոլոր ձվածն քարերը մեկ ուրիշ տուփի մեջ:

- Ի՞նչ ձևի քարեր մնացին առաջին տուփի մեջ:

Երեխաներ - Կլոր:

Դաստիարակ - Իսկ ինչպիսի՞ քարեր են մյուս տուփի մեջ:

Երեխաներ - Չվածն:

Դաստիարակ - Հիմա վերցրեք կլոր կամ ձվածն մեկական քար, այն, որը ձեզ դուր է գալիս:

- Քանի՞ քար կա ձեր ձեռքին:

Երեխաներ - Մեկ:

*Դաստիարակը միաժամանակ ծանոթացնում է երեխաներին քարերի տեսակներին /բազալտ, գրանիտ, տուֆ, խճաքար.../ և նշում, որ հայոց աշխարհը հարուստ է տարբեր տեսակի քարերով: Դա է պատճառը, որ նրան անվանում են քարերի երկիր՝ Հայաստան:*

Դաստիարակ - Ձեզ դուր եկա՞վ խաղը քարերի հետ:

Երեխաներ - Այո՛:

Դաստիարակ - Իսկ հիմա լսե՛ք շատ հետաքրքիր մի ոտանավոր.

*Ես կմեկնեմ տատիկիս մոտ,*

*Կնետեմ քարերը,*

*Ավազին թրը մփ-թրը մփ,*

*Իսկ ջրին՝ չլը՛փ- չլը՛փ:*

- Քարը ծա՞նր է, թե՛ թեթև:

Երեխաներ - Ծանր /թեթև/:

Դաստիարակ - Խմբում կարելի՞ է քար նետել:

Երեխաներ - Ո՛չ:

Դաստիարակ - Իհարկե՛ ո՛չ, որովհետև այն կարող է դիպչել մեզմիջ որևէ մեկին կամ ապակուն: Եկե՛ք զգուշորեն քարերը դնենք տուփի մեջ: /Կատարում են/: Հիմա մեր ձեռքերն ազատ են, եկե՛ք կրկնենք ոտանավորը և խաղանք մատիկներով:

*Ես կմեկնեմ տատիկիս մոտ*

*Կնետեմ քարերը*

*Ավազին թրը մփ-թրը մփ*

*Ջրին չլը՛փ-չլը՛փ*

Խաղը կրկնվում է երկու անգամ:

Դաստիարակ - Մենք կատարեցինք մատներով նախավարժանք: Միգուցե դուք մոռացա՞ք, թե ինչպես են նետում քարերը: Եկե՛ք ստուգենք: Քարերի փոխարեն վերցնենք փափուկ գնդակներ: /Առաջարկվում է զամբյուղից վերցնել

*/արմուկը ծայած ձեռքերով երեխաները շարժվում են առաջ և կրկնորինակում գնացքի շարժումը/*  
*Կրկնակները ձախ և աջ ձեռքերը ետանդով մեկնում են առաջ՝ մմանակելով գնդակի նետման շարժումը/*  
*/ձեռքերը բունցք արած ինքրականորյանք իջեցնում են վերից վար՝ մմանակելով նետված քարի ընկնելը/*  
*/Շարժումը կրկնորինակվում է, միայն թե բունցքների փոխարեն մատները բաց են /:*

մեկական փափուկ գնդակ/։ Քարերը ծանր էին, իսկ գնդակները ծա՞նր են, թե՞ թեթև:

Երեխաներ - Թեթև:

Դաստիարակ - Եկե՛ք աչ ձեռքով՝ քափով գնդակը նետենք առաջ, որքան հնարավոր է՝ առաջ: Կեցցե՛ք: Գնդակը տեղափոխենք ձախ ձեռքը և նորից նետենք: Իսկ հիմա հավաքենք գնդակները զամբյուղի մեջ: /Կատարում են/:

- Քանի՞ գնդակ կա զամբյուղում:

Երեխաներ - Ծա՛տ:

Դաստիարակ - Այսօր մենք քարեր էինք դիտում, պահում էինք դրանք մեր ձեռքերում, հիշում էինք, թե ինչպես պետք է ճիշտ նետել: Ուզու՞մ եք հիմա քարեր ծեփենք: Ինձ մոտ կա մի նկար, որի վրա պատկերված է ջուր և ավազ, բայց քարեր չկան: /Նկարը տեղադրվում է նկարակալի վրա/: Նստենք սեղանների շուրջ, որոնց վրա կան ծեփատախտակներ և մի քանի կտոր խմոր: Ինչպիսի՞ քարեր ծեփենք՝ կլո՞ր, թե՛ ձվածն:

Ճշգրտվում են ծեփելու եղանակը, առարկաների ձևի մասին յուրացման մակարդակը: Քանի դեռ երեխաները տրորում են խմորը, դաստիարակը մեկ անգամ ևս քարձրածայն արտասանում է կատակ-ոտանավորը: Հենց որ ծեփվում է առաջին քարը, առաջարկվում է այն ամրացնել նկարի վրա:

Դաստիարակ - Քանի՞ քար է նկարի վրա:

Երեխաներ - Մեկ:

Դաստիարակ - Ի՞նչ ձև ունի այն՝ կլոր է՞, թե՞ ձվածն: /Երբ նկարին ամրացվում է ևս մեկ քար, հարցը կրկնվում է. «Հիմա քանի՞ քար կա նկարի վրա»/:

Երեխաներ - Երկու՛:

Դաստիարակ - Յուրաքանչյուրդ ծեփեց մի քանի քար, հիմա ասացե՛ք, քանի՞սն են դրանք մեր նկարի վրա:

Երեխաներ - Ծա՛տ:

Դաստիարակ - Հիմա մեր ձեռքերը կտրենք խոնավ լաթերով:

Ձեզ դուր եկա՞վ մեր աշխատանքը: Տեսե՛ք, թե որքան շատ քարեր կան թե՛ ավազի վրա և թե՛ ջրում: Եկե՛ք քարձրածայն պատմենք քարերի մասին մեր տիկնիկներին:

Ոտանավորն ասում են խմբով:

*Օրվա երկրորդ կեսին կարելի է աշխատանքը շարունակել կենտրոններում:*

*Աշխատանք կենտրոններում՝ քարի, ավազի, կավի համեմատում:*

Դաստիարակը երեխաներին բացատրում է, որ քարը, ավազը և կավը բնական նյութեր են: Դրանք օգտագործվում են մարդու կողմից ամենատարբեր աշխատանքներ կատարելու համար: Երեխաներին առաջարկում է բերել օրինակներ:

Երեխաները նստում են կլոր սեղանի շուրջ: Նրանք բաժանվում են 2 խմբի, և այդ երկու խմբերին դաստիարակը տալիս է անվանումներ: Յուրա-

քանչյուր խումբ ստանում է հանձնարարություն: Նրանք համեմատում են նյութերը՝ ավազը և քարերը, քարերը և կավը, կավը և ավազը: Այնուհետև սկսում են փորձարկել նյութերը: Քարերը և ավազը լցնում են ջրով լի ամանների մեջ՝ տեսնելու համար, թե որն է ծանր: Տարաների մեջ դրանք խառնում են, որպեսզի տեսնեն, թե որն է ավելի արագ սուզվում:

Փորձարկելուց հետո կատարում են եզրակացություն, որ քարերն ավելի ծանր են, քան ավազը:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 41

**Թե՛մա՝** «Սպասք»

**Տեսակը՝** խաղ-պարապմունք

**Պարապմունքի նպատակը:** Ձևավորել և հարստացնել երեխաների ակտիվ բառապաշարը *սպասք* ընդհանրական հասկացությամբ: ԵՂտել, ընդլայնել երեխաների բառաստեղծման, բառափոխման գործնական ունակությունները: Չարգացնել երեխաների ուշադրությունը, մտածողությունը, հիշողությունը: Դաստիարակել միմյանց հետ շփվելու, երկխոսության մեջ մտնելու կարողություն:

**Անհրաժեշտ պարագաներ՝** սեղանի սպասք, թեյի սպասքի տարբեր կտորներ՝ գավաթներ, պնակներ, թեյնիկ, գդալներ, սպասք պատկերող նկարներ, խաղալիք թեյնիկ:

**Պարապմունքի ընթացքը**

**Խթանման փուլ**

Դաստիարակը կարող է կիրառել տարբեր մեթոդներ. անցկացնել հնչարտաբերական վարժություններ, սպասքի դիտում, հանելուկների գուշակում, բանաստեղծության ընթերցում, թարմացնող վարժություն: Դաստիարակն ընտրում է դրանցից որևէ մեկը:

**Իմաստի ընկալման փուլ**

**Թակում են դուռը:**

**Դաստիարակ-** Երեխանե՛ր, տեսե՛ք, այսօր մեր պարապմունքին կրկին հյուր է եկել տիկնիկ Նունիկը /նա ինչ-որ բան է շջնջում դաստիարակի ականջին/:

**Դաստիարակ** – Նունիկ, ինչո՞ւ ես այդպես ցածր խոսում:

**Նապաստակ** – Իմ ձայնն այսօր խզված է, կոկորդս ցավում է, դուք ինձ չե՞ք լսում:

**Դաստիարակ** – Երեխանե՛ր, ինչպե՞ս օգնենք Նունիկին:

**Կատարենք** մի քանի հնչարտաբերական վարժություն:

– Բերանը լայն բացում ենք՝ ա՛յ այսպես /ցույց է տալիս/ «ՏՏակ»:

– Շրթունքները սեղմում ենք, բաց ենք անում /պատուհանը մեծ է ու լուսավոր/ «Պատուհան»:

– Շուրթերը հետ են գնում, ապա առաջ են գալիս: Իսկ հիմա շուրթերը թուլանում են, ժպտում, սա «ժպիտ»-ն է՝ «Կնճիթ»:

– Շուրթերը բացվում են, հետո մոտենում իրար: Ապրե՛ք, երեխանե՛ր, նավակը լողում է Նունիկի մոտ՝ «Նավակ»:

– Բա՛ց արեք բերանը, հավաքե՛ք շուրթերը և գլուխները ճոճեք ժամացույցի մման «Ժամացույց»:

– Կլորացնենք շուրթերը խողովակի մման /խո, դո/, ապա բացենք շուրթերը /վակ/ «Խողովակ»:

**Դաստիարակ** – Իսկ հիմա մենք տիկնիկին կհյուրասիրենք թեյով:

- Ի՞նչ սպասք է մեզ անհրաժեշտ: /Երեխաները պատասխանում են/:

- Ճիշտ է, թեյի: Չեր առջև դրված են սպասքի տարրեր պարագաներ. դուք պետք է ընտրեք միայն թեյի պարագաները և դնեք սեղանին:

*Երեխաները կատարում են հանձնարարությունը:*

Երեխաներ – Թեյի գավաթներ, պնակներ, թեյնիկ, գդալներ, շաքարաման:

Դաստիարակ - Կրկնենք սպասքի անունները և դրանք դնենք սեղանին:

*Ընթացքում դաստիարակն առաջարկում է հանելուկներ:*

Ծնվել է դաշտում,	Սպիտակ է, բայց ձյուն չէ,
Եփվել՝ գործարանում,	Քաղցր է, բայց մեղր չէ,
Թեյի մեջ է հալվում: /շաքար/	Պոզավորից ենք վերցնում
	Եվ երեխաներին տալիս: /կաթ/

*Թմբլիկ եմ, գնդիկ եմ,  
Ե՛վ փափուկ եմ, և՛ փխրուն եմ,  
Բոլորին շատ սիրելի եմ: Խաց/*

*Երեխաները գուշակում են հանելուկները:*

*Սպասքադրելիս դաստիարակը երեխաներին կարող է հանձնարարել մեկ այլ առաջադրանք.*

Դաստիարակ - Որպեսզի ճիշտ անվանենք սպասքը, պետք է ընտրենք համապատասխան հիմնական բառը.

Թեյ –թեյնիկ,

Շաքար - դնում ենք շաքարամանի մեջ.

Հաց - դնում ենք հացամանի մեջ.

Կարագ - դնում ենք կարագամանի մեջ.

Կաթ – Լցնում ենք կաթի ամանի մեջ:

Երեխաները խմբով կրկնում են նոր բառերը:

Դաստիարակ - Ապրե՛ք, երեխաներ, ի՞նչ գեղեցիկ է սեղանին դրված

սպասքը:

*Թարմացնող վարժություն մատիկներով՝ «Իմ ճկույթիկները»:*

- Հիմա եկեք տրորենք մեր մատները. ինձ հետ կատարեք բոլոր շարժումները:

*Իմ ճկույթիկ, որտե՞ղ էիր:*

- Այս եղբորս հետ՝ անտառում,

Այս եղբորս հետ կաղամբապուր էի եփում,

Այս եղբորս հետ երգեր էինք երգում,

Դե, սրան էլ հանդիպեցի՝ կոնֆետ հյուրասիրեցի:

Դաստիարակի հետ միասին երեխաները կատարում են համապատասխան շարժումներ:

Մատների մարզանքը հարկավոր է կրկնել երկու անգամ:

Դաստիարակ –Նունիկին շատ դուր եկավ մատների մարզանքը:

Կշռադատման փուլ

Դաստիարակ - Երեխաներ, ես գիտեմ մի պատմություն, որի դեպքում սպասքը փախչում է տիրուհուց: Ահա՛, լսե՛ք այն.

- *Ահա թեյնիկն էլ սրճեփի հետևից վազում,*

*Բլբլում է, բլբլում ու զնգզնգում,*

*Նրանց հետևից պնակները, պնակները*

*Սլանում են փողոցում:*

*Ջր՛նգ, զր՛նգ, զր՛նգ, զր՛նգ, զնգզնգալով՝*

*Բաժակներն են զրնգում,*

*Իրար խփվում, փշրվում, զր՛նգ, զր՛նգ:*

- Երեխաներ, այս ստեղծագործության հեղինակը Չուկովսկին է, վերնագիրն է՝ «Ֆեդորինայի վիշտը»:

Իսկ ինչո՞ւ էին Ֆեդորինայից փախչում բոլոր անանները, որովհետև նա չէր լվանում դրանք: Ուրեմն մենք պետք է սպասքի հետ խնամքով վարվենք՝ օգտագործելուց հետո լվանանք, սրբենք և դնենք պահարանի մեջ:

*Դաստիարակի օգնությամբ երեխաները կատարում են հանձնարարությունը՝ մեկ անգամ ևս անվանելով սպասքի պարագաները:*

ՊԱՐԱՊՍՏԻՆՔ 42

Թեման՝ Հովհ. Թումանյան, «Առաջին ձյունը»

Տեսակը՝ բանաստեղծության ուսուցում

Նպատակը

Սովորեցնել երեխաներին ճիշտ ընկալել գեղարվեստական չափածո ստեղծագործության իմաստն ու բովանդակությունը, կարողանալ հուզականորեն վերարտադրել այն՝ պահպանելով հեղինակի տրամադրությունը:

Միաժամանակ ընդլայնել ձմռանը բնության մեջ կատարվող փոփոխությունների մասին երեխաների գիտելիքները, հարստացնել բառապաշարը *փափուկ, ճերմակ* ածականներով, սեր առաջացնել ձմռան հանդեպ:

Նախապատրաստական աշխատանք

Ջրոսանք, Ա. Խնկոյանի «Ձմեռ», Լ. Վարդունու «Ձմեռ», Ռ. Ղարիբյանի «Ձա՛ն, Ձմեռ պապի», Հ. Սահյանի «Եղևնին» բանաստեղծությունների ընթերցում (դաստիարակի ընտրությամբ):

Անհրաժեշտ նյութեր՝ ձմեռ պատկերող նկար

Ընթացքը

Նախնական գրույց.

- Տարվա ո՞ր եղանակն է:
- Ինչի՞ց է երևում: (Ձյուն է գալիս, ցուրտ է: )
- Ի՞նչ ձմեռային խաղեր եք խաղում բալկում:
- Ի՞նչ եք պատրաստում ձյունից:
- Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում բնության մեջ ձմռանը:
- Ինչպե՞ս են մարդիկ պաշտպանվում ցրտից:

Ասեք, որ սովորելու են Հովհ. Թումանյանի «Առաջին ձյունը» բանաստեղծությունը: Արտահայտիչ արտասանե՛ք բանաստեղծությունը, հարցրե՛ք, թե այն դուր եկա՞վ իրենց: Մեկ անգամ էլ արտասանե՛ք և բացատրե՛ք անհասկանալի բառերը:

Հետո հարցրե՛ք.

- Ինչպե՞ս է իր զարմանքն արտահայտում աղջիկը:
- Ի՞նչ է տեսնում աղջիկը բալկն ու դուռը լի:
- Ի՞նչ այդքան շատ չէր տեսել աղջիկը:
- Աղջիկը ինչի՞ է նմանեցնում ձյան փաթիլը:
- Ի՞նչ է պտասխանում մայրը, ինչի՞ անհետացան քիթեռները:
- Այդ ի՞նչն է, որ կարծես սպիտակ քիթեռնիկ լինի:

Մեկ անգամ ևս արտասանե՛ք բանաստեղծությունը և առաջարկե՛ք (ձեր օգնությամբ) կրկնել: Խրախուսե՛ք արտասանել ցանկացողներին. թող

բանաստեղծությունը սկզբում ներկայացնեն հատվածաբար, հետո՝ ամբողջությամբ:

Ամփոփե՛ք.

- Ձեզ դուր եկա՞վ բանաստեղծությունը:
- Ո՞վ է հեղինակը:
- Ինչի՞ մասին է:

Հաջորդ պարապմունքին խորացրե՛ք ուսուցումը: Մեկ անգամ արտահայտիչ արտասանելով՝ հիշեցրե՛ք բանաստեղծությունը և հարցրե՛ք երեխաներին (սկզբում Ձեր օգնությամբ, հետո՝ ինքնուրույն): Ավարտին հանձնարարե՛ք նկարել ձյան փաթիլներ: Նկարները փակցրե՛ք պատին:

Բանաստեղծությունը կրկնեք օրվա ազատ պահերին:

ՊԱՐԱՊՍՏԻՆՔ 43

**Թեման՝ «Հրաշագործ ձմեռը»**

**Տեսակը՝ գրույց**

**Պարապմունքի նպատակը**

Ճշգրտել և համակարգել երեխաների պատկերացումները և ընկալումները ձմռան բնութագրիչների, ձմեռային բնության առանձնահատկությունների վերաբերյալ:

**Խնդիրները**

• Ամրապնդել երեխաների գիտելիքները ձմռանը բնորոշ երևույթների, ձմեռային զվարճալիքների, ձմռանը մարդկանց կողմից կատարվող անհրաժեշտ աշխատանքների, ձմեռող թռչունների և նրանց հանդեպ ցուցաբերվող հոգատարության մասին, ծանոթացնել կենդանիների վարքին ձմռանը:

• Վեր հանել երեխաների հիշողությունները ձմեռային զբոսանքների, էքսկուրսիաների մասին, օգտագործել համապատասխան նկարներ, վերատպուրյուններ:

• **Բառապաշարի հարստացում և ակտիվացում**

Ճշգրտել և ամրապնդել երեխաների բառապաշարը՝

գոյականներով՝ «թավուտ, որջ, ձյունաթուփ»,

ածականներով՝ «ձյունածածկ, սառցե, արծաթափայլ «արծաթագույն»,

բայերով՝ «փայլատակում է, ընկղմվում է, «գիրանում են»:

**Նախապատրաստական աշխատանք**

Ձմռան ընթացքում պարբերաբար, հարմար պահերի դաստիարակը երեխաներին պատմում է ձմեռող թռչունների մասին, նրանց ցույց է տալիս ազդաներին, արջագռավներին, ծիտիկներին, երաշտահավերին, սովորեցնում է ճանաչել այդ թռչուններին իրենց ձայնից:

Պատմում է այն մասին, որ արջն անտառի թավուտում իր որջն է սարքում: Որջը մի խոր փոս է՝ գետնի մեջ, որտեղ տաք է: Փետրվար ամսին արջն արդեն ձագեր է ունենում: Ոգնին իր վարքագծով նման է արջին: Նա նույնպես ողջ ձմեռ քուն է մտնում: Աչնանը ոգնիները շատ են ուտում, գիրանում են: Հենց որ ցրտերը սկսվում են, ոգնին ընկղմվում է թափված տերևների մեջ: Նա պաստակը ձմռանը վազում է դաշտով: Նա և՛ մրսում է, և՛ վախենում: Նոր, սպիտակ մուշտակն ավելի տաք է հին ամառային մուշտակից, բայց երբեմն էլի գուրտ է լինում: Նապաստակը կրծում է ծառի արմատներ, կեղև: Եթե ճյուղերը բարձր են, նա ձյունաթմբին է բարձրանում: Նապաստակը քնում է որտեղ պատահի, առավել հաճախ՝ թփերի տակ:

**Պարապմունքի ընթացքը**

Ավարտվում է տարվա այն եղանակը, որը մենք բոլորս շատ ենք սիրում: Ձմեռը տարվա զեղեցիկ եղանակներից է: Իսկ ինչո՞վ է զեղեցիկ, լսում է երեխաների պատասխանները, ճշգրտում, իսկ անհրաժեշտության դեպքում՝

ուղղորդում: Ջրույցի ընթացքում ցույց է տալիս ձմեռային բնանկար /ձմեռային անտառ/: Երեխաների ուշադրությունը հրավիրելով նկարի վրա՝ դաստիարակը կարող է ձմռան վերաբերյալ ծանոթ տողեր՝ իրենց հայտնի ստեղծագործություններից:

Գեղարվեստական ստեղծագործության ընթերցանություն.  
**Հ. Հայրապետյան, «Վերջին փաթիլներ»**

*Չարածճի ու կովայար*

*Փաթիլները պաղ ձյունի,*

*Ուրախ խաղում, գարկում իրար,*

*Հրիրում են մին-մինի:*

*Ապա հոգնած իջնում գետին,*

*Գրկվում են իրար հետ,*

*Ու ջուր դառած երգով ուժգին՝*

*Առաջ վազում դեպի գետ:*

- Դու՞ր եկավ ձեզ Հայրապետ Հայրապետյանի «Վերջին փաթիլներ» բանաստեղծությունը: Գեղեցիկ է, չէ՞ ձմռանը, - շարունակում է դաստիարակը: Ոչինչ, որ բոլոր ճյուղերը ծածկված են ձյունով, իսկ եղևնու ճյուղերին դեռևս ձյունակույտեր են նստած: Եթե թափահարես ճյուղը, ձյունը կթափվի ասես՝ բազմագույն արծաթագույն կայծերով: Հրաշագործ ձմեռ է: Դաշտերում սփռված են սպիտակ, փափուկ գորգերը և գազաններին թաքցրել են սառնամանիքից: Իսկ ո՞ւմ են թաքցրել /երեխաները պատմում են ձյան տակ քնած արջերի և ոգնիների մասին/: Իսկ նապաստակին ձմեռը նվիրել է նոր ձմեռային մուշտակ:

Ո՞ր թռչուններն են մեզ մոտ ձմեռում: Ինչպե՞ս ենք մենք հոգ տանում նրանց մասին /երեխաների պատասխանները/: Այնուհետև երեխաները բվարկում են ձմեռային զվարճալիքները:

**Խաղ մատիկներով՝ «Ձմեռարդ» /Ս. Վարդումյան/**

Երեխաները կատարում են ձմազնիկ ծեփելու վարժություն: 1-4 հաշվի տակ ծեփում են զնդերը՝ փոքր, միջին, մեծ: Ապա 1-3 հաշվին հավաքում են ձմեռարդ:

*Չյուն է եկել առատ ու լի,*

*Եկ պատրաստենք Ձմեռ պապի,*

*Գնդիկները մեր փոքրիկ*

*Մեծանում են մեր ձեռքին:*

*Չյունը, ձյունը այս փափուկ,*

*Հավաքենք, պատրաստենք գունդ:*

Թեման՝ «Չմեռային զվարճալիքներ»

Տեսակը՝ նկարի պատմում

Նպատակը: Սովորեցնել երեխաներին նպատակաուղղված դիտել նկարը /ամբողջական ընկալում, առանձին հատվածների հաջորդական դիտում, նկարում արտացոլվածի գնահատում/: Մշակել ըստ նկարի՝ տրամաբանական, հուզական, բովանդակալից պատմվածք կազմելու կարողություններ:

Անհրաժեշտ նյութեր՝ «Տարվա եղանակներ» շարքից «Չմեռային զվարճալիքներ» մեծադիր նկարներ

Պարապմունքի ընթացքը

Դաստիարակը հարցնում է երեխաներին. «Տարվա ո՞ր եղանակն է այժմ, և ձմռան ո՞ր ամիսն է»: Լսելով երեխաների պատասխանները՝ շարունակում է:

Չմեռը հիասքանչ եղանակ է, այդպես չէ՞, երեխաներ: Երեխաները չեն ցանկանում զբոսանքից տուն վերադառնալ, որովհետև դրսում, փողոցում հետաքրքիր է: Կարելի է սահել չնուշկներով, սահնակով, դահուկներով, պատրաստել ամրոցներ, ձնեմարդ, հետաքրքիր կառուցումներ: Պատահական չէ, որ տարվա այս եղանակի մասին կոմպոզիտորները գրել են երաժշտական ստեղծագործություններ, գրողները՝ բանաստեղծություններ, նկարիչները ձմռան գեղեցկությունը վերարտադրել են իրենց կտավներում:

Եկեք լսենք «Չմեռը» ստեղծագործությունը՝ մեծամուն կոմպոզիտոր Վիվալդիի «Տարվա եղանակներ» շարքից:

- Դուր եկա՞վ այն ձեզ:

Իսկ այժմ ուշադիր դիտում եք այս նկարը /ցույց է տալիս «Տարվա եղանակներ» շարքից «Չմեռային զվարճալիքներ» մեծադիր նկարները:

- Ինչպե՞ս կարելի է անվանել այն, - հարցնում է դաստիարակը: Տարվա ո՞ր եղանակը և օրվա ո՞ր ժամանակահատվածն են պատկերված նկարում: Չմեռային այդ օրը ինչպիսի՞ եղանակ էր: Ինչի՞ց դուք իմացաք, որ օրը տաք և արևոտ է:

Մի անգամ, ձմեռային տաք և արևոտ օր, երեխաները դուրս եկան զբոսանքի: Բոլորը շատ ոգևորված էին և ուրախ:

Խմբի երեխաներից մեկը սկսում է պատմել բլրակից սահող երեխաների մասին:

- Եկեք ուշադիր դիտենք, թե ի՞նչ է կատարվում բլրակի վրա, - առաջարկում է դաստիարակը: Լսում և գնահատում են երեխաների պատմումները: Այնուհետև դաստիարակը սկսում է պատմել.

«Չմեռային արևոտ մի օր երեխաները վազեցին մոտակա տարածք: Մի երեխա իսկույն վազեց դեպի բլրակը»: Դաստիարակն առաջարկում է շարունակել երեխաներից մեկին: Նրան լսելուց հետո երեխաների ուշադրությունը հրավիրում է ձնեմարդու վրա: Խմբի երեխաներից որևէ մեկը ընդհան-

րացնում է փոքրիկ պատմվածքի արդյունքները, իսկ դաստիարակը լրացնում է արդյո՞ք երեխաները որևէ բան չեն մոռացել: Երեխաները պատմում են այն մասին, թե ինչպիսի թռչուններ են արտացոլված նկարում: Այնուհետև դաստիարակն առաջարկում է կազմել նկարի վերաբերյալ ամբողջական պատմվածք և մտածել դրա ավարտի մասին: Ունկնդրում են 2-3 երեխայի: Դաստիարակը գնահատում է նրանց պատմելը, խրախուսում հատկապես այն երեխաներին, որոնց խոսքը չի կրկնվում նույնությամբ, այլ ձևակերպվում է նորովի: Նա ընդգծում է, որ պատմումը նկարի բոլոր մասերի ամբողջական հաջորդաբար նկարագրությունն է /«Բլրակից սահումը», «Չնեմարդու մոտ», «Թռչունների կերակրասեղանի մոտ»/: Երեխաների ուշադրությունը հրավիրում է խոսելու ընթացքում դրսևորած հաջող համեմատությունների և նկարագրության վրա:

Ավարտին դաստիարակը երեխաներին առաջարկում է ուշադրություն դարձնել իր օրինակի վրա /եթե երեխաները լավ են պատմել, դրա անհրաժեշտությունը չի առաջանում/.

- Չմռան արևային մի օր երեխաները դուրս վազեցին մոտակա տարածք: Բոլորը շատ ոգևորված էին: Հատկապես շատ երեխաներ հայտնվեցին բլրակի վրա: Բոլորին չէ, որ հաջողվում է լավ սահել բլրակի վրայից: Մե մուշտակով տղայի սահնակը շոջվել է, իսկ վերևից ինչ-որ մեկը բղավում է: Հավանաբար, խնդրում են ճանապարհը արագ ազատել:

Բլրակի կողքին մեծ ձնեմարդ կա: Գուցե ջերմությունից ձնե մարդու կոճակները քանդվել են, որոնք կրկին ամրացնում են տղան ու աղջիկը: Երեխաները չեն մոռացել նաև իրենց փետրավոր բարեկամների մասին: Կեր են բերել նրանց համար: Պարապմունքի ավարտին դաստիարակը երեխաներին մղվում է ձմռան մասին հանելուկ և ընթերցում Աթաբեկ Խնկոյանի «Չմեռ» բանաստեղծությունը:

Հանելուկ

*Չյուն կա դաշտերում,  
Մառույց՝ ջրերում,  
Զամին է փչում,  
Այդ ե՞րբ է լինում: /ձմեռ/*

Խնկո Ապեր            ՉՄԵՌ-

<i>Ծառը մերկացավ,</i>	<i>Չյուն ու ցուրտ եկան,</i>
<i>Չրկվեց տերևից,</i>	<i>Առու, գետ լռեց,</i>
<i>Չյունի փաթիլներ</i>	<i>Իր արծաթ գորգը</i>
<i>Իջան վերևից:</i>	<i>Չմեռը փոեց:</i>

*Չյունը ծնկահար  
Նստեց մեծ ճամփին,  
Մպիտակ հյուսերը  
Կիտեց գետակին:*

**Պարապմունքից դուրս՝ սառույցի հատկությունների ուսումնասիրություն**

Երեխաների հետ կազմակերպել դիտումներ՝ սառույցի հատկությունների ուսումնասիրման ուղղությամբ: Մառույցը կոշտ է, կարծր, թափանցիկ, կարող է փոխել ձևը:

**Սառցե զարդարանքների պատրաստում եղևնու համար**

Դաստիարակն առաջարկում է երեխաներին՝ օգտագործելով ջրի առանձնահատկությունները (ցրտին, սառնամանիքին սառչում է, սառցակալում) պատրաստել սառցե զարդարանքներ մանկապարտեզի եղևնու և մյուս ծառերի համար: Չարդարանքների պատրաստման ժամանակ արթնացնել երեխաների հետաքրքրությունը ջրի հատկությունների հանդեպ, ամրապնդել նրանց պատկերացումները գործնականում, զբաղմունքի միջոցով: Օգտագործել կինդեր-անակնկալների տուփերը, ձվամանների բջիջ-փոսիկները, կոնֆետների հավաքածուների տուփերը, տարբեր հաստության՝ գունավոր թելեր: Կինդեր-անակնկալների տուփերը կիսով չափ լցնել ջրով, 10-12 սմ թելերի ծայրերը հանգուցավորելով՝ դասավորել ջրով լցված տուփի մեջ:

Պատրաստված զարդարանքները դրվում են ցրտին կամ շատ սառը տեղ: Ընդ որում, սառցե իրերը կարելի է գունավորել՝ գունավորված ջրի օգտագործմամբ: Կարելի է նաև ջրի մեջ դնել մանր մասեր՝ ծաղիկներ, աստղիկներ, օղակներ և այլն: Երբ ջուրը պնդանում է, ձվամանները տարվում են տաք տեղ: Քիչ հալվելով՝ սառցե խաղալիքները և զարդարանքները հեշտությամբ են դուրս գալիս կինդեր-անակնկալների տուփերից:

Սառած խաղալիքը կարելի է զարդարել կետերով, բծերով, ապակենախշ ներկերով:

Քննարկել երեխաների հետ փորձը: Երեխաների միջոցով ընդհանրացնել սառույցի հատկությունները. *սառույցը կոշտ է, կարծր, թափանցիկ, կարող է փոխել ձևը:*

Թեման՝ «Մանեն ցրտից չի վախենում»

Տեսակը՝ նկարի պատմում

Խնդիրները

• Սովորեցնել երեխաներին ուշադիր դիտել նկարը, ընկալել դրա բովանդակությունը, տրված հարցերին պատասխանել ամբողջական մտքերով:

• Սովորեցնել՝ ըստ նկարի բովանդակության, կազմել մի քանի նախադասություններից կազմված ոչ մեծ պատմվածք:

• Ըստ ստեղծագործական հանձնարարականների՝ ընտրել բառ-գործողություններ՝ ձյուն, ձմեռ, ցուրտ, սառնամանիք, փաթիլներ բառերի համար:

• Ամրապնդել ձմեռային հագուստի անվանումները, զարգացնել երեխաների մանր մկանները, ռիթմի զգացողությունը:

• Չարգացնել երեխաների ուշադրությունը, հիշողությունը, տրամաբանական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը:

• Ակտիվացնել և հարստացնել երեխաների բառապաշարը:

Անհրաժեշտ մյուսքեր՝ նկար «Մանեն չի վախենում ցրտից» թեմայով, ձմեռային հագուստով տիկնիկ, փաթիլներ թղթից պատրաստված, ձմեռային տեսարաններով նկարներ, ձյուն, ձմեռադր, ձեռնոցներ և այլն:

**Պարապմունքի ընթացքը**

- Մեզ մոտ հյուր է եկել տիկնիկ Մանեն,-ասում է դաստիարակը, ապա շարունակում.

*Ծանոթացե՛ք Մանեի հետ,*

*Նա արդեն չորս տարեկան է.*

*Առավոտյան վաղ արթնանում*

*Ու զբոսանքի է պատրաստվում:*

Մեր Մանեն պատրաստվում է փողոց դուրս գալ: Ի՞նչ պետք է հագնի նա, որպեսզի ցրտին, սառնամանիքին չմրսի: Երեխաները անվանում են հագուստին վերաբերող անուններ:

-Սա ինչպիսի՞ վերարկու է /ձմեռային, տաք, մորթե/: Ի՞նչ գույնի է: Ինչպիսի՞ գլխարկ է: Ինչպիսի՞ բլուզ է: Ինչի՞ մասին կարող ենք ասել փամփիլի, փափուկ, մորթե /օձիք/:

-Ինչի՞ համար է շարֆը /վզարկուն/:

-Որպեսզի լավ փաթաթենք վիզը, տաք լինի, քամին չներթափանցի ու չհիվանդանանք:

Մեր տիկնիկ Մանեն հագնվել և պատրաստվում է փողոց դուրս գալ՝ սահնակով սահելու:

Մատիկներով խաղ՝ Մ.Վարդումյան, «Մեր մատները»

<i>Ապա նայիր քո մատներին,</i>	<i>Յույց է տալիս ցուցամատը,</i>
<i>Քեզ նման էլ նրանք ունեն</i>	<i>Միջնամատը շատ երկար է,</i>
<i>Իրենց հատուկ անունները.</i>	<i>Մատներմատը քիչ տկար է</i>
<i>Հաստ ու կարճ է բթամատը,</i>	<i>Եվ ճկույթը այս փոքրիկ,</i>
	<i>Ահա դարձավ մի թաթիկ:</i>

Դաստիարակը ցուցադրում է նկարը: Երեխաները դիտում են այն, այնուհետև պատասխանում առաջադրված հարցերին:

- Ո՞վ է նկարում պատկերված /տիկնիկ Մանեն/:

- Որտե՞ղ է զբոսնում Մանեն: Ի՞նչ է անում նա /երեխաների պատասխանները/:

- Տարվա ո՞ր եղանակն է պատկերված նկարում: Ինչո՞ւ եք դուք կարծում, որ ձմեռն է: Դիտե՛ք ձյունը և ասացե՛ք՝ ինչպիսի՞նն է այն /սպիտակ, փափուկ, սառը, փայլուն, մաքուր/: Իսկ ի՞նչ բառերով կարող ենք բնութագրել ձմեռը /ցուրտ, ձյունառատ, սառը/: Իսկ ինչպե՞ս է հագնված Մանեն /տաք/: Ի՞նչ ունի նա իր հագին /վերարկու, շարֆ, գլխարկ/: Երեխաները նկարագրում են հագուստը:

- Մեկ անգամ ևս դիտե՛ք նկարը ուշադիր և պատմեցե՛ք, թե որտեղ է Մանեն, ի՞նչ է անում նա, ինչո՞վ է խաղում /երեխաների պատասխանները/:

Դաստիարակը կարդում է Հ. Թումանյանի «Առաջին ձյունը» ստեղծագործությունը:

Ի՞նչ բառերով է գովերգում հեղինակը ձյան փաթիլները:

..Փաթիլը ձյունի, որ կարծես սպիտակ թիթեռնիկ լինի...

-Եկեք մեկ անգամ ևս պատմենք Մանեի մասին:

Ձմեռային մի ցուրտ օր Մանեն /դուրս եկավ զբոսանքի/: Վերցրեց նա իր հետ /սահնակ, բահ, դույլ/: Մանեն տաք էր հագնվել: Նա ուներ իր հագին /մորթե գլխարկ, ձմեռային վերարկու, ձեռնոցներ/: Մանեի ձեռնոցի վրա փաթիլ էր ընկել /թեթև, սպիտակ, գեղեցիկ/: Դրսում ցուրտ է, սակայն Մանեն չի վախենում ցրտից:

- Իսկ այժմ առանց իմ օգնության պատմե՛ք Մանեի մասին: Ո՞վ է ցանկանում պատմել /երեխաների պատասխանները/:

Գնահատելով երեխաների խոսքը՝ դաստիարակը խրախուսում է նրանց, ովքեր իրենց պատմումներում օգտագործել են *սպիտակ, փափուկ ձյուն, ձյունառատ ձմեռ, ցուրտ, բառերը*:

- Իսկ այժմ մենք բոլորս տիկնիկ Մանեի հետ միասին զբոսանքի դուրս գանք /կատարում են հագնվելու նմանակումներ/:

Խաղ՝ «Ձյան փաթիլներ»

Նպատակը

Ընդլայնել երեխաների պատկերացումները ձյան հատկությունների վերաբերյալ:

Անհրաժեշտ պարագաներ՝ ձյան փաթիլի պատկերով թղթե գլխարկներ:

Խաղի ընթացքը

Դաստիարակը երեխաներին հիշեցնում է ձյան հատկությունները. ձյան փաթիլները թեթև են, նրանք հանդարտ, պտտվելով իջնում են գետնին, քամուց նրանք խառնվում են, թռչում տարբեր կողմեր: Դաստիարակի «Փաթիլները մեղմ ու հանգիստ պտտվում են, իջնում, ցած, դաշտ ու անտառ, բակ ու փողոց դարձնում ճերմակ և ձյունածածկ» արտահայտության ժամանակ երեխաները մեղմ պտտվում են, իրենց շարժումներով նմանվում փաթիլներին: Դաստիարակը ձեռքի շարժումով երեխաներին առաջարկում է հավաքվել և կազմել շրջան, այնուհետև միավորվել շրջանի կենտրոնում և կքանստել: Դաստիարակի «Զամին փչեց վը՛վը՛վը՛վը՛վը՛վը... և ձյան փաթիլներին թոցրեց տարբեր կողմեր» արտահայտությունից հետո երեխաներն արագ կանգնում են և թուփռալով փախչում տարբեր կողմեր:

Խաղը կարելի է կրկնել 3 - 4 անգամ:

**ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 46**

**Թեման՝** «Հայրիկներն ու պապիկները զինվորներ են»

**Տեսակը՝** պատմում հարցերի միջոցով

**Նպատակը:** Ճշտել երեխաների զիտելիքները Հայկական բանակի, հայրենիքի պաշտպանների՝ զինվորների մասին: Դաստիարակել հայրենասիրություն, հպարտության, երախտագիտության զգացում և հարգանք զինվորի հանդեպ:

Ձևավորել տարրական պատկերացումներ՝ զինվորական ուժերի տեսակների /օդային, ջրային, ցամաքային/ մասին:

Չարգացնել երեխաների ստեղծագործական միտքը, կապակցված խոսքը, պարզ ընդարձակ և բարդ նախադասություններ կազմելու կարողությունը, հարստացնել բառապաշարը՝ *զինվորական ծառայություն, նորակոչիկ, համազգեստ, մարտունակ, անպարտ* բառերով:

**Նախապատրաստական աշխատանք**

Նախորդ շաբաթվա ընթացքում անցկացվում են՝ զրույցներ՝ հայոց բանակի, հայ զիվորի, հայրենիքի պաշտպանության մասին, զինվորական շքերթի դիտում, թղթից օդանավերի, նավերի, տանկերի պատրաստում:

**Անհրաժեշտ նյութեր՝** հայկական բանակի տարբեր տեսակի զորքեր, զինվորական տեխնիկա՝ զրահանավեր, սուզանավեր, օդանավ, ուղղաթիռ, տանկ, հրետանի պատկերող նկարներ և քարտեր, մեծ չափի 3 նկար, որ՝ ներկայացնում են դաշտ, ծով, երկինք, թղթից պատրաստված նավեր, օդանավ, ուղղաթիռ, տանկեր:

**Ընթացքը**

*Պարապմունքը կարելի է սկսել Վ. Վարդունու «Ես ֆիդայի եմ» բանաստեղծությամբ.*

*Ունեմ ձեռքի գնդացիր,  
Պարսատիկ չէ, հասկացի՜ր...  
Անդրանիկի թոռնիկն եմ,  
Ոչինչ, որ դեռ փոքրիկ եմ:  
Ֆիդայի եմ, իմացի՜ր,  
Դու էլ ինձ հետ միացի՜ր:  
Մեր սահմանին ով ձեռք տա,  
Կկրակեմ՝ տա՛...տա՛...տա՛...:*

Դաստիարակը նշում է, որ երկրագնդի վրա բոլորն ունեն իրենց ծննդյան օրը.

- Չեզանից յուրաքանչյուրը նույնպես ունի իր ծննդյան օրը և անհամբերությամբ սպասում է դրան: Այսօր մենք կխոսենք յուրահատուկ ծննդյան օրվա մասին, որը նշում է ողջ հայ ժողովուրդը: Դա մեր բանակի ծննդյան օրն է՝

Հունվարի 28-ը: Այդ օրը ստեղծվեց հայկական բանակը: Այդ օրը քաղաքամայր Երևանում գորահանդես է տեղի ունենում: Հրապարակ են դուրս գալիս հայկական բանակի զորքերը, զրահամեքենաները, տանկերը, հրթիռները, օդային զինված ուժերը: Ողջ հայ ժողովուրդը մեծ ցնծությամբ է նշում այդ սիրելի տոնը:

- Ի՞նչ եք հասկանում բանակ ասելով /մեր երկրի զինված ուժերն են/<sup>7</sup>:
- Իսկ պե՞տք է մեզ բանակ, ինչու՞ /որպեսզի պաշտպանի բնանան.../:
- Ինչպիսի՞ն է հայոց բանակը /հզոր, ուժեղ, անպարտ, անվախ.../:
- Ովքե՞ր են ծառայել կամ ծառայում բանակում /տղաները, հայրիկները, պապիկները.../:
- Ինչպե՞ս ենք անվանում նրանց /զինվորներ/:
- Ինչու՞վ են գրադվում զինվորները բանակում /պաշտպանում են մեր երկրի սահմանները, մարզվում են, սովորում են կրակել, տանկ և զրահամեքենա վարել.../:
- Ինչի՞ համար է պետք այդ ամենը /որպեսզի խաղաղություն լինի, մարդիկ ապրեն և աշխատեն խաղաղ երկրի տակ, երեխաներն անհոգ մանկություն ունենան/:
- Ինչպե՞ս են անվանում այն տղաներին, ովքեր նոր են սկսում իրենց ծառայությունը բանակում /նորակոչիկ/:
- Բոլոր նորակոչիկ զինվորները երդման արարողության ժամանակ երդվում են նվիրված ծառայել հայրենիքին և ասում են. «...ծառայում եմ Հայաստանի Հանրապետությանը»:
- Չեր հարազատների շրջանում ունե՞ք նորակոչիկ զինծառայողներ:
- Ինչպե՞ս է կոչվում նրանց հագուստը /զինվորական համազգեստ/:

**Աշխուժացնող խաղ**

**Օղում, ջրում, ցամաքում**

Դաստիարակը դառնում է խաղավար: Նա արտասանում է տրանսպորտի տարբեր տեսակների անվանումներ: Օդային տրանսպորտի անուն լսելիս /օրինակ՝ օդանավ/ երեխաները բարձրանում են ոտնաթափերին՝ քափախելով ձեռքերը շարժվում են սենյակում: Ցամաքում գործող տրանսպորտի անուն լսելիս, օրինակ, տանկ՝ ձեռքերը մեկնում են առաջ և շարժվում, իսկ ջրայինի դեպքում, օրինակ, սուզանավ կամ նավ՝ կքանստում: Խաղավարն իր շարժումներով աշխատում է շփոթեցնել խաղացողներին:

- Երեխաներ, ձեր պապիկներն ու հայրիկները նույնպես ծառայել են բանակում:

<sup>7</sup> Պետք չէ, որ դաստիարակը երեխաներից պահանջի տալ հենց նույն պատասխանները: Չեղմարկում տրված են մոտավոր պատասխանների նմուշօրինակներ:

- Երբևէ գրուցե՞լ եք նրանց հետ այդ մասին:
- Ի՞նչ հետաքրքիր պատմություններ են նրանք պատմել: /Պատասխաններ/
- Մեր խմբի տղաները երբ մեծանան, նրանք նույնպես կձառայեն հայոց բանակում: Նրանք էլ կսովորեն կրակել, տանկ կամ օդանավ վարել:

**Թարմացնող վարժություն**

<i>Եկե՛ք շարվենք մենք, հավասար.</i>	<i>Մենք քայլում ենք միշտ խորխտ,</i>
<i>Զինվորներ ենք հավասար,</i>	<i>Մեկ-երկու՛, մեկ-երկու՛:</i>
<i>Թող բշնամին վախենա,</i>	<i>Վեր խոյանում արծվի պես,</i>
<i>Քաջ ենք, ուժեղ, անխնա՛:</i>	<i>Դե՛, հիմա դուք տեսե՛ք մեզ.</i>

Երեխաներն արտասանվող տողերի բովանդակությանը համապատասխան կատարում են վարժություններ, քայլում տեղում և շրջանով/:

Դաստիարակ -Մեր բանակը պաշտպանում է մեզ օդում, ջրում, ցամաքում: Քաջ զինվորները պաշտպանում են հայոց երկրի սահմանները, պատասխանատու են մեր երկրի անվտանգության համար: Ապա ցուցադրում է համապատասխան նկարներով քարտեր, անվանում դրանք և կազմակերպում դիդակտիկ վարժություն:

**Դիդակտիկ վարժություն**

Դաստիարակը երեխաներին բաժանում է քարտեր, իսկ գրատախտակին փակցնում է *դաշտ, ծով և երկինք* պատկերող նկարները: Ըստ հրահանգի երեխաները քարտերը դասավորում են համապատասխան նկարների տակ:

Պարապմունքի վերջում դաստիարակը երեխաներին առաջարկում է զինվորական շքերթով նշանավորել Հայոց բանակի ծննդյան օրը:

*Երեխաներին բաժանվում են բոթից պատրաստված խաղալիք նավակներ, օդանավեր, տանկեր.../կամ համապատասխան նկարներով քարտեր/:*  
*Երաժշտության հնչյունների մերթո երեխաները քայլում են զինվորների նման:*  
*Դաստիարակը վարում է շքերթը: Պարբերաբար նա տալիս է հրահանգներ, երեխաները կատարում են /օրինակ՝ հրապարակով անցնում են հզոր տանկերը, երկնքում հայտնվեցին արագընթաց օդանավերը .../:*

**ՊԱՐԱՊՄՈՒՆԷՔ 47**

Թե՛ման՝ «Հայաստանն իմ տունն է»  
Տեսակը՝ պատմում՝ նկարների միջոցով  
Նպատակները՝  
Կրթական

Հստակեցնել և ամրակայել երեխաների գիտելիքները՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ:

Ծանոթացնել երկրի դրոշին, զինանշանին, օրհներգին, Երևանի տեսարժան վայրերին, հուշարձաններին/նկարների մջոցով/:

**Դաստիարակչական**

Արթնացնել հայրենասիրական զգացումներ և հետաքրքրություն Հայաստանի անցյալի ու ներկայի նկատմամբ, ինչպես նաև գիտակցական վերաբերմունք ձևավորել հայրենիքի զգացողությունն ամուր պահելու առումով: Երեխաների գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ հայրենիքը մեկն է, ուստի չի կարելի այն լքել: Հարկավոր է միշտ սիրել և պաշտպանել այն:

**Զարգացնող**

Զարգացնել կապակցված խոսք կառուցելու հմտություններ, ամրապնդել հիշողությունը:

**Անհրաժեշտ պարագաներ**

ՀՀ դրոշը, զինանշանը, DVD, Երևանի մասին երգեր պարունակող ձայնակավառակներ: Խճանկար՝ Երևանի տեսարժան վայրերը:

**Ընթացքը**

Դաստիարակ - Ի՞նչ եք հասկանում հայրենիք ասելով:  
Երեխաներ

- Հայրենիքը մեր հողն ու ջուրն է, որտեղ մենք ծնվել և մեծանում ենք: Այստեղ ապրում են մեր ծնողները, հարազատները:

- Դա մեր մանկապարտեզն է, մեր ընկերները, մեր բակի ծառերը, Մասիս լեռն է, Արագածը, Սևանա լիճը և այլն:

- Մեր հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունն է, մայրաքաղաքը՝ Երևանը, մենք հայ ենք:

Դաստիարակ - Մեր հայրենիքի խորհրդանիշներն են Հայաստանի պետական դրոշը, զինանշանը, օրհներգը:

Դաստիարակը ցուցադրում և ներկայացնում է զինանշանը, արծիվը խորհրդանշում է, որ մենք իմաստուն ժողովուրդ ենք, առյուծը՝ ուժեղ ենք: Պատկերված են 4 հայկական հզոր բազավորությունները՝ Արտաշեսյան,

Բագրատունիների, Արշակունիների, Ռուբինյան<sup>8</sup>: Մեջտեղում Արարատ սարն է, վրան ջրհեղեղից փրկված Նոյյան տապանը: Ներքևում՝ ցորենի հասկերն են շրթայով միաձուլված:

- Սա էլ մեր պետության եռագույն դրոշն է՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն: Այն ամրացված է քաղաքապետարանի, կառավարության շենքերի վրա:

Ապա դաստիարակը ցուցադրում է Հայաստանի մի շարք գեղեցիկ վայրեր՝ լեռներ, լճեր, պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող կոթողներ պատկերող նկարներ և բացատրում, թե ինչու են Հայաստանն անվանում քանգարան՝ բաց երկնքի տակ:

- Հայաստանում են աճում ամենաքաղցրահամ խաղողը, դեղձը, մեր պարծանք ծիրանն ու նուռը:

Հայաստանի մայրաքաղաքը Երևանն է: Այն աշխարհի հնագույն քաղաքներից է:

Մենք հայրենիք ենք անվանում այն վայրը, ուր ծնվել ենք, որտեղ մեր ծնողներն են, պապիկներն ու տատիկները:

*Որպես ֆիզդադար երեխաների հետ կարելի է վերհիշել մի քանի ոտանավոր Հայաստանի մասին: Կարող է արտասանել նաև դաստիարակը.*

- Իմ Հայաստան,
- Իմ Հայրենիք,
- Երկնքի չափ սիրում եմ քեզ:
- Ես դեռ փոքրիկ, շատ եմ փոքրիկ,
- Բայց արդեն շատ բան գիտեմ ես:

Ապա դաստիարակը երեխաներին է ցուցադրում պատկերաշար նկարներ և առաջարկում պատմություն հյուսել դրանց միջոցով:

Նախապես երեխաները բաժանվում են խմբերի, յուրաքանչյուր խմբի տրվում է մեկ նկար: Պատմությունը պետք է կազմված լինի 3 - 4 նախադասություններից:

Հնարավոր տարբերակներ. *մեկն սկսում է, երկրորդը՝ շարունակում, երրորդն ավարտում է: Լսում են 2-3 պատմություն, ապա պատմությունները քննարկվում են.*

- պատմության վերաբերյալ ի՞նչ լրացումներ կարելի է կատարել,
  - ինչի՞ մասին չեն պատմել ընկերներդ, ի՞նչ կուզեիր ավելացնել:
- Վերջում դաստիարակն ամբողջացնում և ամփոփում է պատմությունը և երեխաների հետ միասին վերնագրում այն:*

*Օրվա 2-րդ կեսին երեխաները նկարելու միջոցով կվերտադրադրեն իրենց ստեղծած պատմությունները և կստանան գիրք՝ Հայաստանի մասին:*

<sup>8</sup> Դաստիարակը չպետք է պահանջի, որ երեխաները հիշեն և անվանեն անունները: Դա կարվի ավագ խմբում:

Թեման՝ «Մեր տունը»  
Տեսակը՝ ստեղծագործական պատմում՝ նկարի օգնությամբ  
(Ինտեգրված պարապմունք)

Նպատակը  
Սովորեցնել նկարագրել իրենց տունը, տան հասցեն: Ջարգացնել երեխաների կապակցված խոսքը, ածականներ, քանակական և դասական բնականներ կիրառելու կարողությունը:

Նախապատրաստական աշխատանք  
Նախապես (մեկ օր առաջ) երեխաներին բաժանեք թղթեր, գունավոր մատիտներ և առաջարկե՛ք նկարել իրենց տունը (բնակարանը): Հետո բոլոր նկարները փակցրեք պատին:

Անհրաժեշտ նյութեր  
Գունավոր մատիտներ, թղթեր՝ նկարելու համար  
Ընթացքը

Պարապմունքն սկսեք Լ. Պողոսյանի «Ես նկարեցի» բանաստեղծության ընթերցմամբ: Փոքրիկ նկարիչներին առաջարկե՛ք պատմել, թե ինչ են նկարել: Հարցերի միջոցով ուղղորդեք, որ պատմեն նաև այն, ինչ նկարում պատկերված չէ (նկարագրեն իրենց տունը).

- Ապրում եք սեփական տա՞նը, թե՞ բազմաբնակարան շենքում:
  - Քանի՞ հարկ ունի ձեր տունը (շենքը):
  - Ո՞րերորդ հարկում եք ապրում:
  - Քանի՞ սենյակ կա ձեր բնակարանում (տանը):
  - Ի՞նչեր կան հյուրասենյակում, խոհանոցում, մեջքարանում:
  - Ի՞նչ գույնի են պատերը:
  - Ո՞ր սենյակում են դասավորված ձեր խաղալիքները:
  - Որտե՞ղ է գտնվում ձեր տունը (օգնե՛ք սովորել իրենց տան հասցեն):
  - Ինչու՞ են ասում՝ «Հյուր գնալը հաճելի է, բայց տանն ավելի լավ է», կամ «Տնից լավ տեղ չկա»:
  - Ինչո՞ւ եք սիրում ձեր տունը: Ի՞նչ գույներ եք օգտագործել:
- Պարապմունքն ավարտե՛ք Վ. Վարդանյանի «Տնակը» բանաստեղծության ընթերցմամբ (միայն վերջին երկու տունը):

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 49

Թեման՝ «Բանջարեղեն»

Տեսակը՝ ինտեգրված խաղ-պարապմունք

Նպատակը: Երեխաներին ծանոթացնել «Բանջարեղեն» ընդհանրացնող հասկացությանը, ամրակայել բանջարեղենի տեսակների անվանումները (շաղգամ, բազուկ, գազար, լոլիկ, վարունգ): Ծարունակել սովորեցնել ներկել պատկերը՝ գծերը տանելով վերևից ներքև, ձախից աջ, և դուրս չգալ եզրագծից: Ամրապնդել հիմնական գույների մասին պատկերացումը (կարմիր, դեղին, կապույտ), գարգացնել խոսքը, պատկերավոր մտածողությունը, մատեն-րի մանր մկանները:

Անհրաժեշտ նյութեր՝ նկար՝ ապլիկացիայով (բանջարեղենով զամբյուղ), բանջարեղենի տեսակներ՝ եզրագծով պատկերված սպիտակ թղթից, բանջարեղենի մուլյաժներով զամբյուղ (շաղգամ, բազուկ, գազար, վարունգ), մոխրագույն ամառային մուշտակով փափուկ խաղալիք նապաստակ, սոսնձի վրձիններ, խոնավ անձեռոցիկներ, ներկերի համար փոքրիկ կանգուն անոթներ, նկարն ամրացնելու համար մոլբերտ, վեց հիմնական գույների ներկեր:

Նախնական աշխատանք՝ Վ. Սուտեկի «Պարկով խնձորներ» հեքիաթից մի հատվածի ընթերցում, նկարազարդումների դիտում

Ընթացքը

Դաստիարակ - Ի՞նչ է թափված հատակին (գազար, լոլիկ, շաղգամ, բազուկ, վարունգ): Ի՞նչպե՞ս կարելի է դրանք անվանել մեկ բառով:

Երեխաներ - Բանջարեղեն:

Դաստիարակ - Ի՞նչ եք կարծում՝ մենք կարո՞ղ ենք պարապմունք անցկացնել այսպիսի թափափված վիճակում:

Երեխաներ - Ո՛չ:

Դաստիարակ - Եկե՛ք հավաքենք հատակի բանջարեղենը:

Հիմա լսենք հեքիաթը.

«Լինում է, չի լինում մի մոխրագույն նապաստակ: Նա ուներ ընտանիք:

Դուք ճանաչում եք նրա փոքրիկ ձագուկներին: Նա խնձորների պարկն ուսին գնում էր տուն, բայց բոլոր խնձորները ճանապարհին բաժանեց անտառի գազանիկներին: Նրանք շնորհակալ եղան և նվերներ տվեցին: Նապաստակը նվերները բերեց ձագուկներին: Երկար ժամանակ ապրում էին նապաստակներն առանց նեղության, անտառի գազաններին բարի խոսքերով էին հիշում: Հետո նվերները /ուտելիքը/ վերջացան, և ձագուկներն սկսեցին ուտելիք փնտել: Նապաստակը ստիպված էր ընկերոջ մոտ գնալ: Ընկերը նրան մի ամբողջ զամբյուղ բանջարեղեն տվեց: Նա բանջարեղենը տանում էր ձագուկներին՝ անտառի ճանապարհով, և հանկարծ դուրս պրծավ գայլը: Նապաստակը զցեց

զամբյուղը և փախավ: Բանջարեղենը թափվեց ճանապարհին, և մենք հավաքեցինք: Եկե՛ք դրանք դնենք զամբյուղի մեջ ու սպասենք նապաստակին: Միգուցե նա վերադառնա՞ զամբյուղի հետևից. չէ՞ որ նրա ձագուկները տանը քաղցած են»:

Դաստիարակն արտասանում է կատակ-նուանավոր.

*Չամբյուղում հարմար շարեք.*

*Բազուկը, շաղգամը, գազարը,*

*Լոլիկն ու վարունգը,*

*Եվ բոլորդ կեցցե՛ք:*

Բանջարեղենի տեսակները դասավորվում են զամբյուղում՝ ասված կարգով:

Դաստիարակ - Բոլորը հավաքեցի՞ք, ոչինչ չթողեցի՞ք:

Երեխաներ - Ո՛չ:

Դաստիարակ - Մենք սովորեցինք նոր կատակ-նուանավոր: Եկե՛ք նապաստակին կանչենք /երեխաները կանչում են նապաստակին/: Միգուցե նա վախենու՞մ է մեզնից՝ մտածելով, որ մենք որսորդներ ենք: Եթե մենք դառնանք նապաստակներ, նա այլևս չի վախենա:

Երեխաները սկսում են թռչկոտել՝ ձեռքերը կրծքին սեղմած: Այնուհետև դաստիարակն առաջարկում է նրանց «թաքնվել» (նստել, կքանստել և ծածկել դեմքը ձեռքերով): Խաղը կրկնվում է երկու անգամ:

Դաստիարակ - Չեզնից հիանալի նապաստակներ ստացվեցին: Իսկականներից չէիք տարբերվում:

Այդ պահին սեղանի տակից դուրս է գալիս խաղալիք-նապաստակը, որի խոսքը հնչեցնում է դաստիարակը: Նա վախեցած է, դողում է.

- Դուք այստեղ գայլին չե՞ք տեսել:

Երեխաները հանգստացնում են նապաստակին և ասում, որ գայլը փախել է շատ հեռու:

Նապաստակ - Իսկ դուք զամբյուղ չե՞ք գտել: Երեխաները զամբյուղը վերադարձնում են նապաստակին:

Նապաստակ - Շնորհակալություն:

Դաստիարակ - Տեսնու՞մ եք, նապաստակը որքան տխուր է: Նույնիսկ չուրախացավ, որ զամբյուղը գտնվել է: Երևի շատ է վախեցել գայլից: Եկե՛ք ուրախացնենք նապաստակին՝ խաղանք նրա հետ:

Մատներով խաղ /կրկնվում է երկու անգամ/.

*Մենք զամբյուղի մեջ*

*Հմտորեն կցցենք*

*Շաղգամ, բազուկ, գազար,*

*Լոլիկ ու վարունգ:*

*- Կեցցե՛ք:*

*Պատերն իրար մեջ անցկացրած մեկնում են առաջ՝ պատկերիով կրո զամբյուղ/*  
*Պատարում են շարժումներ աջ, ապա ձախ ձեռքով վերևից ներքև/*  
*Դրոնք արած ձեռքերը ամեն մի բառի վրա/*  
*Պատերով բացում և նորից փակում են ձևա/*  
*Ճափահարում են/*

Դաստիարակ - Երեխաներ, հիմա մենք նկար ցույց կտանք նապաստակին: Տեղավորենք այն նկարակալի վրա:

Նապաստակ - Իսկ ինչու՞ են բանջարեղենի բոլոր տեսակները սպիտակ, չներկված: Երևի դուք չգիտեք, թե ինչ գույնի են դրանք:

Դաստիարակ - Ո՛չ, նապաստակ, երեխաները գիտեն, թե ինչ գույնի են պտուղները:

Յույց է տալիս եզրագծային պատկերը և հարցնում, թե ի՞նչ գույնի է այս կամ այն բանջարեղենը:

Դաստիարակ - Այժմ մենք կներկենք բանջարեղենը և մեր նկարը կդարձնենք գունդ ու գեղեցիկ: Ընտրե՛ք համապատասխան ներկը: Օրինակ, շաղգամը ներկելու համար ի՞նչ գույնի ներկ է ձեզ հարկավոր:

Երեխաներ - Դեղին:

Դաստիարակը երեխաներին հարց է տալիս, թե պտուղներից որն ինչ գույնով են ներկելու /«Ես պետք է գունավորեմ զազարը, ինձ անհրաժեշտ է նարնջագույն ներկ»/: Յույց է տալիս՝ ինչպես ներկել բանջարեղենը, որպեսզի նկարը լինի վառ և մաքուր: Հիշեցնում է գունազարդելու տեխնիկան:

Դաստիարակ - Դուք վերջացրի՞ք աշխատանքը: Ապա ցույց տվեք ինձ ձեր ձեռքերը. տեսե՛ք, թե որքան բազմագույն են դրանք: Վերցրե՛ք խոնավ անձեռոցիկը և մաքրե՛ք: Նապաստակ, արդյոք մենք կարողանու՞մ ենք գունազարդել:

Նապաստակ - Կարողանում եք: Ես նույնպես ուզում եմ սովորել գեղեցիկ գունազարդել:

Դաստիարակ - Մենք քեզ անալայման կսովորեցնենք: Եվս մեկ անգամ լսեք բանջարեղենի մասին ոտանավորը:

Երեխաներն արտասանում են ոտանավորը ևս մեկ անգամ:

Նապաստակ - Շնորհակալությու՛ն, վագեմ ձագուկներինս մոտ, նրանք ինձ արդեն շատ սպասեցին:

Թեման՝ «Բանջարեղեն»  
Տեսակը՝ դիդակտիկ խաղ  
Նպատակը

Ծանոթացնել երեխաներին բանջարեղենի տեսակներին, սովորեցնել ճիշտ անվանել բանջարեղենը, նկարագրել դրա ձևը, գույնը, հարստացնել բառապաշարը համեմունք, տաքղեղ, լույիկ բառերով:

Նախապատրաստական աշխատանք

Նախնական գրույց բանջարեղենի օգտակարության մասին.

Երեխաների ուշադրությունը հրավիրե՛ք բանջարեղենի նկարներին և բացատրեք, թե որքան կարևոր են դրանք մարդու առողջության համար. լույիկն ու վարունգը շատ հարուստ են վիտամիններով, այդ երկու բանջարեղենը միասին շատ համով աղցան են դառնում: Գազարն ու կաղամբը, կարտոֆիլն ու սոխը նույնպես հարուստ են վիտամիններով, դրանք մենք օգտագործում ենք կլոր տարին: Կարտոֆիլը, սոխը և գազարն աճում են հողի տակ, իսկ կաղամբը՝ հողի վրա: Կարտոֆիլն ուտում են տապակած կամ խաշած վիճակում, իսկ գազարը, կաղամբը և սոխը և՛ հում են ուտում, և՛ եփած վիճակում: Սոխը նաև համեմունք է, համ է տալիս մեր կերակուրներին: Բանջարեղենն աճում է բանջարանոցում:

Անհրաժեշտ նյութեր՝ բանջարեղենի նկարներ կամ բնական բանջարեղեն Ընթացքը

Կազմակերպել «Ինչը որտե՞ղ է աճում» և «Վիտամիններով հարուստ պարկը» դիդակտիկ խաղերը:

Ինչը որտեղ է աճում

Դաստիարակը ցույց է տալիս որևէ բանջարեղենի նկար, իսկ երեխաներն անվանում են այն: Եթե այդ բանջարեղենը հողի տակ է աճում, երեխաները կքանատում են, իսկ եթե հողի վրա է՝ կանգնում են:

Խաղը կարելի է բարդացնել և անցկացնել երկու տարբերակով: Երկրորդ տարբերակի դեպքում ավելացվում են նաև մրգերի նկարներ: Եթե ցուցադրվում է մրգի նկար, երեխաները անվանում են այն, կանգնում և ձեռքերը պարզում վեր:

Վիտամիններով հարուստ պարկը

Պարկի մեջ լցրե՛ք մրգերի և բանջարեղենի նկարներ: Երեխաներից մեկին /իր ցանկությամբ/ հրավիրե՛ք կենտրոն և հանձնարարե՛ք պարկից հանել որևէ նկար: Նա առանց մյուսներին ցույց տալու պետք է նկարագրի պատկերվածը և առաջարկի երեխաներին՝ գուշակել, օրինակ՝ կանաչ է, երկար է, սալաք է դառնում, աճում է բանջարանոցում..., կամ՝ կարմիր է, հյութալի է, թթվաչ է, խրթխրթան է, աճում է այգում, ծառի վրա...: Գուշակողը հաջորդն է մոտե-

նում պարկին: Խաղը շարունակվում է այնքան ժամանակ մինչև բոլոր նկարները դուրս են գալիս, կամ բոլորը մեկ անգամ մոտենում են պարկին:

**Պարապմունքն ավարտեք հանելուկներով.**

*Կարմիր, կլոր ու հյութեղ,  
Բանջարեղեն շատ համեղ,  
Թե մաքրես ու տրորես,  
Տոմատի հյութ կհանես: (լոլիկ)*

*Երբ դնում ենք, կտրատում,  
Մանրիկ-մանրիկ մասնատում,  
Լացացնում է ինձ ու քեզ,  
Անունն ասա, թե գիտես: (սոխ)*

*Բազմանում է սուվի ափին՝  
Հարյուր շապիկ իր հագին,  
Ջուր է սիրում ձիու պես,  
Ի՞նչն է, ասա, թե գիտես: (կաղամբ)*

*Բանջարեղեն է՝ մանրիկ սերմերով,  
Վզիկը՝ բարակ և ուռած փորով,  
Նա չի վնասում ցանող-պահողին,  
Կրակ է դառնում՝ այրում ուտողի:  
(տաքղեղ)*

հեղ.՝ Հ. Բարաջանյան

*Ուտքը հողում է, գլուխը՝ դրսում,  
Հազար շոր ունի՝ դարձյալ մրսում է:  
(կաղամբ)  
Հեղ.՝ Գ. Մովսիսյան*

*Պահում են կլոր տարի,  
Միրելին է բոլորի,  
Հողի տակ է այն աճում,  
Տապակում են կամ խաշում:  
(կարտոֆիլ)*

*Կանաչ, երկար պտուղ է,  
Պոմիդորից անբաժան,  
Համեղ սալաթ է դառնում,  
Մեղանն է մեր զարդարում: (վարունգ)*

*Ինքը հողում է, տերևները՝ դրսում,  
Երկարավուն է և գազարագույն,  
Օգտակար է, օգնում է մեր աճին:  
(գազար)*

Դաստիարակները հանելուկները երեխաներին կարող են առաջարկել իրենց ընտրությամբ:

**ՊԱՐԱՊՄՈՒՆԷՏԻ**

Թեման՝ «Վիտամիններ»

Տեսակը՝ գրույց

Նպատակը

Ամրապնդել երեխաների գիտելիքները բանջարեղենի, մրգերի և դրանց օգտակարության մասին: Երեխաների մեջ սեր և հետաքրքրություն արթնագնել դրանց նկատմամբ: Բառապաշարում ամրակայել *վիտամին*, *սննդամթերք* բառերը:

Ամիրաժեշտ պարագաներ՝ երկու զամբյուղ՝ որի մեջ խառը լցված են բանջարեղեն և մրգեր, փայտից ձվեր և երկու շերտի, թղթից կտրտած տառատեսակներ, օրինակ՝ A, B, C, D և այլն:

Պարապմունքի ընթացքը

Պարապմունքը կարելի է սկսել մրգերի և բանջարեղենի մասին որևէ ուրախ երգով:

Դաստիարակ - Երեխաներ, դուք մրգեր շա՞տ եք սիրում, իսկ բանջարեղեն՞: Այսօր մենք գրուցելու ենք մրգերի ու բանջարեղենի մասին, կծանոթանանք դրանց օգտակարությանը:

- Ի՞նչ մրգեր գիտեք:

Երեխաները թվարկում են տարբեր մրգերի անվանումներ՝ տանձ, խնձոր, ծիրան, դեղձ, և ավելացնում են, որ դրանք աճում են ծառերի վրա:

Դաստիարակը կրկին դիմում է երեխաներին՝ հարցնելով, թե բանջարեղենի ի՞նչ տեսակներ գիտեն: Երեխաները թվարկում են՝ լոլիկ, վարունգ, գազար, կաղամբ, սոխ...: Ասում են, որ դրանք աճում են բանջարանոցում՝ թփերի վրա կամ հողի տակ:

Աշխուժացնող խաղ

Դաստիարակն առաջարկում է խաղալ՝ «Մի՞րգ, թե՞ բանջարեղեն»:

Նպատակն է՝ կրկնել *միրգ* և *բանջարեղեն* ընդհանրացնող անունները: Երբ հնչում է բանջարեղենի անվանումը, անհրաժեշտ է կբանաստել և երկու ձեռքերը իջեցնել դեպի հողը: Այգում աճող պտղի անունը լսելիս պետք է կանգնել և ձեռքերը մեկնել դեպի վեր, երկու ձեռքով ցույց տալ ծառի պտուղները: Դաստիարակը կարող է արագացնել և իր շարժումներով շփոթեցնել երեխաներին: Խաղն ուղեկցվում է աշխույժ երաժշտությամբ:

- Բոլորը գիտեն, որ վիտամինները խիստ օգտակար են: Երեխաներ, իսկ գիտե՞ք, թե որ մրգերի և բանջարեղենի մեջ կան վիտամիններ:

Երեխաները պատասխանում են, որ բոլոր մրգերի և բանջարեղենի մեջ շատ վիտամիններ կան /առանձին-առանձին թվարկում են դրանք/:

- Մեկ անգամ էլ վերհիշենք, թե ինչ մրգեր և բանջարեղեն գիտենք:
- Որտե՞ղ են աճում մրգերը /բանջարեղենը:

- Ինչպե՞ս կարելի է ուտել միրգը կամ բանջարեղենը /հում կամ եփված/:
- Որո՞նք են հում ուտում, որո՞նք՝ միայն եփված:
- Ինչ կարելի է պատրաստել մրգերից կամ բանջարեղենից:
- Ձեր կարծիքով, հում բանջարեղենի /մրգի/ մե՞ջ ավելի շատ վիտամիններ կան, թե՛ եփված:

/Պատասխաններ/

Թարմացնող վարժություն՝ «Վիտամիններ».

*Մենք փոքրիկ ենք, ու մեզ պետք են  
Բազմատեսակ վիտամիններ:  
Որ մենք ուտենք ու մեծանանք,  
Միշտ առողջ և ուրախ մնանք:  
Ահա՛ նարինջ ու մեջր «ՅԵ»,  
Ահա՛ սրդպեղ ու մեջր «ԲԵ»,  
Ահա՛ գազար ու մեջր «Ա»,  
Մենք Ձեզ շատ ենք սիրում, բա՞:*

/Երեխաները յուրաքանչյուր տողի հետ կատարում են համապատասխան շարժումներ/ :

Դրանից հետո դաստիարակը ներս է հրավիրում հյուրին՝ բժշկին: Երեխաներն ուրախ դիմավորում են նրան: Բժիշկը, մեկ անգամ ևս շեշտելով վիտամինների կարևորությունը, նշում է, որ եթե երեխաներն ուզում են լինել առողջ, ուժեղ և գեղեցիկ՝ պետք է շատ օգտագործեն մրգեր և բանջարեղեն: Դրանք կարելի է ուտել միայն լվացված վիճակում: Այնուհետև նա տեղեկացնում է երեխաներին, թե որ մրգի կամ բանջարեղենի մեջ որ վիտամիններն են գերակշռում: Երեխաները վիտամինների համապատասխան քարտերը դասավորում են տվյալ մրգի կամ բանջարեղենի նկարի տակ:

Այնուհետև առաջարկում է գուշակել հանելուկներ՝ մրգերի և բանջարեղենի մասին:

*Ի՞նչն է ալվան, կարմրաթուշ, Անուշ միրգ եմ, աշնան մի գանձ,  
Կորիզն անհամ, ինքն անուշ: (դեղձ) Ինձ կոչում են մալաչա .... (տանձ)*

*Միրգ եմ կարմիր ու կլորիկ, Հուլունքներ են սև կամ ճերմակ,  
Մեկ թթու եմ, մեկ էլ՝ քաղցրիկ: Բաղքրանում են արևի տակ,  
Ասես լինեմ փոքրիկ սնդուկ, Հուլունքներն են այդ մանրակորիզ  
Մեջս մանրիկ, փալուն հուլունք: (նուռ) Ունեն թփից կախված մի վիզ: (խաղող)*

*Լաց չի լինում մորթվողը, Հագին հարյուր պիջակ,  
Լաց է լինում մորթողը: (սոխ) Հարյուրն էլ՝ անկոճակ: (կաղամբ)*

*Էս ի՞նչ տուն է, մեջր մարդիկ,  
Ոչ դուռ ունի, ոչ էլ՝ երդիկ: (վարունգ)*

Բժիշկը գովաբանում է երեխաներին՝ հանելուկները ճիշտ գուշակելու համար և մեկ անգամ ևս կոչ անում օգտագործել վիտամիններով հարուստ սննդամթերք:

Նա շնորհակալություն է հայտնում երեխաներին և հրաժեշտ տալիս: Պարապմունքի ավարտին դաստիարակը կազմակերպում է «Համից ճանաչիր» խաղը.

Երեխայի աչքերը կապում են: Նրան տալիս են որևէ միրգ և առաջարկում ուտել: Երեխան համից պետք է գուշակի, թե ինչ պտուղ է:

ՊԱՐԱՊՄՈՒՆԷ 52

Թեման՝ «Ճուտիկն ու շնիկը» /Երեխաներին վարժեցնե՛նք ճիշտ արարք-ները/

Տեսակը՝ դադարներով ընթերցանություն

Ընթերցանության այս տեսակը հոգեհարազատ է երեխաներին. նրանք հետաքրքրությամբ կարձագանքեն հայելուն մոտենալու առաջարկին և իրենց ու ձեզ ցույց կտան, թե ինչպիսի տեսք ունի /տխուր կամ ուրախ/ շնիկը:

Այդ զգացմունքներն արդեն ծանոթ են փոքրիկին: Ցանկության դեպքում կարելի է հորինել նմանօրինակ բազմաթիվ սյուժեներ և ընտրել սիրելի հերոսներ:

Մեծահասակների խնդիրն է՝ ոչ ճիշտ արարքների, փոքրիկի չմտածված գործողությունների կանխարգելումը:

Պատմվածքի ժամանակ ներկայացվող ոտանավորը կարելի է կիրառել նաև որպես աշխուժացնող վարժություն՝ կատարելով համապատասխան շարժումներ:

*Օրվա երկրորդ կեսին կարելի է առաջարկել երեխաներին նկարել պատմվածքից տարբեր դրվագներ, միացնել դրանք և կազմել գիրք:*

Պարապմունքի նպատակը. զինել երեխաներին այնպիսի գիտելիքներով, որոնց միջոցով հնարավոր է տարբերակել, թե ինչն է լավ, և ինչը՝ վատը:

Սովորեցնել ըմբռնել տարբեր տիպի վտանգավոր արարքների վերաբերյալ ճիշտ վերաբերմունքի կարևորությունը, կարողանալ խուսափել դրանցից, իսկ ծայրահեղ իրավիճակներում հայտնվելու դեպքում՝ փորձել գտնել ճիշտ որոշումը:

Խնդիրները

Առաջարկվող սյուժեի օրինակով ճիշտ վերաբերմունք ձևավորել չմտածված ինչ-որ բայի կամ արարքների նկատմամբ: Տեքստում առաջադրված հարցերի միջոցով փոքրիկներին վարժեցնել՝ կողքից դիտելու իրենց և անկողմնակալ գնահատական տալ սեփական գործողություններին ու արարքներին:

Անհրաժեշտ պարագաներ՝ ընտանի կենդանիներ և պատմվածքի հերոսները պատկերող նկարներ

Ընթացքը

Դաստիարակը երեխաներին ցուցադրում է ընտանի կենդանիների նկարներ և հարցեր ուղղում նրանց.

- Դուք տանը պահու՞մ եք ընտանի կենդանիներ:

- Ի՞նչ ընտանի կենդանիներ ունեք:

- Ավելի շատ ո՞ր ընտանի կենդանուն եք սիրում: Երբևէ հոգ տարե՞լ եք նրա մասին և ինչպե՞ս:

Այս դաստիարակը հատվածաբար ընթերցում է պատմվածքը և երեխաներին ուղղում բաց հարցեր /սմբյում ստեղծվում է բուռն քննարկում, բոլորը մեծ հետաքրքրությամբ սպասում են պատմության շարունակությանը/:

Ճուտիկն ու շնիկը

*Կար-չկար՝ մի ճուտիկ կար: Նրա անունն էր Պիկ: Նա դեղին ու փամփիկ էր և շատ նման գարնանային խատուտիկի: Ճստյիկ կտուցով, պատյիկ պոչիկով և փոքրիկ ուլունք-աչիկներով խատուտիկ էր նա: Այնքա՛ն համակրելի էր այդ Պիկը: Ամեն ինչ շատ լավ էր: Միայն թե նա միշտ չէ, որ լսում էր իր Հավ-մայրիկին: Դա շատ էր վշտացնում վերջինիս:*

- Իսկ դու չե՞ս վշտացնում քո մայրիկին: Կարելի՞ է քեզ լսող համարել:

*Ահա մի անգամ էլ Հավ-մայրիկն իր ճուտիկ-բալիկներին տանում է մարգագետին: Արևը փայլում է, խոտը կանաչ է, ծաղիկները ծպտում են:*

*Ջրոսնում է հավիկը,*

*Պոկոտում բարձ խոտիկը,*

*Իսկ հետևից՝ ճուտիկները,*

*Դեղնակտուց բալիկները:*

*-Կո՛-կո՛-կո՛, կո՛-կո՛-կո՛,*

*Մի՛ գնացեք դուք հեռու,*

*Թաթիկներով փորփորեք,*

*Հագահատիկ որ գտնեք:*

- Ի՞նչ է արգելում հավիկն իր ճուտիկներին: Ի՞նչ է սովորեցնում նա իր բալիկներին: Մայր հավիկը հոգատա՞ր է: Ի՞նչ է նշանակում «հոգատար»: Նմա՞ն է նա քո մայրիկին:

*Միայն Պիկը չլսեց մայրիկին, շքանկացավ սովորել և արահետով փախավ անտառ:*

- Ըի՞շտ վարվեց նա: Իսկ դու ինչպե՞ս ես վարվում: Չլսո՞ղ է այդ ճուտիկը: Իսկ դու ինչպիսի՞ն ես:

*Հագում է Պիկ ճուտիկն արահետով, ուրախանում, որ մենակ է մնացել: Մտածում է, թե ինչով զբաղվի: Հանկարծ լսում է՝ ինչ-որ մեկը ցածրաձայն լալիս է: Նայում է՝ և ի՞նչ տեսնում. քփերում մստած փոքրիկ շնիկը արցունք-ները քաթիկով սրբում է և խղճալի վնգստում.*

- Օ՜յ - օ՜յ - օ՜յ: Ի՞նչ մեղք եմ ես, որքա՛ն դժբախտ: Ես տուն չունեմ: Ես մեծ-մեծակ եմ ամբողջ աշխարհում:

- Մի՛ վշտանա, - սկսեց շնիկին հանգստացնել ճուտիկը: - Ուզու՞մ ես ես լինեմ քո ընկերը:

- Ես նույնպես կլինեմ քո ընկերը, - ծսո՞ծստաց կողքից ինչ-որ մեկը:

Շնիկն ու ճուտիկը նայեցին. նրանց առջև կանգնած էր փոքրիկ մկնիկը և առաջարկում էր.

- Արի՛ մեզ մոտ և ապրի՛ր մեզ հետ:

- Ահա՛ թե՛ ինչ բարի է մկնիկը: Իսկ դու կհրավիրեի՞ր շնիկին քեզ մոտ: Դու նու՞յնպես բարի ես:

- Այդ ի՞նչ ես ասում, - վրդովվեց ճուտիկը:

- Միայն դու և ծիծուն կկարողանաք ներս սողոսկել քո բույնը: Ահա և վերջ: Իսկ մենք մեծ բակ ունենք: Բոլորին տեղ կլինի:

- Ինչպիսի՞ն է ճուտիկը: Բարեհամբու՞յր: Նշանակում է՝ բարին է ցանկա՛նում: Իսկ քեզ կարելի՞ է բարեհամբույր անվանել: Պատմի՛ր ինչու՞:

Ուրախացավ շնիկը: Հրավերի համար շնորհակալություն հայտնեց մկնիկին, և ճուտիկը նրան արահետով տարավ ուղիղ իրենց տուն:

- Ի՞նչ ես կարծում ինչու՞:

- Մայրի՛կ, մայրի՛կ, - ուրախ բացականչեց Պիկը, - ես ինձ համար ընկեր եմ գտել: Նա պետք է ապրի մեզ հետ:

Տեսավ Հավ-մայրիկն ընկերներին և խստորեն ասաց.

- Ո՛չ, ո՛չ և ո՛չ: Շնիկը տեղ չունի ճուտիկների կողքին: Եվ ի՞նչ ընկեր է նա քեզ համար: Նա կարող է ձեզնից որևէ մեկին կծել:

Շնիկը լսեց, լուռ շրջվեց և գլուխը կախ՝ տխուր գնաց՝ ինքն էլ չիմանալով, թե ուր:

- Ինչու՞ տխրեց շնիկը: Ինչու՞ կախեց գլուխը:

Իսկ ճուտի՛կը: Ի՞նչ աներ: Մեղք էր շնիկը: Բայց չէ՞ որ մայրիկին լսել էր հարկավոր: Ահա ինչպիսի իրավիճակ է:

- Տեսնու՞մ ես՝ երեքի համար էլ վատ է: Իսկ ո՞վ է մեղավոր: Հիշի՛ր՝ նախքան կարևոր որոշում կայացնելը հարկավոր է խորհրդակցել ծնողների հետ:

Մի անգամ դժբախտություն պատահեց: Խորամանկ աղվեսը լսել էր անհնազանդ ճուտիկի մասին: Երբ վերջինս նորից մայրիկից թաքուն անտատ փախավ, աղվեսը հետևեց նրան և, հա՛մփ՝ ատամներով:

Գոռում է ճուտիկը, մայրիկին օգնության կանչում: Մակայն մայրիկը հեռու է, չի լսում նրան: Իսկ շնիկն արդեն կողքին է: Ընկերոջն օգնության է հասնում: Գոմոռում է աղվեսի վրա, հաչում, պոչից քաշ տալիս. «Բա՛ց թող ճուտիկին»:

Վախեցած աղվեսը բաց է թողնում խեղճ ճուտիկին, ինքն էլ փախչում անտատ:

- Ի՞նչ ես կարծում ինչու՞ ճուտիկը դժբախտության մեջ հայտնվեց: Իրականում ինչպիսի՞ն է շնիկը: Իսկ դու կօգնեի՞ր ճուտիկին, չէի՞ր վախենա աղվեսից: Կեցցե՛ս, դու նույնպես քաջ ես:

Խոչունների բակում խառնաշփոթ է: Հավիկը փնտրում է անհնազանդ ճուտիկին, իսկ նա չկա ու չկա, և ոչ որ չի տեսել, թե ուր է փախել: Դառնազին լա-

լիս է մայր հավիկը: Խղճում է նա անհնազանդ որդուն: Գոտիկները հավաքվել են նրա շուրջը շուրջը: Իրենք էլ են հուզվում, բայց փորձում են հանգստացնել մայրիկին: Մակայն ոչ մեկը չգիտեր ինչպես օգնել նրան:

- Գուցե դու գիտե՞ս: Ո՞չ: Ես նույնպես չգիտեմ, թե ինչպիսի՛ սխալ արարք էր թույլ տվել Պիկ ճուտիկը: Իսկ դու քո մայրիկին երբեք չե՞ս վշտացրել:

Եվ ահա արահետին երևաց Պիկ ճուտիկը: Նրա կողքից երջանիկ բայում է շնիկը:

- Մայրի՛կ, մայրի՛կ, - ուրախ բացականչեցին ճուտիկները, - ահա և մեր Պիկը՝ ողջ և անվնաս:

Հավիկը վազեց՝ զավակին համբուրելու, գուրգուրելու: Իսկ շնիկը տխուր հառաչեց և հետ գնաց անտառ՝ մենակ թափառելու աշխարհում:

- Ի՞նչ ես կարծում ինչու՞ տխրեց շնիկը: Ինչու՞ նորից գնաց: Մայր հավիկը նրան կանգնեցրեց.

- Ու՛ր ես գնում, փոքրիկ: Մնա՛, ապրի՛ր մեզ հետ: Շատ շնորհակալ եմ քեզնից, որ փրկեցիր իմ ճուտիկին: Ների՛ր, ես անմիջապես չհասկացա, որ դու իսկական ընկեր ես:

Նա թևիկներով գրկեց ընկերներին և ամուր սեղմեց կրծքին:

- Որքա՛ն արդարամիտ է մայր հավիկը: Ինչու՞ ենք մենք նրան այդպես անվանում:

Եվ ապրեց շնիկն իր բարի ընկերների հետ:

- Իսկ թե՛ ի՞նչ անում դենք նրան, մտածի՛ր ինքը: Պիկ ճուտիկն այլևս չի փախչում մայրիկից: Նա դարձել է լսող և հնազանդ:

Ահա և բոլորը: Վերջ: Կեցցե՛ք դուք: Կարելի է առաջարկել երեխաներին մտածել նոր վերնագիր, ապա «Բաց հարցերի» միջոցով ամփոփել պարապմունքը:

ՊԱՐԱՊՊՈՒՆՔՆԵՐ 53-54

Թեման՝ «Բարեկիրք վարք»

Տեսակը

Զրույց: Դիդակտիկ խաղ

Նպատակը

Սովորեցնել խոսքի մեջ տեղին կիրառել բարեկիրք արտահայտություններ՝ ներողություն, շնորհակալություն, խնդրեմ, բարև՝ ձեզ, բարի՝ գիշեր, դաստիարակել բարեկիրք վարքագիծ, զարգացնել ուշադրությունը:

Նախապատրաստական աշխատանք

Տարբեր առիթներն ու իրավիճակներն օգտագործել բարեկիրք վարքի կանոններին ծանոթացնելու համար:

Անհրաժեշտ նյութեր՝ խաղալիք արջուկ

Ընթացքը

1-ին օր

Տեղեկացրե՛ք, որ ունկնդրելու են Ս. Կապուտիկյանի «Ինձ լավ լսիր, այ տիկնիկ» բանաստեղծությունը: Երեխաները պետք է ուշադիր լսեն, որ հասկանան, թե ինչ է փոքրիկ աղջիկը սովորեցնում իր տիկնիկին, որպեսզի իրենք էլ նույնը սովորեցնեն արջուկին (արջուկի համար կարող են անուն հորինել): Արտահայտիչ, դադարներով, բարեկիրք վարք ցույց տվող բառերն առանձնացնելով առոգանությանը ընթերցե՛ք բանաստեղծությունը, հետո զրուցե՛ք. **Եկեք արջուկին սովորեցնենք բարեկիրք վարքի կանոնները:**

• Երբ առավոտյան արթնանում եք քնից, ի՞նչ եք ասում մարդկանց: (Ասե՛ք, որ բարի լույս կարող եմ մաղթել ոչ միայն մարդկանց, այլև թռչուններին, ծաղիկներին, արևին:)

• Երբ հյուր եք գնում, դրսից ներս եք մտնում, կամ փողոցում հանդիպում եք ծանոթ մարդու, ի՞նչ եք անում: (Բացատրե՛ք, որ երբ ոչ հարազատ մեծերին են բարևում, ասում են «բարև՝ ձեզ», իսկ հասակակիցներին՝ «բարև»: Մեջքերե՛ք բանաստեղծության համապատասխան երկտողը:)

• Ինչպե՞ս եք բարևում մարդկանց (ղեմքի ի՞նչ արտահայտությամբ): (Ուրախ ծալիտով:)

• Ի՞նչ բառերով են մարդիկ հրաժեշտ տալիս իրար: (Մնա՛ք բարով, ցտեսություն, մինչ հանդիպում, հաջողություն, քնելուց առաջ՝ բարի գիշեր):

• Ինչպե՞ս կղիմես ընկերոջդ (տատիկիդ, մայրիկիդ, քույրկիդ), եթե նրանից մատիտ (ջուր, ուտելիք կամ ինչ որ բան) ես խնդրում: (Խնդրում եմ:)

• Ի՞նչ ես ասում, երբ խնդրանքդ կատարում, թեզ հյուրասիրում, կամ օգնում եմ: (Շնորհակալություն)

• Ի՞նչ ես ասում, երբ պատահաբար տրորում ես ընկերոջդ ոտքը, վագելիս բախվում ես ինչ որ մեկին: (Ներողություն: Բանստեղծությունից ընթերցե՛ք համապատասխան տողը:)

2-րդ օր

Հիշեցրե՛ք նախորդ օրվա գրույցը և ասե՛ք, որ արջուկն իր սովորած բարեկիրք արտահայտությունները խառնել է իրար, ստեղծվել է խառնաշփոթ իրավիճակ, և երեխաները պետք է օգնեն ուղղել այն:

Կազմակերպե՛ք «Խառնաշփոթ» դիդակտիկ խաղը:

Երեխաների համար ընթերցե՛ք «Բարեկիրք խառնաշփոթ» ինտերակտիվ պատմվածքը, որտեղ բառերը կորցրել են իրենց ճիշտ տեղը և ամեն ինչ խառնվել է իրար: Որպեսզի ամեն ինչ իր տեղն ընկնի, և վերջ դրվի խառնաշփոթին, երեխաները պետք է նկատեն սխալը, ծափերով արձագանքեն և ուղղեն այն: Եթե երեխաները չեն նկատում սխալը, դաստիարակը ինքն է դադարեցնում և հուշող հարցով օգնում է ուղղում կատարել, օրինակ՝ ի՞նչ պետք է ասել, երբ ...:

Բարեկիրք խառնաշփոթ

Կիրակի առավոտ էր: Արջուկը լվացվեց, հագնվեց և վագեց անտառի բացատ: Բացատը լի էր տարբեր կենդանիներով՝ արջուկներ, սկյուտիկներ, մապաստակներ, աղվեսիկներ, գայլուկներ, ծովախոզուկներ, արծիվներ: Բոլորը հավաքվել էին խաղալու և ուրախ ժամանակ անցկացնելու:

Արջուկը մոտեցավ բոլորին, ուրախ բարի գիշեր մաղթեց: Բոլորը զարմացած նայեցին արջուկին: (Այստեղ երեխաները պետք է ծափ տան և ուղղեն. **ոչ թե բարի գիշեր, այլ բարի լույս կամ բարի օր, բարև՝ ձեզ**. Մեկ անգամ ևս ընթերցում եք նույն նախադասությունը՝ ուղղված տարբերակով և շարունակում եք:)

Արջուկը մոտեցավ բոլորին, ուրախ բարի օր մաղթեց: Բոլորը ուրախ ողջունեցին արջուկին: Նա շատ էր սիրում ֆուտբոլ խաղալ, դրա համար էլ մոտեցավ ֆուտբոլիստ աղվեսիկներին և ասաց. «Շնորհակալություն, ի՞նձ էլ ընդգրկեք խաղի մեջ»: Աղվեսիկները զարմացած նայեցին արջուկին: (Ծափ, ուղղում. **ոչ թե՝ շնորհակալություն, այլ՝ խնդրում եմ**:)

Արջուկը մոտեցավ ֆուտբոլիստ աղվեսիկներին և ասաց. «Խնդրում եմ, ի՞նձ էլ ընդգրկեք խաղի մեջ»: Աղվեսիկները սիրով համաձայնվեցին խաղալ նրա հետ: Արջուկը, քանի որ ծուրթաթ ու գեր էր, դժվարությամբ էր վագում և խաղի ընթացքում անընդհատ հրձշտում ու հարվածում էր մյուսներին: Ամեն անգամ մեկին բախվելիս ասում էր. «Խնդրեմ»: Բոլոր աղվեսիկները նեղացան և դադարեցրին խաղը: (Ծափ, ուղղում. **Ոչ թե՝ խնդրեմ, այլ՝ ներողություն**:)

Ամեն անգամ մեկին բախվելիս ասում էր. «Ներողություն»: Աղվեսիկները հասկանում էին, որ ծուրթաթը դիտավորյալ չի անում և ներում էին նրան:

Խաղից հետո բոլոր կենդանիները հավաքվեցին սեղանի շուրջ, որ ճաշեն: Ծուռթաթը շատ էր սիրում տանձ ու հատապտուղ և ցանկանում էր անպայման օգտվել այդ բարիքներից: Երբ սկյուռիկները հյուրասիրեցին նրան, նա ասաց. **խնդրում եմ:** (Ծափ, ուղղում. *Ոչ թե՛ խնդրում եմ, այլ՝ շնորհակալություն:*):

Երբ սկյուռիկները հյուրասիրեցին նրան, նա ասաց. **շնորհակալություն:** Երբ գայլուկները նրան միս առաջարկեցին, նա ասաց. **ցտեսություն:** Գայլուկներին թվաց, թե վիրավորեցին ծուռթաթին: (Ծափ, ուղղում. *Ոչ թե՛ ցտեսություն, այլ՝ շնորհակալություն, ես չեմ ուզում:*):

Երբ գայլուկները նրան միս առաջարկեցին, նա ասաց. **շնորհակալություն, ես չեմ ուզում:**

Ճաշից հետո բոլորն ընկան խաղով և չնկատեցին, թե ինչպես մութն ընկավ: Արջուկը վախից իրար խառնված, բարձր ձայնով սկսեց գոռոռալ. **տարե՛ք ինձ տուն, տարե՛ք ինձ տուն:** Ոչ ոք նրա գոռոռոցին ուշադրություն չդարձրեց: (Դիմե՛ք երեխաներին. «Եկեք օգնենք արջուկին, նա ինչ պետք է ասի, որ ընկերներն օգնեն»), **խնդրում եմ:**)

**Խնդրում եմ, օգնեք ինձ հասնել տուն, ես մտաջել եմ իմ տան ճամփան,** լացակույմած խնդրում էր արջուկը: Ընկերները արժիվների օգնությամբ նրան ուղեկցեցին տուն: Արջուկն այնքան էր հուզվել, որ իրենց որջին հասնելուն պես, առանց ընկերներին հրաժեշտ տալու, ներս վազեց: Նրան ուղեկցող կենդանիները շատ տխրեցին: (Ծափ, ուղղում. *շնորհակալություն հայտնեց և բարի գիշեր մաղթեց ընկերներին:*)

Թեև արջուկը շատ էր հուզված, բայց չմոռացավ շնորհակալություն հայտնել և հրաժեշտ տալ բարի գիշեր, ցտեսություն ասել ընկերներին: Բոլորն ուրախ բաժանվեցին իրարից՝ նորից հանդիպելու ցանկությամբ:

Պարապմունքն ամփոփե՛ք.

- Ինչը՞ ձեզ դուր եկավ:
- Է՞լ ինչ բարեկիրք արտահայտություններ գիտեք:

**ՊԱՐԱՊՄՈՒՆԵՐՆԵՐ 55-59**

**Թեման՝ «Հաց»**


**Տեսակը՝** թեմատիկ-ինտեգրված պարապմունք 1 շաբաթվա համար

**Ներկայացվող թեման հետապնդում է ճանաչողական, ուսուցողական և դաստիարակչական նպատակ:** Երեխաներին մատչելի ձևով ներկայացվում է հացի ստեղծման պատմությունը, հացի անհրաժեշտությունն ու անզնահատելի դերը մարդու կյանքում:

**Ընթացքում ներկայացվում են հացին նվիրված խրատական բանաստեղծություններ ու օրհնանքներ:**

**Ի հավելումն այս ամենի՝ թեմայի ավարտին երեխաներին նվիրվում են քրթից պատրաստած լոշիկներ, որոնց վրա նախապես գրված են հացը գովերգող բարեմաղթանքներ: Դաստիարակն ինքն էլ մաղթում է՝ հացով մարդ լինեք:**

**Դաստիարակը 1 շաբաթվա ընթացքում թեմայի առնչությամբ կարող է կիրառել խոսքի զարգացման պարապմունքի ցանկացած տեսակ:** Ներկայացնում ենք՝ գրույց, խաղ-պարապմունք, ուտանավորի ուսուցում, խորացում, դի-դակտիկ խաղ, դաստիարակի օրինակով պատմում: Վերջիններս կարելի է ինտեգրել կերպարվեստի, մաթեմատիկայի և գործունեության տարբեր տեսակների հետ:



1-ին օր

Թեման՝ «Հաց»

Տեսակը՝ գրույց

Պարապմունքի նպատակը

Ճշտել և ամրապնդել երեխաների գիտելիքները մարդկության ամենամեծ բարիքի՝ հացի, նրա ստացման և ստեղծման վերաբերյալ: Ներկայացնել, թե ինչքան շատ մարդիկ են ներգրավված մի կտոր հացի ստեղծման աշխատանքում:

Սեր և հարգանք դաստիարակել հացթուխի նկատմամբ, կարողանալ ըստ արժանվույն գնահատել նրա աշխատանքը, խնամքով վերաբերվել հացի ամեն մի փշուրի նկատմամբ՝ **հացի փշուրն էլ հաց է:**

Հարստացնել բառապաշարը թթխմոր, հացատուն, ցորենահասկ, գրտնակ, հացթուխ, թոնրատուն բառերով: Օգնել երեխաներին հասկանալու ժողովրդական ասացվածքների իմաստը:

Անհրաժեշտ պարագաներ՝ գյուղատնտեսական մեքենաների, ցորենի արտի, հացատեսակների, հացի ստացման ուղին պատկերող նկարներ, ալյուր, խմոր, ցորենահասկ, լավաշ:

Պարապմունքի ընթացքը

Խմբասենյակը ձևավորված է հասկերով: Մի անկյունում դրված են հացատեսակներ, մեկ այլ անկյունում ցածրիկ սեղան է՝ վրան գրտնակ, ալյուր, խմոր, լավաշ:

Դաստիարակը պարապմունքը սկսում է «Ո՞վ է կերել» ոտանավորի արտասանությամբ.

- Պուպու՛, քանի՞ հաց ես թխել:
- Ուլիլ ութ հաց:
- Այդ հացերը ու՞ր ես դրել:
- Պուտուկը բաց:
- Բա խմորը ո՞վ է հունցել:
- Ծեր տատիկը:

- Տաշտը դրսում ո՞վ է բացել:
- Ծույլ Սաթիկը:
- Ծիլ խմորը ո՞վ է քերել:
- Փոքրիկ Մուճին:
- Իսկ թխածքը ո՞վ է կերել:
- Էն գող քուչին:

Ապա ներկայացվում է հացի ստեղծման պատմությունը. վաղուց, շատ վաղուց մարդիկ բերք չեն աճեցրել, կյանքը նրանց համար շատ դժվար է եղել: Եվ ահա մի օր նրանք գտնում են ցորենի սերմի մի հատիկ, օրհնում են և այն սուրբ անունով Հաց են անվանում:

Այնուհետև դաստիարակը ներկայացնում է հացի ստացման ուղին՝ համապատասխան նկարների շարք ցուցադրելով՝ ցորենի այրտ, սերմերի ցանք, վարելն ու հասկերի հավաքելը համապատասխան գյուղատնտեսական մեքենաների միջոցով, բեռնատար մեքենաներով հացահատիկի տեղափոխումը ալյուրաց, հացաթխումը հացի փռում, թխված հացը՝ խանութի վաճառատեղանին:

**Թարմացնող վարժություն**

Մնջախաղի միջոցով բեմականացնել տարբեր իրավիճակներ /ցորենի աճը, խմոր հունցելու, ալյուր մաղելու, հաց թխելու հաջորդականությունը.../:

Դաստիարակ.

Մինչև հացը	Ցորենն ապա
Հաց է դառնում՝	Մի լավ աղում
Տաք քրտինք են	Ու նրանից
Նրան խառնում.	Հաց են թխում...
Վարում,	Հաց սրբազան,
Ցանում,	Հաց՝ կյանք մի բուռ,
Ջրում,	Հաց խնկահամ,
Քաղում...	Անուշաբույր...

- Հացի ի՞նչ տեսակներ գիտեք /լավաշ, մատնաքաշ, բոբոն, պուրի, բլիթներ.../:

- Ձեր ընտանիքներում լավաշ հաճախ եք օգտագործում, ի՞նչ առանձնահատկություններ ունի լավաշ հացը, որտե՞ղ և ինչպե՞ս են այն թխում /ալյուր մաղում, խմոր հունցում, թխում են թոնրատանը/:

- Երբևիցե տեսե՞լ եք, ինչպե՞ս են թխում լավաշը:

- Ի՞նչ կերակրատեսակի /մթերքի/ հետ եք ավելի շատ սիրում լավաշ օգտագործել:

- Ինչպիսի՞ն է հացը /անուշահամ, համով ու հոտով, սև ու սպիտակ, նուրբ/:

- Ինչպե՞ս ենք անվանում այն մարդուն, ով հաց է թխում /հացթուխ/:

- Ինչպե՞ս եք վարվում հացի փշրանքների հետ /կերակրում ենք ծխտիկներին/:

**Ասացվածքների ներկայացում և իմաստի բացատրություն**

Տաշտներդ լի հաց լինի,	Հաց ու պանիր,	Ով ինչ ցանի, այն կհնձի:
Դռներդ միշտ բաց լինի:	Կե՛ր ու բանի՛ր	

Որտեղ հաց՝	Մեկ ցանես,	Առատ տարի,
Այնտեղ կաց:	Հազար հնձես:	Բերքը՝ բարի:

Հող բռնես՝ ոսկի դառնա: Հացով մարդ լինես: Առաջ հաց, հետո՝ հարց:

Դաստիարակը կարող է ընտրել դրանցից մի քանիսը:

2-րդ օր

Թեման՝ «Պատրաստում ենք բլիթներ»

Տեսակը՝ խաղ-պարայվումը

Նպատակը: Շարունակել յուրացնել պարզ նախադասության քերականական կառուցվածքը: Չնավորել ազատ և գրագետ խոսքի հմտություն՝ արտասանելով «Բլիթներ» քառատողը: Ջարգացնել խոսքը, մշակել մատներով և ափով խմորը հունցելու հմտություններ, տարածության մեջ կողմնորոշվելու կարողությունը: Երեխաների մեջ արթնացնել աշխատելու ցանկություն, դաստիարակել համատեղ աշխատանքի արդյունքով ուրախանալու կուլտուրա:

Անհրաժեշտ նյութեր: Նկար, որը պատկերում է սեղան. շուրջը նստած են մայրիկը, տղան, աղջիկը, շունը և կատուն: Նրանց առջև դատարկ ափսեներ են, որոնք թվով նստածներից շատ են: Ունենալ նաև գոգնոց, գլխաշոր, խաղալիքներ, տապակ, գազի սալիկ, նկարակալ /մուրեքտ/, դեղին գույնի աղի խմոր:

Ընթացքը

Դաստիարակ - Երեխաներ, դուք սիրո՞ւմ եք թխվածքաբլիթ, ո՞վ է ձեր տանը դրանք թխում: /Պատասխաններ/: Ես էլ եմ տանը բլիթներ թխում: Սկզբում կապում եմ գոգնոց, ի՞նչ եք կարծում, ինչի՞՞ համար /պատասխաններ/, հետո գլխաշոր /ինչի՞՞ համար/:

Եթե երեխաները դժվարանում են պատասխանել, հարկավոր է բացատրել, թե ինչի՞՞ համար են կապում գոգնոցն ու գլխաշորը:

- Բլիթները թխում եմ տապակի մեջ /ցույց է տալիս խաղալիք տապակը/: Կարծում եմ՝ դուք ինձ կօգնեք:

Կթխեմ ես բլիթներ՝

Տղայիս և աղջկաս,

Կատլի ու շան

Եվ մի քիչ էլ՝ ինձ համար:

Ասացե՛ք, ու՞մ համար եմ թխում բլիթները /պատասխաններ/:

Մատներով խաղ՝ «Բլիթներ»

Կթխեմ ես բլիթներ

*Ֆանդի հունցման գործողություններ է պատկերում՝ մի ափը մյուսին խփելով շրջելով:*

Տղայիս և աղջկաս,

*Մի մուրով ծալում է մյուս ձեռքի երկու մատը:*

Ընկիկի համար,

*Կողքնառոց հենում է գլխին՝ պատկերելով ականջներ:*

Կատլի համար

*Կողքնառոց երեսկարական գծիկներ է ստանում քրի մտա՝ պատկերելով քեղիք:*

Եվ մի քիչ էլ ինձ համար

*Ձեռքերը սեղմում է կրծքին:*

Դաստիարակ

- Ո՞վ է նստած սեղանի շուրջը /ցույց է տալիս նկարը/:

- Քանի՞ տղա, աղջիկ, շուն, կատու և քանի՞ ափսե կա: Արդյոք դրանք դատարկ են: Ուզո՞ւմ եք ինքներդ պատրաստել բլիթներ:

Հրավիրում է երեխաներին սեղանի մոտ, որտեղ դրված են խմորի կտորներ:  
- Որպեսզի խմորից բլիթներ ծեփենք, հարկավոր է նախապես պատրաստել գնդիկներ, ապա տափակեցնել դրանք /ցույց է տալիս/:

Երեխաները պատրաստում են բլիթներ և ամրացնում նկարին:

Դաստիարակ - Դուք որքա՞ն բլիթ պատրաստեցիք, երեխաներ:

Երեխաներ - Շա՛տ, քանի որ մենք շատ ենք, և աշխատել ենք բոլորս միասին: Եկեք մեկ անգամ էլ արտասանենք բլիթների մասին կատակ-ոտանավորը /արտասանում են/:

Կեցցե՛ք: Բոլորին բլիթներով կերակրեցինք, ժամանակն է, որ մենք էլ «համտեսենք դրանք»:

Երեխաները հրավիրվում են «բլիթներով թեյ խմելու» /խաղային իրավիճակ/:

3-րդ օր

Թեման՝ Ս. Մուրադյան, «Հացթուխը»

Տեսակը՝ ոտանավորի ուսուցում

Նպատակը: Երեխայի մեջ սեր արթնացնել գեղարվեստական գրականության տվյալ տեսակի հանդեպ: Սովորեցնել բառերն արտասանել համաձայն գրական լեզվի ուղղախոսության կանոնների, ամրապնդել ու զարգացնել արտասանական-ձայնային ապարատը, ձևավորել ձայնի ուժը և բարձրությունը կառավարելու կարողություն:

Խնդիրները

Երեխաներին սովորեցնել մտապահել տեքստի բառերը և անգիր արտասանել ամբողջ ստեղծագործությունը:

Ապահովել խոսքի համապատասխան արտահայտչականություն:

Անհրաժեշտ պարագաներ՝ հացթուխի և հացի տարբեր տեսակներ պատկերող, ինչպես նաև տարբեր մասնագիտություններ բնորոշող նկարներ, «Հրաշալի պարկ»:

Խթանման փուլ

Դաստիարակը պարայվումները սկսում է մտազրոհի մեթոդով՝ տարբեր հարցեր ուղղելով երեխաներին և ակնկալելով զանազան պատասխաններ:

- Ի՞նչ մասնագիտություններ գիտեք՝ կապված հացի արտադրության հետ /հացագործ, հացթուխ.../:

- Ինչպե՞ս է հացագործը հաց թխում:

- Տանը երբեկից տեսե՞լ եք, թե ինչպես են հաց պատրաստում /խմոր են շաղախում, թթմոր-խմորիչ խառնում.../:

Իմաստի ընկալման փուլ

Դաստիարակը նշում է, որ այսօր սովորելու են մի շատ գեղեցիկ բանաստեղծություն՝ փոքրիկ հացթուխի մասին/ Մուրեն Մուրադյանի «Հացթուխը» ոտանավորը/:

Հացթուխը

<i>ԿԿԹԸ</i> Ես խալաթ եմ	<i>ԿԿԹԸ</i> Թխում եմ ես	<i>ԿԿԹԸ</i> Մեկ էլ բակի
Հագել ճերմակ,	Լավ կարկանդակ,	Հավիկները
Հացթուխի պես	Չորանում են	Կտցում են իմ
Առել գրտնակ:	Ու կարմրում	Բլիթները:
<i>ԱՅՈՐԻ</i> Այլուրի տեղ	Մեկ-մեկ շարում	Քաշքշում են
Հողն եմ մաղում,	Արևի տակ:	Այս կողմ, այն կողմ
<i>ՓՈՔՐԻԿ</i> Փոքրիկ տաշտում	Բլիթներս՝	Ու չգիտեն՝
Պինդ շաղախում:	Ինչպես փռում:	Հա՞ց է, քե՛ հող:
	<i>Բայց</i> Բայց թողնում են	
	<i>Ու</i> Ու հեռանում...	
	<i>Բլիթներս</i> ... Բլիթներս	
	<i>Չեն</i> Չեն հավանում:	

Դաստիարակն արտահայտիչ, գեղեցիկ հնչերանգով արտասանում է այն: Հաջորդ քայլը բարդ բառերի և արտահայտությունների բացատրությունն է, որը նա կատարում է ամբողջական մտքի մեջ (օրինակ՝ ես խալաթ եմ հագել ճերմակ, այսինքն՝ շատ սպիտակ...): Երեխաներին անհասկանալի բառերը բացատրելուց հետո դաստիարակը մեկ անգամ ևս արտասանում է ոտանավորը և նրանց ուղղում ոտանավորի բովանդակությունը վեր հանող հարցեր՝ հավատարիմ մնալով հեղինակի խոսքին /արտասանում է միտքը նույնությամբ, իսկ վերջին մեկ, երկու բառերը վերածում հարցի (օրինակ՝ ես խալաթ եմ հագել ճերմակ - ես խալաթ եմ հագել, ինչպիսի?/: Եվ այսպես յուրաքանչյուր ստույգ: Նշենք, որ, նման մեթոդի կիրառումն օգնում է երեխաներին ավելի արագ հիշելու և վերարտադրելու բանաստեղծությունը: Հարցերից հետո դաստիարակը կրկին արտասանում է բանաստեղծությունը և առանձին երեխաների առաջարկում կրկնել այն: Դաստիարակն առաջին հերթին դիմում է այն երեխաներին, ովքեր ցանկություն են հայտնում կրկնելու, կամ նրանց, ովքեր լավ հիշողություն ունեն: Անհատական արտասանությունը կատարվում է դաստիարակի օգնությամբ:

Աշխուժացնող խաղ՝ «Քաղցր հաց» /փոխադրությունը՝ Լ. Սմբատյանի/.

Այսօր Լիլիթի սունն է,  
Նրա ուրախ օրն է:  
Պատրաստել ենք քաղցր հաց.

Այսպիսի բարձրությամբ, /Չեքերը բարձրացնում են վեր և ձգվում/  
Այսպիսի ցածրությամբ, /Կրանստում են և ձեռքերը մոտեցնում հատակին/  
Այսպիսի լայնությամբ, /Չեքերը տարածում են կողմ/  
Այսպիսի նեղությամբ: /Չեքերը մոտեցնում են իրար՝ ակները դեպի ներս/  
Քաղցր հաց, քաղցր հաց, /Պիրսիկ ծափեր են տալիս/  
Ում որ ուզես, նրան տաս:

Դաստիարակը վերջում ևս մեկ անգամ արտասանում է ոտանավորը /այս անգամ երեխաները կարող են միանալ դաստիարակին/:

Կշռադատման փուլ  
Դիդակտիկ խաղ՝ «Ու՛մ՝ Ինչ»

Մեղանի վրա դրված է պարկ, որի մեջ դաստիարակը տեղավորում է տարբեր առարկաներ՝ մկրատ, ջերմաչափ, գրտնակ, թել, մուրճ, կաթսա, վիրակապ, գիրք և այլն:

Երեխաները հերթով պարկից հանելով՝ անվանում են դրանք և նշում, թե ում է այն պետք: Ապա դաստիարակը ցույց է տալիս համապատասխան դասնազիտություններ բնորոշող նկարներ և հարցնում.

Ու՛մ է պետք ջերմաչափը: Գրտնակն ու՛մ տանք...:

Նա, ով ճիշտ է պատասխանում, ստանում է նկարը: Եթե երեխաները դժվարանում են, առաջին անգամ պատասխանում է դաստիարակը: Իսկ հետո, կրկին անգամ ցուցադրելով նկարը, առաջարկում է պատասխանել երեխային:

4-րդ օր

Թեման՝ Ս. Մուրադյան, «Հացթուխը»

Տեսակը՝ ոտանավորի ուսուցման խորացում

Նպատակը: Ծարունակել զարգացնել բանաստեղծության իմաստն ըմբռնելու, դրա բովանդակությունը հուզականորեն վերարտադրելու կարողությունը: Սովորեցնել զգալ ստեղծագործության տրամադրությունը, դիքնը և երաժշտականությունը:

Զարգացնել խոսքային շնչառությունը, ձևավորել գեղարվեստական ճաշակ: Վարժեցնել հուզականորեն արտահայտիչ արտասանել ոտանավորը՝ օգտվելով տրամաբանական դադարներից, շեշտադրումներից և այլն:

Անհրաժեշտ պարագաներ՝ հացթուխի և հացի տարբեր տեսակներ պատկերող նկարներ:

Խթանման փուլ

Դաստիարակը պարապմունքը կարող է սկսել մտազրուհի մեթոդով՝ տարբեր հարցեր ուղղելով երեխաներին և ակնկալելով բազմազան պատասխաններ:

- Ի՞նչ մասնագիտություններ գիտեք /պատասխաններ/:

- Ինչպե՞ս են անվանում այն մարդուն, ով հաց է քխում /հացքուխ/:
- Տանը երբևիցե տեսն՞ո՞ւ եք, քե ինչպես են հաց պատրաստում /սմոր են շաղախում, քթխոր-խմորիչ խառնում.../:

**Իմաստի ընկալման փուլ**

Դաստիարակը հայտնում է երեխաներին, որ այսօր իրենց հյուր է տիկնիկ Նունեն, որը հացքուխի ճերմակ խալաթով է:

- Երեկ մենք շատ գեղեցիկ ոտանավոր սովորեցինք փոքրիկ հացքուխի մասին: Այսօր կփորձենք այն սովորեցնել նաև տիկնիկ Նունեին:

Դաստիարակը մեկ անգամ ևս նշում է բանաստեղծության վերնագիրը և հեղինակի անուն- ազգանունը: Ապա հանգիստ, արտահայտիչ արտասանում է այն /տիկնիկը երեխաների կողքին նստած ուշադիր լսում է ոտանավորը/: Մեկ անգամ ևս դաստիարակը պարզ և մատչելի ձևով բացատրում է, քե ինչի մասին է ուսանվորը, և ինչ տրամադրություն է դրել հեղինակն իր ստեղծագործության մեջ:

Հաջորդ անգամ դաստիարակն արտասանելիս կատարում է ձեռքի համապատասխան շարժումներ՝ ավելի մեծ հետաքրքրություն առաջացնելով երեխաների մեջ: Ապա նա իր մոտ է կանչում առանձին երեխաների /4-5 հոգու/, որոնք հաջորդաբար արտասանում են բանաստեղծությունը: Այս անգամ ավելի մեծ ուշադրություն է դարձվում ոտանավորն արտահայտիչ և համապատասխան հնչերանգով արտասանելու վրա: Կարելի է արտասանել առանձին քառյակներ: Դա օգնում է ավելի լավ հասկանալ ոտանավորի իմաստն ու տրամադրությունը և միաժամանակ հաճույք է պատճառում երեխաներին:

Հաջորդ օրերի ընթացքում /պարապմունքի կամ որևէ ռեժիսային պահի / կարևոր է կազմակերպել ոտանավորի կրկնության գործընթացը՝ տարբեր ձևերի միջոցով /խաղ-բեմականացում, անհատական ուսուցում և այլն/, որպեսզի պահպանվի երեխաների հետաքրքրությունը կրկնվող նյութի նկատմամբ:

**Կշռադատման փուլ**

**Դիդակտիկ խաղ՝ «Այո ո՞վ է անուն»**

Նպատակը՝ կարողանալ նշել տվյալ գործողությունը կատարող անձին

**Ընթացքը**

Դաստիարակը հարցնում է երեխաներին.

- Ո՞վ է բուժում հիվանդներին (հիվանդներին բուժում է բժիշկը):
- Ո՞վ է ճաշ պատրաստում (ճաշը պատրաստում է խոհարարը):
- Ո՞վ է հաց քխում (հացը քխում է հացքուխը):
- Ո՞վ է ներկում տան պատերը, ո՞վ է կոշիկ կարում, ո՞վ է հագուստ կալում, ո՞վ է դասերը սովորում...:

Հարգելը պետք է արվեն պրագ՝ մեկը մյուսի հետևից: Պատասխանները պետք է լինեն կարծ, ձևակերպված և առանց ընդմիջումների:

Պատասխանն ուշացնողը երգում է կամ արտասանում:

**5-րդ օր**

**Թեման՝ «Իմ տատիկի վրայից հացի հոտ է գալիս»**

**Տեսակը՝ դաստիարակի օրինակով պատմում**

**Նպատակը:** Ջարգացնել երեխաների խոսքը, մտածողությունը, ուշադրությունը, հիշողությունը: Հասնել այն բանին, որ երեխաները մտքերն արտահայտեն կապակցված, քերականորեն ճիշտ կազմված նախադասություններով, չընդօրինակեն մեկը մյուսին:

**Անհրաժեշտ պարագաներ՝** բլիթներ պատրաստելու համար մթերք և գործիք՝ ալյուր, աղ, ջուր, ձու, գրտնակ

**Խթանման փուլ**

Դաստիարակը պարապմունքը սկսում է շուտասելուկով. սկզբում արտասանում է դանդաղ, ապա արագացնում տեմպը և ներգրավում նաև երեխաներին: Ստեղծվում է ուրախ, աշխույժ մթնոլորտ:

**Շուտասելուկ՝ Յորենը շուտ տար ջրաղաց,**

**Ալյուրը բեր՝ քիսերը քարմ հաց:**

**Իմաստի ընկալման փուլ**

Դաստիարակը երեխաներին պատմում է փոքրիկ, հետաքրքրաշարժ, լեզվական տեսակետից անթերի և մատչելի պատմություն իր տատիկի մասին:

- *Երբ ես փոքր էի, շատ էի սիրում մեկնել գյուղ՝ տատիկիս և պապիկիս մոտ: Այնտեղ ես շատ ընկերներ ունեի: Ինչպես բոլոր երեխաները, այնպես էլ ես, ուրախ և անհոգ օրեր էի անցկացնում գյուղում. պապիկիս հետ շրջում էի գյուղում, տատիկիս օգնում էի կերակրել ճուտիկներին, երեկոները լսում էի նրանց պատմած հետաքրքիր պատմություններն ու հեքիաթները...: Բայց առավել վառ է տպավորվել լավաշի քիսման արարողությունը, որը տեղի էր ունենում բոճրատանը: Ես և քույրիկներս տատիկիս փոքրիկ օգնականներն էինք. արագ-արագ նրան էինք հասցնում խմորե գնդերը, իսկ տատիկս դրանք բացում էր գրտնակով և բոճրի մեջ քիսում անմահական լավաշները: Մինչև հիմա, երբ հիշում եմ տատիկիս, կարծես զգում եմ լավաշի անուշ բույրը և կարոտում մեր գյուղն ու տատիկիս...:*

Պատմությունը ներկայացնելուց հետո դաստիարակը երեխաներին տալիս է ցուցումներ՝ ինչի՞ մասին և ինչպե՞ս նրանք պետք է պատմեն:

Դաստիարակը հարցնում է 2-3 երեխայի, նրանց պատմելու ընթացքում օգնում, որ մտքերը վերարտադրեն քերականորեն կապակցված նախադասություններով:

Թարմացնող վարժություն՝ «Հաց ենք թխում»

Ահա այլուր և ահա ջուր, <sup>/Այ և ձախ ձեռքերը պարզում են առաջ/</sup>  
 Ես խառնում եմ, հունցում խմոր, <sup>/Չույց են տալիս, որ երկու ձեռքով խմոր են հունցում/</sup>  
 Հիմա վառում եմ թոնիքը <sup>/Չույց են տալիս, որ վառում/</sup>  
 Գրտնակում եմ իմ խմորը, <sup>/Կատարում են համապատասխան շարժում/</sup>  
 Ապա թևից թև եմ գցում <sup>/Կատարում են շարժումը/</sup>  
 Եվ սուրբ լավաշ հաց եմ թխում:

Կշռադատման փուլ

Թեմայի ամփոփման ժամանակ երեխաները դաստիարակի հետ միասին պատրաստում են բլիթներ /գործընթացի ժամանակ կարելի է կրկնել Ս. Մուրադյանի «Հացթուխը» բանաստեղծությունը/:

Թեման՝ «Գարուն»

Տեսակը՝ գրույց

Նպատակը: Խորացնել երեխաների գիտելիքները գարնանը բնության մեջ և մարդկանց կենցաղում կատարվող փոփոխությունների վերաբերյալ: Սովորեցնել բառերով ներկայացնել իրենց հույզերը, զգացողությունները, հարցերին պատասխանել ամբողջական մախադասություններով: Ջարգացնել կապակցված խոսքը, հարստացնել բառապաշարը *խորհրդանիշ, ավետել* բառերով:

Նախապատրաստական աշխատանք

Ընթերցե՛ք Ս. Մարշակի «Եղանակ քույրերը», Ռ. Աղայանի «Ամիսներ և չորս եղանակ», Ա. Մովսիսյանի «Ծաղիկների բագուհին», «Ծիածանի սնունդը», Վ. Վարդանյանի «Գարուն», Հ. Հայրապետյանի «Ձմեռաղիկ», Աթ. Խնկոյանի «Ծիծեռնակ» ստեղծագործություններից մեկը կամ երկուսը (*Չեր ընտրությամբ*):

Ամերածեշտ նյութեր՝ գարնանային տեսարան և ձմեռաղիկ պատկերով նկարներ

Ընթացքը

Պարապմունքն սկսե՛ք գարնանային զարթոնքին վերաբերող խոսքով.

*Դրսում արևն է փայլում, մարդիկ սկսել են ժպտալ, գարուն է...*

Հարցրե՛ք.

• Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում բնության մեջ գարնանը: (Արևը տաքացնում է, օրերը երկարում են, ձյունը հալվում է, թռչունները վերադառնում են տաք երկրներից, ծառերը և ծաղիկները ծաղկում են, մարդիկ ավելի թեթև են հագնվում...)

• Ո՞ր ծաղիկն է գարնան խորհրդանիշը:

(Գարնան ամենավաղ խորհրդանիշը ձմեռաղիկն է, այն ավետում է գարնան գալուստը:)

• Ի՞նչ բանաստեղծություն գիտեք ձմեռաղիկի մասին:

Հիշեցրե՛ք Հ. Հայրապետյանի «Ձմեռաղիկ» բանաստեղծությունը, այն գեղեցիկ ընթերցե՛ք երեխաների համար, հետո հարցրե՛ք.

• Ի՞նչ տրամադրություն առաջացրեց բանաստեղծությունը: (Օգնե՛ք նրանց խոսել իրենց տրամադրությունների և հույզերի մասին):

• Ո՞ր թռչունն է գարնան ավետաբերը:

Հուշե՛ք երեխաներին այս հարցի պատասխանը՝ «Ծիծեռնակի» մասին հանելուկով.

Երկու սիրուն աշիկ ունի,  
Սկրատածն պոչիկ ունի,  
Կուրծքը սպիտակ կաթի նման,  
Թևերը սև սաթի նման: (ծիծեռնակ)

• Էլ ի՞նչ թռչուններ գիտեք, որ գարնանը հետ են վերադառնում տաք երկրներից (արագիլ, կարապ, սարյակ...):

• • Զեր տրամադրությունը փոխվում է գարնանը: Եթե այո, ինչպե՞ս: (Օգնե՛ք երեխաներին՝ խոսելու իրենց հույզերի և տրամադրության մասին):

Պարապմունքն ավարտե՛ք՝ առաջարկելով նկարել գարուն:

(Օրվա երկրորդ կեսին երեխաների համար ընթերցե՛ք Հ. Հայրապետյանի «Գարուն» բանաստեղծությունը և «Գարնանային թռչուններ», «Գարնանային ծաղիկներ», «Գարունը մեր բակում» թեմաներով երեխաների նկարները փակցրե՛ք պատին, առաջարկե՛ք շրջել խմբասենյակով ու դիտել ընկերների աշխատանքները: Հնարավորության դեպքում խրախուսե՛ք խոսել նկարների մասին.

- Ի՞նչ է պատկերված նկարում:
- Ինչը՞ այդ նկարների մեջ դուր եկավ իրենց:
- Ինչու՞ են մարդիկ (երեխաները) սիրում գարունը:

Թեման՝ «Թռչուններ»  
Տեսակը՝ գրույց  
Նպատակը

Գիտելիքներ տալ ձմեռող և չվող թռչունների մասին, զարգացնել՝ մտքերը քերականորեն ճիշտ, կապակցված արտահայտելու, հարցերին ամբողջական նախադասություններով պատասխանելու կարողությունը, հարստացնել բառապաշարը թռչունների անուններով (կկու, ջալամ, սարյակ), դաստիարակել սեր դեպի բնությունը: Վարժեցնել երեխաների հնչարտաբերման ապարատը՝ «ճ» հնչյունն արտասանելու համար: Հետևել, որ երեխաները կարողանան բարձր ձայնով և հստակ արտասանել «ճ» հնչյունը:

Նախապատրաստական աշխատանք  
Թռչունների մասին հանելուկների, Ղ.Աղայանի «Ծիծեռնակ» կամ Հ.Հայրապետյանի «Ծիտիկը» բանաստեղծության ընթերցում:  
Անհրաժեշտ նյութեր՝ թռչունների (ճճճուկի) նկարներ

Ընթացքը

Չրույցը սկսե՛ք «Ի՞նչ թռչուններ գիտեք» հարցով:  
Երեխաների պատասխանները ստանալուց հետո պատմե՛ք չվող և ձմեռող թռչունների մասին.

- Ինչպես մարդիկ, այնպես էլ թռչունները ձմռանը ցրտից պաշտպանվելու կարիք ունեն: Այդ պատճառով թռչունների որոշ տեսակներ, թողնելով իրենց հայրենիքը, չվում են տաք երկրներ՝ կեր հայթայթելու և ցրտից խուսափելու համար: Հիմնականում չվում են միջատակեր թռչունները, քանի որ եթե սերմնակեր թռչունները կարող են կեր գտնել, ապա միջատակերների դեպքում դա անհամար է, չէ՞ որ ձմռանը միջատ գտնելն այնքան էլ հեշտ չէ՝ Կան մակ ցրտադիմացկուն տեսակներ, որոնք ամբողջ տարին մնում են իրենց հայրենիքում: Այդպիսի թռչունները կոչվում են նստակյաց: :

Առաջարկե՛ք գուշակել հանելուկներ թռչունների մասին.

- |                                      |                             |
|--------------------------------------|-----------------------------|
| Ո՞ր թռչունն է մեզ հին ընկեր,         | Թռչում է, հավ չի.           |
| Նամակատար, նամակաբեր,                | Լողում է, նավ չի,           |
| Նա նշանն է խաղաղության,              | Երգում է այն ժամին,         |
| Բարեկամն է ողջ մարդկության: (աղավնի) | Երբ մոտ է իր մահին: (կարապ) |
- 
- |                                |                              |
|--------------------------------|------------------------------|
| Երկու սիրուն աշիկ ունի,        | Կա մի թռչուն բարձրաբոխ.      |
| Սկրատածն պոչիկ ունի,           | Կորսկտուց և գիշատիչ.         |
| Կուրծքը սպիտակ կաթի նման,      | Եվ ուժեղ է, և սրատես.        |
| Թևերը սև սաթի նման: (ծիծեռնակ) | Մագիլները՝ թրերի պես (արծիվ) |

Ամեն տարի վաղ գարունին  
Նա իր բույնն է դառնում կրկին,  
Որսում է օձ, գողտ ու մկներ,  
Բարեկամն է վաղուց նա մեր. (արագիլ)

Ի՞նչ բույնն է երկարավիզ,  
Որ չի բույն, ման է գալիս,  
Չիուց արագ վազել գիտի,  
Բնակիչն է տափաստանի: (ջայլամ)

Ուրիշի բնում ձվեր է դնում  
Եվ իր անունն է անվերջ կրկնում: (կկու)

Ո՞ր բույնն է գույնզգույն,  
Որ մեզ կրկնում է խկույն: (քուրակ)

Ամեն անգամ հանելուկը գուշակելիս ցույց տվե՛ք համապատասխան բոլորն ձևերը և առաջարկե՛ք ուշադիր դիտել ու որոշել՝ ճի՞շտ է նկարագրված այդ բույնը: Խրախուսե՛ք, որ նկարներից նայելով երեխաներն իրենք նկարագրեն բույններին՝ օգտագործելով հեղինակային քառերը և արտահայտչամիջոցները:

Օրինակ՝

- Ինչո՞ւ են ասում քարծրաթռչի:
- Ինչպիսի՞ կտուց ունի նա:
- Նրա մազիկներն ինչի՞ են նման: Ինչո՞ւ: (Ռոժվենտ սուր են և ամուր, նա մազիկները խրում է գոհի մարմնի մեջ):
- Ինչո՞ւ են ասում՝ սրտես արծիվ: (Ռոժվենտ արծիվները շատ քարծր են բույն և քարծրից տեսնում են այն ամենը, ինչ կատարվում է ներքևում):
- Ինչո՞ւ է սնվում արագիլը:
- Ինչու՞ են ասում, որ աղավնին նամակատար է. (Հին ժամանակներում ծարղիկ աղավնիների միջոցով նամակներ են ուղարկել իրար: Նրանք իրենց պահած աղավնիներին վանդակով նվիրում էին շատ հարազատ բարեկամին, որպեսզի անհրաժեշտության դեպքում նամակ ստանային նրանից: Նամակը կապել են աղավնու ոտքին և քայքայել երկինք: Աղավնիները սովորության համաձայն հետ են վերադարձել իրենց նախկին տերերի մոտ և հասցրել նաև նամակը:)

• Ո՞ր բույններն են բնակվում Հայաստանի բնաշխարհում: (Արծիվը, արագիլը, կկուն, ծիծեռնակը, աղավնին և այլն: Բացատրե՛ք, որ Հայաստանի անտառներում, լեռներում և դաշտերում ջայլամ և քուրակ չկան, քանի որ կրակը տալիս է նրանց կրակը: Այդ բույններից կարելի է հանդիպել միայն կենդանաբանական այգում:)

Հարցնե՛ք

- Ո՞ր բույններն են ձմռանը չկում տաք երկրներ:
- Որ բույններն են ձմեռում մեզ մոտ (ճնճուկը, ագռավը, կաշաղակը)

• Ինչպե՞ս են ծարղիկ օգնում ձմեռող բույններին ցրտից պաշտպանվելու և կեր հայթայթելու համար (քներ, կերատաշտակներ են պատրաստում, հացի փշրանքներ են շաղ տալիս):

Ընթերցե՛ք Հ. Հայրապետյանի «Սարյակի տունը» բանաստեղծությունը (ժամանակի մեջ տեղափոխվելու դեպքում):

Սարյակները մեր հերվան  
Շուտով մեզ մոտ պիտի գան,  
Բայց տմալը հնացած  
Պետք չի գալու էլ նրանց:  
Կարե՛ն, արի՛ միասին  
Նոր տուն շինենք մի կարգին,  
Թե չէ՛՝ տեսնի՛ տուն չկա,  
Էլ մեր բակին մոտ չի գա:

(Բացատրե՛ք «հերվան- անցյալ, նախորդ տարվա» բառի խմաստը)

Անցկացրե՛ք «Ճնճուկներ» դիդակտիկ խաղը:

Խաղի ընթացքը: Երեխաներ, ճնճուկները ձմռանը մնում են մեզ մոտ: Նրանք մյուսն են, քաղցած են մնում, այդ պատճառով էլ ծարղիկ օգնում են նրանց՝ պատրաստում կերակրանեղաններ: Սեղանների վրա դնում են հացի փշրանքներ և հատիկ: Ճնճուկները հեռվից տեսնելով՝ ճվճվալով մոտենում են, որ ուտեն: Նրանք կանչում են «ճի՛վ-ճի՛վ-ճի՛վ»: Երեխաներ, ինչպե՞ս են ճուլղում ճնճուկները (հարցնել խմբով և անհատապես):

Ընթերցել Հ.Վարդանյանի «Ճոճանակ» բանաստեղծությունը.

Ճնճուկ մայրիկը,  
Ճնճուկ ծագուկին,  
Ճիլ-ճիլ քելերից  
Ճոճանակ սարքեց:  
Ճոճեց ու ճոճեց,  
Մինչև ծագուկը  
Աչքերը փակեց  
Ու մուշ-մուշ քնեց:

Պարապմունքն ավարտե՛ք շուտասելուկի արտասանությամբ.

Ծախ ճուլղ՝  
Ճմբան ձերին,  
Ծախ ճուլղ՝ ծուռ:

Խորհուրդ դաստիարակին: Հ.Վարդանյանի «Ճոճանակ» բանաստեղծությունը կարելի է ընթերցել պարապմունքից դուրս (օրվա երկրորդ կեսին): Անհրաժեշտության դեպքում առաջադրվող հարցերից և հանելուկներից ընտրե՛ք, ձեր կարծիքով, առավել կարևորները:

ՊԱՐԱՊՄՈՒՆԷՔ 63

Թեման՝ «Արագի՛, բարո՛վ եկար»

Տեսակը՝ գրույց

Խնդիրները

• Ձևավորել պատկերացումներ արագիլի մասին, ներկայացնել նրա արտաքին տեսքը, մարմնի կառուցվածքը, ապրելու համար անհրաժեշտ պայմաններն ու օդահատկությունները, օգտակարությունը:

• Ընդլայնել և ամրապնդել երեխաների ճանաչողական գիտելիքները բույսերի զարգացման, վարքի առանձնահատկությունների, օգտակարության մասին, գիտելիքներ տալ բուսական և կենդանական աշխարհի փոխկապակցվածության մասին:

• Դաստիարակել հոգատար վերաբերմունք բույսերի հանդեպ:

• Ակտիվացնել երեխաների բառապաշարը՝ շիվեր, կափկափել, վաղ գարունք, չվել, ավետաբեր, ճերմակաթև բառերով:

• Սովորեցնել երեխաներին մտքերն արտահայտել քերականորեն ճիշտ, հասկանալի, կապակցված ձևով:

• Հնչարտաբերական ունակությունների զարգացում: Սովորեցնել լ հնչյունի ճիշտ արտասանությունը և տարբերակումը:

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ՝ «Թռչուններ» շարքից. «Արագիլն իր ձագերի հետ», խաղալիքներ, առարկաներ, որոնց անվանումներում լսվում է լ հնչյունը, Ալ. Հեքիմյանի «Արագի՛, դու բարո՛վ եկար» երգի ձայնագրությունը:

Պարապմունքի ընթացքը

Մեղմ հնչում է Ալ. Հեքիմյանի «Արագի՛, դու բարո՛վ եկար» երգը դաստիարակը երաժշտության հնչյունների ներքո առաջարկում է հանելուկ:

Ամեն տարի վաղ գարունքին

Նա իր բույնն է դառնում կրկին,

Որսում է օձ, գորտ ու մկներ,

Բարեկամն է վաղուց նա մեր(արագիլ):

Հանելուկի գուշակումից հետո դաստիարակն առաջարկում է լսել պատմություն արագիլի մասին:

Սպիտակ արագիլը երկար վզով, կարմիր երկար կտուցով և ոտքերով, սև, սպիտակ գույներով բույն է: Ծերմակաթև արագիլներին շատ հեշտ է ճանաչել իրենց բնորոշ ձայների շնորհիվ. նրանք կափկափում են իրենց կտուցներով, ասես՝ երկու հաստ փայտերով իրար են հարվածում: Արագիլներին շատ հեշտ է տեսնել բների վրա, որոնք կանգնում են մեկ ոտքի վրա և աչքի են ընկնում իրենց մեծությամբ: Նրանց հաճախ կարելի է հանդիպել խոնավ և քարն հնձված դաշտերում, որտեղ կեր են փնտրում: Սնվում են մկներով, որդերով, փոքր չավների մողեսներով և գորտերով: Շոգին իրենց կտուցներով ջուր են բերում և շաղ տալիս ձագուկների վրա: Անձրևի ժամանակ քեների տակ են առնում նրանց:

Արագիլը շիվերից և ճյուղերից մեծ, լայն բույն է հյուսում գյուղական տների տանիքներից: Մարդիկ գնահատում են այդ բարեկամությունը և նույնիսկ կարծում են, որ արագիլները երջանկություն են բերում տանտերերին: Եթե արագիլը բույն է հյուսում ձեր տանիքին, ապա դրանք զարնանը կգան և ձագեր կհանեն: Մինչև աշուն նրանք կմեծանան, կհզորանան և իրենց ծնողների հետ կչվեն հարավ:

Մարդիկ արագիլներին անվանում են գարնան ավետաբերներ: Նրանց մասին հյուսել են ստեղծագործություններ, քառյակներ, երգեր, նկարիչներն արտացոլել են իրենց կտավներում:

Հարցազրույց պատմության բովանդակության շուրջ

- Ինչի՞ մասին էր պատմությունը:

- Եկեք բնութագրենք, թե ինչպիսին է արագիլը:

- Ի՞նչ գույներ ունի արագիլը:

- Ինչպիսի՞ն է նրա վիզը:

- Ինչպիսի՞ կտուց ունի նա:

- Որտե՞ղ է հյուսում նա իր բույնը:

- Ինչի՞ց է պատրաստում նա իր բույնը:

- Ինչո՞վ է սնվում արագիլը, ինչպե՞ս է խնամում իր ձագերին:

- Աչնանը ո՞ր են չվում արագիլները:

- Ինչո՞ւ են արագիլներին մարդիկ անվանում ավետաբեր:

Բացատրել շիվեր, կափկափել, վաղ գարունք, չվել, ավետաբեր բառերը:

Ընդհանրացնել երեխաների պատասխանները, ամփոփել և առաջարկել դիդակտիկ վարժություն.

«Ի՞նչ են անում բույսերը»

Դաստիարակ: Թռչուններն իսկական բառերի փոխարեն ընդամենը ձայնային ազդանշաններ ունեն:

-Իսկ ի՞նչ են անում բույսերը:

Դաստիարակն առաջարկում է երեխաներին կրկնել իրենցից հետո.

Սագերը դողում են, ազդավները կոկոսում են, ծիտիկները ծվկում են, ծիծեռնակները ճվկում են, արագիլները կափկափում են, աղավնիները դուրդուրում են, կռունկները կռում են, հավերը կտկտացնում են, կաքավները կոթկոթացնում են:

Հնչարտաբերական ունակությունների զարգացում

Լ հնչյունը ճիշտ արտասանելու նպատակով կազմակերպել «Ես ի՞նչ տեսա» դիդակտիկ խաղը: Ընտրել խաղալիքներ, առարկաներ, որոնց անվանումների մեջ լսվում է լ հնչյունը (լուցկի, լապտեր, ուլիկ, արագիլ, բայ): Դաստիարակը պատվանդանին դնում է առարկաները և առաջարկում որոշել, թե ինչ հաջորդականությամբ են դասավորված դրանք: Ապա՝ պահանջում է շրջվել և հաջորդաբար թվել դրանք: Մյուսները նայում են և ստուգում՝ արդ՞ ոք ճիշտ է ասում: Դաստիարակը կանչվում է մեկ ուրիշին: Այս դեպքում առարկաների դասավորությունը փոխվում է:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ՝ 64-65

Թեման՝ «Ընտանի թռչուններ»

1-ին օր

Զրույց՝ բաղի մասին

Խնդիրները

• Ընդլայնել երեխաների ճանաչողական պատկերացումներն ընտանի թռչուններից բաղերի մասին, սովորեցնել տարբերել նրանց՝ ըստ իրենց տեսքի, ձայնի, կառուցվածքի, չափերի, գույնի և ապրելակերպի:

• Սովորեցնել հոգատարություն ցուցաբերել կենդանի էակների՝ թռչունների նկատմամբ:

• Երեխաների մեջ գաղափար ձևավորել բաղի օգտակարության մասին:

• Բառապաշարը հարստացնել ջրոռ, աղվամազ բառերով:

• Սովորեցնել ընտրել բառեր՝ խոսքի տարբեր մասերից:

Ուսանավորի ուսուցում՝ Ռ. Պատկանյան, «Բաղիկ»

Նպատակը: Ընկալել մայրենի լեզվի գեղեցկությունը, ստեղծագործության մեղեդայնությունը, սեր արթնացնել բանաստեղծական ժանրի հանդեպ:

Անհրաժեշտ նյութեր՝ «Բաղիկների պարը» երգի ձայնագրություն, բաղիկների նկար, նկարչական նյութեր և պարագաներ

Դաստիարակը հարցնում է երեխաներին.

-Ի՞նչն է ջրի մեջ լողում,

Փետուրները չի բրջում: /բաղ/

Երեխաների պատասխանները լսելով՝ դաստիարակն առաջարկում է լսել «Բաղիկների պարը» երաժշտության ձայնագրությունը:

Դաստիարակը հարցնում է երեխաներին՝ արդյո՞ք դուք եկավ նրանց երաժշտությունը, իսկ երեխաները սիրո՞ւմ են բաղիկներին:

Իսկ ի՞նչ գիտեն նրանք բաղերի մասին: Ցույց տալով բաղերի նկարը՝ երեխաների ուշադրությունը հրավիրում է նրանց արտաքին տեսքի վրա/ երկար, լայն, տափակ, կտուց, կարճ վիզ, կարմիր թափկներ, ամուր փետուրներ, աղվամազ, ոչ խոշոր մարմին, մոխրագույն, սպիտակ գույնի/: Իսկ երեխաները ո՞ր ծանոթ մուլտֆիլմերից գիտեն բաղիկ-հերոսների մասին:

Ընդհանրացնելով երեխաների պատասխանները՝ առաջարկում է լսել պատմություն ընտանի բաղերի մասին:

Ընտանի բաղերին գնահատում են համեղ մսի, փափուկ աղվամազի և ամուր փետուրների համար: Սեր երկրում բազմացնում են ընտանի բաղերի ցեղեր: Հայտնի են բաղերի երկու՝ սպիտակ, մոխրագույն ցեղեր:

Բաղերը ջրային կամ ինչպես ասում են՝ ջրոռ թռչուններ են: Տարվա տաք եղանակներին իրենք են կեր ճարում լճակներում, բրնձի դաշտերում: Կերա-

կրվում են ջրերում, հազվադեպ են սուզվում, ավելի շատ ձգտում են լայն կտուցով հասնել հատակին՝ ջրից դուրս բողկելով պոչը:

Հարցազրույց՝ պատմվածքի բովանդակության շուրջ

- Ո՞ր թռչունի մասին էր պատմությունը:

- Ինչպիսի՞ թռչուններ են բաղերը:

- Ինչպե՞ս են անվանում նրանց այլ կերպ:

- Ինչո՞վ են օգտակար ընտանի բաղերը:

- Ի՞նչ ձայներ են հանում բաղերը:

- Ինչպե՞ս և որտե՞ղ են իրենց կերը ճարում բաղերը:

- Ինչպիսի՞ն են բաղերի ձագուկները:

Դիդակտիկ խաղ՝ «Ո՞վ ավելի շատ բառ կասի»

Նպատակը: Անվանել կենդանիների հատկանիշներ, հատկություններ և գործողություններ՝ ուշադրություն դարձնելով ոչ միայն հերոսների արտաքին տեսքին, այլև նրանց վարքագծին և բնավորությանը: Դաստիարակը ցույց է տալիս սկյուռիկի նկարը և առաջարկում խաղալ, ասել՝ ինչպիսի՞ն է նա, ի՞նչ կարող է անել: Դրանով հանդերձ՝ հնարավորություն տալ երեխաներին՝ ընտրել բառեր՝ խոսքի տարբեր մասերից և ոչ նկարագրել ոչ միայն արտաքին, տեսքով, ըստ իրենց այլև բնորոշ գծերի. «Սկյուռիկը շիկամազ է, փափուկ, հնարամիտ, սրամիտ ու համարձակ», «Նա բարձրանում է սոճու վրա, հավաքում է սնկեր, պատրաստում չորացնելու համար, պաշարում է կոները»:

Դաստիարակը հանձնարարական է տալիս ուրիշ զագանների վերաբերյալ նույնպես. «Նապաստակը փոքրիկ է, փափուկ է, վախկոտ է, դողում է վախից», «Մուկը երկար պոչով է, հետաքրքրասեր»... և այլն:

2-րդ օր

Թեման՝ Ռ. Պատկանյան, «Բաղիկ»

Տեսակը՝ արտահայտիչ արտասանություն /ուսանավորի ուսուցում/

Նպատակը

Սովորեցնել բանաստեղծությունն արտասանել արտահայտիչ՝ հաղորդելով հեղինակի տրամադրությունը: Ճիշտ օգտագործել տրամաբանական շեշտերը, դադարները, ռիթմը: Չարգացնել արտասանական-ձայնային ապարատի կարողությունը:

Միաժամանակ տալ ճանաչողական տեղեկություններ բաղիկի մասին. ունի կարմիր թափիկ, օրոր-շոշոր ման է գալիս՝ ձագուկները չորս կողմն առած: Երեխաների ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, թե որքան հոգատար է մայր բաղիկն իր սիրելի ձագուկների նկատմամբ:

Ռ. Պատկանյան, «ԲԱԴԻԿ»

Բաղիկ, բաղիկ,

Կարմիր թափիկ,

Ո՞ր ես գնում կամազ-կամազ՝

*Չազուկների չորս կողմի առած:*

*- Ես գնում եմ ջուր գտնելու,*

*Չազուկներիս լվանալու,*

*Չազուկներս մաքուր-մաքուր,*

*Տղոց երեսն աղտ է ու մուր:*

Դաստիարակն արտահայտիչ արտասանությունից հետո կարճատև դադար է տալիս: Եվս մեկ անգամ արտասանում է ոտանավորը՝ երեխաների ուշադրությունը հրավիրելով այն բանի վրա, որ նրանք պետք է լավ լսեն, որպեսզի հիշեն այն:

Բացատրում է անհասկանալի բառերը: Կրկին արտասանությունից հետո նախ հարցնում է երեխաներին, թե ինչի՞ մասին է ստեղծագործությունը, այնուհետև վերլուծում է, թե հեղինակն ի՞նչ բառերով է բնութագրում բաղիկին/բաղիկ, բաղիկ, կարմիր թաթիկ/, ի՞նչ է հարցնում բաղիկին. ու՞ր ես գնում կամաց-կամաց, ո՞ւմ է բաղիկն իր չորս կողմն առած: Ո՞ւր է գնում բաղիկը և ինչի՞ համար:

Այսինքն՝ դաստիարակը երեխաների համար ընկալելի է դարձնում ոտանավորի մասերի տրամաբանական կապը, հարցերը ձևակերպում այնպես, որ երեխաները պատասխանեն բանաստեղծության տողերով: Կրկին արտասանությունից հետո հետևում է երեխաների կողմից ոտանավորի վերարտադրմանը: Սկզբում ոտանավորն արտասանում են այն երեխաները, որոնք լավ հիշողություն ունեն, կամ ցանկություն են հայտնել արտասանելու:

Քանի որ բոլոր երեխաներն արագ չեն կարողանում հիշել տեքստը, դաստիարակն օգնում է երեխաներին, հուշում բառերը, ընդգծում հնչերանգը, հիշեցնում խոսքի տեմպի, ձայնի ուժգնությամբ օգնում է երեխաներին դժվար տեղերում: Ավարտին դաստիարակը ևս մեկ անգամ արտասանում է ոտանավորը և առաջարկում նկարել այդ թեմայով:

**Պարապմունքից դուրս՝** հաջորդ օրերին դաստիարակն անդրադառնում է նյութի ամրակայմանը, կրկնությանը, բայց այս անգամ գնահատում է նաև արտասանության որակն ու արտահայտչականությունը:

**Դիդակտիկ վարժություն «Թռչնանոցում»**

Ամրապնդել երեխաների գիտելիքներն ընտանի թռչունների վերաբերյալ: Սովորեցնել ճիշտ արտաբերել նրանց կանչերը, ձայնային ազդանշանները և հնչյունները.

*Մեր բաղիկը առավոտ շուտ՝ դա՛ - դա՛ - դա՛,*

*Իսկ սագերը ջրհորի մոտ՝ դա՛ - դա՛ - դա՛,*

*Հնդկահավը բակում ուրախ՝ կո՛ - կո՛ - կո՛,*

*Իսկ հավերը կչկչում են կո՛ - կո՛ - կո՛:*

Երեխաները դաստիարակից հետո կրկնում են բաղիկի, սագերի, հնդկահավի, հավերի կանչերը՝ անհատապես և խմբով: Կարելի է վարժությունը կատարել ենթախմբերով:

**ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ 66-67**

**Թեման՝ «Ընտանի թռչուններ»**

**Տեսակը՝** գրույց, նկարի պատմում

**Նպատակը**

Հարստացնել ընտանի թռչունների վերաբերյալ երեխաների գիտելիքները: Ջարգացնել՝ ամբողջական նախադասություններով հարցերին պատասխանելու, քերականորեն ճիշտ նախադասություններով՝ բառերը դեմքով, բովով, ժամանակով համաձայնեցնելով միտքն արտաբերելու կարողությունը, հարստացնել բառապաշարը *ընտանի, թռչնամիս, շալպտուրիկ /գույնզգույն, պուտ-պուտ, խատուտիկ, վառվռում/* բառերով: Սովորեցնել ուշադիր դիտել, հասկանալ և վերարտադրել նկարի բովանդակությունը, խոսքում ճիշտ կիրառել գոյականի հոգնակի թիվը:

**Նախապատրաստական աշխատանք**

Հանս Բրիտիան Անդերսենի «Անճոռնի ճուտիկը» հեքիաթի ընթերցում: Անհրաժեշտ նյութեր՝ ընտանի թռչունների (հավ, սագ, բադ, հնդկահավ), ցանկալի է թռչնանոցի (հավանոցի) նկարներ

**Ընթացքը**

**1-ին օր**

Երեխաների ուշադրությունը հրավիրել՝ ընտանի թռչունների նկարներին, բացատրել, որ դրանք բոլորն էլ ընտանի թռչուններ են: Հարցրե՛ք.

- Ինչու՞ են կոչվում ընտանի թռչուններ: (Ընտանի են կոչվում, որովհետև մարդիկ ընտելացրել և պահում են այդ թռչուններին:)
- Ի՞նչ օգուտ են տալիս ընտանի թռչունները մարդկանց: (Տալիս են ձու, փետուր, միս:)
- Ի՞նչ համեղ ուտեստներ են պատրաստում ձվով: (Զվածեղ, աղցաններ, խմորեղեն):
- Ի՞նչ համեղ ուտեստներ են պատրաստում թռչնամսից: (Ապուրներ, խորոված, աղցան...)
- Ի՞նչ են պատրաստում թռչունների փետուրներից: (Փափուկ բարձեր, վերմակներ):

Առաջարկե՛ք ուշադիր նայել թռչունների նկարներին և նկարագրել նրանց արտաքին տեսքը.

- Ի՞նչ տեսք ունի հավիկը, իսկ աքլորը: (Հավիկն ունի կարմիր, մի քիչ կախ ընկած կատար, փոքրիկ կուռուց, երկու ոտք, փոքրիկ ճանկեր: Աքլորը մույնպես ունի կատար՝ և՛ գլխին, և՛ վզին: Նա չափերով ավելի մեծ է հավից: Աքլորը հպարտ-հպարտ քայլում է հավանոցում և հսկում իր հավերին:)
- Ի՞նչ ձայներ են հանում աքլորը և հավը: (Հավը կչկչում է, իսկ աքլորը ծուղ-բու-դու է կանչում:)

- Ի՞նչ եք կարծում, արլորը ձու ածու՞մ է:
  - Ի՞նչ տեսք ունի բաղիկը: (Բաղիկն ունի տափակ, լայն կտուց, կարմիր տոտիկներ, նրա ճանկերը հաստ թաղանթով կապած են իրար, դրանք լողակներ են: Բաղիկները շատ են սիրում լողալ:)
  - Ի՞նչ տեսք ունի սագը: (Սագը տեսքով նման է բաղին, բայց մի քիչ մեծ է բաղից: Սագը նույնպես լողակներ ունի և սիրում է լողալ: Սագը մարդուն փետուր է տալիս: Սագի փետուրից պատրաստված բարձերը շատ փափուկ են և հարմար:)
  - Ի՞նչ տեսք ունի հնկահավը: (Նա չափերով ավելի մեծ է հավից ու բաղից: Ունի մեծ կատար և վզից կախ ընկած երկար, կարմիր կատարիկներ: Նրա կուրծքը և փորը դուրս ցցված են, դրա համար էլ հաճախ ասում են փքված հնկահավ: Մարդիկ սիրում են Նոր տարվա տոներին հնդկահավ խորովել և դնել սեղանին:)
- Առաջարկե՛ք հանելուկներ ընտանի թռչունների մասին.

*Չվից ելնում – քըչփչան են,  
Չու են ածում – կըչկչան են: (հավ)*

*Ջուրը մտավ շորերով,  
Ջրից ելավ շորերով,  
Չոր էր ջուրը մտնելիս,  
Չոր էր ջրից ելնելիս: (Սագ, բաղ)*

Վերջում ընթերցե՛ք Ն. Բաղդասարյանի «Հավիկը» բանաստեղծությունը.

### Հավիկը

*Չվիկ ածեց հավիկը,  
Չալպտուրիկ լավիկը,  
Ինչ հավիկ է՝ ամպի չափ,  
Ինչ ձվիկ է՝ տանձի չափ,  
Բնում ձվին չկար տեղ,  
Տատիկը ձուն հենց գտավ,  
Իսկույն արեց ձվածեղ:*

Պարապմունքի առաջին մասն ամփոփեք՝ *ի՞նչ նոր բան իմացար ընտանի թռչունների մասին* հարցով:

### 2-րդ օր

Հաջորդ պարապմունքն սկսել «Արլորի դասը» բանաստեղծության ընթերցումով և երեխաներին առաջարկել բվարկել իրենց ծանոթ ընտանի թռչունները:

### Արլորի դասը (հեղ. Գ. Գաբրիելյան)

*Արլոր, արլոր,  
Արլորիկ,  
Մեծակատար  
Ցմփորիկ:  
Դաս ես սերտում  
Ողջ օրը,  
Սակայն հիշում մի տողը.  
- Ծո՛ւ-դրո՛ւ-դո՛ւ-ո՛ւ:*

(Վերջին տողը խմբով են արտասանում:)

Հարցրե՛ք, թե ինչ են ասում հավի, սագի, բաղի, հնդկահավի ձագուկներին (քլորին ասում են **ճուտ** (օրինակ՝ հավի ճուտ, սագի ճուտ, բաղի ճուտ, ճնճղուկի ճուտ, արծվի ճուտ)):

Հետո երեխաների ուշադրությունը հրավիրե՛ք թռչնանոցի նկարին և առաջարկե՛ք ուշադիր դիտել այն և պատմել, թե ինչ են տեսնում նկարում: Մի երկու րոպե տրամադրեք նկարը ուշադիր դիտելու համար, այնուհետև հարցերի օգնությամբ խրախուսե՛ք վերարտադրել նկարի բովանդակությունը:

Հարցեր.

- Ի՞նչ է պատկերված նկարում:
- Ի՞նչ են անում հավերը: (Զուջուջ են անում, կուտ են ուտում և ...)
- Ի՞նչ է անում արլորը: (Ծուղրուղու է կանչում);
- Ինչպե՞ս է քայլում հնդկահավը: (Փքված, հպարտ)
- Քանի՞ ճուտ կա հավանոցում:
- Ի՞նչ են անում ճուտերը:
- Ինչո՞վ են զբաղված բաղիկները և այլն:
- Քանի՞ արլոր և քանի՞ հավ կա հավանոցում:

Երեխաների ուշադրությունը հրավիրե՛ք այն ամենին, ինչ կա նկարում, և խրախուսե՛ք, որ նրանք երևակայությամբ (միայնակ չկրկնելով) հորինեն ինչ-որ բաներ, որ նկարում պատկերված չի: Սկզբում հարցրե՛ք ցանկացողներին, հետո՝ մյուսներին:

## ՊԱՐԱՊՄՈՒՆԸ 68

Հ. ՄԻՏՈՅԱՆ, Լ. ՍՄԻՍՅԱՆ, Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

## Ֆիզկուլտ-դադար

Պարապմունքն 2 բույս ընդմիջե՛ք՝ «Ի՞նչ ձայներ են արձակում բույսերը հավանոցում» խաղ-զվարճանքով: *Երեխաները ձեռքերը (թևերը) քափա-հարելով բռնկոտում են խմբասենյակում՝ տղաները աքաղաղների նման ծուղ-րուծու են կանչում, աղջիկները հավիկների նման կչկչում են:*

Խորհուրդ դաստիարակին: Խրախուսե՛ք և օգնե՛ք, որ երեխաները ամբողջական նախադասություններով պատասխանեն հարցերին, ցանկության դեպքում, թեմայի հետ կապված փոքրիկ պատմություններ ներկայացնեն իրենց կյանքից: Օրինակ՝ մեկը կարող է պատմել, որ տատիկը հավեր է պահում և, երբ ինքը գնում է տատիկին հյուր (գյուղ), միասին մտնում են հավանոց, վերցնում հավի ածած թարմ ձու, և տատիկը ձվածեղ է պատրաստում իր համայր: Մեկ ուրիշը կարող է պատմել, թե Նոր տարվա տոներին ինչպես է մայրիկը հնդկահավ տապակում և այլն:

Պարապմունքի ավարտին կամ օրվա ընթացքում կազմակերպե՛ք «Սագեր-սագեր» շարժախաղը:

Թեման՝ «Ծաղիկներ»

Տեսակը՝ ինտեգրված պարապմունք

Նպատակը՝ Ընդլայնել երեխաների պատկերացումները ծաղիկների մասին: Ձարգացնել կապակցված խոսքը, սովորեցնել լսել և զգալ բանաստեղծության գեղեցկությունը, պատկերավորման միջոցները: Բառապաշարը հարստացնել *ճեղքել* բառով: Վարժեցնել ճիշտ արտաբերել «չ» հնչյունը:

Նախապատրաստական աշխատանք

Ջրոսանք պարտեզում, Ա. Մովսիսյանի «Ծաղիկների քաղտիին» ստեղծագործության ընթերցում:

Անհրաժեշտ նյութեր՝ ծաղիկների նկարներ կամ բնական ծաղիկներ  
Ընթացքը

Պարապմունքը սկսել հանելուկով.

հեղ.՝ Վ. Հովսեփյան

*Չյան սպիտակ օրորոցից,*

*Ինչպես մանուկն իր մոր ծոցից*

*Որ ծաղիկն է մեզ հյուր գալիս,*

*Գարնան գալը իմաց տալիս: (ձնծաղիկ)*

Աք. Խնկոյան

*Խաղողի նման ճութերս եմ կախում,*

*Բուրում եմ անուշ, մեղմիկ ծիծաղում,*

*Զնքուշ ծաղիկ եմ, բայց ծառի նման,*

*Իսկ իմ անունն է կապույտ ... (յասաման)*

Երեխաների ուշադրությունը հրավիրե՛ք ծաղկամանի մեջ դրված ծաղիկներին կամ դրանց նկարներին և հարցրե՛ք.

• Ի՞նչ ծաղիկներ են սրանք (վարդ, կակաչ, մեխակ, նարգիզ, մանուշակ, ձնծաղիկ):

• Ի՞նչ տեսք, գույն ունեն այս ծաղիկները: (օգնեք նկարագրել)

• Ի՞նչ բույր ունեն (եթե ծաղիկները բնական են, առաջարկեք մոտենալ, հոտոտել և նկարագրել հոտը): (Նուրբ, դուրեկան, հաճելի, անուշ)

• Որտե՞ղ են աճում այս ծաղիկները: (Վարդը, մեխակը, նարգիզը աճում են պարտեզում, իսկ մանուշակը, ձնծաղիկը, կակաչը՝ դաշտերում, սարերի փեշերին կամ լեռների լանջերին:)

• Ո՞վ ինչ ծաղիկ է սիրում:

Ասե՛ք, որ ընթերցելու եք մի գեղեցիկ բանաստեղծություն ձեռնադրված մասին, որը գրել է Հայրապետ Հայրապետյանը: Առաջարկե՛ք ուշադիր լսել այն: Մեկ անգամ սկզբից մինչև վերջ արտահայտիչ ընթերցե՛ք բանաստեղծությունը: Հարցրե՛ք դուր եկա՞վ նրանց, ի՞նչ զգացին: Հետո մեկ անգամ ևս ընթերցե՛ք դադարներով՝ երեխաների ուշադրությունը հրավիրելով արտահայտչամիջոցներին: Օրինակ՝ *վերմակ առել, քուն էր մտել մի ծաղիկ* (բացատրե՛ք, որ ձյան շերտն ասես վերմակ լինի ձեռնադրված համար, քանի որ ձյան տակ, հողի մեջ գրտից պաշտպանվում է ձեռնադրված սերմը՝ մինչ արևը կջերմացնի հողը, ծաղիկի պերմը ծիլ կտա, կաճի, և դուրս կգա մի գեղեցիկ ծաղիկ: Մեջբերե՛ք. *Ձյունի ծոցում նա չէր մրսում, քունն էր հանգիստ, անուշիկ: Երբ արևը իր բարևը տվեց սառած աշխարհին. «Ելե՛ք, ելե՛ք, սիրու՛ն բալեք», ձայն տվեց նա բողբոջին: Եարունակե՛ք՝ քանի որ, ձեռնադրված ձյունը դեռ չհալված արևի առաջին տաք շողերի հետ դուրս է գալիս ձյան տակից, այն անվանում են ձեռնադրված կամ գարնան առաջին ծաղիկ: Ձյունը ձեռքեց, ելավ, կանգնեց, բողբոջը շուտ մի ծաղիկ, մարդիկ տեսան, ուրախացան, անվանեցին ձեռնադրված:*)

Մեկ անգամ էլ արտահայտիչ ընթերցե՛ք և առաջարկե՛ք ուշադիր լսել, թե ինչ գեղեցիկ է հեղինակը նկարագրում ձեռնադրված քննել ձյան ծոցում, արևի տաքացնելը և ձեռնադրված դուրս գալը: Հարցրե՛ք օգնե՛ք, որ երեխաները հիշեն այդ անենի նկարագրությունը և վերարտադրեն:

- Ինչպե՞ս է հեղինակը նկարագրում արևի ջերմացնելը (*Երբ արևը իր բարևը տվեց սառած աշխարհին...*)

- Ո՞ր տողերից է երևում, որ ձյան տակ ծաղիկը չէր մրսում և սպասում էր արևի տաքացնելուն (*Ձյունի ծոցում նա չէր մրսում, քունն էր հանգիստ, անուշիկ...*)

*Պարապմունքն ավարտե՛ք շուտասելուկով.*

*Մեր տան առաջ՝  
Կանաչ կակաչ,  
Կանաչ կակաչ,  
Մեր տան առաջ:*

Պարապմունքն ամփոփե՛ք «Ո՞վ ինչ ծաղիկ է սիրում» հարցով: Երեխաների պատասխանները ստանալուց հետո, ասե՛ք, որ իրենք նկարելու են իրենց սիրած ծաղիկները և նվիրեն մայրիկներին, քույրիկներին կամ ընկերներին:

Կերպարվեստի պարապմունքին անդրադարձե՛ք «Ծաղիկներ» թեմային: Հարցրե՛ք ծաղիկներ նկարելու համար ինչ գույներ են պետք: Հետո մեղմ երաժշտության տակ առաջարկե՛ք նկարել ծաղիկներ: (Չուզահեռաբար կարող եք արտահայտիչ ընթերցել «Ձեռնադրված» բանաստեղծությունը:) Վերջում նկարները փոփոխե՛ք պատին, որպեսզի երեխաները մոտենան, դիտեն և նկարագրեն իրենց նկարած ծաղիկները: Օրվա վերջում կարող են վերցնել իրենց նկարները և նվիրել՝ ում ցանկանան:

Ձեռնադրված (Հ. Հայրապետյան)

<i>Ամբողջ ձմեռ</i>	<i>Երբ արևը</i>
<i>Վերմակ առել,</i>	<i>Իր բարևը</i>
<i>Քուն էր մտել մի ծաղիկ,</i>	<i>Տվեց սառնեց աշխարհին՝</i>
<i>Ձյունի ծոցում</i>	<i>«Ելե՛ք, ելե՛ք,</i>
<i>Նա չէր մրսում,</i>	<i>Միրում բալեք»,</i>
<i>Քունն էր հանգիստ, անուշիկ:</i>	<i>Ձայն տվեց նա բողբոջին:</i>

*Ձյունը ձեռքեց,  
Ելավ, կանգնեց  
Բողբոջը շուտ մի ծաղիկ,  
Մարդիկ տեսան,  
Ուրախացան,  
Անվանեցին ձեռնադրված:*

Խորհուրդ դաստիարակին: Պարապմունքն ընդմիջե՛ք ֆիզկուլտ-դարձով, եթե զգաք, որ երեխաները հոգնել են (3 րոպե): Առաջարկե՛ք ձեռք հետ միասին արտասանել «Ծափիկ-ծափիկ, ծափ անեն» քառատողը և կատարել համապատասխան գործողություններ (յուրաքանչյուրն իր «հավաքած ծաղիկները թող նվիրի իր կողքին կանգնած երեխային»): Ժամանակի խնդիր ունենալու դեպքում խթանման փուլում առաջադրված հարցերից ընտրե՛ք մեկ կամ երկու հարց:

Ծափիկ, ծափիկ, ծափ անեն  
(ֆիզկուլտ-դադարի համար՝ ուրախ խաղիկ)

*Ծափիկ, ծափիկ, ծափ անեն,  
Իջնե՛մ բակում խաղ անեն,  
Մի փունջ ծաղիկ հավաքե՛մ,  
Բերե՛մ և քեզ նվիրե՛մ:*

ՊԱՐԱՊՄՈՒՆԸՆԵՐ 69-70

Թեման՝ «Ծաղիկներ»

Տեսակը՝ Պատմվածքի ընթերցում և վերապատմում (հատվածաբար)

Նպատակը: Սովորեցնել լսել և ընկալել գեղարվեստական ստեղծագործության բովանդակությունը, պատասխանել բովանդակությունը վերահանող հարցերին և մեծի օգնությամբ վերապատմել այն: Ջարգացնել կապակցված խոսքը, հարստացնել բառապաշարը *ՀՀնջալ, փունջ, քնքուշ* բառերով: Սեր և հոգատար վերաբերմունք դաստիարակել բնության հանդեպ:

Նախապատրաստական աշխատանք

Ջրոսանք այգում կամ պարտեզում, փոքրիկ գրույց ծաղիկների խնամքի մասին: Գ. Մովսիսյանի «Սև խալիկը» պատմվածքի ընթերցում:

Անհրաժեշտ նյութեր

Մանուշակի նկար կամ բնական մանուշակ:

Ընթացքը

1-ին օր  
Պարապմունքը սկսեք Գ. Դողդիսյանի «Մանուշակ» բանաստեղծությամբ՝ այն վերածելով հանելուկի.

*Կապույտ գլխով, կանաչ ոտքով,  
Ես ծաղիկ եմ անուշ հոտով,  
Թեև ոտքս փոքրիկ է, ցած,  
Արոտներում միշտ բաք կացած,  
Բայց իմ փունջը իբրև մի գարդ  
Տեսնում է միշտ ամեն մի մարդ:  
Ես եմ սիրում գարնան գուշակ,  
Իմ անունն է ... (մանուշակ):*

Հետո առաջարկեք լսել մի հեքիաթային պատմություն մանուշակի մասին: Ընթերցե՛ք «Մանուշակ» պատմվածքը: (Այն բաժանեք երեք հատվածի և ընթերցեք հատվածաբար, ամեն անգամ խոսքն ընդհատեք այնպիսի տեղում, որ երեխաները հետաքրքրությամբ սպասեն շարունակությանը՝ իմանալու համար, թե ինչ եղավ հետո:)

Մանուշակը (հատվածաբար)

(հեղ.՝ Գ. Մովսիսյան)

... Վարուց, շատ փաղուց ապրում էր մի թագավոր: Այդ թագավորն ուներ մի փոքրիկ աղջիկ՝ սիրուն-սիրուն, կապույտ-կապույտ աչիկներով: Նրան շատ էր սպգում կապույտ զգեստը: Ոչ ոք նրան չէր տեսել ուրիշ զգեստով: Այդ աղջկա անունը Մանուշակ էր:

Թագավորի պալատում ապրում էր մի չար կին: Նա բոլորովին չէր սիրում երեխաներին, Մանուշակին նույնիսկ ատում էր, որովհետև շատ սիրում էր Մանուշակը և հետագայում պետք է դառնար թագուհի:

Օրերից մի օր թագավորը մահանում է, և Մանուշակը մնում է որբ:

Բոլորը սիրում են նրան և անվանում փոքրիկ թագուհի: Իսկ չար պալատականը մտածում էր. «Ո՞նց թե, Մանուշակը լինի՞ թագուհի...»: Եվ նա որոշում է սպանել Մանուշակին:

Այստեղ դադարեցրե՛ք ընթերցումը և առաջարկե՛ք ոտքերը դրփել, ձեռքերը թափահարել, որպեսզի չար պալատականը վախենա և չմոտենա Մանուշակին:

Շարունակե՛ք

... Մի օր Մանուշակը պարտեզում ծաղիկ էր քաղում և խաղում էր քիթոնների հետ: Հանկարծ նա տեսնում է ծառերի հետևում թաքնված կնոջը: Մանուշակը վախենում է.

- Փախի՛ր, փախի՛ր, սիրուն Մանուշակ,- ՀՀնջում են ծաղիկներն ու խոտերը:

Մանուշակը փախչում է: Ոտքերը շուտով հոգնում են, և նստելով քարին՝ լաց է լինում:

- Ծա՛ռ դարձի՛ր, սիրուն Մանուշակ,- ՀՀնջում են ծառերը:
- Ինձ կկտրի՛,- լաց լինելով պատասխանում է Մանուշակը:
- Չու՛ր դարձի՛ր,- վշշում է փոքրիկ գետակը:
- Ինձ կխամի,- արցունքների միջից խոսում է Մանուշակը:
- Ծաղի՛կ դարձի՛ր, փոքրիկ Մանուշակ, թաքնվի՛ր քարերի արանքում,- ՀՀնջում են ծաղիկները:

Մանուշակը, տեսնելով վազող կնոջը, արագ պազում է քարի հետևում ու ...

Ընթերցանությունը դադարեցնելուց հետո առաջարկե՛ք քանու պես սուրալ (ու՛-ու՛-ու՛...) և ծառերի նման ձեռքերը վեր պարզած ճոճվել, որպեսզի չար պալատականը վախենա ու չմոտենա Մանուշակին մինչև նորից կանդրադառնաք հեքիաթին:

Հարց.

- Ուզո՞ւմ եք իմանալ, թե ինչ եղավ:  
Շարունակե՛ք  
Երբ պալատականը կատաղած ու քրտնած մոտենում է՝ մնում է ապշած.  
Մանուշակը չկար...

- Ծառե՛ր, ու՞ր է Մանուշակը,- հարցնում է նա:
- Ծառերը լուռ օրորում են գլուխները:
- Առվա՛կ, ու՞ր է Մանուշակը...
- Իսկ առվակը հոսում է քչքչալով, իբրև չի էլ լսում նրա հարցը...

- Ծաղիկներ՛ր, ու՞ր է Մանուշակը...

Ծաղիկները գլխիկները շրջում են դեպի արևը: Չեն էլ ուզում տեսնել չար ու տղեղ կնոջը:

Պալատական կինը բարկությունից ուռըը խփում է գետնին, և սիրտը պայքրում է...

Մարդիկ սկսում են փնտրել Մանուշակին՝ իրենց փոքրիկ բազուկուն: Հանկարծ Մանուշակի դայակը, կռանալով քարերի վրա, ձայն է տալիս.

- Ահա՛ Մանուշակը,- և քարերի միջից դուրս է բերում քնքուշ, կապույտ մի ծաղիկ, որի բերքի վրա դողում էր արտասուքի կաթիլը:

Հարցրե՛ք.

- Հեքիաթը դուր եկա՞վ:

- Ո՞վ էր Մանուշակը:

- Ինչու՞ պալատական կինը չէր սիրում Մանուշակին:

- Ինչե՞րն են օգնում Մանուշակին քարնվել չար կնոջից:

(Հիշեցրե՛ք՝ ընթերցելով հեքիաթի համապատասխան տողերը:)

Պարապմունքն ամփոփեք «Ինչը՞ ձեզ դուր եկավ այս պատմվածքի մեջ» հարցով:

2-րդ օր

Հաջորդ պարապմունքը ցանկալի է սկսել շուտասելուկով.

Մանուշակը աճեցրել է մանուշակներ պարտեզում,  
մառամեցին մանուշակները Մանուշակի ձեռքերում:

Անդրադարձե՛ք Մանուշակի մասին պատմող գեղեցիկ պատմվածքին.

- Ի՞նչ գեղեցիկ պատմություն լսեցիք անցյալ անգամ:

Առաջարկե՛ք երեխաներին վերապատմել հեքիաթի վերջին հատվածը:

Սկզբում արտահայտիչ ընթերցե՛ք (վերջին հատվածը), հարցերի միջոցով վեր հանեք ընթերցված հատվածի բովանդակությունը, հետո մեկ անգամ ևս ընթերցե՛ք, մի երկու րոպե ժամանակ տվե՛ք և առաջարկե՛ք պատմել:

Հարցեր.

- Որտե՞ղ բարձրաց Մանուշակը:

- Ու՞մ է Մանուշակից հարցուփորձ անում չար կինը:

- Ի՞նչ են պատասխանում ծառերը, առվակը, ծաղիկները:

- Ի՞նչ է լինում չար կնոջ հետ:

- Որտե՞ղ է գտնում դայակը Մանուշակին:

- Ի՞նչ էր դարձել Մանուշակը:

Պարապմունքն ամփոփե՛ք «Ինչու՞ չի կարելի ծաղիկները պոկել մայր հո-  
վից» հարցով:

ՊԱՐԱՊՄՈՒՆԷՔ 71

Թե՛ման՝ «Իմ մայրիկն ամենալավն է»

Տեսակը՝ ինտեգրված պարապմունք

Նպատակները՝

Ուսուցողական

Երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնել «Մայրության և գեղեց-  
կության» տոնի նկատմամբ:

Սովորեցնել ինքնուրույն և հնարավորինս գրագետ արտահայտել մտքերը:

Դաստիարակչական

Դաստիարակել սիրալիր և հարգալից վերաբերմունք մայրիկների, քույ-  
րիկների, տատիկների հանդեպ: Տղաների մեջ արմատավորել աղջիկների  
նկատմամբ դրսևտրվող ասպետականության սաղմեր:

Չարգացնող

Չարգացնել երեխաների ստեղծագործական ունակությունները, գեղար-  
վեստական ճաշակը, հումորի զգացումը, ազատ, անկաշկանդ հաղորդակց-  
վելու հմնությունը:

Անհրաժեշտ նյութեր և պարագաներ՝ զարմանալին տեսարաններ  
պատկերող նկարներ, նկարչական բոլբոլ, ջրաներկ, գուաշ, մրգեր, բանջա-  
րեղեն, աղցան պատրաստելու համար անհրաժեշտ պարագաներ:

Նախապատրաստական մաս

Նախապես սովորել երգեր և ոտանավորներ՝ նվիրված մայրիկներին ու  
տատիկներին: Պարբերաբար գրուցել աղջիկների հետ իրենց մայրիկների  
նախասիրությունների ու ցանկությունների մասին: Տալ տեղեկություններ մայ-  
րիկներին նվիրված տոների մասին /Մարտի 8, Ապրիլի 7/:

Պարապմունքի ընթացքը

Դաստիարակը պարապմունքը սկսում է գեղեցիկ ոտանավորով.

Մայրիկս կարծես ծաղիկ է սիրում,

Վա՛րդ է, կակա՛շ է, չէ՛, մանուշա՛կ է:

Մայրիկս լու՛յս է՝ արևից էլ տաք,

Ինձ համար հու՛յս է, ինձ համար փարո՛ս.

Շատ եմ սիրում քեզ, իմ մայրի կ քնքուշ:

Դաստիարակ - Երեխաներ, արդեն գարուն է: Բոլորն էլ անչափ շատ են  
սիրում տարվա այս եղանակը, որովհետև շուրջն ամեն ինչ փոխվում է. գար-  
թոնք է ապրում բնությունը, ծաղկում են ծաղիկները, ծառերը, տաք երկրներից  
վերադառնում են թռչունները, առվակն ուրախ քչքչում է, ամենուր խինդ է ու  
ծիծաղ: Գարունն առանձնահատուկ է նաև նրանով, որ տարվա այս եղանա-  
կին ենք տոնում մեզ համար ամենաթանկ և գեղեցիկ տոներից մեկը՝ Մայրիկ-  
ների տոնը: Այսօր մենք կգրուցենք զարմանալին այս գեղեցիկ տոնի մասին և  
պարապմունքը կնվիրենք մեր շատ սիրելի մայրիկներին:

- Երեխաներ, իսկ դուք մի՞շտ եք լավ վերաբերվում ձեր մայրերին, մի՞շտ եք լսում, օգնում նրանց:

Տղաներն այսօր առավել ակտիվ պետք է լինեն, քանի որ մայրիկների հետ միասին մենք նշում ենք նաև մեր շատ սիրելի տատիկների, քույրիկների և մեր խմբի աղջիկների տոնը:

- Ինչպե՞ս եք դուք շնորհավորում:
- Վերիշնչել մայրիկներին նվիրված ոտանավորներ:

Դաստիարակը պատմում է երեխաներին, որ մայրերը հազար ու մի գործ են կատարում, և խնդրում է երեխաներին պատմել՝ թե ինչ են կարողանում անել իրենց մայրիկները:

**Մատիկների վարժանք**

*Մայրիկ, մայրիկ, /երկու ձեռքերի ակերը սեղմել իրար և ճկույթներով հարվածել/*

*-Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, /իրար հարվածել երկու ցուցամատերը/*

*Հյուր է գալիս. /իրար հարվածել ճկույթները/*

*-Այո՞, ի՞նչ լավ է: /իրար հարվածել ցուցամատերը/*

*-Բարև՝ ձեզ... /ցուցամատերը և ճկույթները հպել իրար, իսկ մնացած մատիկներով ազատ շարժումներ կատարել/*

Դաստիարակ- Իսկ դուք երբևէ գայրացրել կամ նեղացրե՞լ եք ձեր մայրիկին:

- Ինչպե՞ս եք օգնել, երբ նա հիվանդ է եղել:
- Ուզո՞ւմ եք, որ մայրիկները միշտ առողջ և ուրախ լինեն:
- Իսկ ի՞նչ է պետք անել դրա համար: /Պատասխաններ/

Դիդակտիկ վարժություն՝ «Իմ մայրիկն ամենալավն է, որովհետև.....»:  
*Երեխաները պետք է անավարտ նախադասությանն ավելացնեն իրենց մայրիկին բնութագրող մեկ միտք /նա շատ բարի է, կամ քնքուշ է, ժպտերես է, աշխատասեր է, նա շատ գեղեցիկ է.../:*

Դաստիարակ - Երեխաներ, մենք այսօր շատ հետաքրքիր աշխատանք ենք կատարելու և այդ կերպ կշնորհավորենք ու կուրախացնենք մեր մայրիկներին:

**Աշխատանք արվեստի և խոհարարության կենտրոններում**

Արվեստի կենտրոնում աշխատող երեխաներն առանձին նկարչական քյութերի վրա պատկերում են գարնանային ծաղիկներ, որոնք վերջում դաստիարակն ամրացնում է մեծ պաստառի վրա՝ «Շնորհավոր Ձեր տոնը, սիրելի՛ մայրիկներ» խորագրով:

Տղաներից մի քանիսը տարբեր մրգերից կամ բանջարեղենից պատրաստում են համեղ աղցան, հյուրասիրում խմբի աղջիկներին և շնորհավորում նրանց:

- Սիրելի՛ աղջիկներ, շնորհավորում ենք ձեր տոնը: Ցանկանում ենք, որ դուք լինեք միշտ առողջ, գեղեցիկ և գարնան արևի պես պայծառ ու ժպտերես:

*Մայրական սերն անսահման է:*

**ՊԱՐԱՊՄՈՒՆԷ 72**

Թեման՝ Ս. Մուրադյան, «Նվեր մայրիկիս»

Տեսակը՝ ոտանավորի ուսուցում

Նպատակը՝ Սովորեցնել բանաստեղծությունն արտասանել արտահայտիչ՝ հաղորդելով հեղինակի տրամադրությունը: Ճիշտ օգտագործել տրամաբանական շեշտերը, դադարները, ռիթմը: Ամրապնդել ու զարգացնել արտասանական-ձայնային ապարատը, ձևավորել ձայնի ուժը և բարձրությունը կառավարելու կարողությունը:

Միաժամանակ դաստիարակել սեր և հոգատարություն ամենամտերիմ և հարազատ մարդու՝ մայրիկի նկատմամբ: Չարգացնել մտերիմ մարդկանց հանդեպ հոգ տանելու ունակություն:

**Խնդիրները**

Երեխաներին սովորեցնել մտապահել տեքստի բառերը և անգիր արտասանել ամբողջ ստեղծագործությունը,

Ապահովել խոսքի համապատասխան արտահայտչականություն:

**Նախնական աշխատանք**

*Նախապես երեխաների հետ կարելի է կազմակերպել փոքրիկ գրույց մայրիկների մասին և ընթերցել որևէ կարճ պատմություն:*

*Օրինակ.*

*Ինչը օգնեց մայրիկին /Մարգարյան Լ./*

*Մայրիկն աշխատանքից շուտ տուն եկավ:*

*- Մայրիկ, վա՞ր ես գգում, - հարցրեց Աստղիկը:*

*- Այո՛, աղջիկս, գլուխս ցավում է:*

*Աղջկա շուրթերը հպվեցին մայրիկի ճակատին, այտերին:*

*- Ո՛չ, ջերմությունդ այնքան էլ բարձր չէ, շուտով կլավանաս:*

*Աստղիկը զգույշ քայլերով շտապեց իր սենյակը: Այնտեղ կողք-կողքի շարված էին խաղալիքները:*

*- Լոնցե՛ք, չաղմկե՛ք, մայրիկն այսօր լավ չի գգում:*

*Մայրիկը լսեց և շատ հուզվեց աղջկա խոսքերից:*

*- Աղջիկս, արդեն ամեն ինչ անցավ, դու գնա՛ խաղալու:*

*Աստղիկը շատ ուրախ էր...*

**Պարապմունքի ընթացքը**

**Խթանման փուլ**

Դաստիարակը պարապմունքը սկսում է նախորդ օրը /կամ առավոտյան/ երեխաների համար ընթերցած «Ինչը օգնեց մայրիկին» ստեղծագործության շուրջը փոքրիկ հարցազրույց կազմակերպելով:

*- Կարո՞ղ ես ասել, թե ինչն այդքան արագ օգնեց մայրիկին:*

*- Իսկ դու ուշադիր և հոգատա՞յր ես մայրիկիդ ու հայրիկիդ նկատմամբ:*

*Ինչպե՞ս...*

**Իմաստի ընկալման փուլ**

Դաստիարակը նշում է, որ այսօր սովորելու են մի շատ գեղեցիկ բանաստեղծություն մայրիկների մասին՝ Ս. Մուրադյանի «Նվեր մայրիկիս» բանաստեղծությունը.

<i>Մայրերի տոնն է այսօր,</i>	<i>Բայց, ո՛չ, դաշտ են գնում ես</i>
<i>Արդյոք ես ի՞նչ նվիրեմ,</i>	<i>Ու հենց ձյունների միջին</i>
<i>Մատիտներով գունավոր</i>	<i>Քաղում են նուրբ, ժպտերես</i>
<i>Գուցե ծաղի՜կ նկարեն:</i>	<i>Չնծաղիկներն առաջին:</i>

*Դրսում մարտն է գժի պես  
Պատուհանի հետ խաղում,  
Իսկ մայրիկիս ձեռքի մեջ  
Ջինջ գարունն է ծիծաղում:*

Դաստիարակը նախ նշում է բանաստեղծության վերնագիրը և հեղինակի անուն-ազգանունը: Ապա արտահայտիչ, գեղեցիկ հնչերանգով արտասանում է այն: Հաջորդ քայլը բարդ բառերի և արտահայտությունների բացատրությունն է, որը նա կատարում է ամբողջական մտքերի ձևակերպումով (բացատրում է **նուրբ, ժպտերես ձնծաղիկներ, գիժ մարտ** արտահայտությունները): Երեխաներին անհասկանալի բառերն ու մտքերը բացատրելուց հետո մեկ անգամ ևս արտասանում է ոտանավորը և նրանց ուղղում ոտանավորի բովանդակությունը վեր հանող հարցեր՝ հավատարիմ մնալով հեղինակի խոսքին: Հարցերից հետո դաստիարակը կրկին արտասանում է բանաստեղծությունը և առանձին երեխաների առաջարկում կրկնել այն: Առաջին հերթին նա դիմում է այն երեխաներին, ովքեր ցանկություն են հայտնում կրկնելու, կամ նրանց, ովքեր լավ հիշողություն ունեն: Անհատական արտասանությունը կատարվում է դաստիարակի օգնությամբ:

**Կշռադատման փուլ**

Դիդակտիկ խաղ՝ «Ի՞նչ է անում մայրիկը, ի՞նչ է անում հայրիկը» /մեջախաղ/

Երեխաներն առանց խոսքի ցույց են տալիս, թե ի՞նչ են սովորաբար անում մայրիկները /ճաշ են եփում, լվացք, արդուկ անում, երեխայի համար գիրք կարդում... / կամ հայրիկները /Ունչ-որ բան են վերանորոգում, մեքենա վարում:

Մյուսները պետք է գուշակեն, թե ի՞նչ գործողություն են ցույց տալիս, և դա ու՞մ է հատուկ:

*Հաջորդ պարապմունքին պարտադիր պետք է խորացնել բանաստեղծության յուրագույնը և պարապմունքի երկրորդ մասին կրկին անցկացնել դիդակտիկ խաղ կամ այն ինտեգրել կերպարվեստի որևէ պարապմունքի հետ:*

Թեման՝ «Ի՞նչն է երկնքից բարձր»

Տեսակը՝ խաղ-պարապմունք

Նպատակը

Երեխաների մեջ պատկերացում ձևավորել Արեգակնային համակարգի մասին /արևը աստղ է, հսկայական տաք գունդ, որն ունի բարձր ջերմաստիճան և բոլոր կողմերով ճառագում է լույս և ջերմություն: Արևը պատվում է ինքն իր, իսկ մոլորակները՝ նրա շուրջը/: Հետաքրքրություն առաջացնել և զարգացնել նրանց երևակայությունը, հղկել քերականորեն ճիշտ, կապակցված խոսքը, բառապաշարը հարստացնել մոլորակ, աստղակերպ, տիեզերք, տիեզերանավ, երկնային մարմին բառերով և ակտիվացնել դրանց գործածությունը: Ջարգացնել տարածական կողմնորոշումը:

Նախապատրաստումը

Անհրաժեշտ է նախապես երեխաների մեջ գաղափար ձևավորել արեգակնային համակարգի մասին. *Արեգակին ամենամոտ մոլորակը Մերկուրին է, այնուհետև Վեներան, Երկիրը (մեր մոլորակը), Մարսը և մյուս մոլորակները: Յուրաքանչյուր մոլորակ պատվում է Արեգակի շուրջը:*

Նպատակահարմար է պարապմունքն անցկացնել այնպիսի վայրում, որտեղ գետնին հնարավոր լինի կավիճով գծել: Պարապմունքից մի քանի օր առաջ դաստիարակի օգնությամբ երեխաներն ուսումնասիրում են աստղաից երկինք պատկերող նկար: Ցանկալի է, որ նրանք ծնողների օգնությամբ նախապես դիտեն գիշերային երկինքը՝ ուշադրություն դարձնելով աստղային լուսավորությանը:

Անհրաժեշտ պարագաներ

Արեգակնային համակարգի քարտեզ կամ գրաֆիկական մոդել, գլոբուս, 2 պլաստիլինե մարդկային մարմիններ, արևի և մոլորակների նկարներով գլխարկներ, պարան, թղթե հեռադիտակ:

Խթանման փուլ

Երեխաների հետ զրուցել նախապես դիտած գիշերային երկինքի ու աստղերի մասին. ի՞նչ են դիտել, ինչպիսի՞ն է եղել երկինքը, ի՞նչ գիտեն աստղերի մասին:

Իմաստի ընկալման փուլ

- Երեխանե՛ր, այսօր ես ձեզ կպատմեմ Արեգակի և իր մոլորակների մասին /պարապմունքի ընթացքում հնչում է մեղմ երաժշտություն/.

- Արեգակը մի հսկայական հրե գունդ է: Այն փոքր է թվում, որովհետև մենք նրանից շատ հեռու ենք գտնվում: Առանց արեգակնային ճառագայթների կյանքը երկրի վրա անհնար կլիներ: Արեգակի շուրջն են պտտվում 9 տարբեր գույնի մոլորակներ, որոնցից մեկն էլ մեր Երկիր մոլորակն է:

Դաստիարակը ցույց է տալիս արեգակնային համակարգի քարտեզը և բացատրում որս կառուցվածքը: Նա երեխաներին պատմում է, որ արևն էլ անամպ երկնքում այնպիսի մի աստղ է, ինչպիսիք մենք տեսնում ենք գիշերային երկնքում:

- Արևը մեզ ավելի մոտ է, այդ պատճառով էլ ավելի մեծ է երևում: Արեգակին մոտենալ հնարավոր չէ, քանի որ այն ունի շատ բարձր ջերմաստիճան: Հետո ցույց է տալիս քարտեզը և ասում, որ Երկիր մոլորակն էլ է պտտվում Արեգակի շուրջը, և այդպես առաջանում են տարվա եղանակները:

**Դաստիարակ** - Ի՞նչ է տալիս մեզ Արևը:

**Երեխաներ** - Լույս, ջերմություն: Եթե Արևը չլիներ, չի լինի մահ բնությունը:

**Խաղ՝ «Արևը և մոլորակները»:** Երեխաները բաժանվում են երկու խմբի՝

մի խումբը *աստղագետ-ուսումնասիրողներ* են, մյուս խումբը՝ *արև և մոլորակներ*: Արև երեխան կանգնում է կենտրոնում: Մյուսները դաստիարակի օգնությամբ մոլորակների թվով շրջաններ են կազմում և հազում համապատասխան գլխարկներ: Այդ կարգով երեխաները դասավորվում են ուղեծրի վրա: Դաստիարակը բացատրում է, թե ինչպես պետք է պտտվել արևի շուրջը: Կենտրոնում կանգնած երեխան պտտվում է իր շուրջը, իսկ մյուսները՝ իրենց ուղեծրերով: Երկրի շուրջը միևնույն ժամանակ պտտվում է լուսինը: Լուսնի դերը կատարող երեխան պետք է պտտվի և՛ Երկրի, և՛ Արևի շուրջը: Սկսվում է շարժումը: *Աստղագետ-ուսումնասիրողները* հետևում են բոլորի շարժմանը: Նրանք հետադիտակներով նայում և բացատրում են մոլորակների շարժումները:

Ապա երեխաները նստում են աթոռներին: Դաստիարակը բերում է գլորուսն ու լամպը: Վառում է լամպը և ուղղում գլորուսի վրա: Նա հարցնում է երեխաներին, թե որտեղ է ցերեկ, որտեղ՝ գիշեր: Հետո բացատրում է, թե ինչպես է տեղի ունենում ցերեկվա և գիշերվա փոփոխությունը: Դաստիարակը երեխաներին խոսելու հնարավորություն է տալիս: Այնուհետև նրանց ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքին, որ գլորուսի մի մասը լուսավորվել է լամպ-արևով (այդտեղ ցերեկ է), իսկ մյուս մասը ստվերում է (այդ ժամանակ այդտեղ գիշեր է): Դրանից հետո կրկին հարցնում է երեխաներին, թե ինչպես է տեղի ունենում ցերեկվա փոփոխությունը. ինչու է մի կողմը լուսավոր, իսկ մյուսը՝ ոչ:

Ուշագրավ հնար է կիրառվում. դաստիարակը գլորուսի վրա ամրացնում է պլաստիլինե մարդուկին /Երևանի վրա/ և սկսում դանդաղ պտտել գլորուսը: Երեխաներին առաջարկում է հետևել այդ մարդուկին և հայտնել, թե երբ է բաղաբուն լինում ցերեկ և երբ՝ գիշեր: Նա հարց է ուղղում երեխաներին, թե ինչպես է կատարի այդ մարդուկը՝ քնելու՞ է, թե՛ արթնանալու: Այնուհետև դաստիարակն առաջարկում է մարդուկին դնել մեկ այլ տեղ. միգուցե այնտեղ ցերեկվա և գիշերվա փոփոխություն չի՞ լինում: Կրկին պատում է գլորուսը, իսկ

երեխաները նշում են, որ այդ վայրում ևս լինում է ցերեկ ու գիշեր: Դաստիարակը ցույց է տալիս Հայաստանը և ԱՄՆ-ը: Երբ Հայաստանում ցերեկ է, ԱՄՆ-ում գիշեր է, և՛ հակառակը: Մի մարդուկին՝ Տիգրանին, դնում է Հայաստանում, իսկ Ջոնին՝ ԱՄՆ-ում: Դաստիարակը երեխաներին առաջարկում է հետևել, թե ինչպես է պտտվում գլորուսը: Նրանք պետք է ասեն, թե ինչ են անում այդ երեխաները (Ջոնը քնած է, իսկ Տիգրանը խաղում է, և հակառակը. Ջոնի մոտ ցերեկ է, իսկ Տիգրանի մոտ՝ գիշեր):

**Կշռադատման փուլ**

Պարապմունքի ավարտին դաստիարակը հարցերի միջոցով ամրակայում է հաղորդած գիտելիքները:

**Շուտասելույլ**

*Լուսին՝ լուսին, կլո՛ր լուսին,  
Աստղ ու լուսին՝ միշտ միասին:*

Թեման՝ «Քամի»  
Տեսակը՝ զրույց /ծանոթացում բնությանը/  
Խնդիրները

Ձևավորել երեխաների տարրական պատկերացումները՝ քամու, նրա ուժի օգտագործման մասին, ինչպես նաև ունակություններ՝ նկատելու քամու և բնության մյուս երևույթների կապերը:

Նախապատրաստական աշխատանք  
Երեխաներին ծանոթացնել քամու հատկություններին (բնությանը ծանոթացման պարապմունքի ընթացքում), կատարել փորձարկումներ:

Անհրաժեշտ նյութեր՝ բոթից պատրաստված պտտան կամ իսկական հովհար, օդափոխիչ, օդակարգավորիչ, ջրաղաց, Սևանա լճում առագաստանավեր պատկերող նկարներ:

Պարապմունքի ընթացքը

Ղաստիարակն ընթերցում է Հովհաննես Թումանյանի «Քամին» ոտանավորը:

Հ. Թումանյան

ՔԱՄԻՆ

- Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ...	Կորի՛ դու, քամի՛,
Քամին է, քամին,	Անպիտան քամի,
Տես անգգամին,	Մի՛ վախի, ջանիկ,
Բերան չունի՝ փչում է,	Փեշս պինդ բռնի,
Թևեր չունի՝ թռչում է,	Ես թող չեմ անի՝
Չեղբեր չունի՝ քաշում է,	Քամին քեզ տանի:
Իմ փոքրիկին քշում է:	

Այնուհետև երեխաների հետ քննարկում է, թե ինչպես կարելի է գտնել քամուն, տեսնել և լսել նրան: Օրինակ՝ քամուց օրորվում են խոտերը, ծաղիկները, ծառերի տերևները, ջրի ալիքները մեղմ ծփում են: Իսկ ինչպե՞ս է նկատվում քամուն Հովհաննես Թումանյանն իր բանաստեղծության մեջ: Ի՞նչ ձայն է հանում քամին:

- Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ...

Ի՞նչ է անում քամին.

Բերան չունի՝ փչում է,

Թևեր չունի՝ թռչում է,

Չեղբեր չունի՝ քաշում է:

Ղաստիարակը ցույց է տալիս բոթից պտտանը, որի շարժման օգնությամբ խմբում գտնում է քամին: Միաժամանակ նա հիշեցնում է, որ քամին լսելու է նաև թռչնել գլխարկը, հեռու տանել այն, գետնից վեր բարձրացնել

փոշին, ավազը, հովանոցը շրջել: Ուժեղ քամիները կարող են նույնիսկ ծառերը ջարդել, տների տանիքները, դռները, պատուհանները պոկել /բերել օրինակներ Արագածոտնի, Գեղարքունիքի, Շիրակի մարզերից /, դրանք կոչվում են փոթորիկ: Այնուհետև շարունակում է և քննարկում երեխաների հետ. իսկ այնուամենայնիվ, ինչի՞ համար ենք սիրում քամին:

Շոգ եղանակին հաճելի է, երբ փչում է սառը քամին: Մարդիկ նույնիսկ մտածել են, որ իրենք նույնպես կարող են այնպես անել, որ սարքեն քամի. ստեղծել են հովհար, օդափոխիչ, օդակարգավորիչ: Առաջարկում է երեխաներին՝ հովհարով քափահարել ու փորձել՝ արդյո՞ք կզգան քամի: Երեխաների հետ եզրահանգում է. օդի պտույտից առաջանում է քամի: Այնուհետև հարցնում է.

- Իսկ կարո՞ղ է քամին աշխատել: Հիշեցնում է, թե ինչպես էր ջուրն աշխատում. պտտեցնում էր ջրաղացի անիվը, որն աղում էր հացահատիկը, պատմում է այն մասին, որ նախկինում քամու ջրաղացներ շատ կային, իսկ այժմ այդ աշխատանքը կատարում են էլեկտրական մեքենաները: Սակայն քամու օգնությամբ մարդիկ ստանում են էլեկտրական էներգիա: Ներկայումս մարդիկ կառուցում են հողմաղաց /հողմաշարժիչ/: Քամին պտտում է հողմաղացի քևերը, իսկ նրանք պտտեցնում են էլեկտրական մեքենան, որը ստանում է էլեկտրական հոսանք: Այնուհետև դաստիարակը հիշեցնում է երեխաներին /ցույց է տալիս կապույտայրա գեղեցկուհի Սևանա լճի վրա լողացող առագաստանավերի նկարներից/, թե ինչպես է քամին փչում առագաստին՝ ջրի վրա բշելով նավակը:

Պարապմունքի ավարտին դաստիարակը հիշեցնում է երեխաներին. քամին կարող է օգնել մարդկանց և նաև վտանգ բերել:

Վարքի կանոններ

1. Ավազե հրապարակում չի կարելի ավազը շարտել, այն կարող է ընկնել մարդկանց աչքերը և վնասել:
2. Եթե փչում է ուժեղ քամի, ապա թեթև իրերը, որոնք կարող է քամին տանել, անհրաժեշտ է ամրացնել. բոթի վրա քար դնել, գլխարկը կապել կապիչներով:
3. Ուժեղ քամու ժամանակ հարկավոր է փակել բաց պատուհաններն ու պատշգամբները:
4. Եթե ինչ-որ բան եք գտել, ապա այն տվե՛ք դաստիարակին, որպեսզի նա գտնի նրան, ում պատկանում է:
5. Չի կարելի պատահաբար ընկած իրերը վերցնել: Արգելվում է նաև գտնված ուտելիքն ուտել:
6. Հարկավոր է ընկերների հետ պայմանավորվել, թե ով որտեղ է խաղում, և չխանգարել միմյանց:

ՊԱՐԱՊՈՒՆԷ 35

Թեման՝ «Կատուները մեր բարեկամներն են»

Տեսակը՝ պատմվածքի ընթերցանություն

Խնդիրները

• Ամրապնդել երեխաների պատկերացումները ընտանի կենդանիների մասին, ճշգրտել նրանց ճանաչողական գիտելիքները կառուցելով արտաքին տեսքի, մարմնի կառուցվածքի, ապրելակերպի, վարքի առանձնահատկությունների, ինչպես նաև օգտակարության վերաբերյալ:

• Ձևավորել հոգատար վերաբերմունք կենդանիների նկատմամբ:

• Ակտիվացնել երեխաների բառապաշարը՝ քննուշ, գաղտագողի, ընտանի, ցեղակից, քոս բառերով:

• Վարժեցնել՝ մտքերն արտահայտել ճիշտ, հասկանալի, կապակցված ձևով:

• Սովորեցնել կ հնչյունի ճիշտ արտասանությունը և տարբերակումը

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ «Ընտանի կենդանիներ» շարքից.

«Կատուն իր ձագերի հետ», «Վանա կատու», խաղալիք կատու

Պարապմունքի ընթացքը

Դաստիարակը երեխաներին առաջարկում է գուշակել հանելուկներ.

Հ.Միտոյան

Անձայն, ծածուկ քայլերով,

Դուրը բացեց մոռանը՝

Պոչը քսեց դռանը: (կատու)

Գիշեր-ցերեկ ման է գալիս,

Մուկը բռնում, վազ է տալիս: (կատու)

Հանելուկների գուշակումից հետո դաստիարակը հարցնում է երեխաներին, թե արդյոք նրանք տանը պահո՞ւմ են կատու. ի՞նչ անուններ ունեն, ինչպիսի՞ն են, ինչո՞վ են կերակրում նրանց, ինչպե՞ս են հոգ տանում երեխաները նրանց մասին, ի՞նչ զիտեն կատուների մասին /երեխաների պատասխանները/:

Դաստիարակն այնուհետև առաջարկում է ունկնդրել պատմվածք կատուների մասին:

Պատմվածքի ընթերցում

Կատուն մարդու կողմից ընտելացված ամենահին կենդանիներից է:

Մարդիկ աշնան բերքի պաշարը պահում էին ամբարներում, բայց այդ բերքի մեծ մասն առնետների ու մկների բաժին էր դառնում: Նրանցից ազատվելու համար մարդն ընտելացրեց կատվին: Ընտանի կատվի ամենահին տեսակներից մեկը Վանա Կատուն է: Վանա կատուն ձյունաճերմակ, գեղեցիկ կատու է, որը շատ է սիրում ջրում լողալ և հայտնի է ամբողջ աշխարհում /ցույց է տալիս նկարը/: Նա ապրում է Վանա լճի շրջակայքում (Վանա լիճը գտնվում է Վան քաղաքում, ուր ապրել են մեր պապերն ու տատերը): Վանա

կատուն ունենում է 2-4 ձագ, նրանցից 1-ը կամ 2-ն ունենում են տարբեր գույնի աչքեր:

Կատուն կարող է համբերությամբ, ժամերով հսկել մկան բույնը: Միայն պոչի ծայրն է ցցվում և մատնում նրա լարված վիճակը: Կատուն կրծողներին և վնասակար կենդանիներին ոչնչացնում է: Ունի սուր ճանկեր, երկար պոչ, քնքուշ մորթի: Տեսողությունը և լսողությունը լավ են զարգացած, հոտառությունը թույլ է: Բոլոր ընտանի կատուներն իրենց վայրի ցեղակիցների (լուսան, հովազ, վագր և այլն) նման որսի են դուրս գալիս գիշերով: Մնվում է թռչուններով, սողուններով, ձկներով, միջատներով: Չնայած կատուն երկար տարիներ ապրել է մարդու կողքին, բայց իր վայրի սովորությունները չի կորցրել. նա գաղտագողի մոտենում է զոհին, ճանկերը հավաքելով բարձիկների մեջ՝ անսպասելի հարձակվում և ճանկերը խրում է նրա մարմնի մեջ:

Ընտանի կատուները մաքրասեր են: Կատուն ծնում է 1-7 ձագ, որոնք սնվում են մոր կաթով:

Ընտանի կատուները հիվանդանում են վարակիչ հիվանդություններով, որոնք վտանգավոր են մարդու համար: Ուստի կատուներին խնամելիս և նրանց հետ խաղալիս հարկավոր է խստորեն հետևել առողջության կանոններին: Կատվի հետ նույն անկողնում քնել չի կարելի, սակայն խնամքը մարդու կողմից միշտ անհրաժեշտ է:

Հարցեր՝ պատմվածքի բովանդակության շուրջ

1. Նկարում ի՞նչ կենդանի է պատկերված և ո՞ւմ հետ:
2. Ընտանի կատվի ամենահին տեսակներից ո՞րն է հայտնի, և որտե՞ղ է նա ապրում:
3. Որո՞նք են կատվի մարմնի մասերը:
4. Ինչպիսի՞ ձայն է հանում կատուն:
5. Ինչո՞վ է սնվում կատուն:
6. Ինչո՞վ են սնվում նրա ձագերը:
7. Ինչո՞վ է պաշտպանվում կատուն:
8. Կատուներին խնամելիս ինչի՞ց պետք զգուշանալ:

Բառապաշարի հարստացում՝ քնքուշ, գաղտագողի, ընտանի, ցեղակից, քոս բառերով:

Դաստիարակը, ընդհանրացնելով երեխաների պատասխանները, ասում է, որ կատվի մասին ժողովորդն իր իմաստուն խոսքերն է հյուսել:

Ասացվածքներ՝ կատվի մասին.

«Կատվի խաղը մկան մահ է», «Կատվի նման մեջքին չի ընկնի», «Կատվի պես հեզիկ-նազիկ»:

Բացատրելով ասացվածքների իմաստը՝ դաստիարակն առաջարկում է երեխաներին անգիր արտասանել (սկզբում 2-3 երեխայի, այնուհետև՝ խմբի):

**Ֆիզիկուլտ-դադար՝ «Մատներ-մկնիկներ»**

Առաջարկել երեխաներին՝ իրենց մատները դարձնել մկնիկներ, որոնք վազվզում են սեղանների վրա, իրենց ծնկներին, ընկերոջ ծնկներին:

**Գեղարվեստական ստեղծագործության ընթերցանություն.**

**Ղ Աղայան «ԿԱՏՈՒ»**

*Կատուն եկավ փիսիկ-փիսիկ,  
Հագար նագով ինչպես հարսիկ,  
Դունչը սրբեց բարիկներով,  
Մագը սանրեց շանչիկներով:  
Կատու, կատու, հե՞ր ես տրտում,  
Թե՞ մկներն են հիմա արքուն:  
Կատուն ասուց.- Միտո՞ւ, միտո՞ւ,  
Այսինքն բե՛ այո՛, այո՛:*

Երեխաներին հանձնարարվում է արտաբերել կատվի և նրա ձագի ձայնները՝ անհատապես և խմբով:

**Դիդակտիկ խաղ՝ «Լրացրու՛ բառը».**

Խաղն առաջարկել խաղալ ենթախմբերով:

Առաջին ենթախմբին առաջարկել լրացնել բառեր՝

Բառասկզբում «կ» հնչյունով սկսվող՝

**Կա-տու, կո-շիկ, կա-նաչ, կար-միր, Կա-րո, կա-դին, կո-րիզ**

Երկրորդ ենթախմբին առաջարկել լրացնել բառեր՝

Բառամիջում «կ» հնչյունով լսվող բառեր՝ **մըկ-միկ, շոկո-լադ, ակ-նոց, եր-**

**կու, կը-կու**

Նրորոդ ենթախմբին՝ բառավերջում «կ» հնչյունով ավարտվող՝ **ար-ջուկ, ու-լիկ, նա-վակ, Նու-միկ, Հաս-միկ, սա-գիկ, տա-տիկ, մայ-րիկ, բա-նակ:**

**ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 76**

**Թեման՝ «Վայրի կենդանիներ»**

**Տեսակը:** Զրույց՝ վագրի մասին

**Խնդիրները**

• Ամրապնդել երեխաների պատկերացումները վայրի կենդանիներից վագրի մասին:

• Գաղափար տալ այն մասին, որ վագրը կատվագգի է, սակայն վայրի է և գիշատիչ:

• Ընդլայնել երեխաների ճանաչողական գիտելիքները վագրի արտաքին տեսքի, նրա մարմնի կառուցվածքի, ապրելակերպի պայմանների, վարքի առանձնահատկությունների մասին:

• Հարստացնել բառապաշարը վայրի, գիշատիչ, ահարկու, ժանիք, սանիտար բառերով:

**Անհրաժեշտ պարագաներ՝** վագրի մեծադիր նկար՝ «Վայրի կենդանիներ» շարքից, խաղալիք վագր, վագրի մոնչոցի ձայնագրություն, վայրի կենդանիներ պատկերող տարբեր նկարներ

Երեխաներին առաջարկել գուշակել հանելուկ.

**Վագրը /Հ. Միտոյան/**

*Մորթի ունեմ թանկարժեք,  
Վրան նախշեր, գեղեցիկ:  
Կատվագգի եմ, կատու չեմ,  
Բայց ես կատվից գորեղ եմ.  
Կատվից ուժեղ որսորդ եմ:  
Իմ ահարկու, զիլ ձայնից  
Վախենում են ինձանից  
Վայրի խոզեր, եղնիկներ,  
Հիվանդ ու թույլ էակներ: (վագր)*

Հանելուկի գուշակումից հետո դաստիարակը միացնում է վագրի մոնչոցի ձայնագրությունը, երեխաների ուշադրությունը հրավիրում՝ լսելու վագրի ահարկու և ուժգին ձայնը՝ մոնչոնը, և հարցնում է երեխաներին.

- Գուշակեցի՞ք, ո՞ւմ ձայնն էր /երեխաների պատասխանները/:
- Չեզնից որևէ մեկը վագր տեսե՞լ է /երեխաների պատասխանները/:
- Որտե՞ղ /երեխաների պատասխանները/:
- Ինչպիսի՞ն է նա /երեխաների պատասխանները. հնարավոր տարբերակներ՝ կենդանաբանական այգում, կրկեսում, մուլտֆիլմում, հեռուստատեսությամբ/:

Այնուհետև դաստիարակը սկսում է վագրի մասին գրույցը.

Անտառի բվուտների հետևում հաճախ կարելի է լսել վագրերի ահարկու ձայնը: Նրանք ընտանի կատուների ցեղակիցներն են: Վագրերի սիրելի որսն են եղջերուները, վայրի խոզերը: Նրանց մեծ մասը որսում է անտառի թույլ և հիվանդ կենդանիներին: Այդ կերպ անտառն ինչ-որ չափով մաքրվում է:

Վագրի հզոր ժանիքներից հազվադեպ կարող է փրկվել նա, ում վրա հարձակվել է գիշատիչը: Անտառներում նրան տեսնելը շատ դժվար է, որովհետև նա գեղեցիկ նախշեր ունի, և անտառի գույների բազմազանության մեջ դժվար է նկատել նրան: Նա որսի է դուրս գալիս արևամուտից հետո, որպեսզի ավելի աննկատ դառնա: Վագրն ունի հզոր թոփչք: Պատահական չէ, որ ձևավորվել է «վագրի թոփչք» արտահայտությունը:

Վագրի մորթին ունի գեղեցիկ նախշեր և բնական վառ: Դրանից կարում են մուշտակ, իսկ գեղեցիկ նախշերն օգտագործում են հագուստը, կոշիկեղենը, սպասքի առարկաներ ձևավորելիս:

Վագրը մարդու վրա հարձակվում է, երբ մարդը սպառնում է ձագին:

Զրույցի ընթացքում վագրի արտաքին տեսքի նկարագրության ժամանակ ցուցադրել նկար՝ զուգորդելով այն տեքստի բովանդակությանը:

Առաջարկել գրույցի բովանդակությունը վեր հանող հարցեր:

1. Ո՞ր կենդանիների ցեղակիցներն են վագրերը:
2. Վագրերն ինչո՞վ են տարբերվում կատուներից:
3. Որտե՞ղ են ապրում վագրերը:
5. Ո՞րն է վագրերի սիրելի որսը:
6. Ինչպիսի՞ ձայն են հանում վագրերը:
7. Ինչպիսի՞ նախշեր ունի վագրի մորթին:
8. Մ՞րք է վագրը դուրս գալիս որսի և ինչո՞ւ:
9. Ինչպիսի՞ թոփչք ունի վագրը և ինչպե՞ս են անվանում այն:

• Բնուսուպաշարի հարստացման աշխատանքներ՝ վայրի, գիշատիչ, ահարկու, ժանիք, «վագրի թոփչք» բառերով:

Ընդհանրացնել երեխաների պատասխանները և ամփոփել գրույցը.

- Ո՞ր կենդանու մասին պատմություն լսեցիք:
- Վագրը ձեզ ծանոթ ո՞ր կենդանու ցեղակիցն է:
- Ինչո՞վ է տարբերվում վագրը կատվից:
- Ի՞նչ իմացանք վագրի մասին:

Գեղակտիկ խաղ՝ «Ո՞վ որտեղ է բնակվում և ինչո՞վ է սնվում»

Նշտել երեխաների պատկերացումներն այն մասին, թե ով որտեղ է ապրում և ինչով է սնվում: Օրինակ՝ ցույց տալով կենդանի պատկերող նկարներ, դաստիարակը հարցնում է. «Որտե՞ղ է ապրում շնիկը, և ինչո՞վ է սնվում» կամ «Որտե՞ղ է ապրում սկյուռիկը և ինչո՞վ է սնվում»:

Խաղ-վարժություն մատիկներով՝ «Երագ»  
Երեխաներին առաջարկել հանձնարարությունը կատարել մեկ ձեռքով:  
/Յուրաքանչյուր տողի ժամանակ ծաղիլ մեկ մատիկը/.

- Այս մատիկը ուզում է քնել,
- Այս մատիկը ուզում է պատկեյ,
- Այս մատիկը ուզում է ննջել,
- Այս մատիկը արդեն քնում է,
- Այս մատիկը երագ է տեսնում:

Բանաստեղծություն՝ պարապմունքից դուրս ընթերցելու համար

Պարույր Սևակ՝ «Վագրն ու կատուն»

Տեսնք՝ Վագր է սա,  
Իսկ սա էլ՝ Կատու:  
Իրար նման չե՞ն,  
Բա չե՞ք նկատում,  
Որ կարծես Վագրի քթից է ընկել  
Չեր լավ խաղընկեր,  
Մեր լավ կատուն:

Այնպես է եղել, որ իսկպպես էլ  
Վագրը մի ցուրտ օր,  
Շա՛տ-շա՛տ է մրսել,  
Իսկ մութ անտառում  
Ի՛նչ դեղ ու բժիշկ,  
Մրսած Վագրին ո՞վ կամ ինչպե՞ս բուժեր:

Ու փոշտում է Վագրը շատ ուժեղ,  
Եվ նրա քթից մի բան է կաթում,  
Որ տեղն ու տեղը դառնում է ...Կատու:  
Դրա համար էլ նման են այդքան  
Մեր ընկեր Փխտն և Վագր արքան:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 77

Թեման՝ «Վայրի կենդանիներ»

Տեսակը՝ գրույց՝ գայլի մասին

Խնդիրները

• Ամրապնդել երեխաների պատկերացումները վայրի կենդանիներից գայլի մասին:

• Գաղափար տալ այն մասին, որ գայլը շնագզի է, սակայն վայրի է և զիշատիչ:

• Ընդլայնել երեխաների ունեցած ճանաչողական գիտելիքները գայլի արտաքին տեսքի, նրա բնորոշ հատկանիշների, ապրելակերպի պայմանների, վարքի առանձնահատկությունների մասին:

• Բառապաշարը հարստացնել վայրի, զիշատիչ, ոհմակ, գորշ, ժանիք, բստերով:

• Սովորեցնել՝ բառի համար ընտրել համապատասխան հատկանիշներ:

Առաջարկել երեխաներին համելուկներ գայլի մասին:

Անտառ, քաղառ ոտի տակ,

Չմուսն գրտին նա քաղցած,

Թափառում է չարացած (գայլ) /Հ.Միտոյան/

կամ՝

Աչքերը ծրագ են,

Վազքը շատ արագ է,

Ամպ օր է երագում,

Հանդի սանր են ասում: (գայլ)

Գայլերը շնագզիների ցեղի զիշատիչներ են: Ընտրում են չոր, գետերի մոտ գտնվող, քամուց պաշտպանված որջեր: Ունեն սուր հոտառություն, ակտիվ են գիշերը: Մնվում են ցանկացած կենդանու մտով: Գայլը լավ է տարբերում զինված մարդուն անզենից: Վտանգի դեպքում վախեցած անհետանում է, իսկ թույլ մոտ դառնում է հանդուզն, համարձակ: Այս կենդանին բնության մեջ ասես բուժակի, մաքրողի դեր է կատարում, ոչնչացնում է հիվանդ կենդանիներին: Բացի գորշ գայլից՝ համարյա նույն ապրելածն ունեն նաև մյուս տեսակները՝ սև, բեռնային, գայլերը: Փոխվում է նրանց գուներանգը՝ շեկ, դեղնավուն, մոխրագույն, գծավոր:

Հայաստանում տարածված գորշ գայլերը նույնպես հանդիպում են տարբեր վայրերում: Ապրում են միայնակ կամ ոհմակներով: Ոհմակները կազմված են լինում 6-10 կենդանուց: Ունենում են առաջնորդ: Վտանգի դեպքում բոլորը համախմբվում են նրա շուրջը: Գայլի ձագերը իրավունք ունեն ոհմակի մեջ մտնելու միայն մեկ տարին լրանալուց հետո:

Չմուսնը, երբեմն էլ զարնանը եղել են դեպքեր, երբ գայլերն անտառի հասել են գյուղեր (Շիրակի և Լոռու մարզեր), հարձակվել ոչ միայն հոտերի այլև մարդկանց վրա: Քաջարի որսորդները ոչնչացրել են նրանց և պաշտպանել մարդկանց:

- Ո՞ր կենդանու մասին այսօր մենք իմացանք:

- Ինչպիսի՞ կենդանի է գայլը:

- Ինչո՞վ են սնվում գայլերը:

- Ինչպե՞ս են ապրում գայլերը:

Ֆիզկուլտ- դադար՝ «Ով ինչպե՞ս է ուրախանում»

Դաստիարակն ասում է՝ երբ երեխաներն ուրախանում են, նրանք ծիծաղում են, իսկ երբ ուրախանում են շնիկները, ուրախ հաչում են, կատվիկներն ուրախ մլավում են: Իսկ հետո երեխաները խմբով ցույց են տալիս, թե ինչպես են ուրախ հաչում շները, մլավում կատուները, ծղվում ճնճուկները և այլն:

Ասացվածքներ՝ գայլի մասին.

«Գայլի սիրտ ունի», «Գայլն ամպոտ օր է սիրում», «Գայլի գլխին ավետարան կարդացին, ասաց՝ ոչխարները գնացին»:

Դիդակտիկ վարժություն՝ «Ասա՛ համապատասխան հատկանիշներ»

Մեղվի պես-աշխատասեր, նապաստակի պես-վախկոտ, աղվեսի պես-խորամանկ՝ գայլի պես-ազահ, շան պես-հավատարիմ, կատվի պես-հեզիկ-նազիկ, արջի պես-դանդաղաշարժ, օձի նման խայթող, վագրի պես հզոր, բիբեռի պես թեթև, կաշաղակի պեսշատախոս, եղնիկի պես գեղեցիկ, խոզի պես կախգուլիս:

**ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 78**

**Թեման՝ «Վայրի կենդանիներ»**

**Տեսակը՝ գրույց՝ ոգնու մասին**

**Խնդիրները**

• Ճշգրտել երեխաների գիտելիքները և պատկերացումները վայրի կենդանիներից ոգնու վերաբերյալ

• Ձևավորել պատկերացում՝ ոգնուն բնորոշ հատկանիշների, արտաքին տեսքի, նրա վարքի առանձնահատկությունների մասին

• Ամրապնդել երեխաների պատկերացումները ոգնու օգտակարության մասին

• Բառապաշարը հարստացնել փշե գունդ, *քստքստացնել, խշխշալ բաներով*

Անհրաժեշտ նյութեր՝ «Վայրի կենդանիներ» շարքից՝ նկար՝ «Ոգնին իր ձագերով», խաղալիք ոգնի

**Պարապմունքի ընթացքը**

*Դաստիարակն ասում է երեխաներին. «Այժմ ես կառաջարկեմ հանելուկ և դրա գուշակումից պարզ կդառնա, թե այսօր ինչի մասին ենք գրուցելու.*

*Մարմնիս վրա, ահա տե՛ս,  
Սուր-սուր փշեր ունեմ ես,  
Մրնով հյուրն եմ դաշտերի  
Եվ թշնամին օձերի: /ոգնի/*

**Պատմվածքի ընթերցանություն**

Ոգնու երկնական պաշտպանը փշերն են: Մերկ ձեռքերով նրան բռնել չի լինի, որովհետև ոգնին իսկույն կծկվում, փշե գունդ է դառնում: Ոգնին ուտում է սնկեր, հատապտուղներ, խոտ, երբեմն էլ գորտեր, մկներ՝ քանդելով նրանց բները: Ոգնու ձագերը միանգամայն չձակող են, կույր, անօգնական: Երկու շաբաթ անց նրանց աչքերը բացվում են: Այդ ընթացքում նրանց փշերն արդեն կոշտացած են լինում: Մինչև երկու ամսական դառնալը նրանք զբոսնում են մոր հետ:

Ոգնի եղած տասը մկներ չեն լինում: Միայն թե բնակարաններում ևս ոգնին գիշերային կրակը է վարում, ինչպես բնության մեջ, բոլորը պառկում են քնելու, իսկ նա որսի է ելնում, քսաքստացնում, խշխշում:

Էշեանը ոգնիները շատ են ուտում, զիրանում են: Հենց որ ցուրտն սկսվում է, ոգնին բնկղմվում է բափված տերևների մեջ: Ոգնին իր կյանքի փարբազօով նսան է արթին: Նա նույնպես ողջ ձմեռ քուն է մտնում:

*Դաստիարակն առաջարկում է երեխաներին.*

- Եկեք, բնութագրենք ոգնուն.
- Ինչպիսի՞ն է նա:
- Ինչո՞վ է պաշտպանվում:
- Ինչո՞վ է սնվում:
- Ինչպիսի՞ն են ոգնու ձագերը:
- Ինչպիսի՞ն է նրա վարքագիծը ձմռանը:
- Ավարտին դաստիարակը հարցնում է երեխաներին.*
- Ի՞նչ նոր բան իմացաք այսօր:

Դաստիարակը, ընդհանրացնելով երեխաների պատասխանները, հակիրճ եզրահանգում է ոգնու բնութագրիչների մասին:

**Դիդակտիկ խաղ՝ «Ո՞վ է մոլորվել»**

**Նպատակը:** Կազմել միևնույն բառարմատով բառեր, ընտրել տրված բառի համար հոմանիշներ:

-Ո՞վ է անտառի արահետում ցատկոտում /նապաստակը/: Ինչպե՞ս կարող ենք նրան փաղաքշական անվանել: Կանգ առավ նապաստակը, շրջվեց այս ու այն կողմ ու վախեցավ: Ինչու՞/կորել է, մոլորվել է/: Ասացե՛ք՝ ինչ տրամադրություն ունի հիմա նապաստակը/ տխուր է, քախժոտ է, վշտացած է/: Իսկ ի՞նչը կարող է նրան ուրախացնել /ծիտիկը երգ կերգի, ոգնին հեքիաթ կպատմի/:

**Թեման՝ «Վայրի կենդանիներ»**

**Տեսակը՝** գրույց. ստեղծագործական պատմում՝ նկարի միջոցով

**Նպատակը՝** Հարստացնել վայրի կենդանիների մասին երեխաների գիտելիքները: Ջարգացնել կապակցված խոսքը, գրուցելու, հարցեր տալու կարողությունը, հարստացնել բառապաշարը՝ *վայրի, գիշատիչ, խոտակեր* բառերով:

Սովորեցնել ներկայացնել նկարը՝ հորինելով սկիզբ և ավարտ:

**Նախապատրաստական աշխատանք**

Ղ.Աղայանի «Կենդանիների վեճը», Ս. Մուրադյանի «Գայլն ու աղվեսը»,

Պ. Սևակի «Լագրն ու կատուն» ստեղծագործությունների ընթերցում (ընտրողաբար):

Անհրաժեշտ նյութեր՝ վայրի կենդանիների նկարներ, «Կենդանաբանական այգում» սյուժետային նկար

**Ընթացքը**

1-ին օր

Պարապմունքն սկսե՛ք կենդանաբանական այգու մասին գրույցով:

Պատմե՛ք երեխաներին, որ կենդանաբանական այգում շատ կենդանիներ կան, որոնք ապրում են վանդակների մեջ: Մարդիկ նրանց բռնել ու բնակեցրել են այդ այգում, որ երեխաները և մեծահասակները մոտիկից տեսնեն այդ գարձանահրաշ կենդանիներին, քանի որ ազատ բնության մեջ դրանց հանդիպելը վտանգավոր է, հաճախ նաև՝ անհնար:

• Գուր եղե՛լ եք կենդանաբանական այգում:

(Եթե խմբում լինեն երեխաներ, որ չեն եղել կենդանաբանական այգում, նրանց ուշադրությունը հրավիրե՛ք «Կենդանաբանական այգում» սյուժետային նկարին և բացատրե՛ք, որ այդ նկարում պատկերված է կենդանաբանական այգի, որտեղ վանդակներում ապրում են կենդանիներ):

• Ի՞նչ կենդանիներ կան կենդանաբանական այգում:

• Ի՞նչ էք կարծում, ինչու՞ են այգում կենդանիներին վանդակների մեջ պահում: (Այդ կենդանիները վայրի են, մի մասը՝ գիշատիչ, մարդու կողմից ընտելացված չեն, այլ պատճառով նրանց պահում են վանդակներում, որ մարդկանց չվնասեն):

Ջրույզի բնագրում երեխաների ուշադրությունը հրավիրե՛ք վայրի կենդանիների նկարներին (դրանք, որպես զննական նյութ, կօգնեն պատասխանել հարցերին) և հարցրե՛ք:

• Ի՞նչ են սիրում ուտել արջերը (մեղր, տանձ, հատապտուղ, ձուկ. արջերը նաև լավ ձկնորսներ են, որպես գիշատիչ կենդանիներ սնվում են նաև այլ կենդանի ալարծներով)

• Ինչու՞ են ասում ծուռթաք (բրդոտ) արջ:  
• Բնության մեջ որտե՞ղ են նրանք բնակվում (գորշ արջերը՝ անտառում սպիտակ արջերը՝ հյուսիսում):

• Ի՞նչ հեքիաթներ գիտեք արջերի մասին («Երեք արջերը», «Արջն ու Մաշան» ...):

• Ի՞նչ տեսք ունեն եղնիկները:

• Ինչո՞վ են նրանք սնվում: (Եղնիկները գիշատիչներ չեն, նրանք առյուծների, արջերի մման այլ կենդանիների միս չեն ուտում, այլ սնվում են խոտերով, տերևներով: Նրանք խոտակեր կենդանիներ են:)

• Է՞լ ինչ խոտակեր կենդանիներ գիտեք (ուղտը, ընձուղտը, բիզոնը...): Այսօրինակ հարցերով խրախուսե՛ք երեխաներին՝ խոսել կենդանիների առանձնահատկությունների մասին և արտահայտել իրենց վերաբերմունքը: Օրինակ՝

• Ո՞ր վայրի կենդանին է քեզ դուր գալիս: Ինչու՞:

• Եթե կենդանիները քեզ հասկանային, ի՞նչ կասեիր նրանց: Պարապմունքի ավարտին առաջարկե՛ք գուշակել հանելուկներ կենդանիների մասին.

*Բրդոտ է նա, քաթը ծուռ,  
Տանձ է սիրում, ոչ թե նուտ: (արջ)* *Ահ, սարսափն է հազարների,  
Եվ արքան է գազանների: (առյուծ)*

*Մորթին սև ու մոխրագույն,  
Երախը՝ մեծ, ատամը՝ սուր:  
Տանում է գառ ու ոչխար,  
Թշնամին է նա մեր շան: (գայլ)* *Մեծ երախում սուր ատամներ,  
Մաշկը կանաչ, ոտքերը կեռ,  
Նա ցամաքում և ջրի մեջ  
Դարան մտած փնտրում է կեր:  
(կոկորդիլոս)*

*Խորամանկ է ու ճարպիկ,  
Մորթին փափուկ, երկար պոչիկ,  
Սիրում է շատ հավ ու ճուտիկ,  
Նրան ասում են ....  
(աղվես քույրիկ)* *Ապրում է նա խոր ձորում,  
Գետնի տակ է բույն փորում:  
Եկավ գյուղի քաղերը,  
Տարավ տառի հավերը:  
(աղվես)*

2-րդ օր

«Կենդանաբանական այգում» նկարը շրջած կախնե՛ք երեխաներին տեսանելի տեղում:

Պարապմունքն սկսե՛ք նախորդ օրվա զրույցի մասին հիշեցումով: Հարցրե՛ք.

- Ի՞նչ կենդանիների մասին էինք զրուցում նախորդ անգամ:
- Ի՞նչ են ասում արջի (վագրի, առյուծի, փղի, գայլի) ձագերին (քոթոթ, վագրիկ, կորյուն, փղիկ, գայլուկ):
- Որտե՞ղ են նրանք ապրում:
- Ինչո՞ւ են մարդիկ այցելում կենդանաբանական այգի:

Հետո շրջե՛ք նկարը, երեխաներին առաջարկե՛ք ուշադիր նայել այն և մի փոքրիկ պատմություն հորինել «Կենդանաբանական այգում» նկարի շուրջ:

Հարցերով օգնե՛ք պատմել, ոչ միայն նկարում պատկերվածը, այլև հորինել պատմության սկիզբ և ավարտ:

- Ովքե՞ր են այգու այցելուները:
- Ինչո՞ւ են երեխաները հավաքվել փղի վանդակի մոտ:
- Ի՞նչ հետաքրքիր բան են նրանք այնտեղ տեսել, կամ ի՞նչ հետաքրքիր դեպք է պատահել:
- Ինչ է անում փղի ձագը:
- Ի՞նչ են անում կապիկները, արջերը, փիղը ...
- Ինչո՞ւ է առյուծը տխուր:
- Ի՞նչ տրամադրություն ունեն երեխաները:

Պատումն ամփոփեք՝ «Ուրիշ ի՞նչ վերնագիր կհորինեք նկարի համար»

հարցով:

Ծեփի պարապմունքին առաջարկեք ծեփել վայրի կենդանիներ:

**Խաղ՝ «ԱՐՋԻ ՄՈՏ ԱՆՏԱՌՈՒՄ»**

Նպատակը

Խորացնել երեխաների պատկերացումները անտառի բնակիչներից արջի, նրա վարքի առանձնահատկությունների վերաբերյալ:

Անհրաժեշտ պարագաներ՝ խաղալիք արջ

Խաղի ընթացքը

Դաստիարակը խաղալիք արջուկին նստեցնում է թփի տակ և սկսում պատմել, թե որտեղ է բնակվում արջը, ինչո՞վ է սնվում և ամենից շատ ի՞նչ է սիրում: Դաստիարակը երեխաներին պատմում է, որ արջը քաղցրասեր է, բացի մեղրից, շատ սիրում է նաև մորի ուտել: Երբ որևէ մեկը մոտենում է թփին մորի ուտելու համար, նա ուժգին մռնչում և թույլ չի տալիս: Դաստիարակը

երեխաներին առաջարկում է միասին գնալ անտառ՝ մորի հավաքելու: Երեխաներն արտասանելով մոտենում են թփին, որի տակ նստած է արջը.

*Արջի մոտ անտառում  
Մենք մորի ենք հավաքում,  
Իսկ նա նստած իր որջում  
Խոնփում է, խոնփում:*

Այդ պահին արջուկը մոնչալով թույլ չի տալիս երեխաներին՝ մոտենալ իր թփին և փորձում է բռնել որևէ մեից, իսկ երեխաներն արագ փախչում են: Խաղը կարելի է կրկնել:

Խորհուրդ դաստիարակին: Եթե խմբում որոշ երեխաներ կցանկանան պատմել կենդանաբանական այգի իրենց այցելության մասին, տվեք նրանց այդ հնարավորությունը: Առաջադրված հարցերը կարող են փոխվել՝ նկարի բովանդակությամբ համապատասխան:

ՊԱՐԱՊՈՒՆԸՆԵՐ 81-82

Թեման՝ «Ընտանի կենդանիներ. կաթնասուններ»

Տեսակը

Զրույց, նկարի պատմում

Նպատակը

Հարստացնել ընտանի կենդանիների վերաբերյալ երեխաների գիտելիքները: Սովորեցնել ճիշտ անվանել կենդանիների ձագերին, հարստացնել բառապաշարը կաթնասուն, բառաչել, մայել բառերով:

Սովորեցնել ուշադիր դիտել, հասկանալ և վերարտադրել նկարի բովանդակությունը: Զարգացնել կապակցված խոսքը, բառերը նախադասության մեջ դնելով, թվով, ժամանակով ճիշտ համաձայնեցնելով միտքը արտաբերելու կարողությունը, ստեղծագործական կարողությունները:

Նախապատրաստական աշխատանք

Ընտանի կենդանիների մասին գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցում, մուլտֆիլմերի դիտում:

Անհրաժեշտ նյութեր՝ ընտանի կենդանիների նկարներ, «Ազարակ» սյուժետային նկար

Ընթացքը

1-ին օր

Առաջարկե՛ք գուշակել հանելուկները և ցույց տալ համապատասխան կենդանու նկարը

Հսնոյ է գնում օրը օրին.

Կանաչ դաշտում

Կար է տալիս նա բոլորին (կով)

Կանաչ խոտ են արածում.

Հենրիկ Բարաչանյան

Բայց տալիս են

Մեզ ճերմակ կաթ ու մածուկ: (կով, ոչխար)

Եղիշե Պետրոսյան

Չեզ բուրդ կտամ՝

Ծանոթի հետ միշտ բարի.

Ինչպան տվեք.

Կողերի դեմ միշտ արի.

Բայց թե հիմա

Գիշեր, գերեկ նա չարից

Ինձ մի՛ խոզեք (գառ)

Պահպանում է տուն ու բակ: (չուն)

Բարգմ Հենրիկ Սևակի

Հենրիկ Բարաչանյան

Հարցեր

• Ի՞նչ ինչ բնույթի կենդանիներ գիտեք՝ կատու, այծ, ձի, խոզ

• Ինչու՞ են այդ կենդանիները կոչվում բնույթի (Սևակագրված են մարդու կործից ապրում են ձայնկանո հետ. մարդիկ պահում, խնամում են երանգ, փոխաբեր՝ նրանք մարդուն զանազան բարիքներ են տալիս)

• Ի՞նչ են տալիս մարդուն կովը, գառը, այծը:

• Ի՞նչ օգուտ են տալիս մարդուն շունը, կատուն, ձին: (Շները պահպանում տուն ու բակ, ձիերն օգնում են տեղաշարժվել, ինչ-որ բան տեղափոխել մի տեղից այլ տեղ, կատուները հանգստացնում են մարդկանց, որսում են մկներին):

Բացատրե՛ք, որ կատուն, շունը, ձին, կովը, այծը, խոզը կաթնասուններ են, քանի որ կաթով են կերակրում իրենց ձագուկներին:

Հարցրե՛ք.

• Ի՞նչ են ասում շան ձագին: (լակոտ)

• Ի՞նչ են ասում կատվի ձագին: (փխիկ)

• Ի՞նչ են ասում ձիու ձագին: (քուռակ)

• Ի՞նչ են ասում կովի ձագին: (հորթուկ)

• Ի՞նչ են ասում այծի ձագին: (ուլ)

• Ի՞նչ են ասում խոզի (ոչխարի) ձագին: (խոզուկ, գառնուկ)

• Ի՞նչ ձայն է հանում շունը: (կատուն, ձին, կովը, այծը, խոզը, ոչխարը): (կատուն մլավում է, շունը հաչում է, ձին խրխնջում է, կովը բառաչում է, այծը մկկում է, խոզը խոխոտում է, ոչխարը մայում է):

Դիդակտիկ խաղ՝ «Ո՞վ ինչ ձայն է հանում»

Պարապմունքն ավարտել «Ի՞նչ նոր բան իմացաք ընտանի կենդանիների մասին» հարցով:

2-րդ օր

Հաջորդ պարապմունքն սկսեք. «Ո՞ր կենդանիներին ծանոթացաք նախորդ անգամ, ի՞նչ հետաքրքրիչ բաներ իմացաք նրանց մասին, ինչո՞ր ենք նրանց ասում ընտանի կենդանիներ» հարցերով:

Հետո երեխաների ուշադրությունը հրավիրե՛ք՝ «Ազարակ» սյուժետային նկարին, առաջարկե՛ք ուշադիր դիտել այն, վերնագիր հորինել նկարի համար և պատմել, թե ինչ են տեսնում նկարում:

Ուղղորդող հարցերով օգնե՛ք երեխաներին պատմել նկարը.

• Ի՞նչ կենդանիներ եք տեսնում նկարում:

• Ի՞նչ է անում հորթուկը:

• Քանի՞ ձագ ունի կատուն:

• Ինչի՞ց է երևում, որ կենդանիները համերաշխ են:

• Ո՞վ է խնամում կենդանիներին և այլն:

Մինչ պատմել հարցնելն առաջարկե՛ք անվանել նկարը: Բոլորի հորինած անուններից խմբով ընտրում են ամենահաջող անվանումը:

Կազմակերպե՛ք դիդակտիկ խաղ՝ «Կտի՛ր սխալը»: Զույգ տվեք որևէ կենդանու նկար և սխալ բացատրություն տվեք այդ կենդանու մասին երե-

խաները պետք է որոշեն՝ ճիշտ եք ասում, թե՞ ոչ: Օրինակ՝ ... այծը կարողում է, արքադադր հայում է, կատուն արտասանում է և ... Հարցրե՛ք՝ այծը կարո՞ղ է կարողալ...: Երեխաները պետք է տան ճիշտ պատասխանը և ասեն, թե ինչ կարող է անել այծը. մկկալ, արածել, ցատկոտել, պոզահարել...: Խրախուսե՛ք երեխաներին ամեն մի կենդանու մասին տալ լրացուցիչ տեղեկություն. «Հավը կորեկ է ուտում, ձու է ածում, ունի երկու ոտք, մեկ կատար և այլն»:

Պարապմունքի ավարտին երեխաները կենդանիների լեզվով (նրանց արձակած ձայներով) հրածեշտ են տալիս ազարակի կենդանիներին:

Թեման՝ «Խոսքի հնչյունային կուլտուրա»

«Ս-զ» հնչյունների տարբերակում

Խնդիրները: Չարգացնել երեխաների հնչյունային լսողությունը:

• Վարժեցնել երեխաներին *զ-ս* հնչյունների ընդգծված արտաբերման և արտասանության մեջ: Սովորեցնել տարբերակել, բարձրաձայն և ճիշտ արտասանել այդ հնչյունները:

• Անվանել բառեր, որտեղ դրանք լսվում են, բառից անջատել այդ հնչյունը, արտասանել բառում այդ հնչյուններն արտահայտիչ, որոշել հնչյունի դիրքն այդ բառում (բառասկզբում, բառամիջում, բառավերջում):

Պարապմունքի ընթացքը: Դաստիարակը հիշեցնում է երեխաներին իրենց հայտնի երգերը կամ ոտանավորները, որտեղ կան այդ հնչյունները, այնուհետև առաջարկում է բառեր այդ հնչյուններով. օրինակ՝ գարդ, զանգ, մազ, խոզ, սարդ, սոսինձ, սրամիտ, զվարճալի, հետախույզ, Նազելի, Սասուն, Սարգիս, Սոնա, Չարուհի, Նազիկ:

Աղջիկներին առաջարկում է լրացնել մախաղասություններ այդ բառերով: Կազմակերպվում է խաղ-վարժություն՝ «Փուչիկ»:

- Ի՞նչ ձայն է հանում փուչիկը, երբ օդը դանդաղ դուրս է գալիս (ս՝-ս՝-ս՝):

Երեխաները նմանակելով արտասանում են *ս* հնչյունը:

Դաստիարակն առաջարկում է երեխաներին ասել շուտասելուկ այդ հնչյուններով և գտնել հանելուկի պատասխանը.

Սուր Ըողիկին սուլիչ նվիրեց,      Չարիկը Ժորիկին շնիկ նվիրեց,  
Ըողիկը Սոսին նուշ հյուրասիրեց:      Ժորիկը Չարիկին զամբյուղ նվիրեց:

Մի ուլիկ կա, մի ուլիկ,

Պոզեր ունի սուրուլիկ,

Եվ ուլիկը այդ սիրուն

Պարծենալ է շատ սիրում:

Երեխաներն աշխատում են աշխատանքային տետրերով (ս-զ)՝ թեմայի ուղղությամբ: Երեխաները վերարտադրում են թերթի էջի վրա պատկերված առարկաները՝ սկսելով վերին շարքից, շարունակելով դեպի աջ: Խաղանիշով նշում են առարկաները, որոնց անվանումներում կա *զ* հնչյունը: Դաստիարակը ստուգում է առաջադրանքները և հետաքրքրվում, թե ո՞ր նկարն է հաճելի դիտել, ո՞ր բառն է առավել հաճելի արտաբերել:

Երեխաները կատարում են նոր առաջադրանք. որոշում են *զ* հնչյունի դիրքը բառի մեջ երկրորդ շարքում:

Դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրում է նոր խաղի վրա: Արտասանում է ոտանավորը դանդաղ և երեխաներին առաջարկում՝ այն

բառի մեջ, որտեղ կա *զ*, ծափ տալ երկու անգամ, որտեղ կա *ս* ծափ տալ մեկ անգամ:

**Պարապմունքից դուրս ընթերցանություն  
Վրեժ Վարդունի**

**ԲԶԵՉ**

*Ի՞նչ ես անվերջ բզզում, բզե՛զ,  
Չեմ բողմի գաս մանկապարտեզ,  
Մեկ խաղում ես, մեկ էլ կծում,  
Խռովում ես, պոչդ ցցում:  
Ինձ չես խաբի, կծա՛ն բզեզ,  
Զո խաղերին ծանոթ եմ ես...  
Մեկ խաղում ես, տզզում օդում,  
Մեկ էլ աչքս արցունքոտում:  
Չուր մի՛ տզզա, բզզա՛ն, բզեզ,  
Չեմ բողմի գաս մանկապարտեզ:*

**ՊԱՐԱՊՄՈՒՆԷՔ 84**

**Թեման՝** Հ. Թումանյան, «Ուլիկը»

**Տեսակը՝** հեքիաթի վերապատմում

**Խնդիրները**

- Սովորեցնել ընկալել գեղարվեստական ստեղծագործության իմաստը
- Հաջորդականությամբ և տրամաբանված վերապատմել հեքիաթը:
- Ակտիվացնել երեխաների բառապաշարը արոտ, սարեսար, արածում, մկկում բառերով:

**Անհրաժեշտ նյութեր՝** սեղանային թատրոնի պերսոնաժներ՝ այծ, ուլիկ, գայլ, ընտանի կենդանիների նկարաշար:

**Պարապմունքի ընթացքը**

Դաստիարակը երեխաների համար կարդում է Հ. Թումանյանի «Ուլիկը» հեքիաթը: Այնուհետև հարցնում է՝ դուր եկավ նրանց այդ հեքիաթը:

Մեկ անգամ ևս ընթերցում է հեքիաթը և երեխաների ուշադրությունը հրավիրում այն բանի վրա, որ անհրաժեշտ է ուշադիր լսել, որպեսզի պատմելիս ոչինչ բաց չթողնել և չշփոթել:

Այնուհետև շարունակում է. «Ինչի՞ մասին է հեքիաթը: Ինչի՞ց պետք է սկսել պատմել այն: Հետո ինչի՞ մասին է շարունակությունը: Ամեն անգամ տուն գալիս ի՞նչ էր մկկում այծն իր ուլին: Մի օր ի՞նչ պատահեց»:

- Ինչպե՞ս վարվեց խելամիտ սևուկ ուլիկը:

**Դաստիարակը հնարավորություն է ընձեռում երեխաներին՝ գնահատելու ուլիկի և գայլի արարքները: Ընթացքում ուղղորդում է երեխաների պատասխանները:**

Առաջարկում է 3-4 երեխայի՝ ըստ ցանկության, հեքիաթը պատմել հատվածներով, միաժամանակ օգնում է տեքստի ընթերցմանը զուգահեռ՝ սեղանային թատրոնի պերսոնաժներով բեմականացնել այն:

Ամեն անգամ դաստիարակը հիշեցնում է հեղինակի անունը, ազգանունը, ստեղծագործության անվանումը: Տեքստի վերապատման գնահատման ընթացքում ներգրավում է նաև երեխաներին, նկատելով դրականը և բացթողումները:

**Նյութի ամփոփում**

- Ի՞նչ սովորեցրեց մեզ հեքիաթը:

**Խաղ՝ «Անվանիր ձագուկին»**

Դաստիարակն առաջարկում է երեխաներին.

-Ուշադիր դիտեք և ասեք՝ «Ինչո՞վ են իրար նման այս նկարների մեջ պատկերված կենդանիները /կենդանիներն իրենց ձագերի հետ են, բոլորն ընտանի կենդանիներ են/»:

-Ի՞նչ ընդհանուր բան կա այս բոլոր նկարներում /մայրերը/: Ինչո՞վ են նրանք տարբերվում:

Նկարում պատկերված են տարբեր կենդանիներ՝ իրենց ձագուկների հետ: Եկեք անվանենք նրանց.

- Չիու ձագուկին անվանում են.../մորուկ/:
- Էշի ձագուկին... /քուռակ/:
- Շան ձագուկին.../ակոտ/:
- Այծի ձագուկին.../ուլ/:
- Ոչխարի ձագուկին...գառ/:
- Խոզի ձագուկին.../խոճկոք/:

*Խաղը կարելի է քարոլացնել:*

Երեխաներին ցուցադրել իրար նման՝ ոչ միայն ընտանի, այլև վայրի կենդանիների խմբեր պատկերող նկարներ:

Առաջարկել երեխաներին.

- Ուշադիր դիտեք և ասե՛ք՝ «Ինչո՞վ են իրար նման, ի՞նչ ընդհանուր բան կա այս նկարներում, և ինչո՞վ են իրարից տարբերվում նկարների մեջ պատկերված կենդանիների խմբերը /նման են, քանի որ բոլոր կենդանիներն էլ պատկերված են խմբերով, տարբեր են, քանի որ նկարներում պատկերված են և՛ ընտանի, և՛ վայրի կենդանիների խմբեր/:

Հարկավոր է անվանել կենդանիների խմբերի անվանումները՝ ցուցադրելով համապատասխան նկարները:

- Կենդանիների խմբեր
- Չիեր-երամակ
  - Կովեր-նախիր
  - Գալլեր-ոհմակ,
  - Խոզեր-բոլուկ
  - Չկներ-վտառ
  - Ոչխարներ-հուտ
  - Թռչուններ-կրամ

**Թեման՝ «Մարդու մարմինը» /ճանաչողական զարգացում/  
Խնդիրները**

• Երեխաներին տարրական գիտելիքներ հաղորդել սեփական մարմնի կառուցվածքի մասին, ընդլայնել նրանց պատկերացումներն իրենց օրգանիզմի վերաբերյալ:

• Խթանել երեխաների պատմելու կարողությունները: Ամրապնդել կապակցված նախադասություններով արտահայտվելու հմտությունները:

• Ընդլայնել երեխաների գիտելիքները սննդի, դրա նշանակության, սննդի և մարդու առողջության փոխկապակցության վերաբերյալ:

**Քառապաշարի հարստացում**

Ճշգրտել և ամրապնդել երեխաների քառապաշարը՝ Գոյականներով՝ ուտեր, բոքեր, աղիներ, ստամոքս, կրծքավանդակ, ածականներով՝ ներքին օրգաններ, կարևոր օրգան բայերով՝ մաքրում է արյունը, արյունը գտնում է, մղում է:

**Մեթոդական հնարներ**

Ջրույց, հարցեր երեխաներին, դիտողական նյութի կիրառում, խաղեր, ուսուցում, ընթերցանություն. հարցերին պատասխանելու մղում, խթանում:

Անհրաժեշտ նյութեր՝ մարդու մարմնի գծապատկեր, գծապատկեր ներքին օրգաններով, մթերք պատկերող առարկայական նկարներ

**Նախապատրաստական աշխատանք**

Մարդու օրգանիզմի վերաբերյալ նկարների, ցուցապատանների դիտում, համեմուկների գուշակում, գրույց՝ օրգանիզմի, առողջ սննդի օգտակարության մասին, վարժությունների, դիդակտիկ խաղի անցկացում:

**Դաստիարակ**

Ե՛վ փոքրերը, և՛ մեծերը, և՛ սևահերները, և՛ շիկահերները, և՛ թուլակազմները, և՛ ամրակազմները, բոլորը տարբեր են, բայց միևնույն ժամանակ նման են իրենց մարմնի կառուցվածքով. նրանցից յուրաքանչյուրն ունի ձեռքեր, ոտքեր, բերան, երկու ականջ, երկու աչք և քիթ:

Երեխաներին առաջարկում է ըստ անվանումների՝ գծապատկերի վրա ցույց տալ մարմնի մասերը:

Խաղ՝ «Մեր մատները» /ցույց ենք տալիս և անվանում աջ և ձախ ձեռքերը/:

- Իմ ձեռքերն են՝ աջ ու ձախ.
- Աշխատանքից չունեն վախ.
- Չէ՞ որ ամեն մարդ գիտի.
- Ով աշխատի, նա կուտի:
- Այնուհետև դաստիարակը շարունակում է.

-Ի՞նչ եք կարծում, երեխաներ, ինչի՞ համար են մեզ անհրաժեշտ աչքերը:

-Իհարկե, տեսնելու համար:

-Իսկ ինչի՞ համար են ականջները, ձեռքերը /ականջները՝ լսելու, ձեռքերը՝ բռնելու, շոշափելու, շոյելու, գրկելու, գրելու, աշխատելու/:

Լսելով երեխաների պատասխանները՝ դաստիարակը շարունակում է. «Մենք ունենք նաև հոտատության և համի զգայարաններ/քիթ, լեզու/»:

Մրանք մեր զգայական կարևոր օրգաններն են, որոնք մեզ պատմում են, թե ի՞նչ է տեղի ունենում աշխարհում:

-Իսկ կարևորն այն է, որ մենք այդ բոլորին տիրապետում ենք մեր գլխի միջոցով՝ ուղեղով/, ուսումնասիրում, հիշում ամենը, ինչ պատմում են մեր զգայական օրգանները:

-Իսկ ոտքե՞րք, ոտնաթաթե՞րը, ուսե՞րը, իրա՞նը: Կարո՞ղ եք արդյոք շոշափելով գտնել իմ անվանած մասերը:

Խաղ՝ «Շոշափելով գտիր մարմնի անվանած մասը»

Երեխաները կանգնում են զույգերով, զույգերից մեկը փակում է աչքերը և շոշափելով գտնի դաստիարակի կողմից անվանած մարմնի մասը: Այնուհետև երեխաները փոխում են տեղերը:

Ֆիզկուլտ- դադար

Մատիկներով խաղ-վարժություն՝ «Ճերմակակող կաչաղակը»

/փոխադրությունը՝ Հ.Միտոյանի/

Վարժությունը կատարել մեկ ձեռքով, իսկ մյուսով օգնել՝ փակելու ձեռքի մատները:

Ճերմակակող կաչաղակը

Ճերմակակող կաչաղակը

Հասնող շիլա էր եփում,

Ձագուկներին բաժանում:

Այս ձագուկին բաժանեց /ձալել ճկույթը/,

Այս ձագուկին էլ սուկեց /ձալել մատնեմատը/,

Այս ձագուկին էլ հասցրեց /ձալել միջնամատը/,

Այս ձագուկին էլ մաս հանեց /ձալել ցուցամատը/,

Այս ձագուկին չտվեց /չարժում է բութ մատը/.

Վու փայտ չես կրել,

Վառարան չես վառել,

Շիրա թեղ չի հոսել:

Արջին եռատոր դաստիարակն առաջարկում է երեխաներին կրկնել՝ սկզբում զերերով, այնուհետև խմբով.

Վաստիարակն ամփոփում է խաղ-վարժությունը, շեշտում ծուլության վնասները, սպառ շարունակում

-Իմանալ մեր մարմնի կառուցվածքը, նշանակում է ճանաչել ինքնեք մեզ: Մարմնի ներսում գտնվում են օրգաններ, որոնք օգնում են մարդուն զարգանալ, ապրել:

Իսկ այժմ ձեռքը դրե՛ք ձեր կրծքավանդակին, այնպես, ինչպես ես: Եկե՛ք, լուռ նստենք և լսենք ինքներս մեզ: Չգո՞ւմ եք, ներսում ինչ-որ բան խփում է:

Երեխաների պատասխաններից հետո դաստիարակը հարցնում է.

-Ի՞նչ է այն:

-Սիրտն է,- պատասխանում են երեխաները: Երեխաներից մեկն այն ցույց է տալիս գծապատկերի վրա:

-Այո՛, սիրտը շատ կարևոր օրգան է, որին կարող ենք մենք լսել, եթե ձեռքը դնենք մեր կրծքավանդակին:

-Իսկ ինչպիսի՞ տեսք ունի այն,- շարունակում է դաստիարակը:

Մարդու սիրտը չափերով քիչ մեծ է իր բոունցքից: Մեղմե՛ք ձեր բոունցքը, և մենք կտեսնենք, թե ում սիրտն ինչպիսի՞նն է:

Սիրտն աշխատում է զիշեր ու ցերեկ, առանց հանգստի: Այն պոմպի նման արյունը մղում է ամբողջ օրգանիզմին:

Մարդն ունի ևս մի օրգան, որն ինչպես սիրտը՝ աշխատում է առանց հանգստի:

Դրանք թոքերն են:

Դաստիարակն առաջարկում է երեխաներին պատասխանել այն հարցին, թե կարո՞ղ է մարդն ապրել առանց շնչառության /ոչ/:

Այնուհետև շարունակում է. «Եկե՛ք փորձենք, մի քանի վայրկյան պահել մեր շնչառությունը: Չի՞ ստացվում, ուրեմն մարդը չի կարող ապրել առանց շնչառության»:

Որպեսզի մարդու օրգանիզմը լավ աշխատի, անհրաժեշտ է, որ բոլոր օրգանները սնվեն: Յուրաքանչյուր օր մարդն օգտագործում է սնունդ: Ափսեհից սնունդը գդալով անցնում է մարդու թերանը, և այստեղից սկսվում է սննդի ճանապարհորդությունը: Բերանի մեջ առամները մանրացնում են այն փոքր կտորների: Թուքը թրջում է սնունդը, որպեսզի այն հեշտությամբ անցնի իր հետագա ճամփան դեպի ստամոքս: Իսկ ինչպիսի՞ տեսք ունի ստամոքսը:

Երեխաները գծապատկերի վրա ցույց են տալիս ստամոքս-օրգանը:

Այնուհետև դաստիարակը շարունակում է.

-Մարդու ստամոքսի մեջ սնունդը վեր է ածվում մեր մարմնին օգտակար, սնուցող նյութերի, որոնք էլ փոխանցվում են աղիներ, իսկ մնացորդները բնական ճանապարհով դուրս են գալիս:

Մեր օրգանիզմում էլի կարևոր օրգաններ կան, դրանցից մեկը երիկամներն են: Երեխաներից մեկը դաստիարակի օգնությամբ երիկամը ցույց է տալիս գծապատկերի վրա:

Մարդն ունի երկու երիկամ: Ինչի՞ համար են երիկամները:

- Երկվամյակներ մարում են արյունը:

Ինչպես դուք տեսաք, մարդկային օրգանիզմը շատ բարդ է և ամեն ինչ նրանում փոխկապակցված է: Իսկ այժմ ո՞վ կասի, թե ի՞նչ է անհրաժեշտ օրգանիզմին, որպեսզի մարդը լինի առողջ, մեծանա և զարգանա:

Երեխաները պատասխանում են, որ մարդը պետք է օգտագործի օգտակար սննդամթերք, որը պարունակում է վիտամիններ:

Դաստիարակը շարունակում է, որ վիտամինները շատ կարևոր են առողջության համար: Դրանք շատ են, սակայն, ամենակարևորները վիտամին A, B, C, D-ն են:

Եկեք, տեսնենք, ո՞ր վիտամինը ո՞ր օրգանի վրա է ներգործում: Վիտամին A-ն՝ տեսողության, վիտամին B-ն՝ սրտի, վիտամին C-ն՝ շնչառության օրգանների, վիտամին D-ն՝ ողնաշարի:

Դաստիարակը ներկայացնում է մթերքների վիտամինային աղյուսակը և երեխաների ուշադրությունը հրավիրելով՝ առաջարկում է ընտրել այն մթերքների նկարները, որոնք պարունակում են մարդու օրգանիզմին անհրաժեշտ հիմնական վիտամինները: Մեկ անգամ ևս երեխաները պատմում են, թե ո՞ր մթերքներն են անհրաժեշտ օգտագործել:

Դաստիարակ: Դուք իմացաք, թե ո՞ր մթերքներն է լավ օգտագործել: Իսկ այսօր ես ձեզ համար բերել եմ Արամուսի համեղ գազար, որը կճաշակենք միասին:

## ՊԱՐԱՊՄՈՒՆՔ 87

Թեման՝ «Մենք և մեր արտաքինը»

Տեսակը՝ ինտեգրված պարապմունք

Նպատակը

Օգնել երեխային ճանաչել ինքն իրեն, զարգացնել պատմելու, ինքն իրեն ներկայացնելու կարողությունը, սովորեցնել նկատել նմանություններն ու տարբերությունները և քերականորեն ճիշտ կառուցված նախադասություններով ներկայացնել դրանք:

Նախապատրաստական աշխատանք

Նախնական գրույց՝ գեղեցկության, բարության, ընկերասիրության, աշխատասիրության մասին: Նախապես երեխաներին բաժանեք թղթեր և գունավոր մատիտներ և առաջարկե՛ք անել ինքնանկար: Հետո մեկ այլ թղթի վրա թող ուրվագծեն իրենց ձեռքը, ոտքը (կոշիկը հանում են, բոքիկ ոտքը դնում թղթին և շուրջը գծելով ստանում ոտքի թափի ուրվագիծը, մատները բացած ձեռքի ափը դնում են թղթին և շուրջը՝ մատների միջով գծելով ստանում են ձեռքի ուրվագիծը): Վերջում բոլոր նկարները, ձեռքի, ոտքի ուրվագծերը և երեխաների լուսանկարները փակցրե՛ք պատին և կազմակերպե՛ք զբոսանք պատկերասրահում:

Անհրաժեշտ նյութեր՝ թղթեր, գունավոր մատիտներ, երեխաների լուսանկարները

Ընթացքը

Խոսքի զարգացման պարապմունքին առաջարկեք նայել իրենց նկարներին և նկարագրել իրենց արտաքին տեսքը.

- Ինչպիսի՞ն է հասակը, քաշը:
- Ի՞նչ գույնի են մազերը, աչքերը:
- Ի՞նչ չափի են մազերը:
- Ո՞ւմ ձեռքի չափն է լայն, ո՞ւմ ոտքն է մեծ:
- Զանի՞ տարեկան է:
- Ի՞նչ կա հագին:
- Ինչո՞վ եք մման, ինչո՞վ եք տարբեր:

Ընթերցե՛ք «Դու ի՞նչ ես արե՞լ» բանաստեղծությունը և հարցրե՛ք.

- Ի՞նչ բարի գործ ես արել (այսօր, երեկ, վերջերս):

Հետո օգնե՛ք համեմատել իրենց լուսանկարները և ինքնանկարները: Զննարկե՛ք.

- Ինչպե՞ս ես ինքդ քեզ նկարել:
- Ի՞նչն է քեզ դուր գալիս նկարիդ մեջ:
- Ինչո՞վ են ձեր լուսանկարները և ինքնանկարները իրար նման:

- Ինչու՞վ են տալիքերվում:
- Ամփոփեք՝ ասելով, որ բոլոր նկարներն էլ շատ գեղեցիկ են:

Դու ի՞նչ ես արել (հեղ. Յու.Սահակյան)

Կանաչ աշխարհ է  
 Ու կարմիր արև:  
 Այդ արևի տակ  
 Դուք ի՞նչ եք արել.  
 Մի ծառ տնկե՞լ եք,  
 ՄԻ ծիտ փրկե՞լ եք,  
 Մի սուտ ճշտե՞լ եք...  
 Մի՛ հուսահատվեք,  
 Ուշ չի երբերք էլ,  
 Թե ունեք խելոք  
 Սրտեր ու ձեռքեր:

Խորհուրդ՝ դաստիարակին: Սկզբում ցանկացողներին հնարավորություն տվե՛ք ներկայացնել իրենց նկարները, հետո խրախուսե՛ք նաև անհամարձակներին: Մյուսներին ընդգրկե՛ք ընդհանուր քննարկման մեջ: Ինքնանկար անում են կամ օրվա ազատ ժամին կամ կերպարվեստի պարապմունքին:

Թեման՝ «Հիգիենա»

Տեսակը՝ խաղային շարժառիթով բեմականացում  
Ինտեգրված պարապմունք

Նպատակը

Չարգացնել մտքերը բանավոր և ոչ բանավոր /վերբալ և ոչ վերբալ/ միջոցներով արտահայտելու կարողություն: Դաստիարակել մաքրասիրություն:

Նախապատրաստական աշխատանք

Նախապես ընթերցե՛ք Գ. Մովսիսյանի «Հասմիկն ու ջուրը» պատմվածքը, ընտրե՛ք դերակատարներ և պատրաստե՛ք փոքրիկ բեմականացում:

Անհրաժեշտ նյութեր՝ տարբեր զգացմունքներ (ուրախություն, դժգոհություն) ատրահայտող դեմքերի նկարներ

Ընթացքը

Պարապմունքի սկզբում հայտնե՛ք, որ դիտելու են «Հասմիկն ու ջուրը» բեմականացումը: Մյուս երեխաներին բաժանե՛ք զգացմունքներ արտահայտող դեմքերի նկարները. մի մասին ժպտացող դեմքերի նկարները, մյուս մասին՝ լացող: Դերակատարները կցուցադրեն բեմականացումը, իսկ մյուսները ծավալվող գործողություններին կարձագանքեն համապատասխան պահին բարձրացնելով ճիշտ զգացմունք արտահայտող դեմքը: Օրինակ՝... **Հասմիկի բշիկները կեղտոտ, կեղտոտ են:** (Բարձրացնում են դժգոհություն արտահայտող կամ լացող դեմքի նկարը): ... - **Ո՛չ, դու սատն ես,- ասաց Հասմիկը:** (Բարձրացնում են դժգոհություն արտահայտող կամ լացող դեմքի նկարը) : - **Դու լավն ես,- ասաց Հասմիկը ջրին:** - **Դու լավն ես,- ասաց Հասմիկը օճառին և ուրախ ժպտաց:** (Բարձրացնում են ուրախություն արտահայտող կամ ժպտացող դեմքի նկարը):

**Ինչպե՞ն ժպտաց Հասմիկը, երեխանե՛ր:** (Բոլորը միասին լայն ժպտում են, իսկ ձեռքին ժպտացող նկար բռնածները նաև բարձրացնում են նկարը):

Անցկացրե՛ք «Առանց խոսքի» դիդակտիկ խաղը՝ առաջարկելով հարցերին պատասխանել առանց խոսելու՝ ծեստելով և դեմքի արտահայտությունը փոխելով: Խաղի կանոնը խախտողը կանգնում է կենտրոնում և իր միտքն արտահայտում ծեստելով, միմիկայով:

Հարցեր.

- Ի՞նչ եք զգում, երբ կեղտոտ են լինում ձեր ձեռքերը, դեմքը, շորերը:
- Ի՞նչ եք զգում լվացվելուց հետո:
- Ի՞նչ եք զգում, երբ մաքուր ու գեղեցիկ եք հագնված:
- Շրջապատի մարդիկ ի՞նչ են զգում, երբ նայում են ձեզ լվացվելուց, լողանալուց, մաքուր հագնվելուց հետո:

• Ու՞մ հետ սիրով կշփվեք, մրտա, կեղտո՞ւտ, բե՞ մաքուր, կոկիկ երեխայի հետ:

- Մաքրությանը ասե՞նք՝ այո:
- Փնթիությանն ի՞նչ ասենք:

Օրվա երկրորդ կեսին առաջարկե՛ք նկարել «մաքուր» և «փնթի» նկարներ: Հետո բոլոր «մաքուր նկարները» փակցրե՛ք պատին, իսկ «փնթի նկարները» հավաքե՛ք և լցրե՛ք աղրամանը՝ այդպիսով հրաժեշտ տալով փնթիությանը:

Կ. Չուկոսկի՝ «Կեցցե՛ մաքրությունը»

Կեցցե՛ս, օճա՛ն  
Անուշահոտ,  
Կեցցե՛ս, փափուկ  
Երեսարբիչ:  
Դու՛, աստամի  
Խոզանակիկ,  
Եվ դու՛, գլխի  
Սիրուն սանրիկ:

Լավ լողանանք  
Ավազանում,  
Տաք բաղնիքում,  
Հոտող ջրում:  
Եվ միշտ սիրենք  
Հստակ ջուրը.  
Նա՛ է մաքրում  
Կեղտն ու մուրը:

ՊԱՐԱՊՄՈՒՆԸ 89

Թե՛ման՝ «Մեզ հյուր է բժիշկը»

Տեսակը՝ գրույց

Նպատակահարմար է սրտապմունքն անցկացնել բժշկի միջազգային օրը՝ հունիսի 21-ին կամ առողջության միջազգային օրը՝ ապրիլի 7-ին:

Պարապմունքի նպատակը

Շարունակել տեղեկատվությունը տարբեր մասնագիտությունների մասին: Խնդիրները

Ծանոթացնել երեխաներին բժշկի աշխատանքին և դրա առանձնահատկություններին: Բացատրել, որ բոլոր մասնագիտություններն էլ շատ կարևոր են և անհրաժեշտ մարդուն: Ջարգացնել երկխոսության մեջ մտնելու, տրված հարցերին հստակորեն պատասխանելու կարողություններ:

Հարստացնել երեխաների գիտելիքները և խոսքը մի քանի հենակետային բառերով, որոնց տիրապետում են բժիշկները:

Անհրաժեշտ պարագաներ՝ տիկնիկ, մանկական բժշկական գործիքներ Նախնական աշխատանք՝ կարելի է ընթերցել Ռ. Ղարիբյանի «Լուսիկի կատուն», Ս. Կապուտիկյանի «Բժիշկ պապիկը ստեղծագործությունները»:

Պարապմունքի ընթացքը

Դաստիարակը պարապմունքն սկսում է «Ով ի՞նչ է ուզում դառնալ» հարցով:

Ապա ընդհանրացնելով երեխաների մտքերը՝ ասում է, որ ցանկացած մասնագիտություն կամ աշխատանք կարևոր է և անհրաժեշտ բոլորի համար. Դրանք մարդիկ ընտրում են իրենց ցանկությանը:

- Այսօր աշխարհի բոլոր մարդիկ նշում են բժշկի միջազգային օրը: Այս օրը յուրահատուկ է: Այսօր բոլորը մեծ երախտագիտությանը հիշում և շնորհավորում են նրանց, ում աշխատանքը կապված է մարդկանց առողջության հետ: Բժիշկներն օգնում են մարդկանց պահպանել առողջությունը, հիվանդ ժամանակ բուժում են մեզ:

- Իսկ ի՞նչ է առողջությունը: Պատասխաններ՝

- Երեխաներ, մեր մանկապարտեզում ևս կա մեկը, ով հոգում է ձեր առողջության մասին: Դա Արմինե Սերոբի Գևորգյանն է. Դուք բոլորդ նրան դիմում եք բժշկուհի՝ բուժույր՝ Արմինե: Մենք հաճախ ենք հղել նրա աշխատասենյակում: Իսկ այսօր նա է մեր հյուրը: Եկեք հրավիրենք բժշկուհի Արմինեին:

Բժշկուհին ներս է մտնում, ողջունում երեխաներին և մեկ ասցած ևս ներկայանում /տնում, ազգանուն, հայրանուն/:

Դաստիարակը երեխաների հետ միասին շնորհավորում է բժշկուհուն մասնագիտական տոնի առթիվ:

**Դաստիարակ** – Հարգելի՛ Արմինե, այսօր մենք երեխաների հետ գրուցում ենք այն մասին, թե ի՞նչ է առողջությունը: Չեր աշխատանքը կապված է մարդկանց առողջության հետ: Հետաքրքիր է իմանալ Ձեր կարծիքը՝ առողջության մասին:

**Բժշկուհի**– Առողջությունն այն է, երբ մարդիկ առողջ են, չկա հիվանդություն, երբ ձեր ոչ մի տեղը չի ցավում, երեխաները մեծանում են ուժեղ, ճարպիկ, խելացի:

Ապա կանգնեք: Յու՛յց տվեք ինձ՝ իրո՞ք դուք այդպիսին եք:

*Դաստիարակը կազմակերպում է որևէ աշխուժացնող խաղ: Կարող է առաջարկել նաև խաղ-հանելուկներ.*

- ճաշը պատրաստում է .....
- Կոշիկը կարում է.....:
- Պատը շարում է.....:
- Մարդկանց բուժում է.....:
- Մեքենան վարում է.....:
- Հացը թխում է .....

**Բժշկուհի.** – Առողջ մարդը միշտ հանգիստ է, ուրախ, նա շատ համերաշխ է, ունի շատ ընկերներ:

- Իսկ դուք չե՞ք նեղացնում միմյանց:

**Դաստիարակ.** – Բժշկուհի՛, մեր բոլոր երեխաներն էլ առողջ են, խելացի, նրանք շատ ապրեն, հաճույքով են մասնակցում ինչպես ֆիզկուլտուրայի, այնպես էլ մյուս պարապմունքներին, շատ են սիրում լինել մաքուր օդում, խաղալ տարբեր զվարճալի և շարժուն խաղեր, միշտ օգնում են միմյանց:

**Դաստիարակ.**

– Բայց այսօր, սիրելի բժշկուհի, մենք մի փոքր տխուր ենք, որովհետև հիվանդացել է մեր շատ սիրելի տիկնիկ Նունիկը: Խնդրում ենք օգնել նրան: Բոլոր անհրաժեշտ պարագաները մենք ունենք:

*Դաստիարակը երեխաներից մեկին խնդրում է բերել խաղալիք-բժշկական գործիքները: Նրանք սեղ-մեկ անվանում են դրանք և նշում, թե որն ինչի համար է:*

*Բժշկուհին գնում է տիկնիկին և ասում, որ տիկնիկը մրսել է, և կոկորդը կարմրել է: Նա առաջարկում է պարապմունքից հետո տիկնիկին թեյ հյուրասիրել, կապել կոկորդը և գրում է դեղատոմս:*

*Երեխաները շնորհակալություն են հայտնում և ճանապարհում բժշկուհի Արմինեին:*

**Դիդակտիկ խաղ:** Պարապմունքի երկրորդ հատվածում դաստիարակը կազմակերպում է «Օգնե՛ք, բժիշկ» դիդակտիկ խաղը:

**Նպատակը՝** գարգացնել երեխաների կապակցված խոսքը: Կատարելագործել երկխոսելու կարողությունը:

Անհրաժեշտ պարագաներ՝ տարբեր կենդանիների նկարներ, սպիտակ խալաթ, խաղալիք-բժշկական գործիքներ, վիրակապ...

**Ընթացքը**

Դաստիարակն առաջարկում է երեխաներին՝ սեղանին դրված նկարներից, որոնց վրա պատկերված են կենդանիներ, ընտրել որևէ մեկը:

- Ինչու՞ ընտրեցիր շնիկին:

- Տանը պահու՞մ եք շնիկ:

- Ինչպիսի՞ն է այն:

- Իսկ դու ինչու՞ փխսիկ ընտրեցիր:

Այնուհետև դաստիարակը հագնում է սպիտակ խալաթ և ասում, որ նա այսօր կլինի բժիշկ Այբուլիտը: Երեխաները, վերցնելով իրենց ընտրած կենդանու նկարը, մտնենում են դաստիարակին.

– Խնդրում եմ օգնել, իմ վագրիկն իր թաթն այրել է:

- Իհարկե՛, կօգնեմ, ես հատուկ քսուկ ունեմ այրվածքների համար:

- Նապաստակն իր ոտքը քարին է խփել, շա՛տ է ցավում:

- Հիմա ես վիրակապ կդնեմ նրա ոտքին:

- Գայլի կոկորդը շա՛տ է ցավում.....

Եվ տեղի է ունենում երկխոսություն դաստիարակի և երեխաների միջև:

*Օրվա երկրորդ կեսին դաստիարակն ընթերցում է Զուկովսկու «Այբուլիտը»:*  
*Լրացուցիչ ընթերցանություն՝ նախնական աշխատանքի համար.*

**Լ. Կարիբյան, «Լուսիկի կատուն»**

- Բժիշկ, բժիշկ, եկ մեր տուն.  
Շատ հիվանդ է մեր կատուն,  
Մի ճար արա՛ լավանա,  
Թե չէ ձեռքից կզնա:  
Մեր Վաշիկը, ահագին  
Ճերմակ խալաթը հագին,  
Լուսիկի հետ մտավ տուն,  
Ուր պառկած էր սև կատուն:

Նայեց սուր-սուր ճանկերը,  
Շոյեց կեռ-կեռ հոնքերը,  
Շոցատետրը դուրս բերեց,  
Գրիչն առավ ու գրեց.  
- Ոչի՛նչ, ոչի՛նչ, ձեր կատուն  
Չունի այնքան տաքություն.  
Մի ձուկ, մի մուկ որ ուտի,  
Իսկույն ոտքի կկանգնի:

**Ս. Կապուտիկյան, «Բժիշկ պապիկը»**

Մի անգամ հանկարծ  
Ես հիվանդացա:  
Երբ աչքս բացի,  
Այնպե՛ս վախեցա.  
Գործիքը ձեռքին,  
Ակնոցը աչքին՝  
Բժիշկ պապիկն էր  
Նստել իմ կողքին:

Բայց բարի պապին  
Ինձ գգույշ քննեց  
Ու մի քաղցրահամ  
Դեղ նշանակեց:  
Եվ այն օրվանից  
Որտեղ որ տեսնում,  
Բժիշկ պապիկից  
Էլ չեմ վախենում:

ՊԱՐԱՊՍՏԻՆՔ 90

Թեման՝ «Ընկերություն»

Տեսակը՝ կիսատ թողած պատմության շարունակում

Նպատակը՝ սովորեցնել ավարտել կիսատ թողած պատմությունը: Չար-գացնել մտքերը կապակցված, քերականորեն ճիշտ արտահայտելու կարողությունը, ստեղծագործական երևակայությունը, դաստիարակել ընկերասիրություն, վարժեցնել ճիշտ արտաբերել «թ» հնչյունը:

Նախապատրաստական աշխատանք՝ Ա. Մովսիսյանի «Լավ ընկերը», Խ.Աբովյանի «Վատ ընկերը» պատմվածքների ընթերցում (Չեր ընտրությամբ), գրույց ընկերության մասին

Անհրաժեշտ նյութեր՝ Գ. Կարապետյան, «Հեքիաթ փոքրիկ թզուկի մասին», հեքիաթի՝ դաստիարակի կողմից կազմված սեղմագիրը:

Ընթացքը

Հայտնե՛ք երեխաներին, որ երեկ երեկոյան, երբ բոլորն արդեն տուն էին գնացել, մանկապարտեզ էր եկել մի փոքրիկ թզուկ: Նա պատմել է իր կյանքի պատմությունը և խնդրել օգնել իրեն: Որպեսզի երեխաներն օգնեն թզուկին, պետք է մի գեղեցիկ ավարտ հորինեն թզուկի պատմության համար: Առաջակե՛ք ուշադիր լսել թզուկի մասին պատմության սկիզբը (պամե՛ք կամ ընթեցե՛ք).

Կար-չկար, մի թզուկ կար: Այդ թզուկը ապրում էր անտառի եզրին կանգնած մեծ կաղնու փշակում: Նա ապրում էր մենակ և ընկերներ չունեք, քանի որ մոտակայքում ոչ մի թզուկ չկար: Թզուկը ընկերություն էր անում գեղեցիկ և գույնզգույն քիթեռնիկների հետ, որոնք շատ կարճ կյանք ունեին՝ ընդամենը մի օր: Մի օր էլ, երբ թզուկը մարգագետնում խաղում էր քիթեռնիկների հետ, լացի ձայն է լսում: Նա շատ է զարմանում, որովհետև գիտեր, որ մարդիկ ապրում են անտառից այն կողմ: Թզուկը վազում է դեպի լացի ձայնը: Նա տեսնում է մի փոքրիկ աղջկա, որ նստել էր ծառի տակ և լաց էր լինում:

Հարցրե՛ք.

• Ի՞նչ եղավ հետո:

3-4 բույե մտածելու ժամանակ տվեք երեխաներին, հետո ցանկացողներին (համարձակներին) օգնե՛ք ավարտել պատմությունը:

Վերջում հարցերով ամփոփե՛ք.

- Ինչի՞ մասին էր այս հեքիաթը:
- Դուք ինչպե՞ս կվարվեիք:
- Ինչպե՞ս են մարդիկ ընկերանում:
- Ինչպիսի՞ն պետք է լինեն իսկական ընկերները:

Պարապմունքն ավարտե՛ք շուտասելուկով.

Կաթ տամ, թուփ տուր,

Թուփ տամ, կաթ տուր:

Խորհուրդ դաստիարակին: Մեկ այլ աղիթով կարող եք ընթերցել Գ.Ոռիշխան Կարապետյանի (11 տարեկան) «Հեքիաթ փոքրիկ թզուկի մասին» ստեղծագործությունն ամբողջությամբ և ասել, որ այս հեքիաթը հորինել է 11 տարեկան դպրոցահասակ տղա:

Գ. Կարապետյան, «Հեքիաթ փոքրիկ թզուկի մասին»<sup>9</sup>

Կար-չկար, մի թզուկ կար: Այդ թզուկն ապրում էր անտառի եզրին կանգնած մեծ կաղնու փշակում: Նա ապրում էր մենակ և ընկերներ չունեք, քանի որ մոտակայքում ոչ մի թզուկ չկար: Թզուկը ընկերություն էր անում գեղեցիկ և գույնզգույն քիթեռնիկների հետ, որոնք ապրում էին մարգագետնում՝ երփներանգ ծաղիկների վրա: Մակայն նրանք շատ կարճ կյանք ունեին՝ ընդամենը մի քանի օր: Մի օր էլ, երբ թզուկը մարգագետնում խաղում էր քիթեռնիկների հետ, լացի ձայն է լսում: Նա շատ է զարմանում, որովհետև գիտեր, որ մարդիկ ապրում են անտառից այն կողմ: Թզուկը վազում է դեպի լացի ձայնը: Նա տեսնում է մի փոքրիկ աղջնակի, որ նստել էր ծառի տակ և լաց էր լինում:

-Ո՞վ ես դու, - հարցնում է թզուկը աղջկան: - Ինչո՞ւ ես լաց լինում:

-Ես... ես Ինզան եմ: Լաց եմ լինում, որովհետև մոլորվել եմ անտառում, -

լացելով պատասխանում է աղջնակը:

-Ինզա՞... Ինչ հետաքրքիր անուն է: Իսկ դու ինչո՞ւ ես առանց մեծերի անտառ եկել: Չէ՞ որ շատ վտանգավոր է: Քեզ կարող էին վնասել անտառի գազանները:

-Ես խաղում էի և մի քանի գեղեցիկ քիթեռ տեսա: Ես ուզում էի նրանց բռնել և վազում էի նրանց հետևից: Ես չգիտեմ, թե ինչպես եմ այստեղ հասել: Ես տուն եմ ուզում գնալ... բայց չգիտեմ՝ ինչպես...

-Լավ, փոքրիկ աղջիկ, ես քեզ կօգնեմ: Բայց դու ինձ պիտի խոստանաս, որ այլևս երբեք առանց մեծերի անտառ չես մտնի: Իսկ ես կգամ ձեր բակ՝ քեզ հետ խաղալու:

-Խոստանում եմ, խոստանում եմ, սիրելի՛ թզուկ: Ամեն ինչ կանեմ՝ ինչպես ուզում ես: Միայն խնդրում եմ, ինձ տուն տար: Մայրիկս կանհանգստանա:

Թզուկը քիթեռների ուղեկցությամբ աղջկան ուղեկցում է մինչև տուն: Տան բակում Ինզան և փոքրիկ թզուկը միմյանց խոստացան լավ ընկերներ լինել: Թզուկը հրաժեշտ տվեց Ինզային և շատ բարձր տրամադրությամբ վերադարձավ իր փշակը: Նա անչափ ուրախ էր, որովհետև վերջապես իսկական ընկեր ունեցավ: Եվ այդ օրվանից թզուկն ու Ինզան շատ հաճախ էին հանդիպում: Նրանք միասին խաղում կամ զբոսնում էին անտառի եզրին: Չէ՞ որ նրանք այժմ իսկական ընկերներ էին:

Ասացվածք Ծառն ամուր է արմատով,  
Իսկ մարդն՝ իր ընկերներով:

<sup>9</sup> <http://yerevanyb.wordpress.com/>

ՊԱՐԱՊՄՈՒՆԸ 91

Թեման՝ «Իմ առօրյան»

Տեսակը՝ դաստիարակի տված հարցերով պատմում

Նպատակը

Սովորեցնել տրված հարցերով հորինել պատմություն իրենց փորձից: Ջարգացնել մտքերը քերականորեն ճիշտ, ամբողջական, տրամաբանորեն կապակցված արտահայտելու կարողությունը, ստեղծագործական միտքը:

Նախապատրաստական աշխատանք՝ «Առավոտյան ճառագայթները» (հեղ.՝ Կ. Ուշինսկի) պատմվածքի կամ «Բարև, բարև, բարև» (Ե. Պողոսյան) բանաստեղծության ընթերցում

Անհրաժեշտ նյութեր՝ օրվա տարբեր ռեժիմային պահեր պատկերող նկարներ

Ընթացքը

Պարապմունքը սկսե՛ք Ս. Կապուտիկյանի «Որ մեծամամ» բանաստեղծության ընթերցմամբ: Հետո հիշեցրե՛ք Կ. Ուշինսկու «Առավոտյան ճառագայթները» պատմվածքը և առաջարկե՛ք երեխաներին պատմել, թե ինչպես է սկսվում և անցնում իրենց օրը.

- Ի՞նչ ես անում, երբ առավոտյան արթնանում ես:
- Ու՞մ հետ ես գալիս մանկապարտեզ, ու՞մ ես հանդիպում ճանապարհին, ի՞նչ ես ասում:
- Ի՞նչ ես անում մանկապարտեզում:
- Ի՞նչ ես անում, երբ մանկապարտեզից տուն ես վերադառնում:
- Ու՞մ հետ ես խաղում բակում:
- Ինչո՞վ ես օգնում սեծերին տանը:
- Ի՞նչ ես անում գիշերային քնից առաջ:

Սկզբում պատմել հարցրեք երեխայի ցանկությամբ, հետո ուղղորդող հարցերով խրախուսե՛ք նաև անհամարձակների մասնակցությունը: Պատմումի համար հարցերը ներկայացնելիս երեխաների ուշադրությունը կարող եք հրավիրել օրվա տարբեր ռեժիմային պահեր պատկերող նկարներին:

Անցկացրե՛ք «Կարթնանամ առավոտյան»<sup>10</sup> խաղը:

Խաղավարը կարդում է տեքստը, իսկ երեխաները ցույց են տալիս թվարկած գործողությունները. «Կարթնանամ առավոտյան, աչքերս կտրտրեմ, մի լավ կձգվեմ, կլվացվեմ, շորերս կհագնեմ, կոշիկներս կհագնեմ, կապերը կկապեմ, դուռը կբացեմ, ո՞ր կզնամ...»:

<sup>10</sup> Լ. Մանուկյան, Լ. Սմբատյան, Հ. Մլուտյան, Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում, էջ 47, Երևան, 2007:

Երեխաները պատասխանում են

-Մանկապարտեզ:

Խաղավարը շարունակում է.

-Մանկապարտեզում կնախանձաշեմ, կպարապեմ, կխաղամ, կնկարեմ, կերգեմ, կքնեմ, կարթնանամ և հետ կգամ տուն: Մայրիկիս գիրկը կընկնեմ ու մի լավ կշռյեմ:

Երեխաները միասին ասում են.

-Վա՛յ, ինչ լավ կանեմ:

Պարապմունքի ավարտին արտասանե՛ք Հ.Հայրապետյանի «Մայրիկը» բանաստեղծությունը.

Ո՞վ է ձեզ արթուն,

Թե քնած պահին

Միրում, փայփայում,

Չեր մասին հոգում.

-Մայրիկը սիրում: Պատասխանում են խմբով:

Այն ո՞վ է սիրում

Հեքիաթներ ասում,

Տալիս խաղալիք,

Մրգեր անուշիկ.

- Մայրիկը քաղցրիկ: Պատասխանում են խմբով:

ՊԱՐԱՊՄՈՒՆԸ 92

Թեման՝ Ուշինսկի, «Ոսկե ձվիկը»

Տեսակը՝ հեքիաթի վերապատմում

Խնդիրները

• Սովորեցնել կապակցված և արտահայտիչ վերապատմել հեքիաթը, ընկալել բովանդակությունը:

• Պահպանել բովանդակության ամբողջականությունը:

• Կարողանալ օգտագործել տեքստի բառապաշարը կամ կիրառել այդ բառերի հոմանիշները՝ սփռփեղ, հանգստացնել, վերնատնակ, ուժգին:

Պարապմունքի ընթացքը

Դաստիարակ

- Ես շատ եմ սիրում կարդալ և լսել հեքիաթներ: Հեքիաթներում ապրում եմ բարի և ուրախ կենդանիներ, թռչուններ, որոնք մարդկանց նման կարող են խորամանկել, ծիծաղել, օգնել միմյանց և մարդկանց: Իհարկե, ես ունեմ սիրած հեքիաթներ: Օրինակ՝ այս հեքիաթը: Ցույց է տալիս երեխաներին ծանոթ «Թաթմանը» հեքիաթի գրքի կազմը: Երեխաներն անվանում են հեքիաթի անունը, նշում հերոսներին, կիսվում հեքիաթի մասին իրենց տպավորություններով: Կա նաև մի այլ հեքիաթ, որը նման է «Թաթմանին»: Այստեղ նույնպես պատմվում է հյուրընկալ կենդանիների մասին, որոնք տեղավորվել են միևնույն տնակում, որ կոչվում է «Վերնատնակ»:

Սակայն իմ ամենասիրելի հեքիաթը... հավանաբար կգուշակեք, եթե ես ասեմ հեքիաթի առաջին տողը:

«Լինում է, չի լինում մի պապիկ ու տատիկ: Նրանք ունենում են մի ածան հավիկ:

Եվ մի օր ի՞նչ պատահեց: Հավիկն ածեց ձու, բայց ոչ սովորական, այլ՝ ոսկե ձվիկ: Պապիկը կտորեց, կտորեց, ձուն չկտորվեց: Տատիկը կտորեց, կտորեց, ձուն չկտորվեց»: Երեխաներն, կտորեց, կտորեց՝ ի՞նչ եք կարծում, դա ուժե՞ղ է, թե՞ թույլ:

- Ուժեղ, ուժեղ, - պատասխանում են երեխաները: Ուրեմն և պետք է պատմել այնպես, որ բոլորը զգան, թե պապիկն ու տատիկը ինչպես էին ոսկե ձվիկն իրենց ամբողջ ուժով կտորում: Իսկ այժմ ձեզանից որևէ մեկը այս մասին թող պատմի ևս մեկ անգամ /2-3 երեխա/:

Ի՞նչ է, ձուն դեռևս մինչև այժմ չի՞ կտորվել /կտորվել է/: Իսկ ինչպե՞ս դա պատահեց: Կտորվեց ձուն, և պապն ու տատը սկսեցին .../լաց լինել/:

Հավիկը խղճաց պապիկին ու տատիկին և սկսեց նրանց հանգստացնել և սփռփել:

- Մի լաց, պապիկ, մի լաց, տատիկ:

Պետք է պատմել այնպես, որ բոլորը հասկանան, թե ինչպիսի հիանալի հավիկ ունեին ծերունիները, ու ինչպես էր նա սփռփում նրանց: Նշված արտահայտությունը կրկնում են 2-3 երեխա:

Դաստիարակ

- Երեխաներ, իսկ ո՞վ է ուզում ամբողջ հեքիաթը սյունգամից պատմել: Անհրաժեշտ է պատմել առանց շտապելու, արտահայտիչ, ուրպեսզի հավիկ խաղալիքը, որ եկել է հեքիաթ լսելու, ավելի ուժգին սիրի այդ հեքիաթը:

Դաստիարակը վերապատմելու ժամանակ ներգրավում է նաև ամաչկոտ երեխաներին, որոնց ավելի հեշտ է վերապատմել ծանոթ տեքստը:

Գնահատելով երեխաների պատմումները, դաստիարակն ընդգծում է ի տեքստի շարադրման հաջորդականության և խոսքի արտահայտչականության մասին: Անհրաժեշտության դեպքում գնահատման փուլում կարելի է կիրառել խաղային տարրեր: «Դու այնպես զեղեցիկ ներկայացրեցիր, թե ինչպես է հավիկը հանգստացնում պապիկին և տատիկին, որ հավիկը /խաղալիք/ շարժվեց քեզ ավելի մոտ»:

Տարբերակ

Դաստիարակը կարող է ընտրել նաև ռուսական ժողովրդական հեքիաթի Խնկո Ապր չափածո փոխադրությունը:

ԽՆԿՈ ԱՊԵՐ

ՈՍԿԵ ԶՎԻԿԸ

/Ռուսական/

Պապի, տատի, չալ հավիկ

Ածեց ոսկե մի ձվիկ.

Տո՛ւր որ տվեց Պապիկը,

Բայց չկտորեց ձվիկը.

Տո՛ւր որ տվեց Տատիկը,

Բայց չկտորեց ձվիկը.

Մին էլ վազեց մկնիկը,

Պոչահարեց ձվիկը,

Չվիկն ընկավ կտորվեց:

Պարապմունքից դուրս ընթերցանության համար

Ռ. Դարիբյան

Հավիկը

Կր՛ո, Կր՛ո, Կոկոսն,

Հավը կանգնեց մեր դռան,

Կանգնեց, ճչաց, ճչչաց,

Բարձր ձայնով կշկչաց,

Լաց է լինում Պապիկը,

Լաց է լինում Տատիկը,

Կրոկրոում է հավիկը.

— Մի՛ լար, Պապի՛կ,

Մի՛ լար, Տատի՛կ,

Նորից կածեմ ես մի ձվիկ.

Չվիկ, ձվիկ,

Չվեղեն,

Էլ չի լինի ոսկեղեն:

Տատը հավին

Կուտ տվեց,

Հավը տատին

Չու տվեց:

ՊԱՐԱՊՄՈՒՆԸ 93

Թե՛ման՝ «Մենք սիրում ենք ամառը»

Տեսակը՝ գրույց

Պարապմունքի նպատակը: Մովորեցնել երեխաներին նկատել բնության մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Կարողանալ ճանաչել այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են միայն ամռանը: Նկարագրել ամռան պատկերը՝ օգտագործելով գեղարվեստական խոսքի նմուշներ: Ջարգացնել երեխաների հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը և երկխոսության մեջ մտնելու ունակությունը: Ամրապնդել բառապաշարը միջատ, վառվառ, բուրավետ բառերով:

Անհրաժեշտ պարագաներ՝ պաստառ, որտեղ պատկերված է անտառն ամռանը, տարբեր միջատների, թռչունների, կենդանիների, ծաղիկների պատկերներ

Նախնական աշխատանք: Նախորդ շաբաթվա ընթացքում երեխաների հետ գրուցել ամառային ծաղիկների, միջատների, ամառային հանգստի մասին, դիտել տարբեր նկարներ:

Խթանման փուլ

Դաստիարակ: Երեխաներ, գուշակելով այս հանելուկը՝ դուք կիմանաք, թե ինչի մասին ենք մենք այսօր գրուցելու:

Այգի ու անտառ կանաչ են հագնում,

Նախշուն ու համով մրգեր են հասնում,

Ծովի ու գետի ջուրն է տաքանում,

Դե, ասեք, տեսնենք՝ այդ ե՞րբ է լինում: Խառնանք!

Որպեսզի մեր գրույցն ավելի հետաքրքիր լինի, եկեք մտովի ճամփորդենք անտառով, իմանանք, թե ինչպիսի աշխուժություն է տիրում անտառում ամռանը: Ինձ բվում է, որ մեր ճամփորդությունը կլինի անչափ հետաքրքիր, քանի որ կհանդիպենք այնտեղ անտառի շատ բնակիչներ:

Դաստիարակը նախապես խմբասենյակը «վերածում» է անտառային տարածքի՝ յուրաքանչյուր պատին ամրացնելով թռչունների, ծաղիկների, միջատների, կենդանիների նկարներ /ստեղծվում են անտառային 4 տարածքներ/:

Դաստիարակ – Սկսում ենք մեր ճամփորդությունը /արտասանում է Ս. Մուրադյանի «Ամառ» բանաստեղծությունը/.

Ճիրանավառ դենքով եկար դու, ամառ,  
Ծավալվեցիր հայոց ծաղկած աշխարհում,  
Ամառային վառ շողերը ոսկեվառ  
Տարածեցիր այգում, դաշտում ու սարում...:

- Ամռանը հատկապես գեղեցիկ տեսք է ստանում անտառը: Ի՞նչ հրաշալի է այստեղ: Արագ մոտեցեք ինձ, տեսե՛ք, որքա՛ն շատ ծաղիկներ կան, ի՞նչ վառվառն գույներ ունեն և ինչպե՛ս են նրանք բուրում:

- Ես ծաղիկներ շատ եմ սիրում, նրանք զարդարում են մեր բնությունը: Դուք էլ սիրո՞ւմ եք, արդյոք: Թվարկե՛ք ձեր սիրած ծաղիկները (երեխաները բվարկում են, դաստիարակը ցույց տալիս է համապատասխան նկարները):

- Ապրե՛ք: Շատ ծաղիկներ բվարկեցիք: Մեզ մոտ շատ գեղեցիկ, գույնգույն, հոտավետ ծաղիկներ կան:

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է հարկավոր, որպեսզի ծաղիկներն աճեն գեղեցիկ, լինեն հոտավետ, պահպանեն վառվառն գույները /հող, ջուր, ջերմություն և հողատար ձեռքեր/:

- Ապրե՛ք, հիանալի՛ է: Այժմ ես կբաժանեմ տարբեր ծաղիկների նկարներ, կասե՛մ հանելուկներ, իսկ դուք պետք է գուշակեք՝ ցույց տալով համապատասխան նկարը:

Դաշտի ծաղիկ է,

Մարդկանց բարեկամ,

Ճերմակ թերթերով՝

Նուրբ ու դուրեկան /երիցուկ/:

Հողից ելավ մի տոտիկ,

Ծաղկեց, դարձավ... /խատուտիկ/:

Ես ծաղիկ եմ գույնով սպիտակ,

Չեմ թաքնվում թփերի տակ,

Համեստության անբիժ նշան.

Անվանում եք դուք ինձ... /շուշան/:

Դաշտի զարդն եմ, գույնս՝ ալ,

Ամեն այտիս՝ մի սև խավ:

Գրավում եմ իմ տեսքով,

Շլացնում՝ իմ վառ գույնով: Կակաչ/

Այս աշխարհում բյուրազանց,

Ես էլ զանգ եմ, ծաղիկ զանգ,

Իմ գիլ զանգով պարտեզում

Արթնացնում եմ բոլորին: /զանգակածաղիկ/

- Պատկերացրե՛ք, որ դուք նկարիչներ եք. ձեր մատները թաթախե՛ք ներկի մեջ և նկարե՛ք զարմանահրաշ ծաղիկներ ու ծաղկեփնջեր:

- Երեխաներ, իսկ հիմա խոր շունչ ենք քաշում: Դուք պետք է զգար. թե ի՞նչ լավ են բուրում, ինչ անուշ հոտ ունեն ծաղիկները:

Մ<sup>3</sup> ՎՃԻՎՆՈՇ ԷՅՑ

Մեր գեղեցիկ ծաղիկները բացում են իրենց թերթիկները /սահուն բացում ենք մատիկները/:

Քամին մեղմ փչում է և օրորում թերթիկները /տառանում ենք ձեռքերը/:

Մեր գեղեցիկ ծաղիկները փակում են իրենց թերթիկները /դրակում ենք մատիկները/:

Լուռ ննջում են ծաղիկները, օրորում գլխիկները /դուռնցքներն իջնում ենք սրբելով/

Դաստիարակ - Երեխաներ, ուշադիր նայե՛ք, ի՞նչ եք տեսնում դուք այստեղ: Այո՛, ճիշտ եք, այստեղ կան շատ թիթեռնիկներ և փոքրիկ միջատներ: Եկեք գուշակենք, թե այս ո՞ր միջատն է այդքան գեղեցիկ:



ՊԱՐԱՊՄՈՒՆԷ 94

Թեման՝ «Անտառի գաղտնիքները»

Տեսակը՝ գրույց

Նպատակը

• Չնավորել նախնական պատկերացումներ անտառի՝ որպես կենդանի օրգանիզմների մի ամբողջության մասին, որտեղ բոլորը փոխկապակցված են, տեղեկություններ տալ անտառների բազմազանության, հայրենի բնաշխարհի, անտառում վարքի կանոնների մասին:

• Դաստիարակել սեր հայրենի բնության հանդեպ:

• **Նախապատրաստական աշխատանք**

Գիտումներ գրասանքի ընթացքում: Էքսկուրսիա կազմակերպել դեպի մանկապարտեզի մերձակա պուրակ, անտառ (առկայության դեպքում): Հարցնել, թե ինչո՞վ է անտառը տարբերվում մարգագետնից: Երեխաների ուշադրությունը հրավիրել անտառի բույսերի բազմազանության, ծառերի, թփերի, խոտերի, ծաղիկների, մշտադալար կանաչ թփերի վրա: Յույց տալ, որ անտառում բույսերը տարբեր բարձրության են. առաջարկել երեխաներին իրենց ձեռքերով ցույց տալ՝ որն է դրանցից ամենաբարձրը, ո՞րը՝ ամենացածրը: Առաջարկել երեխաներին առանձին-առանձին ձեռքերով ցույց տալ դրանց բարձրությունը՝ ծառերը, թփերը, ծաղիկները, խոտերը: Այնուհետև դաստիարակել երեխաների հետ գտնում է այնպիսի տեղեր, որտեղ կարող են ապրել տարբեր կենդանիներ(օրինակ՝ փչակ, ծառի կեղևի ճեղքեր, ծառի արմատների միջև փորվածք և այլն):

Անհրաժեշտ նյութեր: Տարբեր ծառերի նկարներ՝ եղևնի, կաղնի, ընկուզենի, սոճի, կեչի, թխկի, այդ ծառերի չորացած տերևներ, կոճեր, սերմեր և այլն: Բնանկարների վերատպություններ անտառային թեմաներով՝ Բաշին-ջաղյան, Լևիտան, Թերլեմեզյան, Կոջոյան:

Պարապմունքի ընթացքը

Պարապմունքն սկսել հանելուկով.

*Չմտանը տաքացնում է,*

*Գարնանը ուրախացնում է,*

*Ամռանը հովացնում է.*

*Աշնանը լիացնում: /անտառ/*

Հանելուկի գուշակումից հետո ցուցադրելով նկարները, դաստիարակել երեխաներին առաջարկում է հիշել, թե ինչպե՞ս են կոչվում նկարներում պատկերված ծառերը: Հարցնում է. «Էլ ինչպիսի՞ ծառեր գիտեք»:

Խաղալ՝ «Փ՞նչն ինչից է» խաղը: Երեխաներին տրվում է հանձնարարություն՝ ընտրել տերևներ և պտուղներ միևնույն ծառից: Այնուհետև շարունակում է դաստիարակել.

-Անտառում աճում են շատ ծառեր: Եթե այնտեղ շատ կաղնու ծառեր կան, ապա այն անվանում են կաղնուտ, եթե կան շատ սոճիներ, ապա անտառն անվանում են սոճուտ, եղևնիներ՝ եղևնուտ, իսկ եթե կան տարբեր տեսակի ծառեր, ապա այն անվանում են խառը անտառ: Կաղնու շատ անտառներ կան Լոռու մարզում: Աչքի են ընկնում Գյուլազարակի և Շահալիի սոճուտները: Սոսիների անտառը գտնվում է Սյունիքի մարզում: Սոսի ծառը հայ ժողովրդի մեջ հայտնի է նաև չինար անունով (այստեղից էլ՝ «չինար-բոյ» արտահայտությունը):

Անցյալում հայոց թագավորները տնկել են արհեստական անտառներ և բնակեցրել կենդանիներով ու թռչուններով:

Անտառը բնության հրաշագործություններից է: Այն կարծես համերգարահ լինի: Ինչ ձայն ասես, որ չի լսվում՝ գետի ջրերի թլթլոց, թռչունների ծվլոց, միջատների բզբոջ, ծառերի տերևների սվսվոց:

Անտառը, կարծես բազմահարկ շենք լինի: Այն տուն է, որտեղ բնակիչները կախված են միմյանցից:

Անտառի ցածր հարկում աճում են խոտեր, սնկեր, սողուն են օձեր, որդեր, կան շատ բզեզներ, մկներ, խլուրդներ: Երկրորդ հարկում շատ թփեր կան, որտեղ որոշ թռչուններ բույն են դնում, սարդերը ոստայն են հյուսում: Ամենաբարձր հարկում աճում են ծառերը, որտեղ ապրում են թռչուններ, միջատներ, ծառերի փշակում ապրում են խոտակեր, մսակեր կենդանիներ, հողի տակ՝ որդեր, օձեր, բզեզներ, մկներ, խլուրդներ: Ամեն բնակիչ ունի իր տունը: Սկյուռիկն ու փայտփորիկն ապրում են փշակում, արջը՝ իր որջում, աղվեսը, խլուրդը իրենց բներում: Նրանք իրենց տները փոխել չեն սիրում:

Դաստիարակել բննարկում է երեխաների հետ անտառի կանոնները: Այնուհետև հարցնում է. «Իսկ ինչի՞» համար են մարդիկ գնում անտառ (հանգրստանալու, մաքուր օդ շնչելու, հիանալու բնության գեղեցկությանը, սունկ, հատապտուղ հավաքելու):

Թվարկել անտառի կանոնները.

• Պտուղ քաղելու համար մի՛ կտորիք ծառը:

• Պահպանի՛ր բնությունը, բնական միջավայրին վնաս հասցնելով՝ վնասես հասցնում սեփական առողջությանը:

• Պահպանի՛ր անտառը և ոչ միայն պահպանի՛ր, այլև քո կարողության չափ վերականգնի՛ր այն:

• Պահպանի՛ր մրջնակնոցը, մրջյուններն անտառի սանիտարներն են:

• Թռչունների բներին մոտ չգնաս, քո թողած հետքերով նրանց կգտնեն գիշատիչները և բույնը կքանդեն, իսկ եթե պատահաբար նրանց մոտենաս, չքանդես բույնը, ձեռք չտաս, թե չէ՝ ծնող-թռչունները կտեղափոխեն բույնը:

• Մի՛ վնասիր, մի՛ տրորիր սնկերը, նույնիսկ թունավորները:

• Հիշի՛ր, որ սունկը շատ օգտակար է բնության համար:

Առաջադրանք՝ խաղ-վարժություն մատիկներով - «Մունկ»

Վարժությունը պետք է կատարել մեկ ձեռքով, մյուսով օգնել փակել մատները:

Ամեն տողի ժամանակ ծայրում ենք մեկ մատիկը՝ մեծից փոքրը.

- Այս մատիկը սունկ պոկեց,
- Այս մատիկը այն մարբեց,
- Այս մատիկը կտրատեց,
- Այս մատիկը ճաշակեց,
- Այս մատիկը լոկ նայեց,

(Ճկույթը չենք փակում):

Պարապմունքի վերջում դաստիարակը եզրահանգում է.

-Անտառը բույսերի, կենդանիների, բույունների, սնկերի տունն է: Անտառներ հիմնել են դեռևս հին ժամանակներից նաև հայոց արքաները: Անտառները լինում են տարբեր՝ եղևնուտ, սոճուտ, կաղնուտ, խառը: Անտառի բնակիչներն համապատասխան հարկում ունեն իրենց տները: Անտառում բոլորը կապված են միմյանց: Երբ մարդիկ գալիս են անտառ հանգստանալու, նրանք պետք է իրենց պահեն հյուրի պես, պահպանեն անտառի կանոնները, որպեսզի չխանգարեն անտառի կյանքը:

**Պարապմունքից դուրս.** քատերականացված խաղ՝ «Կաղնու ծննդյան օրը».

Ընտրվում է Կաղնի: Մյուսները դառնում են անտառում աճող տարբեր ծառեր: Ծառերը գալիս են շնորհավորելու Կաղնու ծննդյան օրը:

**Կաղնի:** Ծնորհակալ եմ, իմ եղբայրներ, որ եկել եք իմ ծննդյան օրը նշելու: Բայց ես շատ դարեր եմ ապրում այս անտառում շատ ծեր եմ, աչքերս լավ չեն տեսնում: Պատմեցե՛ք, թե որդի ի՞նչ ծառ եք:

**Ուռենի:** Ողջունյն Անտառի արքային: Ես ուռենին եմ, աճում եմ ջրերի եզրին: Մարդիկ ինձ շատ են սիրում: Նստում եմ իմ ճյուղերի ստվերում: Իմ ճյուղերը թափվում են ցած, ջրերի վրա: Այդ պատճառով ինձ նմանեցնում են լացող աղջկա: Թեև ես պտուղ չեմ տալիս, բայց իմ ճյուղերից մարդիկ հյուսում են սալա, կողով, պսակ, քրոց, գամբյուղ:

**Կաղնի:** Քեզ հիշեցի: Բարով ես եկել, սիրելի ուռենի:

Այսպես իրենց ներկայացնում են մյուս ծառերը: Վերջում երեխաները՝ երգում, պալում, ուրախանում են:

## ՏԱՐԲԵՐԱԿ

Հյուր է եկել անտառը

Անտառ: Բարև, իմ լավ բոռնիկներին: Ես ձեզ համար իմ անտառի բարիքներից եմ բերել՝ ընկույզ, կաղին, այլոճ, մասուր, տամձ, խնձոր, ծաղիկ և այլն: Բայց իմ բարիքները կտամ նրան, ով ասի, թե ի՞նչ օգուտ է տալիս անտառը:

Երեխաները հերթով ասում են՝ «Անտառը բարձագնում է օդը, փայտ է տալիս, միրգ է տալիս և այլն»: Ամեն ճիշտ պատասխանին «Անտառն իր բարիքներից է տալիս»: Վերջում միասին ուտում են:

ՊԱՐԱՊՄՈՒՆԷ 95

Թեման՝ «Ծառեր»

Տեսակը՝ գրույց

Նպատակը: Ընդլայնել երեխաների գիտելիքները ծառերի մասին, սովորեցնել տարբերել պտղատու և ոչ պտղատու ծառերը: Ընդլայնել բառապաշարը պտղատու, արմատ, բուն բառերով: Սովորեցնել ճիշտ կազմել գոյականի հոգնակի բիվը, զարգացնել քերականորեն ճիշտ, ամբողջական նախադասություններով հարցերին պատասխանելու կարողությունը: Ղաստիարակել հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ և գեղագիտական ճաշակ:

Նախապատրաստական աշխատանք՝ նախնական գրույց՝ զբոսանքի ժամանակ

Զբոսանքի ժամանակ երեխաների ուշադրությունը հրավիրեք ծառերին (մասնավորապես՝ բարդուն) և հարցրեք.

- Ի՞նչ ունեն ծառերը (բուն, ճյուղեր, տերևներ, արմատներ):
- Ի՞նչ գիտեք բարդու մասին: (Բարդին բարձր, հաստաբուն ծառ է, այն աճում է լուսավոր վայրերում, խոնավասեր է և շատ արագ է աճում: Բարդու սերմերը կարծես պատված լինեն բամբակով: Թեթև քամուց դրանք պոկվում և տարածվում են շուրջ բոլորը, և երբ սերմերը ընկնում են հողի մեջ, նոր ծառեր են աճում: Բարդիները մարդկանց նման լինում են տղա և աղջիկ, իսկ բամբակը լինում է միայն աղջիկ բարդու վրա):
- Ի՞նչ օգուտ է տալիս բարդին: (Բարդու փայտից ստանում են թուղք, լուցկու հատիկներ, վառելափայտ, իսկ բողբոջներն ու արմատները բուժում են որոշ հիվանդություններ: Բարդին, ինչպես մյուս ծառերը շատ թթվածին է արտադրում և մաքրում է աղտոտված օդը):

• Ի՞նչ օգուտ են տալիս ծառերը:

Բացատրե՛ք երեխաներին, որ ծառերի դերը շատ մեծ է բնության մեջ, բանի որ ծառերը հարստացնում են մեր բնությունն ու օդը, բերք ու բարիք են տալիս մարդկանց: Կան պտղատու ծառեր՝ խնձորենի, տանձենի, բալենի, ծիրանենի և ոչ պտղատու ծառեր՝ բարդի, սոճի, ուռենի, կաղնի, եղևնի և այլն: Ծառերը օդը հագեցնում են թթվածնով, դրա համար այգիներում, անտառում, պուրակներում, ուր շատ ծառեր կան, օդը մաքուր է և զով: Ծառերից վայտ են ստանում, իսկ փայտից սեղան, աթոռ, պահարան, դուռ և այլ իրեր են պատրաստում: Փայտից նաև բույր են ստանում, որի վրա շատ հետաքրքիր հեքիասներ են տպագրում փոքրիկների համար: Ծառերը շատ թռչունների և կենդանիների համար հարազատ տուն են, օրինակ՝ սկյուռը ապրում է ծառի փշակում, շատ թռչուններ բույն են հյուսում ծառերի ճյուղերին: Պետք է շատ ծառեր և այգիներ տնկել, ջրել, որ մեծանան: Այդպիսով և՛ օդը մաքուր

կլինի, և՛ մրգերը առատ կլինեն: Փոքրիկները կուտեն, առողջ կմեծանան: Եոզ եղանակին մարդիկ կնստեն ծառերի ստվերում և կզովանան:

Անհրաժեշտ նյութեր՝ պտղատու և ոչ պտղատու ծառերի նկարներ Ընթացքը

Պարապմունքն սկսե՛ք նախորդ օրվա զբոսանքը հիշեցնելով և ծառերի մասին հանելուկներով.

Ամառ թե՛ ձմեռ կանաչ է հագնում,  
Ամեն Նոր տարի տան զարդ է դառնում: (եղևնի)

Ունի հաստ բուն, խիտ սաղարթ,  
Ու գեղեցիկ, բարձր հասակ:  
Թագուհին է նա անտառի  
Եվ ապրում է հարյուր տարի: (կաղնի)

Ջրի բերանին գլուխը կախ,  
Հեզ ու խոնարհ մի սիրուն ծառ: (ուռենի)

Մի ծառ գիտեմ շատ սլացիկ,  
Բարձրահասակ ու գեղեցիկ,  
Թեթև քամուց հպարտ խշշում,  
Մեր ականջին երգ է ասում: (բարդի)

Հետո երեխաների ուշադրությունը հրավիրե՛ք ծառերի նկարներին և գրուցե՛ք.

- Ի՞նչ ծառեր են պատկերված նկարներում:
- Ի՞նչ գույնի են ծառերի տերևները:
- Ի՞նչ գույնի է ծառի բունը:
- Ինչու՞ մենք չենք տեսնում ծառի արմատները: (Որովհետև արմատները հողի տակ են:)
- Ինչպե՞ս են սնվում և մեծանում ծառերը: (Հողից արմատների միջոցով ջուր և սնունդ են ստանում և մեծանում են:)
- Ի՞նչ պտուղ է տալիս խնձորենին (տանձենին, ծիրանենին:)
- Է՞լ ինչ պտղատու ծառեր գիտեք:
- Ոչ պտղատու ի՞նչ ծառեր գիտեք: (Կաղնի, սոճի, կեչի, եղևնի, ուռենի:)
- Ի՞նչ ծառ գիտեք, որ ամառ - ձմեռ կանաչ է:

Ֆիզկուլտ-դադար: Երեխաները կանգնում են շրջանով և ուշադիր հետևում են դաստիարակի հրահանգներին: *Քամուց բարդիները խշշացին* հրահանգը լսելով՝ ձեռքերը պարզում են վեր, ճոճվում են աջ ու ձախ և բարդու խշշոցի ձայն են արձակում. *խը՛՛՛ 222-խը՛՛՛ 222: Ուտիները ճոճվեցին* հրահանգից հետո՝ թեքվում են առաջ, ձեռքերը ներքև, թեթև աջ ու ձախ ճոճվելով արտա-

բերում են **սսսսսսսսսս**: Նույնը 3-4 անգամ կրկնելուց հետո խոր շունչ են քաշում, քափահարում են ձեռքերն ու ոտքերը և նստում են աթոռակներին:

Գիդակտիկ խաղ-վարժություն՝ «Մեկ և շատ»: Դաստիարակը ասում է որևէ բառ (գոյական), երեխաները կազմում են այդ բառի հոգնակի թիվը՝ դրանից առաջ ավելացնելով **շատ** բառը:

Օրինակ՝ խնձոր-շատ խնձորներ, տերև-շատ տերևներ, ծառ-շատ ծառեր, ճյուղ-շատ ճյուղեր, բարդի-շատ բարդիներ, կաղնի-շատ կաղնիներ և այլն:

**Ամփոփե՛ք.**

- Ի՞նչ նոր բան իմացաք ծառերի մասին:
- Ի՞նչ են տալիս պտղատու ծառերը մարդուն:
- Ի՞նչ նշանակություն ունեն ոչ պտղատու ծառերը:

Օրվա երկրորդ կեսին հիշեցրե՛ք զբոսանքը, ծառերի մասին գրույցը և առաջարկե՛ք նկարել ծառեր կամ իրենց տպավորությունները. «Մեր այգին», «Մեր պարտեզը», «Ծառերի պտրակում», «Ծառատունկ» և այլ թեմաներով:

**Խորհուրդ դաստիարակին:** Լավ կլինի երեխաների հետ ծառատունկ կազմակերպել մանկապարտեզի բակում, ջրել ծառերը, ինչպես նաև այգին, մանկապարտեզի բակը կամ պուրակը մաքրել ավելորդ, անպետք իրերից՝ քարերից, թղթի կտորներից, աղբից: Կարելի է նաև օրվա որևէ ազատ պահի երեխաների համար ընթերցել Է. Մարտիրոսյանի (8 տարեկան, ք. Երևան, Հովհ. Շիրազի անվան 169 դպրոց, <http://mocak.am/>) «Հեքիաթ ծառի մասին» ստեղծագործությունը (կարող եք ընթերցել կրճատումներով):

*Մեծ անտառում շատ ծառեր ու կենդանիներ կային: Անտառի թավուտներից մեկում ապրում էր մի հսկա կաղնի: Նա շատ բարի էր ու ընկերասեր: Հենց անտառում մարդ էր տեսնում կամ իր կողքով անցնող կենդանիներ, կանչում էր նրանց.*

*-Եկե՛ք ինձ մոտ, մի քիչ նստեք, հանգստացե՛ք, ես էլ իմ ճյուղերով ձեզ հով կաննեմ, արևից կպաշտպանեմ, մի քիչ էլ կզրուցենք:*

*Ու կենդանիները միշտ հավաքվում էին հաստաբուն կաղնու մոտ, գրուցում ու բամբասում: Թռչուններն էլ նստում էին հսկա կաղնու ճյուղերին, զվարթ ու աշխույժ թռչկոտում, երգում ու դալլալում: Մի քանիսն էլ իրենց համար բույն էին հյուսել կաղնու ճյուղերին ու բնակություն հաստատել այնտեղ: Կաղնու փչակում էլ ապրում էին արագաշարժ ու ժիր սկյուտիկները:*

*Ծառը նրանց հյուրասիրում էր իր կաղնիներով ու բոլորը նրանից գոհ ու ապահով էին բազում վտանգներից: Կարծես թե ուրախ էր կաղնու կյանքը, բայց նրան տխրեցնում էր մի բան: Այն, որ միշտ կանգնած էր նույն տեղում: Նա երազում էր կենդանիների պես քայլել, վազվզել անտառում, թռչունների*

*մանն թռչել երկնքում, մոտենալ ամպերին, վերից տեսնել, թե ինչ կա-չկա իրենց մեծ անտառում:*

*Մի օր էլ կաղնին թերվեց ամբողջ բնով, հավաքեց ուժերն ու ճյուղերով հենվելով կողքի ժայռին՝ վեր քաշեց արմատները հողից: Մեծ ճիգով նախ կարճ արմատները դուրս քաշեց, հետո խորը խրված արմատները: Եյուղերը ճռճոցահին, մի քանիսը կոտրվեցին ու վնասվեցին, բայց կաղնին դիմացավ ցավին, նա սկսեց շարժվել առաջ:*

*Սկզբում կաղնին գոհ ու հպարտ էր, որ ինքն էլ կարող է քայլել անտառում: Քրտինքի կաթիլները գլորվում էին նրա տերևների վրայով, նա հևում էր. բայց շարունակում էր քայլել ու քայլել: Նա քայլեց մինչև մութ ընկնելը, հասավ գետափ ու շնչասպառ կանգ առավ: Այդպես մնաց մի քանի ժամ: Ընդհար նայեց, փնտրեց իր բարեկամ կենդանիներին, թռչուններին ու ծառերին, բայց նրանք չկային, մնացել էին հեռվում:*

*Կաղնին տխրեց, շատ տխրեց: Նա հասկացել էր, որ հագիպիազ քայլում էր, էլ ուր մնաց՝ թռչեր: Զէ, դա իր համար չէ: Այդ մասին նա միայն կարող էր երազել:*

*Գետակը նկատեց իր կողքին հայտնված հսկա կաղնուն, ծարաված կաղնին էլ նայեց գետակի վազող ջրերին: Խնդրեց, որ կանգ առնեն, մնան իր կողքին: Գետակն ալիք տվեց, ձգվեց վեր, ժպտաց կաղնուն ու ասաց.*

*-Ես կանգ առնել չեմ կարող, ինձ հոսելն է շունչ տալիս: Ես անդադար վազում եմ առաջ, իմ ալիքներով ուժ եմ տալիս ջրադացներին, իմ ջրով սնվում են ծառ ու ծաղիկ, մարդ ու կենդանի, թռչուն ու միջատ: Գետերը հոսելու համար են ստեղծված:*

*Կաղնին լռեց, մտածեց ու հասկացավ, որ ինքն էլ իր հողում կանգուն ու ամուր պետք է լինի, ինքը միայն այդպես կարող է ապրել ու սիրվել:*

*Ու կաղնին կրկին արմատներ ձգեց հողի մեջ, ամրացավ ու շարունակեց ապրել ծառի կյանքով:*

**ՊԱՐԱՊՄՈՒՆԷ 96**

**Թեման՝ «Կահույք»**

**Տեսակը՝ գրույց**

**Նպատակը:** Իմացական ոլորտի զարգացում՝ հետազոտական փորձի և դատողությունների եզրահանգման տարրերով: Ընդլայնել երեխաների գիտելիքները կահույքի տարբեր տեսակների, դրանց օգտակարության և նշանակության մասին:

**Խնդիրները**

Ձևավորել պատկերացումներ՝ մարդու կյանքի, առողջ ապրելակերպի համար կահույքի հարմարավետության և անհրաժեշտության մասին:

Տարրական գիտելիք հաղորդել կահույքի ծագման պատմության վերաբերյալ. տեղեկատվություն տալ, թե մարդիկ ի՞նչ նյութերից են կահույքը պատրաստում, ինչպիսի՞ նյութերով են պաստառապատում, երեսապատում:

Դաստիարակել խնամքով վերաբերմունք մեզ շրջապատող իրերի և առարկաների հանդեպ:

Ծանոթացնել այն մարդկանց մասնագիտություններին, որոնք մասնակցում են կահույքի պատրաստմանը՝ կահույքագործ, հյուսն, փականագործ, նկարիչ-ձևավորող, հավաքող:

Զարգացնել երեխաների՝ Օ համեմատելու, վերլուծելու կարողությունները, նպաստել պատճառահետևանքային կապերի տարրերի սահմանմանը, ընդհանրացնող եզրահանգումներ կատարելուն:

Ակտիվացնել բառապաշարը նոր բառերով՝ կահույքի ֆաբրիկա, անտառահատ, ձևավորող-նկարիչ, հյուսն, փականագործ, հավաքող, ննջարանային, խոհանոցային, հյուրասենյակի կահույք:

Անհրաժեշտ նյութեր՝ կահույքի տարբեր տեսակների նկարագարումներ, տարբեր մասնագիտությունների, աշխատանքային գործիքների նկարներ, քար, փայտ, կտոր, կաշվի կտոր

**Պարապմունքի ընթացքը**

Դաստիարակ - Երեխաներ, ի՞նչ եք կարծում, առանց ինչի՞ է մարդուն դժվար հարմարվել բնակարանում, մնալ այնտեղ /երեխաների պատասխանները/:

-Այսօր մենք կխոսենք կահույքի մասին:

-Ի՞նչ գիտեք կահույքի մասին /երեխաների պատասխանները/:

-Երբևիցե կահույքի խանութում եղե՞լ եք, ի՞նչ եք տեսել /երեխաների պատասխանները/:

-Ինչի՞ համար է կահույքն անհրաժեշտ մարդկանց /երեխաների պատասխանները/:

Դաստիարակ - Հնում, շատ վաղուց, երբ չկային քաղաքներ և գյուղեր, մարդիկ ապրում էին քարանձավներում, ցրտից պաշտպանվում էին և տա-

բանում այնտեղ՝ խարույկներ վառելով: Ի՞նչ եք կարծում, իսկ ինչի՞ վրա էին հանգստանում:

**Երեխաներ -** Գետնի վրա, քարերին:

Դաստիարակ - Այո, մարդկանց համար շատ դժվար էր, սառը, խոնավ, կոշտ ու չոր գետնին, անհարթ հատակին հանգստանալ: Պատկերիս հաճախ հիվանդանում էին: Ահա մի անգամ որսորդները որսից վերադառնալիս իրենց հետ բերել էին փայտ: Նստեցին փայտի վրա: Հարմա՞ր էր, լա՞վ էր արդյոք:

**Երեխաներ -** Իհարկե՛, ավելի լավ էր, քանի որ փայտն ավելի չոր է, քարի նման կոշտ և սառը չի:

Դաստիարակ - Այդ ժամանակ մարդը մտածեց, թե ինչից պատրաստի կահույքը: Կային ընդամենը քարեր, ծառեր, փայտ:

Դաստիարակն առաջարկում է երեխաներին հետազոտել քարը և փայտը /ձեռք տալ, շոշափել, հոտ քաշել, համեմատել/:

Դաստիարակ - Քարերը սառն էին, ծանր, ոչ հարթ, փշոտ, շատ պինդ: Մարդն ընտրեց փայտը. այն ավելի տաք էր, թեթև, ուներ հաճելի հոտ, հեշտ էր մշակելը և հարմարավետ:

Իսկ գիտե՞ք, արդյոք, ի՞նչ մասնագիտությունների տեր մարդիկ են մասնակցում կահույքի մշակմանը:

Ձևավորողը /դիզայները/ մտածում է կահույքի արտաքին տեսքի, կառուցվածքի մասին, գծագրեր է գծում: Անտառահատները նախապատրաստում են գերանները: Կահույքի ֆաբրիկայում հյուսները և փականագործները սղոցում են առանձին մասերը, սոսնձում, ամրացնում են, օգնում են հավաքել խոշոր չափերի կահույքը: Կահույքագործ վարպետները օգտագործում են նաև մեխ, սպունգ, ներկեր:

**Մտավարժանք՝ «Ի՞նչն է ընդհանուր»**

- Պահարան, սպասքապահարան, գրապահարան (դարակներ),

- Նստարան, աթոռ, աթոռակ (դրանց վրա նստում են),

- Բազմոց, բազկաթոռ (դրանց վրա բազմում են),

- Ի՞նչն է ընդհանուր թվարկված կահույքի տեսակների մեջ (բոլորն էլ փայտից են):

**Դիդակտիկ վարժություն՝ «Լրացրո՛ւ բառը»**

Առաջարկել երեխաներին լսել բանաստեղծական խոսքը և լրացնել համապատասխան բառը:

*Թե ուզում ես մուշ-մուշ քնել ու արթնանալ,  
Ննջարանում քեզ սպասում է ...../մահճակալ/*

Դասավորենք մեկիկ-մեկիկ,  
Մեր շորերը՝ պստիկ, կոկիկ,  
Շարվեշարան՝ դարակներում,  
Այս գեղեցիկ...../Կպահարանում/:

Բազմել հանգիստ, հարմարավետ,  
Թիկնել, նստել հանգստանալ,  
Ինչի՞ն արդյոք, որտե՞ր, ինչի՞ն  
Փափուկ, սիրուն...../բազկաթոռին/:

Դաստիարակը դիմում է երեխաներին.

- Ուշադիր դիտե՛ք նկարներին, այսօր մենք մտովի տեղափոխվում ենք կահույքի սրահ: Ահա փափուկ կահույքի սրահը: Ինչո՞ւ են այն անվանում փափուկ /երեխաների պատասխանները/:

Որքան տարբեր գույներ ունեն: Մենք արդեն գիտենք, որ փափուկ կահույքը երեսապատում են կտորով:

Եկեք, մի քանի փորձ կատարենք.

Վերցրեք կտորի և կաշվի կտորը: Փորձարկե՛ք դրանք, ճմռթվու՞մ են արդյոք, թե՞ ոչ:

Երեխաներ - Կտորը ճմռթվում է, կաշին՝ ոչ:

Դաստիարակ - Ջրի մեջ մտցնենք: Ի՞նչ ենք տեսնում:

Երեխաներ - Կտորը թրջվեց, կաշին՝ ոչ:

Դաստիարակ - Ինչպե՞ս կարող ենք ջուրը չորացնել:

Երեխաներ - Կաշին կարող ենք չոր լաթով արագ սրբել, իսկ կտորը պետք է երկար ժամանակ չորացնել:

Ընդհանրացում: Կաշվի թրջվելուց կահույքը չի թրջվում:

Դաստիարակ - Ինչպիսի՞ կահույք կընտրեիք ձեր տան համար, և ինչո՞ւ հենց այդ տեսակը /երեխաների պատասխանները/:

- Ինչպիսի՞ն է մեր խմբասենյակի կահույքը:

Դաստիարակն ընդհանրացնում է երեխաների պատասխանները:

Կահույքի բոլոր տեսակներն էլ կարևոր են (մանկական, ննջարանային, հյուրասենյակի, խոհանոցային, գրասենյակային): Այո, կահույքը դարձել է մարդկանց տան, կենցաղի հարմարավետության, հաճելի, օգտակար, անհրաժեշտ և անբաժանելի մասը: Այն ստեղծվում է տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց աշխատանքի շնորհիվ, մարդու հարմարավետության համար:

Գիղակտիկ վարժություն՝ «Լրացրո՛ւ բառը»  
Առաջարկել երեխաներին լսել բանաստեղծական խոսք և լրացնել համապատասխան բառը:

Խաղ-քեմականացում օրվա երկրորդ կեսին՝ «Աթոռ արջի համար»

Արջ - Բարև, հյո՛ւսն եղբայր, ինձ համար արո՞ւ կպատրաստե՞ս:

Հյուսն - Աչքիս վրա, արջ եղբայր, միայն փայտագործից տախտակ բեր:

Արջ - Բարև, փայտագործ եղբայր, ինձ մի տախտակ կտա՞ս:

Փայտագործ - Աչքիս վրա, արջ եղբայր, միայն ծառահատից գերան բեր:

Արջ - Բարև, ծառահատ եղբայր, ինձ մի գերան կտա՞ս:

Ծառահատ - Աչքիս վրա, միայն ինձ օգնի՛ր այս չոր ծառը կտրեմ:

Ծառը, գերանը, տախտակը տանելուց հետո հյուսնը արո՞ւ է պատրաստում արջի համար:

Կանոններ՝ «Պահպանի՛ր առարկաները»

- Աշխատանքային գործիքները մի՛ թող արևի տակ: Գիտե՞ս չէ, որ դրանք մարդկանց օգնականներն են:
- Լսե՛լ ես՝ «Ամեն ինչ՝ իր տեղում»:
- Աթոռները մի՛ քաշքշիր այս ու այն կողմ: Դրանք կարող են կտորվել:
- Սուր առարկաներով մի՛ խզրզիր կահույքի վրա:
- Կեղտոտ ոտքերով մի՛ բարձրացիր աթոռին, բազմոցին: Դաստիարակը պարապմունքի ավարտին ամփոփում է գրույցը և հարցնում երեխաներին.
- Ինչի՞ մասին այսօր խոսեցիք:
- Ի՞նչ նոր բան իմացաք այսօր:

Թեման՝ «Սունկ»

Տեսակը՝ գրույց /ձանոթացում բնությանը, էկոլոգիական դաստիարակություն/

Խնդիրները

• Համակարգել երեխաների գիտելիքները և պատկերացումները սնկերի, դրանց բազմազանության մասին:

• Սովորեցնել դասակարգել, կազմել սնկերի խմբեր՝ խմբավորել սնկերն ըստ կառուցվածքի, աճման վայրի /անտառներում, ցերմոցներում, կոճղերի վրա/ ըստ բազմացման, պատրաստման եղանակի:

• Ամրապնդել երեխաների կարողությունները՝ ըստ գծապատկերի համազանգորեն պատմելու:

• Դաստիարակել հետաքրքրություն, հոգատար վերաբերմունք սնկերի հանդեպ:

• Դաստիարակել սեր, հոգածություն բնության հանդեպ և այն պահպանելու կարողություններ:

Անհրաժեշտ պարագաներ՝ յուղամատիտներ /ֆլումաստերներ/, ալյումի բերքեր, տարբեր սնկերի նկարներ:

Առաջարկել երեխաներին գուշակելու հանելուկ:

*Անձրևը գա,*

*դուրս կհանի,*

*մի գլխանի*

*մի ոտանի: /սունկ/*

Հանելուկի գուշակումից հետո դաստիարակը երեխաներին առաջարկում է ճանապարհորդություն կատարել դեպի աշնանային անտառ: Հնչում է բնության ձայներով հյուսված մեղմ երաժշտություն:

Դաստիարակը սկսում է գրույցը:

- Տեսե՛ք, որքա՛ն գեղեցիկ է անտառը. վառ գույնի տերևներ ծառերին, բույունների դալալ, որոնք ասես հավաքվում են չվելու, փոքրիկ գազանիկներ, որոնք պատրաստվում են ձմռանը: Ամեն ինչ խոսում է մոտալուտ հեքիաթային աշնան մասին:

-Օ՛յ, ինչ-որ հետաքրքիր բան գտա: Այ՛, սրանք սնկեր են: Իսկ ինչպիսի՞ սնկեր են:

-Ուտելի սունկեր՝ սպիտակ, կեչակալ, կախասունկ, աղվեսիկ, ազարիկոն /շամպինյոն/, բունավոր սունկեր՝ ճանճասպան /մոխամոր/, կեղծ օպյատա:

Իրանք բոլորը մեկ բառով կոչվում են սունկ: Իսկ դուք գիտե՞ք, արդյոք, ինչպե՞ս պետք է ճիշտ հավաքել սունկը: Կարելի՞ է այն պոկել արձատով /երեխաների պատասխանները/:

-Ճիշտ է, սունկը չի կարելի պոկել սնկածարմնից: Մյնջացնելով սնկածարմինը՝ այնտեղ այլևս սունկ չեք գտնի: Մի շարք սնկածարմիններ պարունակում են շատ երկար տարիներ: Սրե՛ դուք գտել եք անտառի պահեստ հաճախող ջահել բարձ սնկեր, ապա դրանք կարելի է կտրել դանակով՝ սնկածարմինը պետք է թեթևակի ծածկել հողով, տերևներով և ափով ամուր սեղմել, որպեսզի հաջորդ տարին նորից սունկ աճի: Իսկական սունկ հավաքողը, գտնելով լավ սունկ, նախ հիանում է դրանով, ապա հիշում է, թե որտե՞ղ է այն աճել, դրանից հետո նոր միայն գոլշորեն կտրում է այն: Իսկ ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ խմբերի կարելի է բաժանել բոլոր սնկերը: /Երեխաների պատասխանները/:

Դաստիարակն ամփոփում է. Սունկերը տարբերվում են՝

➤ ըստ պատրաստման միջոցների /կարելի է չորացնել, թթվեցնել, եփել, տապակել.../,

➤ ըստ աճման վայրի /ցերմոցներում, նկուղներում, մուր, խոնավ տեղերում, կոճղերի վրա, հողի վրա, ծառերի վրա, փշատերև անտառներում/,

➤ ըստ աճման ձևի /խմբով, առանձին/,

➤ ըստ բազմացման եղանակի /սնկածարմնով, սերմնիկներով/,

➤ ըստ չափերի /մեծ և փոքր/:

- Այսօր ես ձեզ հանձնարարում եմ՝ կապույտ գամբյուղի մեջ հավաքել ուտելի սունկերը, կարմիր գամբյուղի մեջ՝ թունավորները, իսկ դեղին գամբյուղի մեջ՝ պայմանական՝ ուտելի սունկերը /երեխաները կատարում են/:

-Երեխանե՛ր, եկե՛ք ստուգենք, ճի՞շտ եք, արդյոք, կատարել հանձնարարությունը: Այս գամբյուղի մեջ հավաքվել են ուտելի սունկերը /երեխաներն անվանում իրենց դրած սունկերը /:

Իսկ ինչո՞ւ են կոչվում ուտելի սունկեր / բանի որ դրանք օգտագործվում են սննդի մեջ/:

-Այս գամբյուղի մեջ թունավոր սունկերն են: Գի՞շտ եք, արդյոք, դասավորել: Ի՞նչ է, դրանք ընդհանրապես վտանգավոր են և պետք չե՞ն:

- Ո՛չ, ճանճասպանը կիրառում են բժշկության մեջ, իսկ կենդանիներն անտառում բուծվում են դրանցով/:

-Այստեղ մենք ունենք մալ պայմանական- ուտելի սունկեր: Գի՞շտ եք դրանք դասավորել /անվանում են/: Իսկ ինչո՞ւ են դրանք անվանում պայմանական-ուտելի /երեխաների պատասխանները՝ դրանք կարելի է օգտագործել սննդի մեջ, միայն հատուկ մշակումից հետո/:

- Երեխանե՛ր, ի՞նչ հետաքրքիր բան գիտեք սնկերի մասին:

• Սկյուդիկները սիրում են ազարիկոն/շամպինյոն/, սպիտակ սունկ:

• Եղնիկները սիրում են սպիտակ սնկեր, բայց բուժվում են ճանճասպաններով:

ես առաջարկում եմ միմյանց հանելուկներ ասել գուշակելու համար.

Ուշադիր դիտելով՝ ընտրեք համապատասխան նկարը, պատմեք սնկի մասին.

-Սա սունկ է. աճեցնում են ջերմոցում, այն ունի գետնի վրայի մաս, դա սպիտակ գլխարկն է վերևից: Գլխարկի տակի մասնիկները շագանակագույն են: Ոտքը սպիտակ է ու հաստ, գետնի տակ սնկամարմինն է, այն ուտելի է, կարելի է սառեցնել, եփել ապուր, պիցա և թխվածքներ պատրաստել:

Երաժշտական ֆիզկուլտ-դադար

Հանձնարարական /կատարվում է սեղանների մոտ/: Նկարել տարբեր գույնի, տարբեր չափի սնկեր: Առաջինն ամենաբարձր սունկն է, միջինը՝ դեղին գլխարկով, իսկ վերջինը՝ տերևով:

Հանձնարարականները ստուգել գրատախտակի վրա:

Դաստիարակը եզրահանգում է. «ճանապարհորդությունն ավարտված է»:

Բնության մեջ ամեն ինչ փոխկապակցված է: Անհրաժեշտ է պահպանել կենդանիներին, թռչուններին, սնկերը: Բնությանը պետք է վերաբերվել բարի ընկերոջ նման:

Պատվիրաններ

- Մի՛ քանդեք բները:
- Մի՛ վնասեք կենդանիներին:
- Մի՛ թողեք աղբը անտառում:
- Մի՛ գրկեք երկիրը գեղեցկությունից:

Հնչում է Հուրսուսի «Անտառային ձայներ» երաժշտությունը:

Թե՛ման՝ «Ով ինչո՞վ է սնվում»

Տեսակը՝ գրույց /ծանոթացում բնությանը/  
Խնդիրները

Երեխաների մեջ պատկերացում ձևավորել սերմերի և պտուղների բազմազանության, բուսական և կենդանական աշխարհի փոխկապակցվածության, մարդու կյանքում դրանց դերի ու նշանակության մասին:

Անհրաժեշտ նյութեր՝ քարտեր կենդանիների և նրանց կերի արտադրմամբ /սկյուռներ, խածկոտիկներ, արջեր, վարազներ, բազմազան կոներ, բույսեր սերմեր/

Նախապատրաստական աշխատանք

Ջրոսանքի ընթացքում կենդանական անկյունում անցկացվում են դիտումներ, գրույցներ: Թռչուններին կերակրամանի մոտ կերակրելուց առաջ դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրում է մատուցվող կերի վրա. արդյո՞ք դրանց մեջ կան հատապտուղներ, բույսերի սերմեր: Երեխաները դիտում են եղևնու, սոճու կոներ, թխկու վայր ընկած սերմեր:

Բնության անկյունում կենդանիներին կերակրելու ժամանակ երեխաները նշում են, թե ինչպիսի՞ բույսերով են սնվում կենդանիները, թռչունները /խնձորով, վարունգով, արևածաղկի սերմերով և այլն/:

Պարապմունքի ընթացքը

Դաստիարակը երեխաների հետ քննարկում է, թե նրանք ինչպիսի՞ պտուղներ, բույսեր են ուտում մանկապարտեզում և տանը /տանձ, խնձոր, լոլիկ, վարունգ/: Այնուհետև շարունակում է, որ շատ կենդանիներ նույնպես ուտում են պտուղներ, սերմեր: Սկյուռիկները, փայտփորիկները սնվում են եղևնու, սոճու սերմերով: Փայտփորիկն ամռանը ծառերի կեղևների տակ փնտրում է բզեզներին և նրանց թրթուրներին, իսկ ձմռանը՝ անցնում սոճու և եղևնիների սերմերին:

Դաստիարակը երեխաներին բաժանում է քարտեր՝ կենդանիների, պտուղների, սերմերի պատկերմամբ: Սեղանին դասավորում է քարտեր կենդանիների սննդի պատկերմամբ, ինչպես նաև կոներ, արոսի չոր պտուղներ, խոզակաղիններ: Այստեղ էլ խառնում է սերմերի հավաքածուն: Յուրաքանչյուր երեխա պետք է գտնի իր ընտրած քարտի կենդանուն համապատասխան կեր:

Անցկացվում է խաղ՝ «Ով ի՞նչ է ուտում»: Երեխաները հերթականությամբ արտասանում են նախադասության սկիզբը «Սկյուռիկը ուտում է...», /սերմեր, կոներ, խոզակաղին, սունկ/, «Ոզնին ուտում է.../բզեզ, որդեբ/, «Արջն ուտում է...» /ազնվամորի, հապալաս/ և այլն Դաստիարակն այնուհետև պատմում է

այն մասին, որ շատ թռչուններ և գազաններ սիրում են անուշ անել անտառում աճող վայրի խնձորները, տանձերը, հատապտուղները:

Նրանք սիրում են ուտել սերմերի միջուկը, իսկ սերմերը մնում և աճում են նոր տեղերում: Այսպես կենդանիները սիրում են սերմերը տարածել, ցիրուցան անել ամբողջ անտառով:

Շատ սերմեր էլ կրում են մրջյունները: Քամին տարածում է ծառերից ընկած /տոճու, եղևնու/ սերմերը դեպի հեռուներ, և հողի վրա լույս աշխարհ են գալիս նոր փոքրիկ սոճիներ ու եղևնիներ: Երբեմն էլ բվերն ու սկյուռները մոռանում են ձմռան համար իրենց հավաքած և պաշարած պտուղները, և արյունքում անտառի տարբեր տեղերում աճում են փոքրիկ կաղնիներ:

Պարապմունքի ավարտին դաստիարակը մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին, որ բույսերն աճում են սերմերով: Սերմերը տնկում են մարդիկ, իսկ քամին տարածում է, թռչուններն ու այլ կենդանիներն էլ ցիրուցան են անում դրանք: Մարդիկ և շատ կենդանիներ սնվում են պտուղներով ու սերմերով:

**Պարապմունքից դուրս**

Չքոսանքների ընթացքում դաստիարակը, երեխաների հետ օգտագործելով լրացուցիչ տեղեկատվություն՝ փնտրում է վայրեր, որտեղ սնվել են թռչուններն ու գազանները:

**ՊԱՐԱՊՄՈՒՆԷՔ 99**

**Թեման՝ «Ի՞նչ են ես տեսել»**

**Տեսակը՝ Պատմում հիշողությամբ /անձնական փորձից/ ստեղծագործական տարրերով**

**Խնդիրները**

• Ներգրավել երեխաներին ընդհանուր խոսակցության մեջ, դրդել նրանց պատմել իրենց անձնական փորձը:

• Սովորեցնել կազմել նախադասություններ՝ տարբեր քերականական կառուցվածքով:

• Սովորեցնել կրկեսային դերասանների մասնագիտությունների անվանումները:

• Սովորեցնել կազմել կարճառոտ պատմություն՝ համապատասխան թեմայով, տրված հանձնարարականի հիման վրա:

Անհրաժեշտ նյութեր՝ խաղալիքներ և նկարներ՝ արջ, շուն, կատու, ձի փիղ, ծաղրածու, «Մարդիկ և գազանները կրկեսում» թեմատիկ նկար

**Պարապմունքի ընթացքը**

Դաստիարակն առաջարկում է լսել Վ.Տալյանի «Ա՛յ քեզ փիղ» բանաստեղծությունից հատված.

*Փիղը մտավ կրկեսը,  
Բռնեց կրկեսի կեսը,  
Ի՞նչ հսկա է, ի՞նչ հսկա,  
Ոնց որ սարը կրկես գա:  
Այդ ո՞ր դռնից մտավ ներս,  
Եկավ կանգնեց լուռ ու հեզ:  
Երբ ոտք դրեց, գետինը  
Իջավ, ինչպես ռետինը:*

*Ա՛յ քեզ փիղ,  
Ա՛յ քեզ փիղ...  
Այնքան մեծ է, այնքա՛ն մեծ...  
Մի դեզ խոտը նա ծամեց,  
Խմեց մի մեծ տակառ ջուր,  
Գլխով արեց՝ էլի՛ տուր:  
Մի քիչ փչեց կնճիթով,  
Շոգ ամառը դարձավ հով:*

Դաստիարակը դիմում է երեխաներին.

- Կրկեսում էլ ի՞նչ կենդանիների եք դուք տեսել /երեխաների պատմություններ/:

- Ովքե՞ր են նրանց վարժեցնում: Ի՞նչ կարող են անել վարժեցված կրկեսիները /երեխաների պատասխանները/:

- Ինչպե՞ս են անվանում այն դերասաններին, ովքեր վարժեցնում գազաններին /կենդանիներ վարժեցնողներ/:

Այնուհետև դաստիարակը տալիս է ուղղորդող հարցեր.

- Իսկ ուրիշ ինչպիսի՞ կրկեսային դերասանների մասնագիտություններ գիտեք: /Ակորդեոններ, ծաղրածուներ, աճպարարներ, լարախաղացներ, ձեռնածուներ, մնջախաղացներ/:

Դաստիարակը շարունակում է:

- Երեխաներ, հիշում եք արդյո՞ք՝ կրկեսի մուտքի մոտ ո՞ւմ արձանն է կանգնեցված /երեխաների պատասխանները/:

-Այո՞, անվանի ակորդեոն, մնջախաղաց, կրկեսային հայ դերասան Լեոնիդ Ենգիբարյանի: Ի դեպ, նրա արձանը կա նաև Ծաղկաձորում: Այստեղ պարբերաբար անցկացվում է լարախաղացների միջազգային փառատոն, որին մասնակցում են աշխարհի տարբեր երկրների հանրաճանաչ մնջախաղացներ:

Դաստիարակը եզրահանգում է.

-Կրկեսային դերասանները կարող են անհավանական, բարդ կրկեսային համարներ ներկայացնել: Նրանք շատ են մարզվում, աշխատասեր են, ճկուն և համարձակ:

**Խաղ գնդակով:** Դաստիարակն ասում է. «Ես գնդակը կնետեմ և կանվանեմ տարբեր գործողություններ: Գնդակը ում ընկնի, նա պետք է պատասխանի՝ հավատո՞ւմ է, թե՞ ոչ և ինչո՞ւ»: Օրինակ՝ Գայլը սահում է ինքնագնացով. հավատո՞ւմ ես: Ինչո՞ւ (պատասխանն ասվում է ամբողջական նախադասությամբ): Արջը սահում է չմուշկներով: Կապիկը գնում է հեծանիվով: Վագրը երգում է: Չին պարում է:

Այնուհետև դաստիարակը երեխաներին ցույց է տալիս, թե ինչպիսի՞ խաղալիքներ կան դրված սեղանին /արջ, շուն, կատու, վագր, կապիկ, փիղ, ձի, ծաղրածու/:

Առաջարկում է հորինել պատմություն. «Ինչպե՞ս արջուկը հայտնվեց կրկեսում» կամ՝ «Ինչպե՞ս արջուկը անտառում կորցրեց իր մայրիկին, ո՞վ գտավ նրան, խնամք տա՞ծեց նրա հանդեպ, մեծացրեց, հետո ինչպե՞ս նա հայտնվեց կրկեսում: Ինչպե՞ս ելույթ ունեցավ կրկեսում /լսել ցանկացողներին/»:

- Ո՞վ է ուզում հորինել պատմություն այլ գազանների մասին:

**Պարապմունքից դուրս**

Այլ երկրների ընտանի կենդանիներ շարքից ընթերցել Տ.Գրիգիկի «Հետաքրքիր է շրջակա աշխարհը» պատմվածաշարը:

**ՓԻՂԸ**

Ասիական փղերն ավելի փոքր և հանգիստ են իրենց աֆրիկյան եղբայրներից: Նրանք պառկում են գետնի վրա, իսկ քնի մեջ խոնկում են: Կանգնած հանգստանում են միայն հիվանդ փղերը: Վայրի բնության մեջ նրանք սատ-

կում են սովից: Ծեր փղերի մոտ աստիճանաբար թափվում են ատամները, և խոտը ծամել արդեն նրանք չեն կարողանում:

Փիղը ուժեղ կենդանի է: Մեկ փիղը կարող է փոխադրել տասն ամրակազմ աշխատողի:

Փիղը անվախ կենդանի է: Իր հզոր կնճիթով նա ոչ միայն պաշտպանվում է թշնամիներից, այլև ձեռք է բերում իր կերը: Փղի համար կնճիթը նույնն է, ինչ մարդու համար՝ ձեռքերը: Փղի կնճիթի երկարությունը 320 սմ է /ցույց տալ պարանի օրինակի վրա/:

Բնության մեջ փղերն օրական օգտագործում են շատ խոտ և տերևներ, որոնք պարունակում են ջուր: Ակամայից նրանց կերակրում են նաև շոր խոտի դեզով, զազարով, այլ բանջարեղենով, հացով: Որոշ կենդանաբանական այգիներում տալիս են տարբեր հացահատիկներ: Ջերմաստիճանով պայմանավորված՝ փղերն օրական խմում են մեծ քանակությամբ ջուր:

**Թեման՝ «Միջատներ»**

**Տեսակը՝** գրույց

**Նպատակը:** Անդային և միջատների վերաբերյալ երեխաների գիտելիքները: Չարագցնել քերականորեն ճիշտ՝ բառերը նախադասության մեջ դեմքով, բով, ժամանակով ճիշտ համաձայնեցնելով միտքը արտաբերելու կարողությունը, հարստացնել բառապաշարը *նեկտար, խայթել, միջատ* բառերով: Սովորեցնել ճիշտ արտաբերել «զ» հնչյունը:

**Նախապատրաստական աշխատանք**

**Յու.Սահակյանի «Մրջյունը», Ներսես Ընդհալու «Մեղու», Հ. Պողոսյանի «Ես քիթե եմ» բանաստեղծությունները:**

**Անհրաժեշտ նյութեր՝** միջատների՝ գատիկ, մրջյունի, մեղվի, բզեզի նկարներ

**Ընթացքը**

Պարապմունքի սկզբին առաջարկեք գուշակել հանելուկներ.

*Հանդն է շրջում հեկտար-հեկտար,  
Տուն է բերում անուշ նեկտար: (մեղու)*

*Ամբողջ օրը բուն չունի,  
Լայն դաշտերում տուն չունի,  
Ծաղկից ծաղիկ է բռչում,  
Փերակ ունի, բուն չունի: (մեղու)*

Հետո հարցրե՛ք.

- Է՞լ ինչ միջատներ գիտեք (մոծակ, ճանճ, բզեզ, գատիկ, մրջյուն): Երեխաներին ցուցադրե՛ք միջատների նկարները և առաջարկե՛ք նկարագրել դրանք: Օգնե՛ք ուղղորդող հարցերով.
- Ի՞նչ տեսք ունի մեղուն (մեղուն դեղին ու սև գույն ունի, նրա մարմինը գլխից մեծ է, ունի թևիկներ, 4 ոտք, բեղիկներ և գլխի վրա 2 մեծ սև աչք):
- Ի՞նչ ձայն է հանում մեղուն (բզզում է, դզզում է):
- Ի՞նչ է տալիս մեղուն մարդուն:  
(*Լավ կլինի երեխաներին բացատրել մեղրի օգտակարության մասին: Պատմեք, որ մեղուն մեղրը սարքում է տարբեր ծաղիկներից հավաքած օգտակար նյութից՝ նեկտարից: Մեղրը շատ օգտակար սննդամթերք է: Այն շատ համեղ է և շատ հիվանդություններ է բուժում:*)
- Ի՞նչ համ ունի մեղրը:
- Ի՞նչ գույն ունի մեղրը:  
(Բացատրե՛ք, որ մեղվին բռնել չի կարելի, մեղուն փուշ ունի և խայթում է:)
- Ի՞նչ տեսք ունի գատիկը:  
(*Չատիկը փոքրիկ, ուռուցիկ մեջքով, կարմիր գույնի, սև պուտերով գարդարված միջատ է:*)
- Ի՞նչ գիտեք գատիկների մասին:

(*Չատիկներին կարելի է հանդիպել այգիներում, բանջարանոցներում պուրակներում Չատիկների մեծ մասն օգտակար է, ոչնչացնում է մատղաշ բույսերի հյութը ծծող մանր միջատներին:*)

• Ի՞նչ տեսք ունեն մրջյունները  
(*Մրջյունները, փոքրիկ մարմնով, մեծ գլխով, սև գույնի, աշխատասեր միջատներ են:*)

• Ի՞նչու՞ են ասում՝ աշխատասեր մրջյուն:  
(*Մրջյունները երբեք չեն քնում, Նրանք գիշեր-ցերեկ աշխատում են և պաշար են տանում մրջնանոց: Նրանց մեջ կան նաև ծուլեր: Եթե առողջ ու աշխատունակ մրջյուն մի քանի անգամ «գործից» վերադառնում է առանց պաշարի, նրան սատկացնում են մյուս մրջյունները: Բայց փոխարենը նրանք մեծ հոգատարությամբ են վերաբերվում և կերակրում են արդեն ծերացած ու աշխատելու անընդունակ մրջյուններին:)*

• Ի՞նչ ընդհանուր բան կա մեղուների և մրջյունների միջև (մեղուներն էլ, մրջյուններն էլ աշխատասեր են):

• Ի՞նչ ընդհանուր բան կա մեղուների և բզեզների միջև (երկուսն էլ բզզում են):  
Ընթերցե՛ք Յու. Սահակյանի «Բզեզ» բառատողը և առաջարկե՛ք չուտասելուկի նման արտասանել առաջին բառատողը.

*Բբգ, բբգ, բբգբբզան,  
Բզեզն եկավ տրզտրզան:  
Եկավ, ընկավ թակարդը,  
Նրան բռնեց չար սարդը:*

**Խորհուրդ դաստիարակին:** Ֆիզկուլտ-դադարի համար կարող եք առաջարկել բզեզների նման «բզզալ» և թռչկոտել «ծաղկից-ծաղիկ»:

**Յու. Սահակյանի «Մրջյունը» բանաստեղծությունը.**

<i>Գիտի, երբ է ելնում քնից, Գիտի, երբ է ելնում քնից, Գիտի, թե երբ ուր է գնում, Գիտի՝ ինչ է պակաս բնում, Գիտի, թե որ դաշտից բերրի Շալակն առած ինչ կբերի, Ուր կդնի, կմշակի՝ Ըստ մրջնային իր ճաշակի...</i>	<i>Գիտի, թե ինչ է պետք պապին, Գիտի, թե ինչ է պետք տատին, Գիտի՝ ինչով պիտի վերի Յեղակիցներին հարգելի, Երբ որ փակեն դռները տան Ու վայելեն երանությամբ Մեկիկ-մեկիկ կուտակածը, Չմտան համար ամբարածը...</i>
---	--

Հենց լուսաբացը հնչում է՝  
Ոտի վրա է մրջյունը:

**Թեման՝** «Նկարներ բանաստեղծություն»

**Տեսակը՝** ինտեգրված պարապմունք

**Նպատակը**

Ջարգացնել երեխաների ստեղծագործական կարողությունները, հիշողությունը, ունկնդրածը պատկերների միջոցով արտահայտելու, կատարած աշխատանքը խոսքով ներկայացնելու կարողություն, դաստիարակել սեր և հետաքրքրություն գեղարվեստական խոսքի նկատմամբ:

**Նախապատրաստական աշխատանք:** Մանուկների նկարած նկարների դիտում, քննարկում:

**Անհրաժեշտ նյութեր՝** քուռք, գունավոր մատիտներ

**Ընթացքը**

Հայտնեք երեխաներին, որ իրենք՝ որպես փոքրիկ նկարիչներ, նկարելու են բանաստեղծություն: Արտահայտիչ ընթերցեք Լ.Պողոսյանի «**Ես նկարեցի**» բանաստեղծությունը.

*Մեծ քղթի վրա*

*Ես նկարեցի*

*Մի փոքրիկ տնակ:*

*Տնակը ուներ*

*Ոչ մեծ մի դռնակ,*

*Երկու պատուհան՝*

*Վարագույրով լայն:*

*Տնակի առջև*

*Ես նկարեցի*

*Մի սիրուն պարտեզ,*

*Ծաղիկներ պես-պես:*

*Իսկ պարտեզի մեջ՝*

*Կապույտ մի լճակ:*

*Պատկերն արևի*

*Դարձել է նավակ՝*

*Վերևն արեգակ,*

*Ներքևը նավակ,*

*Ջրի երեսին*

*Լողում է հանդարտ:*

Հարցերի միջոցով քննարկե՛ք բանաստեղծության բովանդակությունը, հետո մի անգամ ևս ընթերցե՛ք այն և առաջարկե՛ք հիշողությամբ պատկերել րդրին

**Հարցեր**

• Ի՞նչ նկարեց փոքրիկը:

• Ի՞նչ ուներ երեխայի նկարած տնակը

• Ի՞նչ նկարեց տնակի առջև:

• Ինչե՞ր էին աճում պարտեզում

• Ի՞նչ գույն ունի պարտեզի միջի լճակը

• Երկնքում ի՞նչ է նկարել փոքրիկը

• Այլևի արտացոլանքը լճում ինչի՞ է նմանեցնում **փոքրիկ նկարիչը**

• Նավակի նմանվող արեգակը ինչպե՞ս է լողում լճի վրա

• Ի՞նչ էք կարծում փոքրիկ նկարիչը տղա է, քե՞տ առջիկ

Հաջորդ անգամ երեխաները նկարները վազեցնում են պատին, մեկ անգամ էլ դաստիարակի ընթերցմամբ լսում են բանաստեղծությունը և բանաստեղծության հերոսի նման ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները: Օգնե՛ք երեխաներին արտահայտիչ, պատկերավոր, ածականներ և մակդիրներ օգտագործելով, պատմել իրենց նկարածի մասին: Խրախուսեք երեխաների ինքնուրույն մտահղացումները:

**Խորհուրդ դաստիարակին:**

(Պարապմունքից առաջ նախապատրաստեք աշխատանքային սեղանները, յուրաքանչյուր սեղանին, որոնց շուրջ նստելու են երեխաները, նախապես դրեք երեխաների թվով նկարչական քղթեր և շատ գունավոր մատիտներ, որպեսզի գունավոր մատիտի համար երեխաները չշեղվեն նպատակից )

Թեման՝ «Բնապատկեր»

Տեսակը՝ բանաստեղծության ուսուցում

Նպատակը

Սովորեցնել երեխաներին մտապահել և արտահայտիչ արտասանել Լ. Պոլոսյանի «Ես նկարեցի» բանաստեղծությունը, զգալ բանաստեղծության մեղեդայնությունը, հարստացնել բառապաշարը *պես-պես, հանդարտ* անականներով:

Նախապատրաստական աշխատանք

Երեխաների նկարած նկարների դիտում, քննարկում:

Անհրաժեշտ նյութեր՝ երեխաների նկարները:

Ընթացքը

Երեխաների ուշադրությունը հրավիրե՛ք իրենց նկարած քնանկարներին, հիշեցրե՛ք բանաստեղծուհու անուն ազգանունը և ստեղծագործության վերնագիրը: Հետո գեղեցիկ արտահայտիչ արտասանե՛ք այն, բացատրե՛ք անհասկանալի բառերը, համեմատությունները (*պես-պես-գույզգույն, հանդարտ-հանգիստ*), մեկ անգամ ևս գեղեցիկ արտասանե՛ք: Հարցերով վեր հանե՛ք բանաստեղծության բովանդակությունը և օգնե՛ք հարցերին պատասխանել բանաստեղծի բառերով.

- Ինչի՞ վրա նկարեց տղան:
- Մեծ բոթի վրա ի՞նչ նկարեց փոքրիկը:
- Տնակն ուներ ի՞նչ:
- Տնակի առջև ի՞նչ նկարեց:
- Էլ ինչե՞ր նկարեց:
- Պարտեզի մեջ ի՞նչ գույնի լճակ նկարեց:
- Պատկերն արևի ի՞նչ է դարձել:
- Վերևն՝ արեգակ, ներքևը՝ նավակ ջրի երեսին լողում է ինչպե՞ս:

Մեկ անգամ էլ գեղեցիկ արտասանե՛ք և հարցրե՛ք արտասանել մի քանի երեխայի՝ Չեր օգնությամբ:

Հաջորդ անգամ խորացրե՛ք ուսուցումը՝ ուշադրություն դարձնելով արտահայտիչ արտասանությանը: Օրվա ազատ պահերին կրկնե՛ք այն:

Թեման՝ Վ. Այգեկցի, «Առյուծը, աղվեսն ու արջը»

Տեսակը՝ առակի ընթերցանություն

Նպատակը

• Արթնացնել սեր և հետաքրքրություն գեղարվեստական գրականության տարբեր ժանրերի, ժողովրդական ստեղծագործությունների նկատմամբ:

• Պատկերացում տալ այն մասին, որ առակը խրատական բնույթի ստեղծագործություն է, այն սկզբում ստեղծել է ժողովուրդը, այնուհետև մշակել են տարբեր առակագիրներ:

• Սովորեցնել ընկալել առակի իմաստն ու բովանդակությունը:

• Ակտիվացնել բառապաշարը՝ *առակագիր, շարախոսել, գլխով երդվել, բժշկապետ* բառերով:

Ընթացքը

Նախնական գրույց

Երեխաներին պատկերացում տալ այն մասին, որ առակը խրատական բնույթի փոքր ծավալի գեղարվեստական ստեղծագործություն է: Առաջացել է ժողովրդական բանահյուսության մեջ, հետո սկսել է մշակվել առակագիր-գրողների կողմից:

Առակներում հանդես են գալիս ինչպես մարդիկ, այնպես էլ կենդանիներ, քոյուններ, միջատներ, բույսեր... Նրանց միջոցով ծաղրվում են մարդկային վատ սովորույթները, գործողությունները, գովաբանվում լավ արարքներն ու գործերը:

Ամենահին առակագիրը եղել է հույն Եգոպոսը: Նշանավոր են հայ առակագիրներ Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, ֆրանսիացի Լաֆոնտենը, ռուս Իվան Կոխովը...:

Դաստիարակ - Երեխանե՛ր, հայ առակագիր Վարդան Այգեկցին մանուկների համար գրել է հետաքրքիր առակներ՝ «Հիմարը և ձմերուկը», «Առյուծն ու մարդը», «Մուկը և ուղտը», «Այծեր և գայլեր», «Իմաստուն զինվորը» և այլն, որոնք բոլորն էլ սովորեցնում են ճշմարիտ դասեր քաղել սխալներից, գնահատել լավն ու բարին, պախարակել ազահությունն ու շարությունը:

Այսօր ես ձեզ համար կընթերցեմ Վարդան Այգեկցու «Առյուծը, աղվեսն ու արջը» առակը:

Առյուծը հիվանդացավ, և բոլոր կենդանիներն եկան տեսության, միայն աղվեսն ուշացավ: Արջը շարախոսեց նրան, իսկ աղվեսը դուռն հետևից լսեց և, ներս ընկնելով, թավալվեց առյուծի առաջ: Առյուծն ասաց աղվեսին. «Բարի ժամի չեկար, գարշելի, ասա՛ ինձ, ինչո՞ւ ուշացար»:

Աղվեսն ասաց. «Մի՛ բարկանար, բարի թագավոր, երդվում եմ քո գլխով, որ քո առողջության համար այցելեցի շատ բժշկապետների և մեծ չարչարանք

քաշեցի, բայց իմացա դեղը քո բժշկության»։ Եվ առյուծն ասաց. «Բարի եկար իմաստուն կենդանի, ի՞նչն է քո դեղը»։

Աղվեսն ասաց. «Ըսիստ պիտանի է և դյուրին, բժշկապետներն ասացին, թե կենդանի հանեք արջի մորթին և տաք-տաք գցեք առյուծի վրա, մորթին խկույն ցավը կհանի հիվանդից»։ Առյուծը հրամայեց բռնել արջին։ Սկսեցին արջի մորթին հանել։ Իսկ նա վառյուժ էր և ուժեղ ոռնոց արձակում։

Աղվեսն ասաց. «Այդ ամենը քեզ և նրան, ով արքունիք մտնելով՝ կչարախոսի մեկին»։

**Դաստիարակ՝**

-Չեզ դուր եկավ Վարդան Այգեկցու այս առակը։

-Ինչպե՞ս է սկսվում առակը։

-Հետո ի՞նչ է լինում։

-Ինչպիսի՞ն էր արջի վարքագիծը։

-Ի՞նչ խորամանկության դիմեց աղվեսը։

-Ինչպե՞ս պատժվեց արջը չարախոսության համար։

-Ինչո՞վ է ավարտվում առակը։

Ընդհանրացնելով պատասխանները՝ դաստիարակը երեխաներին հուշում է եզրահանգել .

-Ի՞նչ խրատեց մեզ առակը։

Լավագույն եզրահանգումն է՝ ասացվածքը *«Ուրիշի համար փոս փորողը ինքն է ընկնում մեջը»*։

**Դիդակտիկ վարժություն՝ «Լրացրո՛ւ նախադասությունը»**

Դաստիարակ - Երեխաներ, իսկ գիտեք, թե ինչի համար են կենդանիների պոչերը /երեխաների պատասխանները/։

Դաստիարակ - Կենդանիների պոչերը շատ կարևոր ու պետքական բաներ են. մեկին այն պետք է թռիչքի համար, մյուսին՝ լողալու, մեկ ուրիշին՝ հարձակումից պաշտպանվելու համար։

Իսկ այժմ ես կսկսեմ նախադասությունը, ընթացքում կառաջադրեմ հարցը, իսկ դուք կշարունակեք այն։

-Ձերը, կովը, ձին, առյուծը իրենց պոչերով թշուժ են (ինչերի՞ն)..... /ճանճերին ու մոծակներին/։

-Աղվեսի համար իր պոչն իր (ի՞նչն է)../դեկն է/, նա կարողանում է շներին խաբել, պոչը մի կողմ թեքել ու հակառակ կողմ վազել։

-Մողեսի համար իր պոչը թշնամիներից պաշտպանվելու համար է, քանի որ նա կարող է պոչը թշնամու բերանը թողնել և (ի՞նչ անել)../փախչել։

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ԱՌԱՋԱԲԱՆ.....	3
Հ. Մյուսյան	
1. Ջրույց՝ «Մենք գալիս ենք մանկապարտեզ».....	13
Լ. Մարգսյան	
2. Առարկայի նկարագրություն՝ «Մեր սիրած խաղալիքների կամ կարևոր առարկաներ».....	16
Լ. Մմբատյան	
3. Դիդակտիկ խաղ՝ «Ի՞նչ է պատմում խաղալիքը իր մասին».....	18
Հ. Մյուսյան	
4. Խաղալիքի նկարագրական պատմում՝ «Նապաստակին հյուր».....	19
Լ. Մարգսյան	
5. Ստեղծագործական պատմում՝ նկարագրության տարրերով «Մեր սիրած իրերը (խաղալիքները)».....	22
<b>ԽՈՍԱԶԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ</b>	
<b>Ինտերակտիվ խաղերի միջոցով «Մեկացի հեքիաթներ» (6-8)</b>	
Լ. Մմբատյան	
- Ինտերգրված պարապմունք՝ Հովի. Թումանյան՝ «Երկինքը փուլ է գալիս».....	24
Լ. Մմբատյան	
- Ինտերգրված պարապմունք՝ ռուսական ժող. հեքիաթ «Պապն ու շաղ-գամը».....	25
Լ. Մմբատյան	
- Ինտերգրված պարապմունք՝ ռուսական ժող. հեքիաթ «Պալատիկ».....	26
<b>ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՐԱՊՄՈՒՆՆԵՐԸ</b>	
<b>«Աշուն» (9-13)</b>	
Հ. Մյուսյան	
- Ջրույց՝ «Աշուն».....	27
Հ. Մյուսյան	
- Ոտանավորի ուսուցում՝ Հ. Հայրապետյան «Աշուն».....	31
Հ. Մյուսյան	
- Դիդակտիկ խաղ՝ «Տարվա եղանակները».....	33
Հ. Մյուսյան	
- Ինտերգրված պարապմունք՝ «Ոսկե աշուն».....	33
Հ. Մյուսյան	
- Ինտերգրված պարապմունք՝ «Իաշտային ծաղիկներ».....	34
Լ. Մարգսյան	
14. Նկարի պատմում՝ «Աշուն».....	37
Լ. Մարգսյան	
15. Բանաստեղծության ուսուցում՝ Ա. Շահինյան, «Աշուն».....	39
Լ. Մարգսյան	
16. Դիդակտիկ խաղ՝ «Մրգեր».....	40
Լ. Մմբատյան	
Հնչարտաբերական ունակությունների զարգացում՝ «Էքսկուրսիա դեպի մոտակա պուրակ».....	42
Հ. Մյուսյան	
18-19 Ջրույց՝ «Իմ քաղաքամայր երևանը».....	44

Հ. Միտոյան

20. Զրույց՝ «Իմ քաղաքը և նրա տրանսպորտը» ..... 48  
 Հ. Միտոյան

21. Զրույց՝ «Ինչու՞ վ են մարդիկ ճանապարհորդում» ..... 51  
 Հ. Միտոյան

22. Զրույց՝ «Օդային տրանսպորտ» ..... 53  
 Լ. Սարգսյան

23. Զրույց պատմվածքի շուրջ «Անվտանգ վարքագիծ» ..... 56  
**ԹԵՄԱՏԻԿ ՊԱՐԱՊՄՈՒՆԸՆԵՐ**  
 «Ինչպե՞ս են ճանաչում աշխարհը» (24-28)

Լ. Սմբատյան

- Զգայական դաստիարակությանը միտված ուսուցողական խաղ-պարապմունքներ «Կախարդական վերափոխումներ» ..... 58  
 Լ. Սմբատյան

- «Անտեսանելի ձայներ» ..... 60  
 Լ. Սմբատյան

- «Բանջարեղեն, ես քեզ ճանաչում եմ» ..... 62  
 Լ. Սմբատյան

- «Ուրախ մարդուկներ» ..... 63  
 Լ. Սմբատյան

- «Խառնաշփոթ» ..... 64  
 Լ. Սմբատյան

29. Ինտեգրված պարապմունք՝ Դ. Դեմիրճյան՝ «Պույ-պույ մուկիկը» ..... 66  
 Լ. Սարգսյան

30. Զրույց՝ մասնագիտությունների մասին ..... 68  
 Լ. Սարգսյան

31. Զրույց՝ «Մասնագիտական գործիքներ» ..... 70  
 Լ. Սարգսյան

32. Զրույց՝ «Զույր» ..... 72  
 Հ. Միտոյան

33-34 «Զուր, դրա նշանակությունը» ..... 74  
 Լ. Սմբատյան

35. Զրույց՝ «Իմ ընտանիքը» ..... 78  
 Լ. Սարգսյան

36-37 Զրույց՝ «Ընտանիք» ..... 81  
 Լ. Սարգսյան

- Նկարի պատմում՝ «Ընտանիքն ընթրում է» ..... 82  
 Հ. Միտոյան

38. Զրույց՝ «Ապակու աշխարհում» ..... 83  
 Լ. Սմբատյան

Ինտեգրված պարապմունք՝ «Ճանապարհորդություն դեպի անցյալ՝ քույր» ..... 85  
 Լ. Սմբատյան

40. Ինտեգրված խաղ-պարապմունք՝ «Քարեր» ..... 87  
 Լ. Սմբատյան

41. Խաղ-պարապմունք՝ «Սպասք» ..... 91  
 42. Լ. Սարգսյան ..... 94

Բանաստեղծության ուսուցում՝ «Զմեռ» ..... 96  
 Հ. Միտոյան

43. Զրույց «Հրաշագոյն ձմեռը» ..... 96  
 Հ. Միտոյան

44. Նկարի պատմում՝ «Զմեռային զվարճալիքներ» ..... 98  
 Հ. Միտոյան

45. Նկարի պատմում՝ «Մանեն ցրտից չի վախենում» ..... 101  
 Լ. Սմբատյան

Պատմում հարցերի միջոցով՝ «Հայրիկներն ու պատյուկները զինվորներ են» ..... 104  
 Լ. Սմբատյան

47. Պատմում՝ նկարների միջոցով «Հայաստանն իմ տունն է» ..... 107  
 Լ. Սարգսյան

48. Ստեղծագործական պատմում՝ նկարի օգնությամբ «Մեր տանը» ..... 109  
 Լ. Սմբատյան

49. Ինտեգրված խաղ-պարապմունք «Բանջարեղեն» ..... 110  
 Լ. Սարգսյան

50. Դիդակտիկ խաղ՝ «Բանջարեղեն» ..... 113  
 Լ. Սմբատյան

51. Զրույց՝ «Վիտամիններ» ..... 115  
 Լ. Սմբատյան

52. Դաղարներով ընթերցանություն՝ «Ճուտիկն ու շնիկը» ..... 118  
 Լ. Սարգսյան

53-54 Զրույց՝ «Բարեկիրք վարք» ..... 122  
 Լ. Սարգսյան

Դիդակտիկ խաղ՝ «Խառնաշփոթ» ..... 123

**ԹԵՄԱՏԻԿ ՊԱՐԱՊՄՈՒՆԸՆԵՐ**  
 «Հաց» (55-59)

Լ. Սմբատյան

- Զրույց՝ «Հաց» ..... 126  
 Լ. Սմբատյան

- Խաղ-պարապմունք՝ «Պատրաստում ենք բլիթներ» ..... 128  
 Լ. Սմբատյան

- Ուտանավորի ուսուցում՝ Ս. Մուրադյան, «Հացբուխը» ..... 129  
 Լ. Սմբատյան

- Ուտանավորի խորացում՝ Ս. Մուրադյան, «Հացբուխը» ..... 131  
 Լ. Սմբատյան

- Դաստիարակի օրինակով պատմում՝ «Իմ տատիկի վրայից հացի հոտ է գալիս» ..... 133  
 Լ. Սարգսյան

60. Զրույց՝ «Գալուն» ..... 135  
 Լ. Սարգսյան

61-62 Զրույց՝ «Թույլուններ» ..... 137  
 Հ. Միտոյան

63. Զրույց՝ «Արագիլ, բարով եկար» ..... 140

Հ. Միտոյան	
64-65 «Ընտանի թռչուններ», գրույց՝ բաղի մասին	142
Հ. Միտոյան	
Ուսանավորի ուսուցում՝ Ռ. Պատկանյան «Բաղիկ»	143
Լ. Սարգսյան	
66-67 «Ընտանի թռչուններ»	145
Հ. Միտոյան	
Նկարի պատմում՝ «Թռչնանոց»	147
Լ. Սարգսյան	
68. Ինտեգրված պարապմունք՝ «Ծաղիկներ»	149
Լ. Սարգսյան	
69-70 Պատմվածքի ընթերցում և վերապատմում՝ «Ծաղիկներ»	152
Լ. Սմբատյան	
71. Ինտեգրված պարապմունք՝ «Իմ մայրիկն ամենալավն է»	155
Լ. Սմբատյան	
72. Ուսանավորի ուսուցում՝ Ս. Մուրադյան, «Նվեր մայրիկիս»	157
Լ. Սմբատյան	
73. Խաղ-պարապմունք՝ «Ի՞նչն է երկնքից բարձր»	159
Հ. Միտոյան	
74. Ձրույց՝ «Զամի»	162
Հ. Միտոյան	
75. Պատմվածքի ընթերցանություն՝ «Կատուները մեր բարեկամներն են»	164
«Վայրի կենդանիներ»	
Հ. Միտոյան	
76. Ձրույց՝ վագրի մասին	167
Հ. Միտոյան	
77. Ձրույց՝ գայլի մասին	170
Հ. Միտոյան	
78. Ձրույց՝ ոզնու մասին	172
Լ. Սարգսյան	
79-80 Ձրույց՝ «Վայրի կենդանիներ»	174
Լ. Սարգսյան	
- Ստեղծագործական պատմում՝ «Կենդանաբանական այգում» նկարի միջոցով	176
Լ. Սարգսյան	
81-82 Ձրույց՝ «Ընտանի կենդանիներ. կաթնասուններ»	178
Լ. Սարգսյան	
- Նկարի պատմում՝ «Ագարակ»	179
Հ. Միտոյան	
83. Խոսքի հնչյունային կուլտուրա՝ «Ս-զ» հնչյունների տարբերակում.	181
Հ. Միտոյան	
84. Հեքիաթի վերապատմում՝ Հ. Թումանյան «Ուլիկը»	183
Հ. Միտոյան	
85-86 «Մարդու մարմինը» /ճանաչողական զարգացում/	185
Լ. Սարգսյան	
87. Ինտեգրված պարապմունք՝ «Մենք և մեր արտաքինը»	189
88. Լ. Սարգսյան	191

Խաղային շարժառիթով բնականացում «Հլիկենա»	
Լ. Սմբատյան	
89. Ձրույց՝ «Մեզ կյուր է բժիշկը»	193
Լ. Սարգսյան	
90. Կիսատ բողած պատմության շարունակում՝ «Ընկերություն»	196
Լ. Սարգսյան	
91. Դաստիարակի տված հարցերով պատմում՝ «Իմ առօրյան»	198
Հ. Միտոյան	
92. Հեքիաթի վերապատմում՝ Ուշինսկի, «Ոսկե ձկիկը»	200
Լ. Սմբատյան	
93. Ձրույց՝ «Մենք սիրում ենք ամառը»	202
Հ. Միտոյան	
94. Ձրույց՝ «Անտառի գաղտնիքները»	206
Լ. Սարգսյան	
95. Ձրույց՝ «Ծառեր»	210
Հ. Միտոյան	
96. Ձրույց՝ «Կահույք»	214
Հ. Միտոյան	
97. Ձրույց՝ «Մունկ»	218
Հ. Միտոյան	
98. Ձրույց՝ «Ով ինչով է սնվում»	221
Հ. Միտոյան	
99. Պատմում հիշողությամբ՝ «Ի՞նչ են ես տեսել»	223
Լ. Սարգսյան	
100. Ձրույց՝ «Միջատներ»	226
Լ. Սարգսյան	
101. Ինտեգրված պարապմունք՝ «Նկարներ բանաստեղծություն»	228
Լ. Սարգսյան	
102. Բանաստեղծության ուսուցում՝ «Բնապատկեր»	230
Հ. Միտոյան	
103. Առակի ընթերցանություն՝ Վ. Այգեկցի «Առյուծը, աղվեսն ու արջը»	234

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներ – ՀՀ կրթության և գիտության նախարարի 30 մարտի 2011 թ N257-Ն հրաման:
- Հ.Միտոյան, Ս.Մարտիրոսյան, Լ.Սմբատյան և ուրիշներ, Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, ԿԳՆ 27.10.2011 թ N 1192-Ա/Ք հրաման:
- Ս.Վարդումյան, Հրաշք մատիկներ, 2010, ՀՊՄՀ, «Անտարես»:
- Մ. Բաղդասարյան, Ծիշտ հնչարտասանության ձևավորումը նախադպրոցական տարիքում, 1988, ՀՀ լուս. մինիստրություն:
- Ս. Մարտիրոսյան, Ա.Դավթյան, Նախադպրոցական մանկավարժություն, ՀՊՄՀ, 2005:
- Հ Միտոյան, Լ.Սմբատյան, Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, ՀՀ ԿԳՆ, 21.01.2010թ N05-Ա/Ք հրաման:
- Մ. Ս. Բաղդասարյան, Ծիշտ հնչարտասանության ձևավորումը նախադպրոցական տարիքում, Երևան, «Լույս», 1988:
- Լ. Մանուկյան, Լ. Սմբատյան, Հ. Միտոյան, Մայրենի լեզվի վիզակտիկ խաղերը մանկապարտեզում. Ավագ խումբ, Երևան, 2007:
- Հեքիաթներ, պատմվածքներ, ոտանավորներ մանկապարտեզների համար, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1967թ.:
- Սուրեն Մուրադյան, «Փոքրիկ ուսուցչուհին», «Լույս» հրատարակչություն, Երևան, 1986թ.:
- Կարդում ենք տանը և մանկապարտեզում «Չանգակ» հրատարակչություն, Երևան, 2009:
- Մ. Ալեքսանյան, Հայաստան. Հայրենի անտառներ, «Ծիծեռնակ», Երևան, 2006:
- Հայկական Հանրագիտարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1974:
- Ծանապարհայություն կենդանիների աշխարհում, Հանրագիտարան մանուկների համար, «ՄՀՄ գրատուն», 2012:
- Ժ. Կոնդակչյան, Դիդակտիկ խաղերը որպես նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր զարգացման միջոց, Երևան, 1978:
- Հ, Միտոյան և ուր., Մանկական ստեղծագործությունների ընտրանի. 2-7 տարեկանների համար, ՀՀ ԿԳՆ, Երևան, 1999:
- Մանուկյան Լ. և ուրիշներ, Մանկական ստեղծագործությունների ընտրանի. 5-7 տարեկան», Եր., Չանգակ-97, 1999:
- «Մանկական ստեղծագործությունների ընտրանի. 2-5 տարեկան», Մանուկյան Լ. և ուր., Եր., Չանգակ-97, 1999:
- Մանկական բանաստեղծությունների ընտրանի, կազմ.՝ Վ. Սահակյան, «ՄՀՄ գրատուն», Եր., 2011:
- Մանուկների աշխարհում. արձակ, կազմ.՝ Մ. Միտինյան, «Աստղիկ գրատուն», Եր., 2012:
- Մանուկների աշխարհում. չափածո, կազմ.՝ Մ.Միտինյան, «Աստղիկ գրատուն», Եր., 2012:
- Գ. Գաբրիելյան, Աշնան հանդես, «Արևիկ», Եր., 2009:
- Հանելուկներ, Մանուկ, Եր.: «ՀԳՄ հրատ.» 2012:
- Հազար ու մի հանելուկ. թռչուններ, կենդանիներ, Ե.Պետրոսյան, «ՄՀՄ գրատուն», Եր.: 2011:
- Տանը և դպրոցում, Ա. Արնաստյան, Գ. Բեդիրյան, «Էդիթ Պրինտ», Երևան, 2008:
- Մայրենի լեզվի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Ս.Չիբուխյան, Լ.Սարգսյան, Եր., ԿԱԻ, 2011:

- «Անխաշավիղ» գիտամեթոդական հանդես, Երևան, ԿԱԻ, 2008-2012թթ.:
- В. В. Гербова, Занятия по развитию речи в средней группе детского сада, Мозаика-Синтез, Москва, 2012г.
- Т. И. Гризник, „Познавательное развитие детей 4-5 лет“. Москва, „Просвещение“, 2010г.
- Т. И. Гризник, „Развитие речи детей 4-5 лет“, Москва, „Просвещение“, 2007г.
- Под редакцией Парамоновой Л.А Развивающие занятия с детьми-М.ОЛМА 2007
- Алексеева М.,Яшина Б «Методика развития речи и обучения родному языку дошкольников» 2005 Изд.центр Академия
- Т. И. Гризник „Из детства – в отрочество“ комплексная программа Просвещение 2007г.
- Н .А. Атарщикова, И.А.Осина, Е.В.Горюнова - „Развернутое перспективное планирование по программе воспитания и обучения в детском саду“-Волгоград, 2010г.
- М. А. Васильева, В. В Гербова, Т. С. Комарова - „Программа воспитания и обучения в детском саду“- Москва, Мозаика-Синтез, 2005г
- Костина “Камертон” Москва, Просвещение-2004г
- О. Ушакова. Е. Струнина», Методика развития речи детей» - Москва. 2004 г
- Скоролупова О.А. Тематическое планирование воспитательно-образовательного процесса в дошкольных образовательных учреждениях. Часть I. - М.: ООО Издательство «Скрип-торий 2003», 2007.
- „Дошкольное воспитание“ N 1-12, 2012 г., N 3, N 4 2012 г.

Հ.ՄԻՏՈՅԱՆ, Լ. ՍՄԻԱՏՅԱՆ, Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հասնիկ Սամսոնի Միտոյան  
Լալա Ալեքսանդրի Սմբատյան  
Լալա Հայաստանի Սարգսյան

**ԽՈՍՔԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ  
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԻՋԻՆ ԽՄԲՈՒՄ**

**ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՉԵՌՆԱՐԿ**

Հրատարակչական աշխատանքները՝ Մարիամ Պետրոսյանի  
Աստղիկ Միրզաբունյան  
Աշխեն Այվազյանի

Սրբագրիչ՝

Գոհար Ամիրբեկյան

Ստորագրված է տպագրության 20.09.2013 թ.:

Ծավալը՝ 15 մամուլ:

Ֆորմատ՝ 70X100<sup>1/16</sup>:

«Կրթության ազգային ինստիտուտ», Երևան, Տիգրան Մեծի 67, հեռ.՝ 57 48 20:

ՎԱՇԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ